

# ԿԱԼԱՆԱԿՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ.

Կիրառման և երկարացման  
հիմնավորվածությունը

Վ.Ի.Կաչալով, Օ.Վ.Կաչալովա  
Ա.Ս.Նիկողոսյան, Տ.Ա.Պողոսյան



Translation co-funded  
by the European Union



# ԿԱԼԱՆԱԿՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ.

Կիրառման և Երկարացման  
հիմնավորվածությունը

Վ.Ի.Կաչալով, Օ.Վ.Կաչալովա  
Ա.Ս.Նիկողոսյան, Տ.Ա.Պողոսյան

Եվրոպայի խորհուրդ

«Կալանավորումը որպես խափանման միջոց. կիրառման և երկարացման հիմնավորվածությունը» ձեռնարկը մշակվել է Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանում Ռուսաստանի արդարադատության պետական համալսարանի պրոֆեսորներ Օ.Վ. Կաչալովայի և Վ.Ի. Կաչալովի կողմից՝ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ՝ Ռուսաստանի օրենսդրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջների լույսի ներքո: Հայերեն ադապտացումը իրականացվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՖՀ, Արդարադատության ակադեմիայի և Փաստաբանական դպրոցի դասախոս, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ա.Ս. Նիկողոսյանի և Արդարադատության ակադեմիայի դասախոս, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, առաջին դասի խորհրդական Տ.Ա. Պողոսյանի կողմից:

Այս հրապարակումը նախաձեռնվել է հաշվի առնելով այն, որ հիմքում ընկած ձեռնարկը անդրադարձել է հարցերի, որոնք կարևոր են նաև Հայաստանի Հանրապետությունում առկա պրակտիկայի համար, և նպատակ է դրվել առանձնացնել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու առանձնահատկությունները՝ հաշվի առնելով ներպետական և միջազգային նախադեպային պրակտիկան, այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջադեմ դիրքորոշումները:

Ռուսական հրատարակություն՝  
ЗАКЛЮЧЕНИЕ ПОД СТРАЖУ  
В КАЧЕСТВЕ МЕРЫ ПРЕСЕЧЕНИЯ:  
обоснованность применения и продления

Ադապտացիան և թարգմանությունը իրականացվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

Սույն հրատարակության հատվածների վերարտադրումը (մինչև 500 քառ) թույլատրվում է՝ բացառությամբ առևտրային նպատակների՝ քանի դեռ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկատվություն կամ այլ կերպ չի մոլորեցնում ընթերցողին տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության վերաբերյալ: Տեքստի աղբյուրը միշտ պետք է ճանաչվի հետևյալ կերպ՝ «© Եվրոպայի խորհուրդ, հրատարակության տարբերիվը»: Հրատարակության ամբողջական կամ մասնակի վերարտադրմանը / թարգմանությանը վերաբերող բոլոր մյուս հարցումները պետք է հասցեագրվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս կամ [publishing@coe.int](mailto:publishing@coe.int)).

Կազմի նախագծում և ձևավորում՝  
«Թայմ թու փրինթ» տպագրության սրահ

Նկարներ՝ Ռուսական հրատարակությունից

©Եվրոպայի խորհուրդ, ՄԱՐՏ 2021

Այս փաստաթղթին վերաբերող այլ նամակագրությունները պետք է հասցեագրվեն Եվրոպայի խորհրդի Իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների ազգային իրականացման վարչություն՝

[DLI-HRImplementation@coe.int](mailto:DLI-HRImplementation@coe.int);

# Բովանդակություն

---

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ 1	
Ազատության սահմանափակման պայմաններն ու հիմքերը կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում	10
1.1. Հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածի (մեղադրանքի) առկայությունը, որը չի բացառում անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու համար	10
1.2. Կալանավորման կիրառման հիմքերը	42
1.3. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման անհնարինությունը	85
ԳԼՈՒԽ 2.	
Կալանավորումը բացառող հանգամանքները	109
2.1. Կալանավորմանը խոչընդոտող հիվանդությունների առկայությունը	109
2.2. Կալանքի տակ պահելու պայմանները խոշտանգումների, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի արգելքի համատեքստում	126
2.3 Կորոնավիրուսով (COVID-19-ով) պայմանավորված կալանքի կիրառման մի շարք հարցեր	145

<hr/>	
ԳԼՈՒԽ 3.	
Կալանքի տակ գտնվելու ժամկետների երկարացումը	152
<hr/>	
3.1. Կալանավորման ժամկետի երկարացումը նախնական քննության փուլում	166
<hr/>	
3.2. Կալանավորման ժամկետի երկարացումը նյութերի ծանոթացման և գործը դատարան ուղարկելու ընթացքում	180
<hr/>	
3.3. Կալանավորման ժամկետի երկարացումը դատաքննության փուլում (կալանավորման պահպանումը)	186
<hr/>	
ԳԼՈՒԽ 4.	
Անվտանգության միջոց հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը որպես հարկադրանքի միջոց	195
<hr/>	
ԳԼՈՒԽ 5.	
Դատական նիստի անցկացման առանձնահատկությունները կալանավորման հարցի քննության ժամանակ	213
<hr/>	
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	268
<hr/>	
1. Կալանավորման հիմնավորվածության գնահատման չափանիշները	268
<hr/>	
2. Կալանավորման ժամկետի երկարացման հիմնավորման գնահատման չափանիշները	274

# Լեռածություն

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը յուրաքանչյուր մարդու բնական անքակտելի իրավունքն է, որը պաշտպանվում է ՀՀ սահմանադրության 25-րդ, 27-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա, կոնվենցիա) 5-րդ հոդվածներով: Դրա սահմանափակումը քրեադատավարական հարկադրանքի միջոցների կիրառման ժամանակ պարտադրված միջոց է և ունի ապահովող բնույթ<sup>1</sup>: Այն չունի պատժիչ ուղղություն, պատիժ չէ հանցագործության համար և չպետք է ենթադրի այն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ Եվրոպական դատարան, ՄԻԵԴ) մեծ թվով բողոքներ է ստանում Հայաստանից՝ կալանքի տեսքով խափանման միջոցների չարդարացված կիրառման վերաբերյալ:

Վերջին տարիներին ձեռնարկվել են մեծ թվով միջոցառումներ, որոնք ուղղված են այս խնդրի լուծմանը, ներառյալ օրենսդրական փոփոխությունները, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ընդունումը, դատական պրակտիկայի վերանայումը, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները:

Կալանքի կիրառումը և նախնական քննության, և դատական քննության փուլերում դեռևս մնում է արդիական և մտահոգությունների տեղիք տվող ինչպես Հայաստանում, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շատ այլ անդամ պետություններում: Համաձայն ԱՄՆ Պետական դեպարտամենտի կողմից 2018թ. հրապարակված Մարդու իրավունքների զեկույցի<sup>2</sup> տևական նախնական կալանքը դեռ քրոնիկական խնդիր է Հայաստանում<sup>2</sup>:

«Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության

1 *Sten Case of Vladimir Krivososov v. Russia* (Վլադիմիր Կրիվոնոսովի ընդդեմ Ռուսաստանի), 15/07/2010, 7772/04, պարագրաֆ 133:

2 *Sten Մարդու իրավունքների վերաբերյալ երկրների զեկույցներ 2018թ., Հայաստան/Country Reports on Human Rights Practices for 2018, Armenia, Հասանելի է համացանցային <https://www.state.gov/reports/2018-country-reports-on-human-rights-practices/armenia/> հասցեում, վերջին մուտքը՝ 30.06.2010. Ժամը 22:38:*

մասին» Եվրոպական կոնվենցիայի կողմ հանդիսացող անդամ պետություններում նախնական կալանքի չարաշահման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Իրավական և մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի՝ 2015թ. պատրաստած զեկույցում մատնանշվել է, որ Եվրոպայում նախնական կալանքի տակ են մեծ թվով անհատներ: Զեկույցում նշվել է, որ մի շարք դեպքերում կալանքի հիմքերը մեկնաբանվել են չափից լայնորեն կամ վկայակոչվել են ձևականորեն (pro forma)՝ կալանքը չարաշահելով: Ուստի, Իրավական և մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային միացած անդամ պետություններին կոչ է արել կիրառել հատուկ միջոցառումներ նախնական կալանքի կրճատման և դրա չարաշահման վերացման ուղղությամբ<sup>1</sup>:

Վերոգրյալի համատեքստին համահունչ է այն, որ թե՛ գործող քրեադատավարական օրենսդրությունը<sup>2</sup>, և թե՛ ՀՀ ՔԴՕ նախագիծը<sup>3</sup> (այսուհետ նաև՝ Նախագիծ) կարևորելով ազատության իրավունքի ամենախիստ սահմանափակող խափանման միջոցի կիրառման անհամաչափ քանակի կրճատումը՝ սահմանում են կալանքից (Նախագծի դեպքում՝ նաև տնային կալանքից) առաջ այլ խափանման միջոցների կիրառման բացառման հանգամանքի քննարկումը:

Խափանման միջոցների մասին օրենսդրության կիրառմանը վե-

1 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կողմ պետությունների կողմից նախնական կալանքի չարաշահումը, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով (2015թ.), փաստ. 13863,1/Council of Europe Parliamentary Assembly, Abuse of pre-trial detention in States Parties to the European Convention on Human Rights, (2015) Doc 13863, 1: Հասանելի է համացանցային <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=21992> հասցեում, վերջին մուտք՝ 30.06.2020թ., ժամը 22:34:

2 Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև ՔԴՕ) 137-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ դատարանն անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժում է, եթե քրեադատավարական օրենքով սահմանված նպատակներին հնարավոր է հասնել մեղադրյալի նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառմամբ՝ այլ խափանման միջոցներ ընտրելու հարցի լուծումը թողնելով վարույթն իրականացնող մարմնի իրավասությանը (ՀՀ ՊՏ 1998.09.21/22(55)):

3 Տե՛ս «ՀՀ քրեական դատավարության օրենսգրք» ՀՀ օրենքի նախագծի 118-րդ հոդվածը: Հասանելի է համացանցային [http://parliament.am/draft\\_docs7/K-637.pdf](http://parliament.am/draft_docs7/K-637.pdf) հասցեում, վերջին մուտք 27.07.2020թ., ժամը 13:28:



րաբերող հարցերը լուծելիս դատարանները, անմեղության կանխավարկածի հիման վրա, պետք է պահպանեն հավասարակշռությունը հանրային շահերի՝ կապված դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման և անձնական ազատության իրավունքի կարևորության միջև<sup>1</sup>: Կալանքը որպես խափանման միջոց, ինչպես նաև անձի ազատությունը սահմանափակող այլ հարկադրանքի միջոցների օգտագործումը կարող են արդարացվել հասարակության շահերով, եթե այդպիսի սահմանափակումը բավարարում է արդարության պահանջներին՝ համարվում է համարժեք, համամասնական, համաչափ և անհրաժեշտ միջոց է սահմանադրական նշանակության արժեքների պաշտպանության համար<sup>2</sup>:

Մարդու ազատության սահմանափակումը, հաշվի առնելով այն, որ նա անմեղության կանխավարկածի հիման վրա անմեղ է նախքան մեղադրական դատավճռի ուժի մեջ մտնելը, հնարավոր է քրեական գործի համակողմանի, օբյեկտիվ և ժամանակին քննությունն ու լուծումն ապահովելու, ինչպես նաև տուժողների, հասարակության և պետության շահերը պաշտպանելու համար:

Այսօր այս ոլորտում հիմնական խնդիրները հետևյալն են.

- դատարանների որոշումներում այնպիսի հատուկ փաստերի և նյութերի վերաբերյալ վերլուծության բացակայությունը, որոնք ցույց են տալիս, որ մեղադրյալը կարող է թաքնվել, խոչընդոտել արդարադատությանը կամ շարունակել հանցավոր գործունեությունը,
- դատարանների կողմից մեղադրանքի ծանրության աստիճանը որպես ազատությունից զրկման միակ կամ որոշիչ հիմք օգտագործելը,
- կարծրատիպային ձևակերպումների առկայությունը, որոնք վկայում են դատարանների ձևական մոտեցման և մեղադրյալի անհատական իրավիճակի վերլուծության բացակայության մասին,
- դատարանների արձագանքների բացակայությունը իրավապահ մարմինների կողմից քրեական գործերը քննելու ըն-

1 Տե՛ս ՌԴ ԳԴ Պլենումի 19.12.2013թ. թիվ 41 (24.05.2016 թ. խմբագրությամբ) որոշման նախաբանը:

2 Տե՛ս ՌԴ ՍԴ 06.12.2011թ. թիվ 27 որոշման 2-րդ կետը:

թացքում դրսևորած անգործության ու անհարկի ձգձգումների համար,

- դատարանների մակերեսային մոտեցումը՝ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու հնարավորության վերաբերյալ,
- դատարանների ձևական մոտեցումը՝ կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը գնահատելու ժամանակ:

Այս հրապարակման նպատակն է առանձնացնել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու առանձնահատկությունները՝ հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքերը:

**Սույն աշխատությունը նախատեսված է դատավորների, դատախազների, քննիչների, քրեական դատավարության ոլորտում աշխատող փաստաբանների, դատարաններում և իրավապահ մարմինների աշխատակազմերում ներգրավված այլ աշխատակիցների, ինչպես նաև սույն թեմայով հետաքրքրվող իրավաբանների համար:**

## Գլուխ 1

Ազատության սահմանափակման պայմաններն ու հիմքերը կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում<sup>1</sup>

### 1.1. Հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածի (մեղադրանքի) առկայությունը, որը չի բացառում անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու համար

#### Կասկածի (մեղադրանքի) հիմնավորվածությունը

Հանցանքի կատարման մեջ հիմնավոր կասկածը հանդիսանում է անձին կալանավորելու համար անհրաժեշտ պայման: Սակայն հիմնավոր կասկածի առկայությունը դեռ բավարար չէ անձին կալանավորելու համար: Այն պետք է ամրապնդվի գործում առկա օբյեկտիվ փաստերով և ապացույցներով: Միևնույն ժամանակ հարկավոր է ընգծել, որ այն փաստերն ու ապացույցները, որոնք հիմք են հանդիսանում անձին կալանավորելու համար, պարտադիր չէ, որ օժտված լինեն նույն ապացուցողական ուժով, որն անհրաժեշտ է անձին մեղադրանք առաջադրելու համար:

Հիմնավոր կասկածի բացակայությունը Եվրոպական դատարանի կողմից ճանաչվել է հետևյալ իրավիճակներում.

- *Դիմումատուի ներգրավվածությունը հանցավոր գործունեության մեջ բացառապես հիմնավորված է եղել որևէ այլ հայ-*

1 ՄԻԵԴ-ի և ՌԴ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո տնային կալանքը կալանավորման հետ հավասարապես դիտվում է որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման միջոց, ինչի արդյունքում տնային կալանքի կիրառման հիմքերն ու պայմանները նույն են, ինչ կալանավորման դեպքում (Տես Case of Ermakov v. Russian (Երմակովի ընդդեմ Ռուսաստանի) 07/11/2013., 43165/10, պարագրաֆ 238, Case of Buzadji v. Moldova (Բուզադջին ընդդեմ Մոլդովայի) 05/07/2016., 23755/07, պարագրաֆներ 111-114, Տես նաև՝ Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի 06.12.2011թ. № 27-Մ որոշումը, կետ 3):

Նշվածն ավելի արդիական է, քանի որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը տնային կալանքը դիտում է որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց:

- դարարություններով, տեղեկություններով կամ կոնկրետ բողոքով չհիմնավորված օպերատիվ տեղեկություններով, որոնք տրամադրվել էին օպերատիվ ծառայության կողմից՝
- Տուժողի այնպիսի հայտարարությունն իր հանդեպ կատարված հանցագործության մասին, որում չի հիշատակվում մեղադրյալը<sup>2</sup>,
  - Մեղադրյալի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ տուժողի անունից տրված այնպիսի հայտարարությունը, որն ըստ տուժողի՝ ինքը չի գրել կամ մեղադրյալի անունն իր կող-

---

«Հոդված 123. Տնային կալանքը.

1. Տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը: 2. Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) ունենալ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց,

2) շփում ունենալ որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

3. Տնային կալանք կիրառելու մասին դատարանի որոշման մեջ նշվում են այն կոնկրետ սահմանափակումները, որոնք տարածվում են մեղադրյալի նկատմամբ, ինչպես նաև իրավասու այն մարմինը, որին հանձնարարվում է այդ սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունը: Հեռախոսային խոսակցություններ ունենալու արգելքը չի տարածվում շտապ բժշկական օգնություն, իրավապահ մարմիններ կամ արտակարգ իրավիճակներում փրկարար ծառայություն կանչելու, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող մարմնի հետ կապ հաստատելու դեպքերի վրա: Այդ մասին մեղադրյալն անհապաղ տեղեկացնում է վերահսկողություն իրականացնող մարմնին:

4. Մեղադրյալի վաքազձի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ իրականացվում է օրենսդրությամբ սահմանված հատուկ էլեկտրոնային միջոցներով:

Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, չվնասել դրանք, ինչպես նաև արձագանքել իրավասու մարմնի հսկողության ազդանշաններին:

5. Տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար սույն օրենսգրքով սահմանված դրույթները: 6. Տնային կալանքի մեկ օրը հավասար է կալանքի մեկ օրվան»:

- 1 Տե՛ս Case of Lazaroski v.FYR Makedonia (Լազարովսկին ընդդեմ նախկին Հարավսլավոնական Հանրապետության) 08/10/2009., 4922/04, կետ 48, case of Labita v.Italy (Լաբիտան ընդդեմ Իտալիայի) 06/04/2000., 26772/95, պարագրաֆներ156-160:
- 2 Տե՛ս Case of Stepuleac v. Moldova (Ստեպուլեակն ընդդեմ Մոլդովայի) 06/11/2007., 8207/06, պարագրաֆ 70:

- միջ նշվել է ոստիկանի ուղղորդմամբ<sup>1</sup>,*
- *Դատարանների հղումը «գործի նյութերի վրա», որոնցում բացակայում է որևէ ապացույց, որ կվկայի անձի առնչությունն իրեն մեղսագրված արարքին<sup>2</sup>,*
  - *Երբ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել<sup>3</sup>:*

ՌԴ Գերագույն դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ կասկածի հիմնավորվածությունը ենթադրում է բավարար տվյալների առկայությունն այն մասին, որ անձը, հավանաբար, կատարել է հանցագործություն (անձը բռնվել է քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո, ակնատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարողի, տվյալ անձի կամ նրա հազուստի վրա, նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր և այլն)<sup>4</sup>:

1 Տե՛ս Case of Stepuleac v. Moldova (Ստեպուլեակն ընդդեմ Մոլդովայի) 06/11/2007., 8207/06, պարագրաֆ 77:

2 Տե՛ս Case of Ildar Mammadov v. Azerbadjan (Իլդար Մամմադովն ընդդեմ Ադրբեյջանի) 22/05/2014., 15172/13, պարագրաֆ 97:

3 Տե՛ս Case of Khachatryan and others v. Armenia (Խաչատրյանն և այլք ընդդեմ Հայաստանի) 27/11/2012, 23978/06, պարագրաֆ 136

Միևնույն ժամանակ, անձին հանցանքի մեջ մերկացնող ցուցմունքները, որոնք տրվել են մի քանի տարի առաջ, մինչև վերջինիս կալանավորումը, և որոնցից հետագայում հրաժարվել են այն անձինք, ովքեր կասկածվում են ահաբեկչական բնույթի հանցագործությունների կատարման մեջ, չեն վերացնում հիմնավոր կասկածի առկայությունը դիմումատուի հանդեպ (Տե՛ս Case of Talat Tepe v. Turkey (Թալատ Թեփեն ընդդեմ Թուրքիայի) 21/12/2004., 31247/96, պարագրաֆ 61): Ահաբեկչական բնույթի հանցագործությունների քննության առանձին դժվարությունների և գաղտնի գործակալների պաշտպանության անհրաժեշտության լույսի ներքո դատարանը փաստել է, որ պետությունը պարտավոր չէ բացահայտել տեղեկատվության կոնֆեդենցիալ աղբյուրները, որպեսզի հիմնավորի հիմնավոր կասկածի առկայությունը կալանավորման համար այն անձի, ով կասկածվում է ահաբեկչության մեջ: Միաժամանակ, պետությունը պարտավոր է հղում կատարել այնպիսի կոնկրետ փաստերի կամ տեղեկությունների վրա, որոնք ունակ կլինեն համոզել դատարանին կասկածների հիմնավորվածության իրական լինելը (Տե՛ս Case of Adirbelli and Others v. Turkey (Ադիրբելլին ընդդեմ Թուրքիայի) 02/12/2008., 20775/03, պարագրաֆ 27):

4 Տե՛ս ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 19.12.2013թ. № 41 որոշումը

«Վճռաբեկ դատարանն Ասլան Ավետիսյանի վերաբերյալ որոշման մեջ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ.



(...) *անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, «Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (Սահմանադրության 3-րդ հոդված): Ոստի, մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրոյթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից:*

(...)

Ընդ որում՝ *անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից» (տես Ասլան Ավետիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշման 18-րդ և 22-րդ կետերը): Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ Վ. Գևորգյանի վերաբերյալ որոշման մեջ դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ.*

*«(...) «Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ կետի, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի և «Քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդ-*

---

(24.05.2016թ. խմբագրությամբ) «Դատարանների կողմից խափանման միջոցներ կալանքի, տնային կալանքի և գրավի վերաբերյալ օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին», կետ 2:

վածի վերլուծությունից հետևում է, որ անձի կալանավորումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ հաստատվի.

ա) անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

(...) Կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանք է, որի բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին:

(...)

Դիրքորոշում սահմանելով այն մասին, որ կասկածը պետք է լինի ողջամիտ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում, անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում են այն ենթադրյալ հանցանքին, որի

կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին» (տես Վահրամ Գևորգյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-րդ և 21-րդ կետերը):

Չարգացնելով վերը մատնանշված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հ.Խաչատրյանի վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրել է, որ հիմնավոր կասկածը պետք է ապահովի անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմնավորված և օրինաչափ սահմանափակումը, իսկ դատական վերահսկողությունը լինի երաշխիք այդ իրավունքի անհիմն սահմանափակումները կանխելու համար:

Այսինքն՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման ար-



դյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդարական վարույթի նկատմամբ դարական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդարական վարույթի նկատմամբ դարական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի:

Այլ կերպ՝ մինչդարական վարույթի նկատմամբ դարական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է քննարկի այնպիսի հարցեր և դրանց վերաբերյալ ընդունի որոշումներ, որոնք կազմում են հետագա դարական քննության առարկան (...): (Տե՛ս Հ. Խաչատրյանի վերաբերյալ գործով 22.12.2011թ. թիվ ՏԴ2/0009/06/11 որոշման 13-րդ կետը):



Նախագիծն արդեն այս հարցը անմիջապես կարգավորում է 116-րդ հոդվածում: Այսպես, Նախագծի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝



1. Խափանման միջոց չի կարող կիրառվել, եթե բացակայում է մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածը:



**Այսիսով, գործում առկա տվյալները ենթակա են հետազոտման և մանրակրկիտ վերլուծության դրանց բավարարության տեսանկյունից՝ հաստատելու համար կասկածի հիմնավորվածությունն այն անձի նկատմամբ, ում վերաբերյալ քննարկվում է խափանման միջոցի կիրառման հարցը:**

Եթե դատարանը գործում առկա փաստական տվյալները պատշաճ

1 Տե՛ս ՀՀՊՏ 2012.07.24/35(909).1:

չի հետազոտել հիմնավոր կասկածի ստուգման նպատակով, ապա այդ հանգամանքը հանդիսանում է քրեական դատավարության օրենքի էական խախտում:

Անձին կալանավորելու համար պայմանի և հիմքերի առկայության փաստը որոշելիս անհրաժեշտ է ուսումնասիրել քրեական գործ հարուցելու և անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, անձի ձերբակալման, որպես կասկածյալի և (կամ) մեղադրյալի հարցաքննության արձանագրությունները և այլ անհրաժեշտ նյութերը (օրինակ, տուժողի և վկաների հարցաքննությունների արձանագրությունները, անցկացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները, որքանով դրանց բացահայտումը չի վտանգի գործի հետագա ընթացքը), որոնք կվկայեն անձի առնչության մասին կատարված հանցագործությունը:

«Վճռաբեկ դատարանը Կարապետ Հարությունյանի վերաբերյալ որոշմամբ անդրադառնալով այն հարցին, թե հիմնավոր է, արդյոք, Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս նախաքննության մարմնից լրացուցիչ նյութեր չպահանջելով, զրկել է իրեն մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն կատարելուց, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.



«(...), որ նախաքննության մարմինը մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին ներկայացրած միջնորդության հետ պարտավոր է դատարան ներկայացնել առնվազն հետևյալ նյութերը.

ա. անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը հավաստող նյութեր,

բ. քրեական գործ հարուցելու մասին որոշում,

գ. անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում,

դ. մեղադրյալի ինքնությունը հաստատող փաստաթղթի պատճենը,

ե. մեղադրյալի տարիքը հավաստող փաստաթուղթ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու որոշակի տարիքի հասած լինելու կասկածի դեպքում,

զ. անձեռնմխելիությունից օգտվող անձանց կալանավորելու համար այն հաղթահարելու մասին իրավասու մարմնի որոշում,

է. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի առկայության վերաբերյալ նյութեր, ապացույցներ:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինն է կրում վերը թվարկված նյութերը դատարան ներկայացնելու պարտականությունը, որով վերջինս փորձում է հիմնավորել կալանավորման պայմանների ու հիմքերի առկայությունը: Ընդ որում, նախաքննության մարմինը կրում է ներկայացված նյութերի ամբողջականության, հավաստիության, կալանավորումը որպես խափանման միջոց դրանք կիրառելու համար բավարարության ռիսկերը: Մինչդեռ դատարանի համար նախաքննության մարմնի կողմից միջնորդության հետ դատարան ներկայացված նյութերից բացի լրացուցիչ նյութեր պահանջելը գտնվում է դատարանի հայեցողական լիազորությունների տիրույթում: *(Դատարանի հայեցողական լիազորությունների բնույթի մանրամասն վերլուծությունը, mutatis mutandis, տես Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի Հմայակ Դավթյանի վերաբերյալ գործով ՇԴ/0126/01/12 որոշումը):*

Այլ կերպ՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորման որպես խափանման միջոցի ընտրության հարցը քննության է առնվում իրավասու դատարանի կողմից նախնական քննության նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի շրջանակներում՝ ապահովելով կողմերի (մեղադրյալ և նախաքննության մարմին) մրցակցությունը: Իսկ դատարանը որպես արդարադատություն իրականաց-

նող մարմին, հանդես չի գալիս մեղադրյալի կամ նախաքննության մարմնի կողմում և արտահայտելով բացառապես իրավունքի շահը՝ լուծում է անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը ներկայացված միջնորդության և այդ միջնորդության կապակցությամբ դատարան ներկայացված նյութերի սահմաններում: Իսկ նյութերի ոչ ամբողջական լինելու և դատարանի կողմից նախաքննության մարմնից հայցված նյութերը չներկայացնելու բացասական հետևանքները կրում է միջնորդությունը ներկայացրած անձը (...)<sup>1</sup>: »



**Հիմնավոր կասկածի բացակայությունը բացառում է անձի նկատմամբ կալանավորման կիրառումը:**

«Վճռաբեկ դատարանը Ա.Դիլանյանի վերաբերյալ գործով արձանագրել է հետևյալը.



*Նախորդ կետում մեջբերված դրույթները Գ. Միքայելյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «(...) [Ա]նձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հեղափոխության մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել:*

*ա) անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և*

*բ) «քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը: (...)» (տես Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 32-րդ կետը):*

1 Տես ՀՀՊՏ 2018.11.07/83(1441):

Վ. Գևորգյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը զարգացրել է վերոնշյալ իրավական դիրքորոշումը և արձանագրել, որ «(...) [Կ]ալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է: (...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը.

ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը,

գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետեւության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյո՞ք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական փյույաների վրա, որոնք պետք է պարզաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պարճառաբանված» (տես Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-րդ, 22-23-րդ կետերը):

14. Սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված իրավանորմերը համադրելով սույն որոշման 13-րդ կետում և համապատասխանաբար, Գ. Միքայելյանի և Վ. Գևորգյանի գործերով որոշումներում շարադրված դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է ընտրվել կալանավորման պարտադիր պայմաններից մեկի, այն է՝ հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Այլ խոսքով՝ եթե առկա չէ հիմնավոր կասկած այն մասին, որ անձը հանցանք է կատարել, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել, հետևաբար, չի կարող քննարկման առարկա դառնալ նաև գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման թույլատրելիության հարցը (...)» (Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արտակ Դիլանյանի վերաբերյալ թիվ ԱՐԱԴ/0021/06/14 գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի որոշման կետեր 13-14-րդ):



1 Տես ՀՀՊՏ 2014.11.05/59(1072).1:

**Կալանավորման մասին դատական ակտի պատճառաբանական մասը պետք է բովանդակի այն ներկայացված նյութերի վերլուծությունը, որի հիման վրա դատարանը կասկածը համարել է հիմնավոր:**


Ստանդարտ ձևակերպումների կիրառումը, ինչպիսիք են, օրինակ «քննիչի կողմից ներկայացված ապացույցները, վկայում են բավարար տվյալների առկայության մասին, որոնք հաստատում են հիմնավոր կասկածը», առանց մատնանշման կոնկրետ փաստերի և նյութերի կամ դրանց վերլուծության, չեն կարող համարվել բավարար: Հիմնավոր կասկածը հաստատող տեղեկությունները պետք է հստակ առանձնացված լինեն:

Իսպանման միջոցի կիրառման մասին որոշումը չպետք է պարունակի որևէ ուղղակի կամ անուղղակի մատնանշում, որը կվերաբերի անձի մեղավորությանն իրեն մեղսագրված արարքում: Անհրաժեշտ է խուսափել այնպիսի ձևակերպումներից, որոնք դատավարության կողմերի մոտ տպավորություն կառաջացնեն, որ անձի մեղավորության հարցը արդեն կանխորոշված է դատարանի կողմից<sup>1</sup>:

Հ. Իսաչատրյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝


« (...) հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապված հարցեր: Առաջին՝ առկա՞ են, արդյոք, **կասկածը հիմնավորող տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ**, որոնք ուղղակիորեն կմատնանշեն անձի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, երկրորդ՝ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, առերևույթ համընկնու՞մ է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին (...)»  
(Տես Հ. Իսաչատրյանի վերաբերյալ գործով 22/12.2011թ.


1 Տես Case of Vakhitov and Others v.Russia (Վախիտովի ընդդեմ Ռուսաստանի) 31/01/2017., 18232/11, պարագրաֆներ 67-71:

թիվ ՏԴ2/0009/06/11 որոշման 15-րդ կետը<sup>1</sup>: 

**Արարքի այնպիսի որակումը, որը չի բացառում կալանավորման կիրառումը:**

Արարքի ճիշտ որակումն անհրաժեշտ նախադրյալ է հանդիսանում հանցագործության ծանրության աստիճանը որոշելու համար, որի ծանրությունից կարող է կապված լինել անձի կալանավորելու հնարավորությունը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

 (...) Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն (...):  
Դրանք են.

- 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից,
- 2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով,
- 3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.
- 4) խուսափել քրեական պատասխանավորությունից և նշանակված պատիժը կրելուց,
- 5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը: 

1 Տե՛ս ՀՀՊՏ 2012.07.24./35(909).1:



Այսինքն, որպես այդպիսին, հայկական օրենսդիրը, հանցագործության ծանրությունից ելնելով, կալանավորման կիրառման համար, որպես այդպիսին, սահմանափակում չի նախատեսում՝ նախատեսելով միայն ազատագրկման նվազագույն շեմը՝ 1 տարի ժամկետով ազատագրկումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը միայն անչափահասների պահով է նման սահմանափակում նախատեսում՝ անչափահասների նկատմամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածի համաձայն՝

« (...) անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում (...): »

Նախագծի 118-րդ հոդվածը նախատեսում է կալանքի իրավաչափության վերաբերյալ հետևյալ կարգավորումները.

**Հոդված 118. Կալանքի իրավաչափության առանձնահատկությունները**

1. Կալանքը դատարանի որոշմամբ մեղադրյալին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ազատությունից զրկելն է՝ օրենքով և դատարանի այդ որոշմամբ սահմանված ժամկետով:

2. Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն անբավարար է սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար:

3. Եթե մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նախատեսված չէ, ապա կալանքը կարող է կիրառվել միայն մեղադ-

ոյալի կողմից իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում:

4. Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պարճառաբանված հաստատվել են սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված իրավաչափության համապատասխան պայմանները: Դատական վարույթում կալանքի կիրառման համար բավարար է դատարանի կողմից նշված պայմանների պարճառաբանված հաստատումը:

5. Կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պարզաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը: >>

Այսինքն, Նախագծով ընդհանրապես հանվում է հանցագործության ծանրությամբ պայմանավորված կալանքի կիրառման անհրաժեշտությունը՝ դա կապելով միայն Նախագծով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կիրառման անբավարար լինելու հետ: Նախագծի 115-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է կալանքին որպես այլընտրանք, հետևյալ խափանման միջոցները.

- 1) տնային կալանքը,
- 2) վարչական հսկողությունը,
- 3) գրավը,
- 4) պաշտոնավարման կասեցումը,
- 5) բացակայելու արգելքը,
- 6) երաշխավորությունը,
- 7) դաստիարակչական հսկողությունը,
- 8) զինվորական հսկողությունը:

Նախագիծը, բացի հիմնավոր կասկածի վերաբերյալ կարգավորումից, նաև հստակեցրել և միջազգային նորմերին համահունչ է դարձրել կալանքի կիրառման հիմքերը: Այսպես, Նախագծի 116-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝

- « 2. Խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է.
- 1) մեղադրյալի փախուստը կանխելու համար, կամ
  - 2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար, կամ
  - 3) մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար:
3. Խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները: »

Ի տարբերություն ՀՀ քրեադատավարական օրենսդրության՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքը առանձին հանցատեսակների համար նախատեսում է ուղիղ արգելք կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Այսպես, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-րդ մասը արգելում է որպես խափանման միջոցի կալանավորման կիրառումը, բացառությամբ նույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված դեպքերի<sup>1</sup>, այն կասկածյալների և մեղադրյալների նկատմամբ, որոնք մեղադրվում են ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-4-րդ մասերով, 1591-159.3-րդ,

1 ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված դեպքերը հետևյալն են.

- 1) կասկածյալը կամ մեղադրյալը մշտական բնակության վայր չունեին Ռուսաստանի Դաշնության տարածքում,
- 2) պարզված չէ նրա անձը,
- 3) նրա կողմից խախտվել է նախկինում ընտրված խափանման միջոցը,
- 4) նա թաքնվել է նախաքննություն իրականացնող մարմիններից կամ դատարանից:

(Տե՛ս [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_34481/4fef595255a2cca594fdc917279f0914e00ac194/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/4fef595255a2cca594fdc917279f0914e00ac194/)):

1595-րդ և 205-րդ 5-րդ, 1595-րդ, 1596-րդ, 160-րդ, 165-րդ և 201-րդ հոդվածներով, եթե այդ հանցագործությունները կատարվել են անհատ ձեռներեցների կողմից՝ կապված նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելով և (կամ) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով իրեն պատկանող գույքի կառավարմամբ կամ եթե այդ հանցագործությունները կատարվել են առևտրային կազմակերպության կառավարման մարմնի անդամի կողմից, կապված այդ առևտրային կազմակերպության կողմից ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության հետ, ինչպես նաև ՌԴ քրեական օրենսգրի 159-րդ հոդվածի 5-7-րդ մասերով, 171-րդ, 171.1-ին, 171.3-րդ- 172.3-րդ, 173.1-174.1-րդ, 176-178-րդ, 180-րդ, 181-րդ, 183-րդ, 185-185.4-րդ և 190-199.4-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններ կատարելու դեպքում:

Վերոնշյալից հետևում է, որ խափանման միջոցի հարցի քննարկման ընթացքում դատարանը պետք է պարզի, թե գործունեության որ ոլորտում է կատարվել տվյալ հանցագործությունը<sup>1</sup>:

ՌԴ Գերագույն դատարանի պլենումի պարզաբանումների համաձայն՝ հանցագործությունները համարվում են ձեռնարկատիրական գործունեության ոլորտում կատարված, եթե դրանք կատարվել են անհատ ձեռներեցների կողմից կապված նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելով և (կամ) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով իրեն պատկանող գույքի կառավարմամբ կամ եթե այդ հանցագործությունները կատարվել են առևտրային կազմակերպության կառավարման մարմնի անդամի կողմից, կապված այդ առևտրային կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեության հետ: ՌԴ քրեական օրենսգրի 159-րդ հոդվածի 5-7-րդ մասերով նախատեսված հանցագործությունները կատարվում են վերոնշյալ անձանց կողմից միայն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս: Եթե այդ հանցագործությունները կատարվել են անհատ ձեռներեցների կամ առևտրային կազմակերպության կառավար-

1 Sten Rubstov and Balayan v.Russia (Ռուբցովս ու Բալայանն ընդդեմ Ռուսաստանի) 10/04/2018., 33707/14, կետեր 28-36, ինչպես նաև՝ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 19.12.2013թ. № 41 որոշումը (24.05.2016թ. խմբագրությամբ) «Դատարանների կողմից խափանման միջոցներ կալանքի, տնային կալանքի և գրավի վերաբերյալ օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին», կետ.7:

ման մարմնի անդամի կողմից այլ անձանց հետ հանցակցությամբ, որոնք չունեն վերոնշյալ կարգավիճակ ունեցող անձանցից, ապա այդ անձանց նկատմամբ նույնպես չի կարող որպես խափանման միջոց ընտրվել կալանավորումը, բացառությամբ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված դեպքերի<sup>1</sup>:

Վերոնշյալի համատեքստում, եթե հետագայում ՀՀ օրենսդիրը որդեգրի նման քաղաքականություն, ապա ՀՀ իրավապահ մարմինները և դատարաններն ուշադրություն պետք է դարձնեն, որ չանտեսվեն այն հանգամանքները, որ մեղադրյալին մեղսագրվող արարքը մեղադրյալին կալանավորելու հնարավորություն չի տալիս, կալանավորման հնարավորություն չի տալիս նաև դրա հիմնավորումը՝ պայմանավորված պատճառված վնասի չափով, ենթադրաբար հասցված մեղադրյալի կողմից, ինչպես նաև հանցագործության ծանրությանը հղումը, որպես կալանավորման համար առանցքային հիմք:

**Դատական վերահսկողությունը մեղադրանքի կողմից տրված որակումների նկատմամբ իրավապահ մարմինների կողմից հնարավոր կամայականություններից մեղադրյալի իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիք է հանդիսանում:**

Հակառակ պարագայում ցանկալի նպատակին հասնելու համար, իրավապահ մարմինների կողմից բավարար կլինի որակել մեղադրյալի արարքը որպես ավելի ծանր հանցանք, որպեսզի դատարանը վարույթն իրականացնող մարմնի օգտին որոշում կայացնի՝ մեղադրյալի նկատմամբ՝ որպես խափանման միջոց կիրառելով կալանավորումը:



*Չենցովը և այլք ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որ-*

1 Տե՛ս Case of Rubstov and Balayan v.Russia (Ռուբցովս ու Բալայանս ընդդեմ Ռուսաստանի) 10/04/2018., 33707/14, պարագրաֆներ 28-36, ինչպես նաև՝ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 15.11.2016թ. № 48 որոշումը «Դատարանների կողմից ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության բնագավառում հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը կարգավորող օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին», կետեր 7-8:

պես խափանման միջոց ընտրելու ժամանակ վերջիններս մեղադրվել են առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու մեջ, հետագայում վերջիններիս արարքները վերաորակվել էին ավելի մեղմ հանցատեսակներով: Ավելին՝ դատարանը մեղադրյալների նկատմամբ կալանավորման ժամկետն ամեն անգամ երկարացնելիս հղում է կատարել սկզբնական որակման վրա<sup>1</sup>:



«Վճռաբեկ դատարանի կողմից «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» վերաբերյալ ձևավորվել է կայուն նախադեպային պրակտիկա, որն ամփոփվել է Էդգար Եղիազարյանի վերաբերյալ թիվ ԵԱՆԴ/0017/06/16 գործով 2017 թվականի հունիսի 22-ին կայացված որոշմամբ հետևյալ կերպ.



(...) «Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, **երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած**, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետե-

1 Stiu Case of Zentsov and others v.Russia (Զենցովս ընդդեմ Ռուսաստանի) 23/10/2012., 35297/05, պարագրաֆ 60:

վյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.  
(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ **իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում** նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

(...):

13.1. Կալանավորման պայմաններից մեկի՝ «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ դիրքորոշումները.

- հանցանք կատարած լինելու կասկածի՝ ողջամտորեն հիմնավորված լինելու պահանջը կամայական ձերբակալման և կալանավորման դեմ երաշխիքի կարևոր մասն է կազմում (տես Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի (Gusinskiy v. Russia) գործով 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գանգապ թիվ 70276/01, կետ 53),

- «հիմնավոր կասկածը» եզրույթը ենթադրում է փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, կատարած լինել հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստե-

ընդ բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում (տե՛ս Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K. F. v. Germany) գործով 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգապ թիվ 144/1996/765/962, կետ 57),

- հիմնավոր կասկածի առկայությունը անհրաժեշտ պայման է անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականության համար

(տե՛ս Մակքեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKay v. The United Kingdom) գործով 2006 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգապ թիվ 543/03, կետ 44): Ըստ այդմ թե՛ն ձերբակալման պահին և սկզբնական կալանքի ժամանակ պետք է առկա լինի հիմնավոր կասկածը, այնուամենայնիվ, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս նույնպես պետք է ցույց տալ, որ այդ կասկածները պահպանվել են և շարունակում են մնալ «հիմնավոր» (տե՛ս Ուրտանսն ընդդեմ Լատվիայի (Urtāns v. Latvia) գործով 2014 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգապ թիվ 16858/11, կետ 32): Ազատությունից զրկելու փոստությունը կարող է լինել կարևոր գործոն կասկածի պահանջվող աստիճանի համար (տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. The United Kingdom) գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգապ թիվ 14310/88, կետ 56),

- կալանքի հիմնավորվածության կարևոր փորձերից են կասկածի արժանահավատությունն ու բարեխղճությունը (տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. The United Kingdom) գործով 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգապ թիվ 14310/88, կետ 61): Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանը փաստել է, որ բարեխղճության վրա հիմնված կասկածը չի կարող բավարար համարվել (տե՛ս Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի (Gusinskiy v. Russia) գործով 2004 թվականի մայիսի 19-ի վճիռը, գան-



գապ թիվ 70276/01, կետ 53),

- այն, թե ինչպիսի կասկածը կարող է համարվել հիմնավոր, կախված է գործի բոլոր հանգամանքներից: Կասկածը չի կարող հիմնված լինել սուսկ այն հավաստիացման վրա, որ առկա է սպույզ, բայց և գաղտնի տեղեկություն (տե՛ս Ֆոկսը, Քեմբելն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. The United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգապներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32),

- հիմնավոր կասկածը չի կարող առկա լինել, եթե արարքը, որի կատարման մեջ կասկածվում է անձը, դրա կատարման պահին չի համարվել հանցագործություն (տե՛ս Վլոչն ընդդեմ Լեհաստանի (Wloch v. Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգապ թիվ 27785/95, կետ 109, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգապ թիվ 23978/06, կետ 136):

13.2. Հիմք ընդունելով նաև Եվրոպական դատարանի ձևավորած վերոգրյալ առանձին դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ իր նախադեպային իրավունքում փաստել է. «(...)Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը (...):

(...)

(...) [Յ]ուրաքանչյուր դեպքում [հանցանք կատարած լինելու կասկածը] պետք է լինի ողջամիտ:

(...)

(...) «[Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: (...) [Կ]ասկածը հիմնավոր

կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կասյը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

(...) [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող վերոնշյալ տեղեկությունները, փաստերը կամ ապացույցները պետք է հետազոտվեն մրցակցային դատավարության կանոնների պահպանմամբ, ինչը ենթադրում է, որ այդ տեղեկություններին, տվյալներին կամ ապացույցներին պետք է ծանոթանա նաև պաշտպանական կողմը:

(...)

(...) [Այսպիսով], Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ

բացակայության վերաբերյալ պեպոք է լինեն հիմնավորված և պատճառաբանված (տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը):

Զարգացնելով վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հարություն Խաչատրյանի գործով որոշման շրջանակներում ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Հ]իմնավոր կասկածը պեպոք է ապահովի անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի հիմնավորված և օրինաչափ սահմանափակումը, իսկ դատական վերահսկողությունը լինի այդ իրավունքի անհիմն սահմանափակումները կանխելու երաշխիք:

Այսինքն՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ հանդիսանում են արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր: Եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվեն քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեաիրավական գործառնությունների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի:

Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դա-

տրական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է քննարկի այնպիսի հարցեր և դրանք վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան:

(...)

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապված հարցեր: Առաջին՝ առկա՞ են, արդյոք, կասկածը հիմնավորող տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմասնանշեն անձի առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, երկրորդ՝ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, առերևույթ համընկնու՞մ է քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմի հատկանիշներին» (տես Հարություն Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴ2/0009/06/11 որոշման 13-րդ և 15-րդ կետերը):

Քննարկվող հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Տիգրան Վահրադյանի գործով որոշման շրջանակներում՝ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը. «(...) Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ խափանման միջոցը ձեռք է բերում պատժիչ նպատակ: Մինչդեռ խափանման միջոցը կիրառման նպատակով տարբերվում է պատժից:

Խափանման միջոցի կիրառման նպատակը քրեական գործի մինչդատական և դատական քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ինչպես նաև դատավճռի կատարումն ապահովելն է: Մասնավորապես, կալանքի, որպես խափանման միջոցի, կիրառման վարույթը միտված չէ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ փաստական տվյալների հավաքմանը, ստուգ-

մանն ու գնահատմանը: Այդ վարույթի նշանակությունն այն է, որ քննարկվի և լուծվի կալանավորված անձին հասարակությունից ժամանակավորապես մեկուսացնելու և հսկողության ներքո պահելու անհրաժեշտության հարցը՝ ելնելով գործի քննության շահերից:

Այլ կերպ՝ կալանավորման նպատակն է նախաքննության և դատական քննության բնականոն գործընթացի ապահովումը, քրեական գործի բնականոն քննությանը մեղադրյալի (կասկածյալի) դիմակայության կանխումը, դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցության ապահովումը (...) (տե՛ս Տիգրան Վահրադյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշման 42-րդ կետը):

Իսկ Ա.Սարգսյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է. «(...) [Ա]նձի ազատության սահմանափակման դեպքում դատարանները, ի թիվս կալանավորման հիմքերի և այլ պայմանների, քննարկման առարկա պետք է դարձնեն նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը: Եթե կոնկրետ դեպքում առերևույթ առկա և կիրառելի է քրեական վարույթը բացառող հանգամանքներից որևէ մեկը, ապա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման:

Այսինքն՝ անձի ազատությունը սահմանափակելը կհամարվի օրինական և հիմնավորված միայն կալանավորման հիմքերի և այլ պայմանների միաժամանակյա առկայության և քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում:

(...)

(...) [Քրեական վարույթը բացառող հանգամանքի առկայության] անտեսմամբ կալանավորումը որպես խափան-

ման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելը դատական վերահսկողությունը դարձնում է ձևական և ոչ արդյունավետ միջոց, որի հետեւվանքով էլ չի իրականացվում դատական վերահսկողության առաքելությունը՝ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը և այդ իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումների բացառումը (տես Արամ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0503/06/10 որոշման 23-րդ և 28-րդ կետերը):

14. Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի ձևավորած դատողությունները, ինչպես նաև վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի անձի ազատության իրավունքի սահմանափակման աներկբա անհրաժեշտությունը ավելի բարձր նշանակության բարիքի, այն է՝ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը, անձի ազատության սահմանափակման հիմնավորվածությունը: Մինչդարձ վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար հիմնավոր կասկածի առկայությունն ունի հիմնարար նշանակություն, քանզի դրա բացակայության պայմաններում անձի ազատության ցանկացած սահմանափակում կհամարվի ի սկզբանե ապօրինի: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում /մեղադրվում/ ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի

հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ:

15. Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում **ընդգծել** հետևյալ հանգամանքները.

- հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական փյույթների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում/մեղադրվում է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

- կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելիս պետք է ցույց տրվի, որ հանցանք կատարած լինելու կասկածը պահպանվել է և շարունակում է մնալ «հիմնավոր»:  
Ազատությունից զրկելու փոխարենը կարող է լինել կարեվոր գործոն կասկածի պահանջվող աստիճանի համար,

- մինչդարձական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից (տե՛ս, *mutatis mutandis*, Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԴ1/0003/11/08 որոշումը), ուստի և

հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Մինևույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործը ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել (այդ առումով մանրամասն տես, օրինակ, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգապ թիվ 23978/06), կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն),

- հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումը **ակնհայտորեն** չհամապատասխանի արարքի փաստա-



կան նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմը առերևույթ վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (օրինակ՝ անձին մեղսագրվել է խոշոր չափերով գողություն կատարելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), ինչը, սակայն, ակնհայտորեն չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը, իսկ վերջինը առերևույթ վկայում է անձի արարքում գողության հասարակ հանցակազմի հատկանիշների առկայության մասին, կամ, օրինակ, անձին մեղսագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու հանցակազմը, սակայն արարքի փաստական նկարագրությունը **ակնհայտորեն** վկայում է զենքի գործադրման բացակայության, բայց միևնույն ժամանակ առերևույթ փաստում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված որակյալ հանցակազմի առկայության մասին) (...) (Տես ՀՀ վճռաբեկ դատարանի Էդգար Եղիազարյանի վերաբերյալ թիվ ԵԱՆԴ/0017/06/16 գործով 2017 թվականի հունիսի 22-ի որոշման 13-15-րդ կետերը)՝

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնական իրավունքներից է, այս իրավունքի նշանակության և արժեքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը 2019 թվականի ապրիլի 16-ի թիվ ՍԴՈ-1453 որոշմամբ (կետ 5.7) դիրքորոշում է արտահայտել, որ.

«1) Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած» արտահայտության սահմանադրական բովանդակու-

1 Տես ՀՀՊՏ 2017.12.01/72(1347).1:

թյունը, հաշվի առնելով կալանավորելու եղանակով անձի անձնական ազատությանն առավել ինքնենսիվ միջամտության համար բոլոր անհրաժեշտ նախադրյալների պատշաճ հիմնավորման պահանջը, ներառում է նաև **մեղադրանքի իրավաչափությունը**, որը, իր հերթին, պետք է խարսխվի **քրեական հետապնդումը բացառող բոլոր հանգամանքները, այդ թվում և հարկապես՝ արարքի ապաքրեականացումը** ժխտելու վրա: Նման մոտեցումը բխում է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից: Վերջինս քննության առնելով նախնական կալանքի իրավաչափության հարցը՝ շեշտել է, որ անձին ազատությունից զրկելու համար պակնհայր է, որ չի կարող լինել նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, եթե նրան վերագրվող գործողությունը կամ անգործությունը կատարման պահին քրեական օրենքով հանցանք չի համարվել (*Wloch v. Poland*, app. 27785/95, Judgment 19/10/2000, §§ 108-109 և *Kandzhov v. Bulgaria*, app. 68294/01, Judgment 06/11/2008, § 57),

2) մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետությունը՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ուժով, ենթադրում է **մեղադրանքի իրավաչափության պարտադիր ստուգում դատարանի** կողմից, առանց կանխորոշելու գործի, ըստ, էության քննության ժամանակ պարզելու ենթակա փաստական և իրավական հանգամանքները,

3) կալանավորման անհրաժեշտությունը պետք է հաստատվի փաստական, այդ թվում՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները հերքող տվյալներով, և մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը՝ որպես անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխիքներից մեկը, ենթադրում է կալանավորման անհրաժեշտության մասին վկայող փաստերի առկայության հաստատում,

4) վերաքննիչ և վճռաբեկ արդյուններում անձի արդյունավետ դատարանի պաշտպանության իրավունքը, ներառյալ համապատասխան դատարանի ակտի իրավաչափության պարզաճ գնահատումը, նույնպես պետք է երաշխավորվեն այդ արդյունների գործառույթների առանձնահատկությունների հաշվառմամբ»<sup>1</sup>:



## 1.2. Կալանավորման կիրառման հիմքերը

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում կալանքի կիրառման համար հիմքերի առկայությունը (բավարար հիմքեր, որոնք թույլ կտան ենթադրել, որ անձը կթաքնվի քննությունից և դատից, կխոչընդոտի գործի քննությանը և կշարունակի հանցավոր գործունեությունը) պետք է ներկայացվեն և ապացուցվեն մեղադրանքի կողմից, ինչպես նաև դատարանի կողմից մանրամասն արտացոլվեն համապատասխան որոշման մեջ՝ հստակ հղումներ կատարելով գործով առկա փաստերի և ապացույցների վրա:

Թեկուզև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը նախատեսում է կալանավորման 5 հիմքեր, սակայն կալանավորման պայմանների և հիմքերի միաժամանակյա առկայության և կիրառման համատեքստում արդիական են վերոնշյալ երեք հիմքերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք կներկայացվեն ստորև:

Գասպարին ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալը.



*Դատարանն անդրադառնում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանված՝ մինչև դատարանի քննության ավարտն ազատ արձակվելու իրավունքին առնչվող ընդհանուր սկզբունքների (տես Բուզադջին*

1 Տես ՀՀՊՏ 2019.04.26/27(1480):

ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [ՄՊ] [Buzadji v. the Republic of Moldova [GC]], թիվ 23755/07, §§ 92-102, ՄԻԵԴ 2016 (քաղվածքներ) և Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի [Ara Harutyunyan v Armenia], թիվ 629/11, §§ 48-53, 2016 թվականի հոկտեմբերի 20) և նշում է, որ արդեն իսկ եզրահանգել է, որ կալանք նշանակելիս և դրա ժամկետը երկարաձգելիս կարծրատիպային ձևակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում (տես Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի [Piruzyan v. Armenia], թիվ 33376/07, §§ 97100, 2012 թվականի հունիսի 26, Մալխասյանն ընդդեմ Հայաստանի [Malkhasyan v. Armenia], թիվ 6729/07, §§ 74-77, 2012 թվականի հունիսի 26, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի [Sefilyan v. Armenia], թիվ 22491/08, §§ 88-93, 2012 թվականի հոկտեմբերի 2 և Արա Հարությունյանի գործը՝ վերևում հիշատակված, §§54-59): Գործը քննող դատարանների՝ սույն գործով բոլոր որոշումները կայացվել են նույն տրամաբանությամբ. դրանք կամ չեն պարունակել որևէ հիմնավորում, կամ եղել են պարզապես ներպետական օրենսդրությամբ ամրագրված համապատասխան սկզբունքների մեջբերումներ՝ հղում կատարելով հանցանքի ծանրությանը և առանց անդրադառնալու դիմումատուի գործի կոնկրետ փաստերին կամ առանց ներկայացնելու որևէ մանրամասն տեղեկություն, թե ինչով էին հիմնավորված քննությունից թաքնվելու, արդարադատության իրականացումը խոչընդոտելու կամ նոր հանցանք կատարելու ռիսկերը (տես վերևում՝ 14-րդ, 17-րդ և 19-րդ պարբերությունները)»<sup>1</sup>:



Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով փաստական հանգամանքներն ու Եվրոպական դատարանի դիրքորոշումները հետևյալն են.

2006թ. դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղա-

1 Տես Case of Gaspari v. Armenia (Գասպարին ընդդեմ Հայաստանի) 20/09/2018, 44769/08, պարագրաֆ 77:

դրանք է առաջադրվել ՔՕ-ի 301-րդ հոդվածի հատկանիշներով՝ իշխանությունը բռնի զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու հիմքով:

Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ՝ պնդելով, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն գործադրել դատավարությանը ներգրավված անձանց նկատմամբ: Դիմումատուն պնդել է, որ քննիչը դատարան է ներկայացրել միայն իր ելույթի վերձանումը, բայց ոչ դրա ձայնագրությունը, նույնիսկ այն դեպքում, երբ նման ձայնագրությունը գտնվում էր քննիչի տրամադրության տակ: Նույն օրը դատարանը, քննելով քննիչի միջնորդությունը, բավարարել է այն:

2006թ. դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այս որոշման դեմ՝ պնդելով, որ այն անհիմն է, անօրինական և չպատճառաբանված: 2006թ. դեկտեմբերի 26-ին դիմումատուն լրացրել է իր բողոքը՝ պնդելով *inter alia*, որ քննիչը դատարան որևէ ապացույց չի ներկայացրել, ի հիմնավորումն իր պնդմանն այն մասին, որ ինքը կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Դիմումատուն այնուհետև պնդել է, որ դատարանի որոշումը նրա հանցանք կատարելու վերաբերյալ պետք է հիմնված լիներ հիմնավոր կասկածի վրա:

Նույն օրը Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը քննել և մերժել է բողոքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քննիչը բավարար ապացույցներ է ներկայացրել, ինչպիսիք են դիմումատուի 2006 թվականի դեկտեմբերի 10-ի և 12-ի հարցաքննությունների արձանագրությունները, որոնք դիմումատուին կապում են քննարկվող հարցի հիմքում ընկած իրադարձությունների հետ, ինչպես նաև ենթադրում են հիմնավոր կասկածի առկայությունը:

2006թ. դեկտեմբերի 27-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ փորձելով գրավի դիմաց ազատ արձակվել:

2007թ. հունվարի 26-ին Առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի միջնորդությունը՝ այն հիմքով, որ վերջինս, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Նույն օրը դիմումատուն բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ՝ պնդելով, որ այն անհիմն է, անօրինական և չպատճառաբանված:

2007թ. փետրվարի 15-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ համարելով, որ բավարար հիմքեր չկան դիմումատուին գրավի դիմաց ազատ արձակելու համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միևնույն քրեական գործի շրջանակներում դիմումատուի հանցակից Վ. Ա.-ն կասկածվել, այնուհետև կալանավորվել է խոշոր չափերով զենք և ռազմամթերք ապօրինաբար կրելու (պահելու) համար, ինչպես նաև հաշվի առնելով դիմումատուին մեղսագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտմանը՝ դատարանը նշել է, որ ներպետական դատարանները, սանկցավորելով դիմումատուի կալանավորումը և դրա ժամկետի երկարացումը, հիմնվել են վերջինիս՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և արդարադատության իրականացմանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ ձեռնարկելու ռիսկի վրա, ինչպիսին է վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելը:

Դատարանը նկատել է, որ և՛ Առաջին ատյանի, և՛ Վերաքննիչ դատարանները իրենց որոշումներում սահմանափակվել են այս հիմքերը վերացարկված և կարծրատիպային եղանակով կրկնելով, առանց մատնանշելու որևէ պատճառ այն մասին, թե ինչու են նրանք հիմնավոր համարում իրենց պնդումներն այն մասին, թե դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ անօրինական ազդեցություն գործադրել վկաների նկատմամբ:

Նրանք նաև չեն փորձել հերքել դիմումատուի ներկայացրած փաստարկները:

Դիմումատուին մեղսագրվող արարքի ծանր հանցագործություն լինելու ընդհանուր վկայակոչումը չի կարող բավարար հիմնավորում

համարվել ենթադրյալ ռիսկերի համար: Հստակ չէ նաև, թե ինչպե՞ս կարող էր դիմումատուի գործով մյուս մեղադրյալի կալանավորված լինելու փաստը, որի վրա հիմնվել է Վերաքննիչ դատարանը՝ գրավի դիմաց ազատ արձակելու վերաբերյալ դիմումատուի միջնորդությունը մերժելիս հիմնավոր լինել քրեական վարույթն իրականացնող մարմնից դիմումատուի թաքնվելու ռիսկն արդարացնելու համար:

Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը համարել է, որ այն պատճառները, որոնց վրա իրենց որոշումներում հիմնվել են Առաջին ատյանի և քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանը՝ դիմումատուի կալանավորման և դրա ժամկետի երկարացման հետ կապված, «հիմնավոր» և «բավարար» չէին՝

## **Ա. Քրեական վարույթն իրականացնող մարմնից և դատարանից թաքնվելու հիմքերը**

Հաճախակի, որպես հիմնավորում առ այն, որ անձը կթաքնվի քննությունից, դատարանները նշում են հանցանքի ծանրությունը և համապատասխանաբար այն խիստ պատիժը, որը, հավանաբար, կարող է նշանակվել անձի նկատմամբ, եթե նա մեղավոր ճանաչվի իրեն մեղսագրված արարքում, ինչից մտահոգված վերջինս հավանաբար, հայտնվելով ազատության մեջ կնախընտրի թաքնվել քննությունից և դատից: Այստեղ հարկ է նշել, որ նման վտանգի առկայությունը չի կարող գնահատվել բացառապես սպասվող պատժի ծանրությամբ: Այն պետք է գնահատվի՝ գործում առկա այլ հիմքերի հետ, որոնք կարող են հաստատել նման վտանգի առկայությունը կամ այն դարձնել այնքան նվազ, որը չի արդարացնի վերջինիս՝ անազատության մեջ գտնվելը մինչև դատավարության ավարտը<sup>2</sup>:

1 Տե՛ս Case of Malkhasyan v. Armenia (Մալխասյանն ընդդեմ Հայաստանի), 26/06/2012, 6729/07: Ինչպես նաև ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի օգոստոսի 4-ի նիստի արձանագրությունից: Կոլեգիայի նշված նիստի ժամանակ քննարկման առարկա է հանդիսացել Արդար դատաքննության երաշխավորման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշների արդյունավետ կիրառման հարցը, որտեղ բացի նշվածից քննարկման առարկա են դարձել նաև ՄԻԵԴ գործերով բազմաթիվ վճիռներ, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության դեմ:

2 Տե՛ս Case of Panchenko v. Russia (Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի) 10/04/2018, 33707/14 և 3762/15, ինչպես նաև՝ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 19.12.2013թ. № 41 որոշումը (24.05.2016թ. խմբագրությամբ) «Դատարանների

Պետք է առկա լինի հանգամանքների բավարար համակցություն, որն առաջ կբերի ողջամիտ ենթադրություն առ այն, որ թաքնվելու բացասական հետևանքները մեղադրյալին կթվան ավելի քիչ չարիք, քան հավանական պատժի ռիսկը<sup>1</sup>: Դեռ ավելին, այդ ռիսկի գնահատումը պետք է հիմնված լինի կոնկրետ մեղադրյալին վերաբերող իրավիճակի վրա: Գործով անցնող մյուս մեղադրյալների վարքագիծը, հատկապես այն փաստը, որ նրանք թաքնվում են կամ կասկածվում են այլ ծանր հանցագործության կատարման մեջ, չի կարող կալանավորման կիրառման փաստարկ հանդիսանալ<sup>2</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանն Ա.Զյարբիցևի վերաբերյալ գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԿԴ/0020/06/13 որոշմամբ (կետ 13) արձանագրել է, որ՝



*(...) մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի կողմից ընդհանրապես, իսկ տվյալ դեպքում՝ գործով անցնող մյուս մեղադրյալների կողմից մասնավորապես, ցուցմունք տալուց հրաժարվելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմք դիտարկելը և դրանով պայմանավորված՝ անձին ՀՀ սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված ազատության իրավունքից զրկելն իրավաչափ չէ:*

*Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա փաստարկը չէր կարող դիտարկվել որպես Ա. Զյարբիցևի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմք, քանի որ այն ակնհայտորեն*

---

կողմից խափանման միջոցներ կալանքի, տնային կալանքի և գրավի վերաբերյալ օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին», կետ 7:

- 1 Stn Case of Stögmüller v.Austria (Շտոգմյուլերն ընդդեմ Ավստրիայի) 10/11/1969., 1602/62, պարագրաֆ 15:
- 2 Stn Case of Fedorenko v. Russia (Ֆեդորենկոն ընդդեմ Ռուսաստանի) 20/09/2011., 39602/05, պարագրաֆ 70:



րեն հակասում է ՀՀ սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված պաշտպանության իրավունքին և անմեղության կանխավարկածի սկզբունքին:

**Լռություն պահպանելու** մեղադրյալի իրավունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Աշոտ Առաքելյանի վերաբերյալ որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է հայտնել, որ «Կալանավորման կիրառման հիմքերի էության և նպատակային նշանակության ոչ ճիշտ ընկալումը հանգեցրել է այն բանին, որ ըստ էության՝ **տարբերություն չի դրվել մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու և նրա պաշտպանության իրավունքի միջև:** Մեղադրյալի կողմից իր դատավարական իրավունքների իրականացումը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի և հիմք հանդիսանալ ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանավորման ժամկետը երկարացնելու համար» (տե՛ս Աշոտ Առաքելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԿԴ/0580/06/09 որոշման 19-րդ կետը)<sup>1</sup>:



Փախուստի վտանգը գնահատելիս անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել հետևյալ հանգամանքները.

- Արդյոք մեղադրյալն ունի մշտական բնակության վայր Հայաստանի Հանրապետության տարածքում, որը կարող է չհամընկնել վերջինիս գրանցման վայրի հետ: ՀՀ քրեական դատավարության 135-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս ի թիվս այլնի՝ հաշվի է առնվում նաև բնակության մշտական վայրի առկայությունը.

Հարկ է նշել, որ **մշտական բնակության վայրը կարող է չհամընկնել վերջինիս գրանցման վայրի հետ: Բացի դրանից՝**

1 Տե՛ս ՀՀ ՊՏ 2014.01.29/4(1017):

## **Մշտական բնակության վայրի բացակայությունն ինքնին չի վկայում մեղադրյալի կողմից փախուստի դիմելու հավանականության մասին:**

Մշտական բնակության վայրի առկայությունը հարցի փաստական կողմն է, որը տարբերվում է այն հարցից, թե արդյոք անձը ֆորմալ տեսանկյունից կատարել է իր վրա դրված իրավական և վարչական պարտավորությունները բնակության վայրում գրանցման համար իրավասու մարմիններին դիմելու հարցում<sup>1</sup>:

Ըստ էության՝ պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները.

- Արդյոք մեղադրյալն ունի ընտանիք, նրա խնամքին գտնվող անձինք<sup>2</sup>, այլ ընտանեկան և բարեկամական կապեր ու հարաբերություններ, որոնք ամուր կդարձնեն վերջինիս կապը բնակության վայրի հետ և ունակ կլինեն ազդել նրա վարքագծի վրա<sup>3</sup>,
- Արդյոք մեղադրյալն ունի մշտական աշխատանք կամ եկամտի այլ աղբյուր, որը կարող է կորցնել՝ դիմելով փախուստի<sup>4</sup>,
- Արդյոք մեղադրյալն ունի օտարերկրյա քաղաքացիություն

- 1 Տե՛ս Case of Valeriy Kovalenko v. Russia Վալերիյ (Կովալենկոն ընդդեմ Ռուսաստանի) 29/05/2012թ. 41716/08, պարագրաֆ 44:  
Բացի այդ, Ռուսաստանի Դաշնության տարածքում անձի գրանցման բացակայությունը հանդիսանում է միայն ապացույցներից մեկը, որը վկայում է անձի մոտ մշտական բնակության վայրի բացակայության մասին (Տե՛ս ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 19.12..2013թ N° 41 որոշումը (24.05.2016թ. խմբագրությամբ) «Դատարանների կողմից խափանման միջոցներ կալանքի, տնային կալանքի և գրավի վերաբերյալ օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին», կետ 4):
- 2 Խնամքին երեխաների առկայությունն ու առողջության վատ վիճակը նվազեցնում են մեղադրյալի փախուստի դիմելու ռիսկը (Տե՛ս Case of Melnikova v. Russia (Մելնիկովն ընդդեմ Ռուսաստանի) 21.06.2007թ., 24552/02, պարագրաֆ 82:
- 3 Ողջ կյանքի ընթացքում մեկ վայրում բնակվելը, թաքնվելու փորձերի բացակայությունը, ընտանեկան ամուր կապերը, դատվածության բացակայությունը և գրավ կիրառելու առաջարկը նվազեցնում են փախուստի ռիսկը (Տե՛ս Case of Dirzidov v. Russia (Դիրզիդովն ընդդեմ Ռուսաստանի) 27/11/2012., 41461/10, պարագրաֆ 109)
- 4 Այնուհանդերձ, պարզապես մշտական բնակության վայրի կամ աշխատանքի բացակայությունն ինքնին չի կարող ռիսկեր առաջացնել առ այն, որ մեղադրյալը կթաքնվի կամ կկատարի նոր հանցագործություն (Տե՛ս Case of Dirzidov Sergey Medvedev v Russia (Սերգեյ Մեդվեդևն ընդդեմ Ռուսաստանի 30/07/2009., 3194/08, պարագրաֆ 54)

(հպատակություն) կամ կացության իրավունք<sup>1</sup>, ունի արդյոք օտար երկրում անշարժ գույք կամ եկամտի աղբյուր, օտար երկրներ մեկնելու համար նախատեսված անձնագիր<sup>2</sup>,

- Արդյոք մեղադրյալն ունի հարազատներ կամ մերձավոր անձինք օտար երկրներում<sup>3</sup>,
- նախկինում ինչպիսիք է եղել մեղադրյալի վարքագիծը, փորձել է, արդյոք, վերջինս դիմել փախուստի կալանավայրից կամ ազատագրկման վայրից, թաքնվել է, արդյոք, նա քննությունից կամ դատից, չի խախտել, արդյոք, մեղադրյալը նախկինում ընտրված խափանման միջոցների պայմանները<sup>4</sup>, արդյոք մեղադրյալը թաքնվելու նպատակով դիմադրություն

1 Օտարերկրյա քաղաքացիության առկայությունը և մշտական բնակության վայրի բացակայությունը հիմնավոր են դարձնում մեղադրյալի կողմից թաքնվելու ռիսկը (Տե՛ս Case of Veliyev v. Russia (Վելիևն ընդդեմ Ռուսաստանի) 24/06/2010., 24202/05, պարագրաֆ 154)

2 Օտար երկրներ մեկնելու համար նախատեսված անձնագրի վերցնելը, որպիսի հնարավորությունը նախատեսված է ՌԴ օրենսդրությամբ, չեղքացնում է մեղադրյալի՝ երկիրը լքելու ռիսկը (Տե՛ս Case of Yuri Yakovlev v. Russia (Յուրի Յակովլևն ընդդեմ Ռուսաստանի) 29/04/2010., 5453/08, պարագրաֆ 72):

Հարկ է նշել, որ նման հնարավորություն նախատեսվում է նաև ՀՀ օրենսդրությամբ: Այսպես, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «(...) Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը: (...) Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես: (...) Ազատագրկման դատապարտված անձի անձնագիրը պահվում է պատիժը կատարող մարմնում և քաղաքացուն վերադարձվում է պատիժը կրելուց հետո անմիջապես (...):»

3 Օրինակ, որպես թաքնվելու վտանգը հիմնավորող հանգամանքների համակցություն, դիտարկվել են Ռուսաստանի Դաշնությունից դուրս մշտական բնակության վայր ունեցող հարազատների առկայությունը, մեղադրյալի հաճախակի մեկնումները ՌԴ-ից և էական ֆինանսների ռեսուրսների առկայությունը մեղադրյալի մոտ (Տե՛ս Case of Sopin v. Russia (Սոպինն ընդդեմ Ռուսաստանի) 18.12.2012թ. 57319/10, պարագրաֆ 42):

4 Քննչական գործողությանը մեղադրյալի չներկայանալը, վերջինիս նկատմամբ հետախուզում հայտարարելը հիմնավորում են մեղադրյալի կողմից թաքնվելու վտանգի բավարար աստիճանը (Տե՛ս, օրինակ, Case of Zimin v. Russia (Հիմինն ընդդեմ Ռուսաստանի) 06/02/2014., 48613/06, պարագրաֆ 37): Դրա հետ մեկտեղ, դատարանը պետք է մանրակրկիտ ստուգի մեղադրյալի հայտարարությունն այն մասին, թե ինքը չի թաքնվել, և իր նկատմամբ սխալմամբ է հետախուզում հայտարարվել (Տե՛ս, օրինակ, Case of Yevgeniy Gusev v. Russia (Եվգենի Գուսևն ընդդեմ Ռուսաստանի) 05/12/2013., 28020/05, պարագրաֆ 85):

է ցույց տվել ձերբակալման ժամանակ և այլն<sup>1</sup>,

- Արդյո՞ք առկա են փաստեր, որոնք կվկայեն մեղադրյալի կողմից փախուստի նախապատրաստումը (հայտնաբերվել են անձը հաստատող կեղծ փաստաթղթեր, կանխիկ խոշոր գումարներ կամ թանկարժեք իրեր, մեղադրյալին պատկանող գույքի վաճառքի փաստեր, արտաքինը փոփոխելու, սահմանը հատելու կամ պետությունից անկանխիկ եղանակով խոշոր գումարներ կամ արժեթղթեր դուրս բերելու փորձեր և այլն)<sup>2</sup>,
- Առկա՞ են, արդյոք, փաստեր, որոնք բարձրացնում կամ նվազեցնում են մեղադրյալի կողմից փախուստի դիմելու հավանականությունը (հանցանքի կազմակերպված բնույթը<sup>3</sup>, մեղադրյալին կամ նրա ընտանիքի անդամներին սպառնացող վտանգը, մեղադրյալի մոտ առկա ծանր հիվանդությունը<sup>4</sup>, մեղադրյալի տարիքը, մեղադրյալի կողմից մեղքի ամբողջությամբ կամ մասնակի ընդունումը, քննության հետ համագոր-

1 Վերոնշյալ Case of Sergey Medvedev v Russia (Սերգեյ Մեդվեդևն ընդդեմ Ռուսաստանի, պարագրաֆ 54) ՄԻԵԴ-ը նշել է, որ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ մեկ ամսվա ընթացքում՝ հանցանք կատարելուց հետո մինչև ձերբակալումը, դիմումատուն չի թաքնվել քննությունից, չի կատարել նոր հանցանք և չի խոչընդոտել քննությանը, թեկուզև նման հնարավորություն ունեցել է:

2 Օրինակ, հիմնավոր է համարվել կալանավորումը այն դեպքում, երբ մեղադրյալը լքել է երկիրը, և վերջինիս նկատմամբ հայտարարվել է միջազգային հետախուզում, մեղադրյալը միջոցներ է ձեռնարկել թաքցնելու իր մուտքը Ռուսաստանի Դաշնություն, տիրապետել է զգալի ֆինանսական միջոցների, վաճառել կամ այլ անձի է փոխանցել Ռուսաստանի Դաշնությունում գտնվող իր ողջ սեփականությունը, ինչպես նաև գաղտնի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ վերականգնել է օտար երկրներ այցելելու համար նախատեսված անձնագիրը (Տե՛ս Case of Mkhitaryan v. Russia (Մխիթարյանն ընդդեմ Ռուսաստանի) 05/02/2013., 46108/11, պարագրաֆ 93):

3 Հանցավորության կազմակերպվածությունը կարող է արդարացնել կալանավորումը քննության սկզբնական փուլում (Տե՛ս Case of Pyatkov v.Russia (Ռուսակո՛վս ընդդեմ Ռուսաստանի) 13/11/2012., 61767/08, պարագրաֆ 112):

4 Հիվանդությամբ պայմանավորված տեղաշարժվելու սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև մշտական բժշկական վերահսկողության առկայությունն էականորեն նվազեցնում են փախուստի դիմելու վտանգը (Տե՛ս Case of Arutyunyan v.Russia (Հարությունյանն ընդդեմ Ռուսաստանի) 10/01/2012, 48977/09), պարագրաֆ 106): Ինչքան ավելի է վատանում առողջությունը, այդքան ցածր է փախուստի դիմելու վտանգը (Տե՛ս Case of Aleksanyan v.Russia (Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի) 22/12/2008., 46468/06, պարագրաֆ 192):

ծակցելը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը և այլն):

Այսպես, Այունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը քննարկելով մեղադրյալի կալանավորման տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը՝ արձանագրել է հետևյալը.



(...) Վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ պետք է հաշվի առնել մեղսագրված հանցանքի հանրային վրանգավորության բարձր լինելը և բնույթը, ծանրության աստիճանն ու դիրքը, որ դրանք գործով ձեռք բերված փաստական տվյալների համատեքստում հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը գնահատող էական նշանակություն ունեցող տարր:

Նման պնդման հիմք է տալիս այն, որ դեպքից օրեր անց՝ 2019 հուլիսի 23-ին, մեղադրյալի կողմից ՀՀ սահմանը հատելուն ուղղված գործողություններ են կատարվել, որոնք կանխվել են ոստիկանության աշխատակիցների կողմից: Այսպես, դեռևս 2019 թվականի հուլիսի 22-ին՝ ժամը 21<sup>50</sup>-ին, դատարանի Կապանի նստավայրից վերադառնալուց հետո մեղադրյալը վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել է փաստաբան Ռ. Ղ.-ին որպես պաշտպան ներգրավելու դիմումը: Տվյալ ժամանակ մեղադրյալը նախապես տեղեկացվել է 2019 թվականի հուլիսի 23-ին՝ ժամը 09<sup>30</sup>-ին, իր պաշտպանի հետ Գորիսի քննչական բաժին ներկայանալու և հարցաքննվելու անհրաժեշտության մասին, ապա նույն օրը՝ ժամը 18<sup>30</sup>ին, դատարանի Կապանի նստավայրում, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման դատարանի նիստին մասնակցելու անհրաժեշտության մասին:

2019 թվականի հուլիսի 23-ին՝ ժամը 7<sup>05</sup>-ի դրությամբ, մեղադրյալը գտնվել է ՀՀ «Բագրատաշեն» սահմանային անցակետում, որը հիմք է տալիս եզրակացնելու, որ վեր-

ջինս 2019 թվականի հուլիսի 22-ին՝ ժամը 21<sup>50</sup>-ին, դատարանի Կասպանի նստավայրից վերադառնալուց հետո մեկնել է «Բագրատաշեն» սահմանային անցակետի ուղղությամբ, որտեղ ՀՀ սահմանը հատելուն ուղղված գործողություններ կատարելու ձևով փորձել է խուսափել քննությունից դատական նիստին ներկայանալուց, ուստի, գործով ձեռք բերված նշված փաստական փյուռները մեղադրյալին մեղսագրված արարքի (ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով) բնույթի ու վրանգավորության աստիճանի համադրության մեջ գնահատման արդյունքում, հատկապես նրան առաջադրված մեղադրանքի պայմաններում, բարձրացնում են հավանական ռիսկերն ու այն, որ մեղադրյալը, մնալով անազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

Հեռախոսահամարների վերծանումների զննության համաձայն՝ 22.07.2019թ. ժամը 22: 46: 03-ին մեղադրյալի զանգը սպասարկվել է «v.Khndzoresk» կայանի կողմից, իսկ արդեն 23.07.2019թ., ժամը 07:13:02-ին՝ «v.Bagrashen» կայանի կողմից (...):»<sup>1</sup>



Քննարկելով քննությունից խուսափելու հարցը՝ Եվրոպական դատարանը Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով արձագրել է հետևյալը.

«Դատարանը նշում է, որ արդարադատությունից խուսափելու վտանգի չափը չի կարող կախված լինել սուկ հնարավոր պատժի խստությունից: Այն պետք է որոշվի՝ հաշվի առնելով գործին վերաբերող մի շարք այլ համապատասխան գործոններ, որոնք կարող են կամ հաստատել արդարադատությունից խուսափելու վտանգի առկայությունը, կամ էլ այն դարձնել այնքան աննշան, որ դա չկարողանա կալանքի տակ պահելու արդարացում հանդիսանալ: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել մեղադրյալի բնավորությունը,

1 Տե՛ս Սյունքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մայիսի 18-ի թիվ ՍԴ/0026/06/19 որոշումը:

նրա բարոյական հատկանիշները, նրա միջոցները, կապերն այն պետության հետ, որտեղ նա օրենքով հետապնդվել է, և նրա միջազգային կոնտակտները»<sup>1</sup>:

Արման և Արքա Մադաթյանների վերաբերյալ թիվ ԱՐԴ/0152/0119 քրեական գործով 2020 թվականի մայիսի 26-ի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ի թիվս այլնի, արձանագրել է հետևյալը.

« (...) Առաջին ափսոսանքն առաջանում է դատարանի կողմից մեղադրյալների խափանման միջոցի հարցը լուծելիս սույն գործով դատաքննությունը դեռևս չէր սկսվել, որևէ ապացույց դատաքննությամբ չէր հերքվել, իսկ Արման և Արքա Մադաթյաններին մեղսագրվում են մի շարք հանցավոր արարքներ, որոնք ենթադրաբար կատարվել են խմբի կազմում (չորս անդամ), հետևաբար, Առաջին ափսոսանքն առաջանում է, զնահարելով գործի հանգամանքները, բավարար հիմքեր է ունեցել ենթադրելու, որ վերջիններս, մնալով ազատության մեջ, կարող էին անօրինական ազդեցություն ունենալ դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ:

Միևնույն ժամանակ, մեղադրյալներին մեղսագրվում են մի շարք ծանր հանցագործություններ, մասնավորապես՝ Արման Մադաթյանին՝ ծանրացուցիչ հանգամանքներում անձի առևանգում և շորթում, ենթադրյալ հանցավոր արարքների կատարում, իսկ Արքա Մադաթյանին, բացի վերոնշյալներից, նաև ծանրացուցիչ հանգամանքներում ավազակության կատարում: Վճռաբեկ դատարանն իր նախադեպային դիրքորոշումներում բազմիցս նշել է, որ մեղսագրվող հանցավոր արարքների բնույթն ու վրանգավորության աստիճանը և ակնկալվող պատժի խստությունը, գործի նյութերից բխող մյուս հանգամանքների համալրելու

1 Տե՛ս Case of W. v. Switzerland (Վ-ն ընդդեմ Շվեյցարիայի) 26/01/1993թ., 14379/88, պարագրաֆ 33, Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.)/ Վ.Հովհաննիսյան, Լ.Հակոբյան, Լ.Հակոբյան – Եր.: Տիգրան Մեծ, 2002 – էջ. 453-454:

տում, հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր փաստեր:

Ուստի, հիմք ընդունելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին պայանի դատարանի՝ մեղադրյալների հնարավոր ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ ենթադրությունները հիմնավոր են և բխում են գործի փաստական փյուռի ամբողջությունից:

(...) Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ որոշում կայացնելիս հաշվի է առնում նաև մեղադրյալների անձը, ապա Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը շարադրել է միայն Արման Մադաթյանի անձը բնութագրող փյուռները, որոնք, սակայն, սույն որոշմամբ արձանագրված փաստական փյուռների պայմաններում չեն կարող բացառել ազատության մեջ գտնվելու դեպքում վերջինիս կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ընդ որում՝ Վերաքննիչ դատարանը հաշվի է առել նաև Արման Մադաթյանի հոր՝ Արարաթ Մադաթյանի՝ Արցախյան պատերազմի մասնակից լինելու հանգամանքը, որը խափանման միջոցի հարցը լուծելիս որևէ նշանակություն չէր կարող ունենալ:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը որևէ գնահատման չի ենթարկել Արքա Մադաթյանի անձը, մասնավորապես այն, որ վերջինս ունի չմարված դատվածություն նախկինում նույնաբնույթ հանցավոր արարքներ կատարելու համար, որպիսի հանգամանքը կարևոր նշանակություն ունի ազատության մեջ գտնվելու դեպքում նրա կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը գնահատելու տեսանկյունից (...):» (Տե՛ս Արման և Արքա Մադաթյանների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 26.05.2020թ. թիվ ԱՐԴ/0152/01/19 որոշման 16-17-րդ կետեր):



1 Տե՛ս [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38843546786170638](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38843546786170638):



**Փաստերը, որոնց վրա հենվում է դատարանը մեղադրյալի կողմից քննությունից և դատից թաքնվելու դիսկը գնահատելիս, պետք է լինեն կոնկրետ, տրամաբանական, փոխկապակցված լինեն դատարանի հետևությունների հետ և պետք է դիտվեն համակցության մեջ, օրինակ, կալանավորման կիրառման համար հանգամանքներից մեկի առկայությունը կարող է չեզոքացվել որևէ մեկ այլ հանգամանքով:**

**Եթե կալանավորման համար հիմք հանդիսացած հանգամանքները դատարանի կողմից չեն հաստատվել և նշվել որոշման մեջ, ապա այն ենթակա է բեկանման:**



*Այսպես, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բեկանելով Առաջին ատյանի դատարանի՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը, անդրադառնալով քննությունից թաքնվելու հարցին՝ մասնավորապես նշել է, որ, «(...) Առաջին ատյանի դատարանի այն եզրահանգումները, որ մեղադրյալը մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, վերացական եզրահանգումներ են, քանի որ գործի նյութերում առկա չէ որևէ որոշամիտ փոփոխություն, որը թույլ կտար նման հետևության հանգել: Վերաքննիչ դատարանի համար հարկանշական է, որ 2020 թվականի մայիսի 9-ից մինչև մայիսի 11-ը, այդ երկու օրերի ընթացքում ընդհանուր չորս անգամ վարույթն իրականացնող մարմնի կանչով մեղադրյալը ինքնակամ ներկայացել է, ուստի նման պայմաններում հիմնավոր չէ այն եզրահանգումը, որ մեղադրյալը ազատության մեջ մնալով՝ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Ավելին՝ վերը նշված հանգամանքը վկայում է այն մասին, որ մեղադրյալն արդեն իսկ իրական հնարավորություն ունեցել է փախուստի դիմելու, սակայն չի արել դա (...)»<sup>1</sup>:*



1 Տե՛ս Թիվ ՏԴ/004/18/20 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020 թվականի հունիսի 17-ի որոշումը:

Փախուստի ռիսկը բարձրացնող կամ նվազեցնող հանգամանքները պարզելով՝ դատարանը դրանք պետք է գնահատի համակցության մեջ: Օրինակ, այլ երկրի քաղաքացիության առկայությունը կամ այն ստանալու իրական հնարավորությունը, ինչը կարող է անհնարին դարձնել մեղադրյալի էքստրադիցիան<sup>1</sup>, այլ պետության հետ կապերի առկայությունը (օտարերկրյա բանկային հաշիվներ, օտար երկրում սեփականության առկայություն և այլն), որոնք հնարավորություն կտան նրան թաքնվել, ինչպես նաև մեղադրյալի մոտ մեծ պարտքերի առկայությունն ու դրանք վճարելուց հավանականորեն խուսափելը բարձրացնում են փախուստի ռիսկը<sup>2</sup>:

Սակայն այդ փաստը չպետք է դիտարկվի մեկուսի, այլ այն պետք է դիտարկվի բոլոր անհատական առանձնահատկությունների և փաստերի հետ համակցության մեջ: Նույնիսկ եթե անձի մոտ առկա է այլ երկրի քաղաքացիություն, սակայն նա երկար տարիներ չի այցելել իր քաղաքացիության երկիր, ունի ընտանիք և ամուր կապեր Հայաստանի հետ և այլն, թաքնվելու վտանգը ակնհայտ նվազում է:

Գործում առկա ոչ մի հանգամանք չպետք է դիտարկվի ինքնավար (ավտոնոմ) կերպով (օրինակ, անձն ունի օտարերկրյա քաղաքացիություն, սակայն նա ստիպված է կանոնավոր կերպով օգտվել հեմոդիալիզի սարքից: Այդ իրավիճակում անձի մոտ օտարերկրյա քաղաքացիության առկայությունը որոշիչ դեր չի ունենա):

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն Արտակ Մնացականյանի վերաբերյալ գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԿԴ-3/06/17 որոշմամբ, ի թիվս այլնի, նշել է հետևյալը.

« (...) Ինչ վերաբերում է կալանավորման հիմքերի բացակայության մասին բողոքաբերի փաստարկին (...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում գնահատման ենթարկելով նախաքննական մարմնի կողմից միջնորդությանը կից ներ-

1 Տե՛ս Case of Lowry v. Portugal (Լոուրին ընդդեմ Պորտուգալիայի) 06/07/1999., ընդունելության մասին որոշում, 42296/98, պարագրաֆ 4:  
2 Տե՛ս Case of Barfuss v. Czech Republic (Բարֆուսն ընդդեմ Չեխիայի) 31/07/2000., 35848/97, պարագրաֆներ 69-70:

կայացված նյութերը՝ ստորադաս դատարանները հանգել են իրավաչափ հետևության Ա.Մացակյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության վերաբերյալ (...):»<sup>1</sup> >>

Իսկ նշված գործով Առաջին ատյանի դատարանն անդրադառնալով Ա.Մացակյանի կալանավորման հիմքերին՝ արձանագրել է հետևյալը.


« (...) Ուսումնասիրելով ներկայացված գործի նյութերը՝ Դատարանն արձանագրում է, որ կան հիմնավոր կասկածներ [« քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված] հանցանքի կատարմանը մեղադրյալ Արտակ Մացակյանի առնչության վերաբերյալ:

Միջնորդությունը բավարարելիս Դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալ Արտակ Մացակյանը մնալով ազատության մեջ՝ կարող է կատարել քրեական օրենքով արգելված այլ արարքներ, քննությունից թաքնվել, խուսափել, դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրել:

(...)

Նման եզրահանգման գալիս Դատարանը հաշվի է առնում գործի հանգամանքները, մասնավորապես, նրան վերագրվող արարքի բնույթն ու վրանգավորության աստիճանը, այն, որ մեղադրյալին մեղսագրվում է միջին ծանրության հանցագործության կատարում, որի համար նախատեսված է պատիժ նաև ազատազրկման ձևով, որի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, ինչը Դատարանի համոզմամբ էականորեն բարձրացնում է մեղադրյալի կողմից քրեական պատասխանատվությունից խուսափելու հավանականությունը:

1 Տե՛ս ՀՀՊՏ 2018.07.04/51(1409).1:

Ավելին, Դատարանն արձանագրում է, որ Արտակ Մացակյանը, մնալով ազատության մեջ, կարող է կատարել քրեական օրենքով արգելված այլ արարքներ, **որպիսի եզրահանգման գալիս հաշվի է առնում նաև մեղադրյալի՝ նախկինում քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելու հանգամանքը** (հիմք՝ ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի 2017թ. մարտի 13-ի պահանջագիր) (...)» (Տես ՀՀ վճարել դատարանի Արտակ Մնացակյանյանի վերաբերյալ գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԿԴ-3/0001/06/17 որոշման 6-րդ կետը)՝ 

## **Բ. Հիմնավոր ենթադրությունն առ այն, որ անձը կխոչընդոտի գործի քննությանը:**

Անթույլատրելի է այս հիմքի կիրառումը պայմանավորել բացառապես հանցագործության ծանրությամբ:

Անձի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելիս անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները.

- Չի՞ փորձել արդյոք մեղադրյալը ազդել գործով վկաների<sup>2</sup>, տուժողների, փորձագետների, մասնագետների և այլ մասնակիցների կամ նրանց մերձավորների վրա՝ տարբեր միջոցներով ապացույցներ կեղծելու նպատակով (սպառնալիքներ, կաշառք, նյութական կամ ոչ նյութական բնույթի խոստումներ և այլն),
- ինչպիսին է եղել մեղադրյալի նախորդող վարքագիծը (չի՞ փորձել, արդյոք, մեղադրյալը ոչնչացնել կամ կեղծել ապացույցները, խոչընդոտներ ստեղծել խուզարկության, զննության և առգրավման կատարման ժամանակ, ճանաչում է, արդյոք, մեղադրյալն իրեն մեղավոր լիովին կամ մասնակի, համագործակցում է, արդյոք, մեղադրյալը քննության հետ):

1 Տես ՀՀՊՏ 2018.07.04/51(1409).1:

2 Տես Case of Sizov v. Russia (Սիզովն ընդդեմ Ռուսաստանի) 15/03/2011թ. վճիռ 33123/08, պարագրաֆ 53:

« Այսպես, Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննելու մասին որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Ինչ վերաբերում է գործի քննությանը խոչընդոտելու հիմքին, ապա Դատարանը փաստում է, որ այդպիսի հավանականությունը ևս առկա է, քանի որ կան բավարար հիմքեր ենթադրելու, որ ազատության մեջ գտնվելով՝ մեղադրյալը կխոչընդոտի գործի քննությանը: Նման եզրահանգումը պայմանավորված է այն իրողությամբ, որ սույն քրեական գործով մեղադրյալը ճանաչում է գործով անցնող անձանց, և վկաների մի մասը մեղադրյալի համագյուղացիներն ու ընկերներն են, իսկ մյուս մասը թեկուզև այլ գյուղի բնակիչներ են, սակայն նույնպես մեղադրյալի ծանոթներն են: Բացի այդ, մեղադրյալն արդեն իսկ փորձել էր խոչընդոտել գործի քննությանը՝ հրաժարվելով նմուշներ տալ գործով կարևոր նշանակություն ունենալու հանգամանքները պարզաբանելու համար (Տեն Հ. Պետրոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՇԴ/0231/06/17 գործով որոշումը) և այն տրամադրել է միայն սույն միջնորդությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացնելուց հետո (...)»<sup>1</sup>: »

Այդ հետևության համար հիմք է հանդիսացել ՀՀ վճռաբեկ դատարանի Հարություն Պետրոսյանի վերաբերյալ 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ ՇԴ/0231/06/17 գործով որոշման 14-րդ կետում արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը.


« (...) Այսպես, անդրադառնալով վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ մեղադրյալը չի կարող խոչընդոտել գործի քննությանը, քանի որ տուժողների մտերիմներն արդեն հարցաքննվել են, տված ցուցմունքները վկայում

1 Տեն Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մայիսի 30-ի թիվ ՇԴ/0042/06/20 որոշումը:

են այն մասին, որ մեղադրյալի կողմից նրանց վրա ազդելու հավանականությունը գրեթե անհնար է, բոլոր քննչական և դատավարական գործողությունները կատարվել են, նախաքննությունը գտնվում է ավարտման փուլում (...)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հիշյալ դատողությունները չեն կարող դիտարկվել որպես բավարար չափով պատճառաբանված՝ փաստացի անհիմն համարելու Առաջին արյանի դատարանի հետևյալ եզրահանգումը. «Ն. Մուրադյանի դիմումը և ցուցմունքը պարունակում է տեղեկություններ՝ հարազատների հետ հարևաններ լինելու վերաբերյալ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Հ. Պետրոսյանն ազատության մեջ գտնվելով՝ հնարավոր է գործով անցնող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրի՝ վերջիններին ի պաշտպանություն իրեն ցուցմունքներ տալու կամ արդեն իսկ տված ցուցմունքներից հրաժարվելու, դրանք փոփոխելու հորդորներ տալով» (...): Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ Վերաքննիչ դատարանի մատնանշած հանգամանքները սույն գործում առկա համապատասխան տվյալների պայմաններում չեն չեզոքացնում մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը: Այդ առումով Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև բողոքաբերի այն փաստարկը, որ քրեական գործի նախաքննության ընթացքում դեռևս կատարվում են դեպքի հանգամանքների պարզմանն ուղղված քննչական և դատավարական գործողություններ, որոնց արդյունքում ակնկալվող փաստական տվյալների ստացման պայմաններում մեծ է հավանականությունը, որ անհրաժեշտություն կառաջանա լրացուցիչ հարցաքննելու արդեն իսկ հարցաքննված անձանց կամ կատարելու նրանց մասնակցությամբ այլ քննչական գործողություններ (...): Ինչ վերաբերում է վերը նշվածի առնչությամբ Վերաքննիչ դատարանի այն հետևությանը, որ Առաջին արյանի դատարանի համապատասխան եզրահանգումները ենթադրություններ են և չեն բխում դատարան ներկայացված

նյութերից (...), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա հարցի առնչությամբ ձևավորվող դատողությունները չեն կարող չկառուցվել ենթադրությունների վրա, քանի որ կալանավորման հիմքերն ունեն կանխատեսական բնույթ և ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Իսկ այն, որ դատարանի եզրահանգումը չի բխել ներկայացված նյութերից, հիմնավոր չէ:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշմանը, որ ապացույցներ հավաքելու գործընթացին խոչընդոտել չի կարող համարվել Հ. Պետրոսյանի կողմից նմուշներ փալուց հրաժարվելը, քանի որ վերջինս ունի մեղադրյալի կարգավիճակ, ինչպիսի պայմաններում արդարացված են իր դեմ չվկայելու գործողությունները, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր դեմ վկայություն չփալու հիմնարար իրավունքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ վկայի, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նմուշներ փալու պարտականության կատարումից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետ, 65-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ և 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ) հրաժարվելը դիտարկվի որպես այդ հիմնարար իրավունքի իրացման դրսևորման ձև: Վճռաբեկ դատարանի նման մոտեցումը բխում է նաև Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներից, ըստ որի՝ լռելու իրավունքը բացարձակ չէ (տե՛ս *John Murray v. the United Kingdom*, գանգապ թիվ 18731/91, 1996 թվականի փետրվարի 8, կետ 47), անձի՝ իր դեմ վկայություն չփալու սկզբունքը չի փարածվում այնպիսի «նյութերի վրա, որոնք կարող են ձեռք բերվել մեղադրյալից հարկադիր լիազորությունները օգտագործելու միջոցով, որը գոյություն ունի կասկածյալի կամքից անկախ, օրինակ, *inter alia*, փաստաթղթեր, որոնք ձեռք են բերվել կարգադրության արդյունքում, շնչառության, արյան և մեզի նմուշներ և մարմնական հյուսվածք ԴՆԹ փորձա-

*քննության նպատակով» (տե՛ս mutatis mutandis, Saunders v. United Kingdom, գանգապ թիվ 19187/91, 1996 թվականի դեկտեմբերի 17, կետ 69, Jalloh v. Germany, գանգապ թիվ 54810/00, 2006 թվականի հուլիսի 11, կետ 112) (...):* 

- Ինչպիսիք է մեղադրյալին մեղսագրված արարքի բնույթը (բռնի, կազմակերպված կամ հանցավոր համագործակցության կազմում կատարելը և այլն), առկա է, արդյոք, մեղադրյալի մոտ իրական հնարավորություն խոչընդոտել քննությանը՝ գտնվելով ազատության մեջ<sup>2</sup>,
- Այլ հանգամանքներ, որոնք բարձրացնում կամ նվազեցնում են քննությանն ու դատաքննությանը խոչընդոտելու հավանականությունը:

*Այսպես, օրինակ, ՄԻԵԴ-ը հիմնավոր է համարել անձի կալանավորումը, քննությանը խոչընդոտելու էական ռիսկերի առկայության ուժով, հաշվի առնելով այն հանգամանքները, որ նախկինում մեղադրյալը եղել է բարձրաստիճան ոստիկանության պաշտոնատար անձ, անձամբ ճանաչել է դատավարության մասնակիցներից շատերին, ծառայողական տեղեկություններ ստանալու և հանցակցին ազատելու նպատակով փորձել է կաշառել ոստիկանության աշխատակցին<sup>3</sup>:*

Քննությանը խոչընդոտելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ զբաղեցրած դիրքն ու կապերը «կոռումպացված պաշտոնյաների» հետ կարևոր են անձի ոչ իրավաչափ վարքագիծը գնահատելու առումով<sup>4</sup>:

1 Տե՛ս ՀՀՊՏ 2019.01.08/1(1454) Հոդ.13:

2 Զգալի ֆինանսական ռեսուրսները, հանցավոր աշխարհի և տարբեր իրավապահ մարմիններում ծառայող կոռումպացված պետական ծառայողների հետ կապերը, որոնք թույլ են տալիս մեղադրյալին ազդել վկաների վրա և վերացնել ապացույցները՝ վկաների վրա սպառնալիքներ տեղալու վերաբերյալ վերջիններիս կողմից ներկայացված դիմումների առկայության դեպքում արդարացնում են մեղադրյալի՝ կալանքի տակ պահելը (Տե՛ս Case of Sopin v. Russia (Սոպինն ընդդեմ Ռուսաստանի) 18.12.2012, 57319/10, պարագրաֆ 43:

3 Տե՛ս Case of Shikuta v. Russia (Շիկուտան ընդդեմ Ռուսաստանի) 11/04/2013, 45373/08, պարագրաֆ 47:

4 Տե՛ս Case of Sopin v. Russia (Սոպինն ընդդեմ Ռուսաստանի) 18.12.2012թ. 57319/10, պարագրաֆ 43:



Խանզադյանն ընդդեմ Հայաստանի գործով ընդունելության հարցը որոշելու մասին որոշմամբ ՄԻԵԴ-ը նշել է հետևյալը.



39. Դատարանը կրկնում է, որ ներպետական դատարանների կողմից որպես դիմումատուին կալանքի տակ պահելու հիմնական հիմքերում նշվում էր արդարադատությանը խոչընդոտելու հավանականությունը: Ռիսկը կայանում էր նրանում, որ ազապ արձակվելու դեպքում մեղադրյալը կշարունակեր իր փորձերը միջամտելու դատավարությանը, ինչը պայմանավորված էր նրանով, որ նա նախկինում աշխատել է ոստիկանությունում, և նրան առաջադրված մեղադրանքը սերտ կապված էր իր նախկին մասնագիտական գործունեության հետ և կատարվել էր այն հանցակցությամբ ոստիկանության այլ բարձրաստիճան ոստիկանության աշխատակիցների հետ: Հետևաբար, ներպետական դատարանները հիմնավորված էին համարում դիմումատուին կալանքի տակ պահելը (համեմատության համար տե՛ս Yudayev v. Russia, no. 40258/03, § 70, 15 January): Դատարանը կարևորում է նաև ներպետական դատարանների եզրակացությունը՝ վկաների վրա ազդեցություն ունենալու հավանականության մասին: Դատարանն ընդունում է այն, որ գործի հատուկ հանգամանքները վկայում են այն մասին, որ ռիսկի առկայությունը պայմանավորված է եղել դիմումատուի և մյուս մեղադրյալների անցյալում զբաղեցրած պաշտոններից և դրանից ոստիկանությունում ունեցած կապերից: Ցույց տալու համար, որ գոյություն ունի և շարունակում է գոյություն ունենալ գործին խոչընդոտելու ռիսկ՝ Շրջանային դատարանը հետագայում անդրադարձել է գործի ծավալի և մի շարք դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությանը, որոնց իրականացմանը դիմումատուն կարող էր միջամտել, եթե ազապ արձակվեր»<sup>1</sup>:



1 Տե՛ս Case of Khanzadyan v. Armenia, (Խանզադյանն ընդդեմ Հայաստանի) 11.03. 2020 68571/11, պարագրաֆ 39 <https://hudoc.echr.coe.int/>

Ոչ միայն պաշտոնյա լինելը, այլ նաև հանցագործության կազմակերպիչ լինելը, հանցագործության մեջ անձի դերակատարումը և զենքի գործադրմամբ հանցանք կատարելու հանգամանքները նույնպես կարող են վկայել անձի հանցավոր վարքագծի և գործով անցնող անձանց վրա անօրինական ազդեցության մասին: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը Դավիթ Համբարձումյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0700/06/18 գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը.



16. (...) որ դատարանների կողմից մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի՝ մինչդատարական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հնարավորությունը հաստատելու հանգամանքն ինքնին հիմք չէ մեղադրյալի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառումն ինքնաբերաբար մերժելու համար: Այսինքն՝ նշված հիմքի առկայության պայմաններում ստորադաս դատարանների կողմից որպես այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման հարցի քննարկումն իրավաչափ էր: (...)

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, մեղադրյալ Դ. Համբարձումյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառման հարցի քննարկման արդյունքում այն թույլատրելի ճանաչելիս չեն պահպանել Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները և անտեսել են սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին Դ. Համբարձումյանի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար: Այսպես, թեև մեղսագրվող արարքների ծանր հանցագործություններ հանդիսանալն ինքնին բավարար չէ վերոնշյալ եզրահանգման գալու համար, որի մասին նշել է Վճռաբեկ դատարանը նաև Գոռ Համբարձումյանի գործով որոշմամբ

[eng#\[%22itemid%22:\[%22001-142324%22\]\]:](#)

(...), սակայն սույն գործի փաստական հանգամանքները փարբերվում են նշված գործի փաստական հանգամանքներից, և փվյալ դեպքում Դավիթ Համբարձումյանին մեղսագրվող արարքի բնույթն ու հանրային վրանգավորության աստիճանը ենթակա են գնահատման մեղադրյալի անձը բնութագրող՝ գործում առկա փվյալների համապեքսփում, ինչը նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պահանջն է (...):

Տվյալ դեպքում, Դ. Համբարձումյանին մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման եղանակի, դրանց դրսևորման ձևի համապեքսփում՝ նախ պեքք է պատշաճ ուշադրության արժանացվեք դրանցում մեղադրյալի դեքակատարումը: Մասնավորապես, Դ. Համբարձումյանի նկատմամք ազատությունից զրկելու հեք չկապված խափանման միջոց կիրառելիս սքորադաս դատարանները հաշվի չեն առել այն, որ մեղադրյալը ենթադրյալ հանցանքը կատարելիս հանդես է եկել որպես զանգվածային անկարգությունների կազմակեքալիչ, որոնք ըսք մեղադրանքի և գործի նյութեքի՝ զուգորդվել են բռնությամք և ջարդեքով: Ավելին, ըսք գործում առկա փաստական փվյալների՝ Դ. Համբարձումյանը նշված ենթադրյալ կազմակեքալական գործողությունները կատարելիս եղել է զինված (...):

Բացի այդ, սքորադաս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել այն առանցքային փաստական փվյալը, որ մեղադրյալը քեքական օքենքով արգելված ենթադրյալ արարքները կատարելիս եղել է պաշտոնատար անձ: Այս առումով անհրաժեք է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ, ի թիվս այլնի, անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս առանձնահատուկ դեքակատարում ունի նրա՝ հասարակության մեք ունեցած դեքը, զքադեքրած պաշտոնն ու հնարավոր ազդեքությունը գործով անցնող վկանեքի վրա, նրա հնարավորությունները խոչընդոքելու մինչդատական

վարույթի բնականոն ընթացքին (...): Այդ պատճառով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունելի է համարում անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս նրա ունեցած ազդեցության, այն հանգամանքի գնահատումը, որ անձը ղեկավարում է հիմնարկ, որտեղ շարունակում են աշխատել գործով ներգրավման ենթակա հնարավոր վկաները (...): Այդ համարեքսպում անձի ազատության իրավունքի սահմանափակման հարցը լուծելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաշվի է առել, օրինակ՝ անձի ոստիկան հանդիսանալու և դրանով պայմանավորված՝ գործով հարցաքննման ենթակա վկաների վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը (...): Բացի այդ, սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով, հատուկ ուշադրության է արժանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Amirov v. Russia գործով վճիռը, որտեղ դատարանը դիմումատուի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը ստուգելիս ընդունելի է համարել ներպետական դատարանների կողմից մեղսագրվող արարքների ծանր բնույթի հետ մեկտեղ հաշվի առնված՝ դիմումատուի՝ Մախաչկալայի քաղաքապետ հանդիսանալու հանգամանքը, կապեր ունենալը, իր պաշտոնից բխող իշխանությունը, քաղաքական և սոցիալական կարգավիճակը՝ վկաների վրա ազդեցություն գործադրելով գործի քննությանը խոչընդոտելու տեսանկյունից (...):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մեղադրյալը քրեական օրենքով արգելված ենթադրյալ արարքները կատարելիս զբաղեցրել է Մասիսի քաղաքապետի պաշտոնը: Ընդ որում՝ այդ պաշտոնը նա շարունակել է զբաղեցնել նաև քրեական վարույթի ընթացքում՝ օգտվելով նաև դրանից բխող իշխանությունից: Նման պայմաններում էապես բարձր է եղել հավանականությունն առ այն, որ ազատու-

թյան մեջ գտնվելու դեպքում մեղադրյալ Դ. Համբարձումյանը կարող է դրսևորել ոչ իրավաչափ վարքագիծ և խոչընդոտել մինչդեռ փաստական վարույթում գործի քննությանը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործով որպես մեղադրյալ և վկա ներգրավված անձինք որոշակի փոխհարաբերությունների մեջ են գտնվել Դ. Համբարձումյանի հետ: Մասնավորապես, հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քրեական գործով որպես մեղադրյալ է ներգրավված նաև Կարեն Օհանյանը, որն աշխատել է Դ. Համբարձումյանի ենթակայության ներքո և որպես Մասիսի քաղաքապետի տեղակալ՝ ծառայողական կախվածության մեջ գտնվել նրանից: Ավելին, հարկ է նաև նկատել, որ ըստ Վճռաբեկ դատարանի տրամադրության տակ գտնվող նյութերի՝ քրեական գործում տարբեր դատավարական կարգավիճակներով ներգրավված են եղել նաև Մասիս քաղաքում որոշակի աշխատանքային գործունեությամբ զբաղվող, ինչպես նաև մեղադրյալի հետ մերձավոր և ազգակցական հարաբերությունների մեջ գտնվող անձինք (20): Նման պայմաններում էապես բարձր է եղել հավանականությունն առ այն, որ ազատության մեջ գտնվելու դեպքում մեղադրյալն օգտագործելով իր պաշտոնական դիրքը՝ կարող էր ազդեցություն գործադրել գործում ներգրավված անձանց նկատմամբ՝ այդ կերպ նաև խոչընդոտելով գործի պատշաճ քննությանը:

Սակայն վերոնշյալ ծանրակշիռ փաստական հանգամանքները, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին մեղադրյալի ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարելու համար, համակողմանի գնահատման չեն ենթարկվել ստորադաս դատարանների կողմից: Մինչդեռ, նշվածն ուշադրության չարժանացնելու արդյունքում ստորադաս դատարանները, 5.000.000 ՀՀ դրամի չափով գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելով՝ հաշվի չեն առել, որ կոնկրետ դեպքում այլընտրանքային խափանման միջոց գրավն ի զորու չէ

հակակշռելու Դ. Համբարձումյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը՝ հնարավորություն տալով ապահովելու նրա անձնական ազատության իրավունքի և վերջինիս մասնակցությամբ գործի պատշաճ քննության հանրային շահի միջև արդարացի հավասարակշռությունը: Այլ կերպ, ստորադաս դատարանները համակողմանի գնահատման չեն ենթարկել այն, որ Դ. Համբարձումյանի զբաղեցրած պաշտոնի, ունեցած իշխանության, գործով անցնող դատավարության մասնակիցների նկատմամբ հնարավոր ազդեցություն գործադրելու բարձր հավանականության պայմաններում գրավը չէր կարող լինել արդյունավետ իրավական ներգործության միջոց, որը կկաշկանդեր նրան դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և գրավի առարկան կորցնելու վտանգի սպառնալիքով կչեզոքացնե՞ր նաև նրա ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկը:


Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի կողմից որպես Դ. Համբարձումյանի անձը բնութագրող տվյալներ նշված հանգամանքներին, ապա դրանք սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների պայմաններում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Դ. Համբարձումյանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ռիսկերը հակակշռող բավարար գործոններ չեն: Հետևաբար, դրանք ի զորու չեն երաշխավորելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում (...) (տե՛ս Դավիթ Համբարձումյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0700/06/19 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշման 16-րդ կետը)<sup>1</sup>: >>

Հարկ է նշել, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ մասնավորապես արձանագրել էր հետևյալը.



(...) մեղադրյալ Դավիթ Համբարձումյանի անձը հայտ-

1 Տե՛ս [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=13229323905402368](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905402368):

*նի է, նա նախկինում դատված կամ որևէ կերպ արատա-  
վորված չի եղել, խնամքին առկա են մինչև տասնչորս տա-  
րեկան երեք երեխաներ, ունի մշտական բնակության վայր՝  
բնակվել է Երևան քաղաքի Նոր-Արեշ թիվ 26 փողոցի թիվ  
33 տանը, բնակության վայրում և աշխատավայրում բնու-  
թագրվում է դրական: Բացի այդ, նախաքննության ընթաց-  
քում դրսևորել է պատշաճ վարքագիծ՝ չի փորձել թաքնվել  
վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել գործի  
քննությանը (...)» (տե՛ս Դավիթ Համբարձումյանի վերաբեր-  
յալ թիվ ԵԴ/0700/06/19 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի  
2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշման 6-րդ կետը):* 

Միաժամանակ, համապատասխան մտավախությունները պետք է ունենան իրական հիմքեր: Անձին կալանավորելու մասին դատական ակտի պատճառաբանական մասից պետք հստակ բխի և հասկանալի լինի կապը, օրինակ, դիմումատուի մասնագիտության (օրինակ՝ ոստիկանության աշխատակից) և դատավարության մասնակիցների վրա ազդելու ռիսկը<sup>2</sup>: Մի շարք տուժողների և վկաների մտավախություններն իրենց անվտանգությանը սպառնացող վտանգների մասին, որոնք վերջիններս արտահայտում են նախաքննության ընթացքում, չեն կարող ինքնին բավարար հիմքեր համարվել տվյալ ռիսկի հաստատման համար, եթե դատարանն իր որոշմամբ չմատնանշի, թե որքանով են այդ վախերն ու մտահոգությունները իրական: Գործերից մեկում ՄԻԵԴ-ը նշել է, որ դատարանը չի գնահատել, թե որքանով են տուժողների և վկաների մտավախություններն իրական մնացել նախկինի պես, այն պայմաններում, երբ նախաքննության ավարտից հետո անցած է եղել երկուսից հինգ տարի, և, ընդհանրապես, նման մտավախությունների հիմքում արդյո՞ք ընկած են եղել դիմումատուի որևէ գործողությունն ու վարքագիծը այն պայմաններում, երբ վերջինս 1 տարի 5 ամիս գտնվել է ազատության մեջ և որևէ հակաօրինական վարքա-

1 Տե՛ս [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=13229323905402368](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905402368):

2 Տե՛ս Case of Yevgeniy Kuzmin v. Russia (Եվգենի Կուզմին ընդդեմ Ռուսաստանի) 03/04/2012,46479/05, պարագրաֆ 32:

գիծ չի դրսևորել<sup>1</sup>:

Ամիրովի նկատմամբ կալանավորման ժամկետը երկարացնելիս դատարանը նշել է, որ դիմումատուի շոշափելի մեծ ազդեցությունը, այդ թվում՝ կապված վերջինիս կողմից Մախաչկալայում զբաղեցրած պաշտոնի հետ և նրա կապերը իրավապահ մարմիններում և հանցավոր աշխարհի հետ, կարող էին նրան փալ հնարավորություն ազդելու վկաների վրա կամ ապացույցները վերացնելու, վերջինիս կողմից ազատության մեջ մնալու դեպքում: Վկաների վախը կարող էր հիմք հանդիսանալ, որ վերջիններս հրաժարվեն դատավարությանը մասնակցելուց: ՄԻԵԴ-ը նշել է, որ պատասխան գործողությունների վրանգը այս գործում բավարար է եղել, որպեսզի վախեցված վկաները ամբողջությամբ հեռանային դատավարությունից: Ներպետական դատարանը մանրակրկիտ համադրել է այն տուժողների և վկաների անվտանգությանը, որոնք արդեն իսկ փվել էին ցուցմունքներ դիմումատուի դեմ, և այլ վկաների կողմից ցուցմունքներ փալու պատրաստակամության հեռանկարը՝ դիմումատուի ազատության իրավունքի հետ<sup>2</sup>:

**Քննությանը խոչընդոտելու ռիսկը գնահատելիս կարևոր գործոն է հանդիսանում մեղադրյալի վարքագիծը՝ քրեական գործ հարուցելու և կալանավորման հարցը ընտրելու ժամանակահատվածի միջև:**

Եթե մեղադրյալը երկարատև ժամանակ գիտեր իր նկատմամբ իրականացվող քննության մասին, և բացակայում են տվյալներ՝ փաստեր և ապացույցներ առ այն, որ նա փորձել է խոչընդոտել քննությանը, ապա այդ ռիսկը, ՄԻԵԴ-ի կարծիքով, հիմնավորված չէ, այսինքն՝ չի կարող արդարացնել անձի կալանավորումը: Իրավիճակը նույնն է, երբ քրեական գործով քննության ընթացքում մեղադրյալն ազատ է արձակվում, իսկ հետո քննարկվում է վերջինիս կրկին անգամ կալանավորելու հարցը: Եթե բացակայում են ապացույցներ առ այն, որ ազատության մեջ գտնվելով՝ մեղադրյալը փորձել է խոչընդոտել քննությանը, ապա այդ ռիսկը չի արդարացնում

1 Տե՛ս Case of Mikhail Grishin v. Russia (Միխայիլ Գրիշինն ընդդեմ Ռուսաստանի) 24/07/2012, 14807/08, պարագրաֆ 149:

2 Տե՛ս Case of Amirov v. Russia (Ամիրովն ընդդեմ Ռուսաստանի 27/11/2014, 51857/13, պարագրաֆներ 107-109:




մեղադրյալի կրկին անգամ կալանավորումը<sup>1</sup>: Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

« (...) Կալանքից ազատված անձը չի կարող նորից կալանավորվել նույն մեղադրանքով, եթե չեն հայտնաբերվել նոր էական հանգամանքներ, որոնք վարույթն իրականացնող մարմնին հայտնի չէին մեղադրյալին կալանքից ազատելու պահին (...)», իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. « (...) Տվյալ խափանման միջոցն ընտրելու նպատակով հարուցված միջնորդությունը դատավորի կողմից մերժելու մասին որոշումից հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելը հնարավոր է միայն կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքների հայտ գալու դեպքում (...)»:


ՀՀ վճռաբեկ դատարանը Գոռ Դուրյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0052/06/14 քրեական գործով 2015 թվականի հունիսի 5-ի որոշման 20.1-րդ կետում դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝

« (...) բոլոր այն դեպքերում, երբ ի հայտ են գալիս կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքներ, վարույթն իրականացնող մարմինը կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով դիմել առաջին աստիճանի դատարան, այլ ոչ թե վերաքննիչ բողոք ներկայացնել: Ընդ որում՝ նշված նորմի իմաստով որպես նոր հանգամանք կարող է հանդիսանալ ոչ միայն կալանավորման սկզբնական միջնորդության մեջ չնշված, Առաջին աստիճանի դատարանում քննության առարկա չդարձած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

1 Stn Case of Ltellier v. France (Լետելյեն ընդդեմ Ֆրանսիայի) 26/06/1991, 12369/86, պարագրաֆներ 38-39:

135-րդ հոդվածում թվարկված կալանավորման նոր հիմքի առաջացումը, այլև սկզբնական միջնորդությամբ ներկայացված, առաջին աստիճանի դատարանում արդեն իսկ հետազոտված հիմքի առկայությունը հավաստող նոր նյութերի ու փաստաթղթերի երևան գալը (...)»<sup>1</sup>: 

**Դավադրության ռիսկը գործի քննությանը խոչընդոտելու համատեքստում գնահատելիս ՄԻԵԴ-ը Վ-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռում արձանագրել է հետևյալը.**

 Որպեսզի ցույց տրվի, որ դավադրության զգալի ռիսկը գոյություն ունեցել է և շարունակվել է մինչև դատաքննությունը սկսելը, մեղադրող պալատը հիմնականում վկայակոչել է գործի բացառիկ ծավալը, բռնագրավված փաստաթղթերի վիթխարի քանակը և դրանց դիտարկողությամբ խճճված վիճակը, ինչպես նաև վկաների մեծ քանակը, ներառյալ արտասահմանում ապրող վկաներին, որոնց անհրաժեշտ էր հարցաքննել: Նրա երկրորդ փաստարկը հիմնվում է դիմողի անձի վրա, որի վարքագիծը ինչպես մինչև կալանավորումը, այնպես էլ դրանից հետո արտահայտում էր նրա մտադրությունը՝ ոչնչացնել իրեն մերկացնող բոլոր վկայությունները, օրինակ, հաշիվները, կեղծելու կամ լիկվիդացնելու միջոցով: Մեղադրող պալատի կարծիքով, նաև բավականաչափ մտավախություն կար, որ հայտնվելով ազատության մեջ՝ նա կարող է այն չարաշահել, և օգտվելով նրա կողմից վերահսկվող 60 և ավելի ընկերություններում գործի չափազանց խճճվածությունից և աշխատակիցների նկատմամբ ունեցած իր ազդեցությամբ՝ ոչնչացնել չհայտնաբերված հանցանշանները, որոնց հավանական գոյություն ունենալը հաստատվել էր այլ փաստաթղթերով, ինչպես նաև մեքենայություններ կատարել վկաների հետ և նրանց դրդել կեղծ վկայություններ տա-

1 Տես ՀՀՊՏ 2016.02.24/12(1192).1:

լու: Վերջապես, մեղադրող պալատը 1987թ. ապրիլին նշեց քննչական գործողությունների ծավալի ընդլայնումը այն հանցագործությունները հեղափոխելու կապակցությամբ, որոնք դիմողը գործել էր Գերմանիայում, և որոնց նախաքննությունը սկզբում անցկացվել էր այնտեղ:

Դաշնային դատարանը, ստանալով բողոքը, յուրաքանչյուր դեպքում մանրակրկիտությամբ ուսումնասիրել էր այն հարցը, թե իրո՞ք վերոշարադրյալ նկատառումներն անհրաժեշտ են դարձրել դիմողին անընդհատ կալանքի փակ պահելը: Նա 1985թ. նոյեմբերի 7-ին, 1986թ. հունիսի 4-ին, 1987թ. մարտի 24-ին և 1988թ. ապրիլի 25-ին կոչ էր արել դատական քննիչներին աշխատել ինտենսիվորեն և պակասող փաստաթղթերն ու ցուցմունքները ստանալ որքան հնարավոր է արագ, բայց երբեք չբացառելով դավադրության գոյության վրանգը: Ընդհակառակը, նա ընդգծել է, որ այդպիսի ռիսկ գոյություն է ունեցել նույնիսկ քննության ավարտից և գործը դատարան հանձնելուց հետո (2 սեպտեմբերի 1988թ.): Նա նկատել է առել ոչ միայն Վ.-ի անձնական հարկանիշները և նրա անցյալը, այլև, ամենից առաջ, այն հանգամանքը, որ Վ.-ն, գործի նյութերից ելնելով, այլ դատաքննությունների ժամանակ ստեղծել է իրեն արդարացնող ապացույցներ, կեղծել փաստաթղթերի թվագրումը և մեքենայություններ կատարել վկաների հետ:

Տվյալ դեպքում դատարանը նաև պատճառ չի տեսնում չհամաձայնելու Դաշնային դատարանի կարծիքի հետ: Հետևաբար, ազգային իշխանությունները լիարժեք կերպով կարող էին շարադրված հանգամանքները դիտել որպես մեղադրյալի կալանքի փակ պահելու համար հիմք, որպեսզի խուսափեին դավադրության ռիսկից»<sup>1</sup>:



1 Տե՛ս Case of W. v. Switzerland (Վ-ն ընդդեմ Շվեյցարիայի) 26/01/1993թ., 14379/88, պարագրաֆ 33, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: Վճիռների ընտրանի (1978-2000թթ.). Վ. Հովհաննիսյան, Լ. Հակոբյան, Լ. Հակոբյան – Եր.: Տիգրան Մեծ, 2002 – էջ 453-454:

## Գ. Հիմնավոր ենթադրություն առ այն, որ անձը կշարունակի հանցավոր գործունեությունը:

Հաճախակի դատարանները մեղադրյալի նկատմամբ հանցագործության ծանրությունից բացի, կալանավորումը պայմանավորում են նաև վերջինիս մոտ առկա դատվածությամբ՝ առանց գնահատման ենթարկելու գործում առկա այլ փաստերի հետ (հանցագործության բնույթը, գործի հանգամանքները, անհատական իրավիճակները և այլն):

Մեղադրյալի կողմից հանցավոր գործունեությունը շարունակելու հավանականությունը գնահատելիս անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները.

- Արդյոք մեղադրյալն ունի չմարված կամ չհանված դատվածություն դիտավորյալ հանցագործության կատարման համար<sup>1</sup>,
- Չի փորձել, արդյոք, մեղադրյալը սպառնալ դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ հանցակիցներին,
- Ինչպիսին է եղել մեղադրյալի նախկին վարքագիծը (չի փորձել, արդյոք, մեղադրյալը վերացնել կամ կեղծել ապացույցները, խոչընդոտել խուզարկության, զննության և առևանգման կատարմանը և այլն),
- Ինչպիսին են մեղադրյալին մեղսագրվող արարքների ծանրությունն ու բնույթը (արարքը ավարտված է, թե՞ ոչ, և ինչպի-

1 Դատվածության առկայությունն ինքնին չի կարող արդարացնել մեղադրյալի կալանավորումը (Տե՛ս Case of Sergey Vasilyev v. Russia (Սերգեյ Վելինն ընդդեմ Ռուսաստանի) 17/10/2013., 33023/07, պարագրաֆ 84): Նախկինում վարչական պատասխանատվության ենթարկելու փաստերի առկայությունը չի արդարացնում մեղադրյալի կալանավորումը (Տե՛ս Case of Sergey Medvedev v Russia (Սերգեյ Մեդվեդևն ընդդեմ Ռուսաստանի) 30/07/2009., 3194/08, պարագրաֆ 52): Նախկինում առանց բռնության կատարված հանցագործությունները, որոնք անհամեմատելի են նոր կատարված հանցագործությանը ո՛չ բնույթով, ո՛չ աստիճանով, չեն կարող հիմնավորել հանցավոր գործունեությունը շարունակելու ռիսկի առկայությունը (Տե՛ս Case of Kolev v. Bulgaria (Կոլևն ընդդեմ Բուլղարիայի) 28/04/2005., 50326/99, պարագրաֆներ 60-61): Հակիրճ հիշատակումը նախկին դատվածությունների մասին (առանց հիշատակման, թե՛ որ հանցագործությունների մասին է խոսքը, առանց դրա վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատման) չի կարող բավարար լինել այդ ռիսկի հաստատման հարցում (Տե՛ս Case of Lyubimenko v Russia (Լյուբիմենկոն ընդդեմ Ռուսաստանի) 19/03/2006., 6270/06, պարագրաֆ 74):

սին կլինեն հետևանքները մեղադրյալի համար, եթե արարքը լիներ ավարտված, արդյո՞ք մեղադրյալը հանցանքը կատարել է ընտանիքի անդամի նկատմամբ, որի հետ բնակվում է համատեղ և այլն)<sup>1</sup>:

Ճանաչելով տվյալ դիսկի առկայությունը՝ անհրաժեշտ է բացատրել, թե ինչպես գործի հանգամանքներից ելնելով, մասնավորապես, հաշվի առնելով նախորդ գործունեությունն ու անձի տվյալները՝ դատարանը եկել է հետևության դիսկի իրական լինելու մասին<sup>2</sup>, իսկ կալանքի տակ պահելը այդ դիսկի լույսի ներքո հանդիսանում է համարժեք միջոց:

Այսպես, Լոռու մարզի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշման համաձայն՝

«**«** *Մեղադրյալի՝ հասարակության համար իրական վրանգ ներկայացնելու մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նա նախկինում դատվածություն ունի երկու անգամ կյանքի կամ առողջության համար ոչ վրանգավոր բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով կողոպուտ կատարելու, ինչպես նաև մեկ այլ անձի առողջությանը դիտավորությանը թեթև ու միջին ծանրության վնաս պատճառելու համար, ինչը ողջամիտ ենթադրության հիմք է փալիս, որ մեղադրյալն ունի կայուն հակահասարակական կեցվածք և հսկում այլ անձանց նկատմամբ բռնություն գործադրելու:*

*Բացի այդ, քննությունից մեղադրյալի կողմից հեփազայում թաքնվելու իրական հնարավորության առկայության վառ ապացույց է այն, որ սույն գործով ձերբակալվե-*

1 Հանցավոր գործունեության համաձայնեցված կամ կազմակերպված բնույթը կարող է նշանակություն ունենալ այդ դիսկի գնահատման դեպքում և արդարացնել կալանավորումը քննության սկզբնական փուլերում (Տե՛ս Case of Veliyev v. Russia (Վելինեն ընդդեմ Ռուսաստանի) 24/06/2010., 24202/05, պարագրաֆ 149):

2 Հանցավոր գործունեությունը շարունակելու ռիսկը պետք է լինի իրական: Օրինակ, այդ հատկանիշը բացակայում է, եթե քրեական հետապնդման են ենթարկվում հանցավոր խմբի բոլոր մասնակիցները (Տե՛ս Case of Veliyev v. Russia (Վելինեն ընդդեմ Ռուսաստանի) 24/06/2010թ., 24202/05), պարագրաֆ 155):

յուց հեղուկ նա փախուստի փորձ է կատարել: >>

ՀՀ վճարելի դատարանն Ա. Եգանյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0034/06/19 քրեական գործով 2019 թվականի սեպտեմբերի 19-ի 18.09.2019թ. որոշման (6-7-րդ և 21-րդ կետերում արձանագրել է հետևյալը.

«Ստորադաս դատարանները, մեղադրյալ Ա. Եգանյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս պարզաձ իրավական գնահատականի չեն արժանացրել վերջինիս անձը: Մասնավորապես այն, որ Ա. Եգանյանը հանդիսացել է մշտապես իշխանության ներկայացուցչի գործառույթներով օժտված պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձ, որի ենթակայության ներքո են աշխատել գործով պարզման ենթակա հանգամանքների մասին տեղեկություններ ունեցող անձինք: Այսպես, ըստ առաջադրված մեղադրանքի՝ Ա. Եգանյանն ունենալով ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Քանաքեռ-Զեյթունի պահպանության բաժնի ղեկավարման, բաժնին սպասարկող ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում բաժնի անունով բացված բյուջեպային և արտաբյուջեպային հաշվարկների դրամական միջոցների տնօրինման լիազորություն, օգտագործելով իր այդ լիազորությունն ու պաշտոնական դիրքը՝ բաժնի հաշվապահ Ա.Գասպարյանի հետ ձեռք է բերել նախնական համաձայնություն՝ իրեն վստահված բաժնի ֆինանսական միջոցներից ինչպես իրենց, այնպես էլ բաժնի մի շարք աշխատակիցներին որպես աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ առանց օրինական հիմքերի ավել գումարներ փոխանցելու, կանխիկացնելու և յուրացնելու շուրջ՝ այդ գումարներից Ա.

1 Տե՛ս Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի հուլիսի 30-ի թիվ ԼԴ/0060/06/20 որոշումը:

Գասպարյանին մասնաբաժին հատկացնելու պայմանով:

Վերոնշյալի գնահատմամբ, գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս, սույն որոշման 16-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, ստորադաս դատարանների կողմից պետք է հաշվի առնվեր նաև վկա Ա. Գասպարյանի ցուցմունքը, որը վկայում էր Ա.Եգանյանի կողմից ազատության մեջ գտնվելու դեպքում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու բարձր հավանականության մասին» (Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արթուր Եգանյանի վերաբերյալ 18.09.2019թ. թիվ ԵԴ/0034/06/19 որոշման 16-րդ կետը):

Սույն գործով վկա Ա.Գալստյանը մասնավորապես, ցուցմունք է տվել այն մասին, որ Անահիտ Գասպարյանը, 2018 թվականի օգոստոսի 25-ին որպես վկա հարցաքննվելիս, ցուցմունք է տվել այն մասին, որ. «(...) 2018 թվականի հուլիսին, երբ ՀՀ ոստիկանության ներքին աուդիտի վարչության աշխատակիցները եկան մեր բաժին՝ ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգելու, (...) ինչից էլ մտահոգված և վախեցած գնացի բաժնի պետ Արթուր Եգանյանի աշխատասենյակ և այդ հարցով դիմեցի նրան, սակայն նա ինձ հանգստացնելով հավաստիացրեց, որ որևէ խնդիր չկա, ամեն ինչ նորմալ է (...) անհանգստանալու ոչինչ չկա, թող ձևական ստուգեն, բոլոր հարցերը լուծել է, «կջրեն կգնա»: (...) [Տ]եսնելով, որ գտնվում եմ անելանելի վիճակում, ինձ առաջարկեց մոտ 10-15 օրով բոլորից թաքնվել, մինչև ինքը ստուգման հետ կապված հարցերը կարգավորի: Թաքնվելու հարցում նա ինձ առաջարկում էր իր օգնությունը, ասում էր, որ ճիշտ կլինի Հայաստանից մեկնեն ՌԴ՝ Սոչի քաղաք՝ իր ընկերների մոտ, որպեսզի ինձ այնտեղ պահեն, մինչև ինքը կասի, թե երբ վերադառնամ, ասում էր, որ գնալ գալու հետ կապված բոլոր ծախսերը ինքը կհոգա: Ես չհամաձայնեցի Արթուր Եգանյանի առաջարկին և հրաժարվեցի մեկնել Հայաստանից, ինչի համար Արթուր Եգանյանն ինձ առաջարկեց երկրորդ փարբերակը, այն է՝

թաքնվել Սևանա լճի ափին գտնվող իրենց առանձնապա-  
նը, որին նույնպես չհամաձայնեցի: (...) Դրանից հետո Ար-  
թուր Եզանյանը սկսեց արդեն ինձ համոզել, որ թաքնվեմ  
(...): Բացի այդ, խորհուրդ տվեց, որ եթե հանկարծ խնդիր-  
ներ առաջանան, ապա որևէ դեպքում անուններ չտամ»:

Վերոնշյալի համարեքստում ՀՀ Վճռաբեկ դատարա-  
նը արձանագրել է, որ «ինչ վերաբերում է Առաջին ափյանի  
դատարանի կողմից որպես Ա.Եզանյանի անձը բնութա-  
գրող տվյալներ նշված հանգամանքներին (մեղադրյալ Ար-  
թուր Եզանյանի անձը հայտնի է, նա Հայաստանի Հանրա-  
պետությունում ունի մշտական բնակության վայր, երիտա-  
սարդ է, նախկինում արաբավորված չի եղել, հարևանների  
կողմից բնութագրվում է դրականորեն, ամուսնացած է,  
ընտանիքի միակ կերակրողն է, խնամքին են գտնվում վա-  
րատող լինը (տառապում է կրծքագեղձի երկու կողմից դի-  
ֆուզ ֆիբրոզ-կիստոզ մասթոպապիա հիվանդությամբ) և 2  
անչափահաս վարատող երեխաները, որոնք հաշվառված  
են Ս. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնում),  
ապա դրանք սույն որոշմամբ արտահայտված իրավական  
դիրքորոշումների պայմաններում, Վճռաբեկ դատարանի  
գնահատմամբ, ի զորու չեն երաշխավորելու նրա պար-  
շաճ վարքագիծը՝ ազատության մեջ գտնվելու դեպքում:  
Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահան-  
գում է, որ Ա.Եզանյանին կալանքից գրավով ազատելը թույ-  
լատրելի ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարաննե-  
րի հետևությունները հիմնավոր չեն»<sup>1</sup>:



Այսպիսով, մեղադրյալի կողմից հանցավոր գործունեությունը շա-  
րունակելու հավանականությունը գնահատելիս նշանակություն ու-  
նեն մեղադրյալին մեղսագրված արարքի ծանրությունը և բնույթը:  
Սակայն դա բավարար չի լինի, եթե այդ գործոնները ամրապնդված  
չլինեն գործի փաստական հանգամանքներով, մասնավորապես,  
մեղադրյալի անձի վերաբերյալ տեղեկատվությամբ, որն հաստա-

1 Տե՛ս [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=13229323905402316](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905402316):



տում է մեղադրյալի կողմից նույնաբնույթ նոր հանցագործությունների կատարման ռիսկը, և այն չի կարող նվազեցվել այն աստիճան, որ ընդունելի լինի մեղադրյալի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը: Մյուս կողմից, հանցավոր գործունեությունը շարունակելու ռիսկի հիմնավորումը պարտադիր չէ, որ հիմնված լինի հանցագործության կատարման մեջ առկա որոշակի և կոնկրետ կասկածների վրա: Դատվածության առկայության փաստը մի շարք նույնաբնույթ հանցագործությունների կատարման համար, ՄԻԵԴ-ի կարծիքով, կարող է հիմնավորել մեղադրյալի կողմից նոր հանցագործությունների կատարման իրական ռիսկը<sup>1</sup>:

**Դատվածության առկայությունն ինքնին չի կարող արդարացնել այնպիսի խափանման միջոցի ընտրությունը, ինչպիսին է կալանավորումը, առանց հաշվի առնելու նախորդ հանցագործությունների ծանրությունն ու բնույթը<sup>2</sup>:**

Այսպես, ՃՏՊ-ի համար դատվածության առկայությունը հարկերից խուսափելու վերաբերյալ նոր քրեական գործի շրջանակներում դժվար թե կարող է վկայել անձի կողմից նոր հանցանքներ կատարելու ռիսկի առկայության մասին: Աշխատանքի և ընտանիքի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ այնպիսի հետևության համար, որ անձը հակված կլինի կատարել նոր հանցագործություններ<sup>3</sup>:

«*Կալանավորումը պետք է կիրառվի ոչ թե մեղադրյալին մեղսագրված արարքի համար վերջինիս նկատմամբ հնարավոր դատավճիռ կայացնելու հիման վրա, այլ նման խափանման միջոց ընտրելու մասին որոշման անհրաժեշտության հիման վրա: Որոշման պաճառաբանական մասը պետք է բովանդակի նշումներ կոնկրետ փաս-*

1 Տե՛ս Case of Toth v. Austria (Տոթն ընդդեմ Ավստրիայի) 12/12/1991., 11894/85, պարագրաֆներ 69-70:  
2 Տե՛ս Case of Muller v. France (Մյուլերն ընդդեմ Ֆրանսիայի) 17/03/1997., 21802/05, պարագրաֆ 44):  
3 Տե՛ս Case of Sulaaja v.Estonia (Սուլայանն ընդդեմ Էստոնիայի) 15.02.2005., 55939/00, պարագրաֆ 64, Case of Sergey Medvedev v Russia (Սերգեյ Մեդվեդևն ընդդեմ Ռուսաստանի) 30/07/2009., 3194/08, պարագրաֆներ 54:

*տերի և մեղադրյալի անհատական հանգամանքների վրա, որոնք հիմնավորում են վերջինիս նկատմամբ կալանավորման ընտրությունը<sup>1</sup>:*

*Չեն համապատասխանի օրենսդրության պահանջներին այն դեպքերը, երբ դատարանը պարզապես հղում է կատարում գործի հանգամանքների և մեղադրյալի անձի վրա, առանց մատնացույց անելու կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կվկայեն այն մասին, որ մեղադրյալը կդիմի փախուստի կամ կշարունակի հանցավոր գործունեությունը:* >>

Առանձին վերլուծության է ենթակա գործով անցնող մեղադրյալներից յուրաքանչյուրի անհատական իրավիճակը: Անթույլատրելի է կալանավորման ժամկետների «խմբակային» երկարացումը առանց կալանավորման համար հիմք հանդիսացած փաստարկների «կողմ» կամ «դեմ» դետալային վերլուծության, որը հաշվի կառնի յուրաքանչյուր մեղադրյալի անհատական իրավիճակը: Թեկուզև ՀՀ օրենսդրությամբ նման կարգավորում նախատեսված չէ, երբ մեկ որոշմամբ կարող է անդրադարձ կատարվել մի քանի մեղադրյալների կալանավորման հարցին, սակայն վերոնշյալ մոտեցումը արդիական կլինի խմբակային այն հանցագործությունների դեպքում, երբ գործով հանցանքի փաստական կողմը միանման կլինի բոլոր մեղադրյալների նկատմամբ: Օրինակ, զանգվածային անկարգությունների հանցակազմով, երբ մի քանի տասնյակի հասնող հանցակիցների գործողությունները գրեթե միանման են: Այս պայմաններում, յուրաքանչյուր մեղադրյալի նկատմամբ կալանավորման հարցի առանձին քննարկման դեպքում, անհրաժեշտ է առավել մանրակրկիտ առանձնացնել յուրաքանչյուր մեղադրյալին վերաբերող մեղադրանքի փաստական հանգամանքների առկայությունն ու նրա անձը բնութագրող տվյալները:

Անթույլատրելի է համապատասխան դատական ակտերում կարծրատիպային և վերացական ձևակերպումների կիրառումը, օրինակ, քրեական դատավարության նորմերի պարզապես մեջբե-

1 Stiu Case of Aleksanyan v. Russia (Ալեքսանյանի ընդդեմ Ռուսաստանի) 22/12/2008թ. 46468/06, պարագրաֆ 179:

րումն առանց գործի կոնկրետ հանգամանքների համատեքստում դրանց վերլուծության<sup>1</sup>:

**Դատական ակտի պատճառաբանական մասը պետք է պարունակի վերլուծություն առ այն, թե ինչպիսի հիմքեր կան նախատեսված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որոնք կիրառվել են կոնկրետ գործի հանգամանքների համատեքստում: Այսինքն, դատարանը պետք է հստակ նշի, թե գործում առկա որ փաստական տվյալներն են խոսում հոգուտ կամ դեմ անձի կալանավորման, և ինչու է այդ փաստական տվյալների մի մասը գերակշռում մյուսի նկատմամբ:**

Հարկ է նշել, որ այդ հիմքերը գնահատելիս դատարանի փաստարկները կարող են հիմնվել ոչ միայն այն փաստերի վրա, որոնք ուղիղ մատնանշում են հանրային շահին վտանգող սպառնալիքները, այլ նաև կանխավարկածների վրա, որոնք կվկայեն նման սպառնալիքների առկայության մասին: Օրինակ, մեղադրյալի ձերբակալման փաստը օդանավակայանում տոմսերը ձեռքին և անձը հաստատող կեղծ փաստաթղթերով՝ անվերապահորեն վկայում է անձի կողմից թաքնվելու ցանկության մասին: Միևնույն ժամանակ, անձի մոտ օտարերկրյա քաղաքացիության առկայության փաստը միանշանակ դեռ չի վկայում թաքնվելուն ուղղված նրա ցանկության մասին, սակայն այդ փաստը որջամտորեն կարող է գնահատվել որպես գործոն, որը բարձրացնում է փախուստի դիմելու ռիսկը<sup>2</sup>: Կալանավորման մասին որոշման պատճառաբանական մասը պետք է պարունակի նշումներ մեղադրանքի կողմից ներկայացված այն փաստաթղթերի վրա, որոնք կվկայեն մեկ կամ մի քանի ռիսկերի առկայության մասին, և դրանց վերլուծությունը:

Այսպես, ՄԻԵԴ-ը Գասպարին ընդդեմ Հայաստանի գործով վճռում արձանագրել է հետևյալը.

1 Տե՛ս Case of Janiashvili v. Georgia (Ջանիաշվիլին ընդդեմ Վրաստանի) 27/11/2012թ., 35887/05), պարագրաֆ 86:  
2 Տե՛ս Case of Trszaska v. Poland (Տրզացկան ընդդեմ Լեհաստանի) 11.07.2000., 25792/94, պարագրաֆ 65, Case of Becciev v. Moldova (Բեսսիևն ընդդեմ Մոլդովայի) 04/10/2005., 9190/03, պարագրաֆ 59, Case of Artemov v. Russia (Արտեմովն ընդդեմ Լեհաստանի) 03/04/2014, 14945/03), պարագրաֆ 79:

«*Դատարանն ընդունում է, որ երբ կասկածյալն իր ինքնության վերաբերյալ կանխամտածված կերպով տրամադրում է մոլորեցնող տեղեկություններ, դա կարող է լինել կարևոր գործոն, որը պետք է հաշվի առնվի նրա կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վրանգի մասով որոշում կայացնելիս»<sup>1</sup>:*

Ստորև ներկայացնում ենք նաև այդ հարցի վերաբերյալ ՄԻԵԴ-ի ամբողջական վերլուծությունը.

«*78. Ինչ վերաբերում է Վերաքննիչ քրեական դատարանի կողմից իր 2008 թվականի մարտի 20-ին կայացված որոշման մեջ ներկայացված հիմնավորմանը, ապա Դատարանն ընդունում է, որ երբ կասկածյալն իր ինքնության վերաբերյալ կանխամտածված կերպով տրամադրում է մոլորեցնող տեղեկություններ, դա կարող է լինել կարևոր գործոն, որը պետք է հաշվի առնվի նրա կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վրանգի մասով որոշում կայացնելիս: Այնուամենայնիվ, Դատարանը չի կարծում, որ սույն գործով տվյալ որոշումը բավարար կերպով հիմնավորված էր: Մասնավորապես, առաջինը՝ պարզ չէ, թե ինչ հիմքերով է Վերաքննիչ դատարանը եզրակացրել, որ դիմումատու, իր ինքնության հետ կապված, կանխամտածված կերպով մոլորության մեջ է գցել քննությունն իրականացնող մարմինին, և որ իր իսկական ինքնությունը պարզվել է միայն 2008 թվականի մարտի 3-ին, երբ դիմումատուի ձերբակալման մասին 2008 թվականի մարտի 2-ին կազմված արձանագրության մեջ արդեն իսկ նշված էր թե՛ նրա պաշտոնական անունը, և թե՛ այն անունը, որով դիմումատուի պնդմամբ նա միշտ ներկայացել է: Այդ փաստի, այդ թվում՝ դիմումատուի ձերբակալման արձանագրության մեջ ներառված տե-*

1 Stenu Case of Gaspari v. Armenia (Գասպարին ընդդեմ Հայաստանի) 20/09/2018., 44769/08, պարագրաֆ 78:

ղեկությունների եւ քննիչի կողմից 2008 թվականի մարտի 3-ին կազմված արձանագրության միջև անհամապատասխանության առնչությամբ ոչ մի բացատրություն չի ներկայացվել: Ավելին, Դատարանը նշում է, որ ո՛չ քննիչը, և ո՛չ էլ գործը քննող դատարանը դիմումատուին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորելիս (տե՛ս վերևից՝ 12-րդ եւ 14-րդ պարբերությունները) չեն հիմնվել այդ փաստի վրա: Վերաքննիչ դատարանն իր որոշումը կայացրել է դիմումատուի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիման վրա, որը պնդել է, որ գործը քննող դատարանն իրեն կալանավորելու համար ոչ մի պատճառ չի ներկայացրել (տե՛ս վերևում՝ 15-րդ պարբերությունում): Վերաքննիչ դատարանը դիմումատուի կողմից ներկայացված ոչ մի փաստարկի չի անդրադարձել, փոխարենը դիմումատուին կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը հիմնավորել է՝ նշելով, որ դիմումատուն իր ինքնության վերաբերյալ կեղծ տեղեկություն է տրամադրել: Չկա ոչինչ, որը կհուշեր, որ կալանավորման այդ հիմքը Վերաքննիչ դատարանում եղել է քննության առարկա, և պարզ է դառնում, որ դատարանը հանգել է համապատասխան եզրահանգման՝ հիմք ընդունելով գործի նյութերը: Դրանով Վերաքննիչ դատարանը զրկել է դիմումատուին այդ հիմքով կալանավորման դեմ առարկություն ներկայացնելու հնարավորությունից, այդ թվում ներկայացնելով նրա կողմից Դատարան բերված փաստարկները: Ուստի, հաշվի առնելով դիմումատուի գործի բոլոր հանգամանքները և ներկայացված պատճառները՝ Դատարանը կարծում է, որ ներպետական դատարանները դիմումատուի նկատմամբ կալանք կիրառելու և դրա ժամկետը երկարաձգելու վերաբերյալ իրենց որոշումների համար հիմնավոր և բավարար պատճառներ չեն ներկայացրել»<sup>1</sup>: >>

1 Stn Case of Gaspari v. Armenia (Գասպարին ընդդեմ Հայաստանի) 20/09/2018., 44769/08, պարագրաֆ 78:

Փաստացի ազատությունից զրկումը, որը տեղի է ունենում կալանավորման դեպքում, պետք է կիրառվի այն ժամանակ, երբ որևէ այլ միջոց չի գործում: Այն պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն<sup>1</sup>:

### **1.3. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման անհնարիությունը**

Խափանման միջոցները լինելով հարկադրանքի միջոցներ՝ կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

Կալանավորումից բացի, խափանման այլ միջոցներն են՝

1. գրավը,
2. ստորագրությունը չհեռանալու մասին,
3. անձնական երաշխավորությունը,
4. կազմակերպության երաշխավորությունը,
5. հսկողության հանձնելը,
6. հրամանատարության հսկողությանն հանձնելը (ՔԴՕ 134-րդ հոդված):

Նախագծի 115-րդ հոդվածը այլընտրանքային խափանման միջոցների առավել համալրված ցանկ է պարունակում: Մասնավորապես.

2. Այլընտրանքային խափանման միջոցներն են՝
  - 1) տնային կալանքը,
  - 2) վարչական հսկողությունը,
  - 3) գրավը,
  - 4) պաշտոնավարման կասեցումը,
  - 5) բացակայելու արգելքը,

<sup>1</sup> Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանվում է, որ «(...) Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելն ընդհանուր կանոն չպետք է լինի (...)»:

- 6) երաշխավորությունը,
- 7) դատախարակչական հսկողությունը,
- 8) զինվորական հսկողությունը:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մինչև 2020թ. ապրիլի 14-ի ՀՀ ՔԴՕ-ում տեղի ունեցած փոփոխությունները<sup>1</sup> թե՛ նախնական քննության, և թե՛ դատական քննության փուլերում վարույթն իրականացնող մարմնի համար կալանավորմանն այլընտրանք կարող էին հանդիսանալ վերը թվարկված այլընտրանքային խափանման բոլոր միջոցները, իսկ ահա դատարանի համար նախնական քննության փուլում դատական վերահսկողության կարգով վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված կալանավորման միջնորդության քննության ժամանակ կալանքի համար այլընտրանք հանդիսանում էր միայն գրավը: Նշված փոփոխություններից հետո առկա օրենքի խմբագրությունը թույլ է տալիս նշել, որ թե՛ նախնական քննության, և թե՛ դատական քննության փուլերում կալանավորմանն այլընտրանք են հանդիսանում բոլոր այլընտրանքային խափանման միջոցները: Այստեղ միակ առանձնահատկությունն այն է, որ նախնական քննության փուլում դատարանը կամ բավարարում է կալանքի վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը, կամ մերժում է, եթե ՔԴՕ 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին (ոչ պատշաճ վարքագիծը կանխելը և դատավճռի կատարումը) հնարավոր է հասնել մեղադրյալի նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառմամբ՝ *այլ խափանման միջոցներ ընտրելու հարցի լուծումը թողնելով վարույթն իրականացնող մարմնի իրավասությանը* (ՔԴՕ 139-րդ հոդվածի 4-րդ մաս):

Խափանման որոշ տեսակներ կարող են կիրառվել միայն որոշակիորեն կոնկրետացված սուբյեկտի/ների նկատմամբ: Այսպես օրինակ՝ կալանավորումը կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ, հսկողության հանձնելը՝ միայն անչափահասի, իսկ հրամանատարության հսկողությանը հանձնելը՝ միայն զինծառայողի կամ զինապարտի նկատմամբ՝ զորահավաքներ անցնելու ժամանակահատվածում:

Դատավարական օրենքով նախատեսված կանոնի համաձայն՝

1 Տե՛ս ՀՀ ՊՏ 2020.04.14/40(1595):

խափանման միջոցները չեն կարող կիրառվել մեկը մյուսի հետ կապակցված, բացառությամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի, որը կարող է կիրառվել գրավ, անձնական երաշխավորություն և կազմակերպության երաշխավորություն խափանման միջոցների հետ կապակցված:

Նախագծի 122-րդ հոդվածը սահմանելով այլընտրանքային խափանման միջոցների իրավաչափության առանձնահատկությունները՝ նշել է, որ՝



1. Այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել **ինչպես առանձին, այնպես էլ համակցված**, եթե հնարավոր է ապահովել դրանց պայմանների միաժամանակյա պահպանումը: Դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցների համակցված կիրառումը մերժելու դեպքում քննիչը կամ հսկող դատախազը տվյալ մեղադրյալի նկատմամբ համակցված խափանման միջոցներ կիրառել չեն կարող:

2. Սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին [տրային կալանքը] և 2-րդ [վարչական հսկողությունը] կետերով նախատեսված խափանման միջոցները կարող են կիրառվել միայն դատարանի կողմից: Դատական վարույթում դատարանն իրավասու է կիրառել նաև սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի 3-8-րդ կետերով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցները:

3. Մինչդատական վարույթում սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի 3-8-րդ կետերով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցները կարող է կիրառել՝

1) քննիչը՝ մինչև մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին դատախազին հանձնելը,

2) հսկող դատախազը՝ մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ միասին քննիչից ստանալու պահից մինչև դրանք դատարան հանձնելը,

3) դատարանը՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու



միջնորդությունը լուծելիս:

4. Սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի 3-4-րդ [գրավը, պաշտոնավարման կասեցումը] կետերով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցները քննիչը կարող է կիրառել բացառապես հսկող դատախազի համաձայնությամբ:

5. Այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքների վերաբերյալ ողջամիտ ենթադրության առկայության դեպքում: >>

Անձին կալանավորելու մասին որոշում կայացնելիս դատարանը նախ պետք է քննարկի այլընտրանքային միջոցներով վերջինիս պատշաճ վարքագիծն ապահովելու հնարավորությունը: ՀՀ ՔԴՕ 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրյալի կալանավորումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե անհնար է կիրառել այլ, մեղմ խափանման միջոցներ: Այս նորմն ունի իմպերատիվ/պարտադիր բնույթ, և ենթադրում է, որ այլընտրանքային միջոցների կիրառման անհնարինությունը չի կարելի ուղղակի ենթադրել: Դատարանն իր որոշմամբ պետք է բացատրի, թե ինչու է դատարանը եզրակացրել, որ այլընտրանքային խափանման միջոցները չեն կարողանա ապահովել պատշաճ քննությունը<sup>1</sup>: Այլընտրանքային խափանման միջոցների բովանդակալից դիտարկումը պահանջում է, որ դատարանի որոշմամբ նշվեն մեղմ խափանման միջոցներ կիրառելու անհնարինության կոնկրետ պատճառները: Դատարանը, ելնելով գործի առանձնահատուկ հանգամանքներից, պետք է նշի, թե ինչու սահմանված ռիսկը (փախուստի, հանցավոր գործունեության շարունակումը, քննությունը խոչընդոտելը) հնարավոր չէ արդյունավետորեն չեզոքացնել (սահմանափակել) այլ, ավելի մեղմ միջոցներով: Ազատության կանխավարկածը ենթադրում է, որ դատարանը նախ պետք է հաշվի առնի խափանման այլընտրանքային միջոցներ կիրառելու հնարավորությունը և միայն դրանից հետո, հասնելով այն եզրակացության, որ նրանք արդյունավետ չեն լինի,

1 Stn Case of Chumakov v. Russia (Չումակովս Ընդեմ Ռուսաստանի), 24/04/2012, 41794/04, պարագրաֆ 163:

որոշում կայացնի կալանքի վերաբերյալ:

Այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը պետք է հաշվի առնել՝ անկախ նրանից, թե առկա է արդյոք կողմերի միջնորդություն, ինչպես նաև անկախ նրանից, թե գործը քրեական դատավարության որ փուլում է<sup>1</sup>:

Քննարկելով այս հարցը՝ դատարանը պետք է գա ներքին համոզման, որ մեղադրյալի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցները չեն հասնի ցանկալի արդյունքների, և իր որոշման պատճառաբանական մասում նշի այդ մասին: Մի շարք դեպքերում ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, քանի որ կալանքի որոշումներում առկա չեն եղել համապատասխան վերլուծությունները<sup>2</sup>: Եթե պաշտպանական կողմը այլընտրանքային միջոց է միջնորդել, դատարանի որոշումը պետք է պարունակի պատասխան պաշտպանական կողմի ներկայացրած փաստարկներին: Որքան մանրամասն լինեն էական փաստարկները, այնքան ավելի մանրամասն պետք է լինեն այդ էական փաստարկների կապակցությամբ տրվող պատճառաբանությունները:

Որոշ դեպքերում հնարավոր չէ կիրառել զսպման այլընտրանքային միջոցներ (օրինակ, երբ անձը, ենթադրաբար, հանցավոր խմբի ակտիվ անդամ է, որը ներգրավված է բռնությամբ կատարվող հանցագործությունների կամ ահաբեկչական բնույթի հանցագործությունների կատարման մեջ), հատկապես քննության վաղ փուլերում: Այնուամենայնիվ, այս դեպքերում ևս կալանավորումը չպետք է կիրառվի ինքնաբերաբար<sup>3</sup>:

Հաշվի առնելով, որ տնային կալանքը համարվում է որպես ազատությունից զրկելու ձև<sup>4</sup>, այն դեպքերում, երբ դատարանը հրա-

1 Տե՛ս ՌԴ ԳԴ Պլենումի 19.12.2013 թ. թիվ 41 (24.05.2016թ. խմբագրությամբ) որոշման 3-րդ կետը:

2 Տե՛ս, օրինակ, Case of Fedorenko v. Russia (Ֆեդորենկոն ընդդեմ Ռուսաստանի), 20/09/2011, 39602/05 պարագրաֆ 71; Case of Sergey Vasilyev v. Russia (Սերգեյ Վասիլյևն ընդդեմ Ռուսաստանի), 17/10/2013, 33023/07, պարագրաֆ 86:

3 Տե՛ս Case of Khodorkovskiy v. Russia (Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի), 31/05/2011, 5829/04, պարագրաֆ 196:

4 Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի (Եվրոպական դատարանի Մանչինին ընդդեմ Իտալիայի (Mancini v. Italy), քողոք № 44955/98, պարագրաֆ 17, Լավենտսն ընդդեմ Լատվիայի (Lavents

ժարվում է երկարացնել խափանման միջոցը կալանքի տեսքով՝ հիմքերի բացակայության պատճառաբանությամբ և այն փոխում է տնային կալանքի, դա ևս խախտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի երաշխիքները:

Այս համատեքստում պետք է նշել, որ խափանման այլընտրանքային միջոցների ցանկ սահմանված չէ ո՛չ ՄԻԵԴ-ի, ո՛չ Եվրոպայի խորհրդի (այսուհետ նաև՝ ԵԽ), և ո՛չ էլ որևէ այլ մարմնի կողմից: Ազատությունից զրկելու հետ չկապված յուրաքանչյուր միջոց կարող է դիտարկվել որպես այլընտրանքային միջոց: Այսպես, Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի 13-րդ հանձնարարականով առաջարկվում է այլընտրանքային միջոցների հետևյալ սահմանումը.



*Որպես կալանքի տակ պահելու «այլընտրանքային միջոցներ» կարող են լինել, օրինակ. պարտավորություններ, որոնք անհրաժեշտության դեպքում պահանջվում են դատական մարմնին ներկայանալու համար, չմիջամտել արդարադատության իրականացման ընթացքին և ձեռնպահ մնալ որոշակի վարքագծի դրսևորումից, այդ թվում որոշակի պաշտոն զբաղեցնելուց կամ աշխատանք կատարելուց: Ամենօրյա կամ պարբերական հիմունքներով ներկայացնել հաշվետվություններ դատական մարմնին, ոստիկանու-*

---

v. Latvia), 28/11/2002, բողոք N° 58442/00, պարագրաֆներ 64–66, Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի (թիվ 2) (Nikolova v. Bulgaria) (N° 2), 30/09/2004, բողոք N° 40896/98, պարագրաֆ 60, Նինեսկուն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Ninescu v. Republic of Moldova), 15/07/2014, բողոք N° 47306/07, պարագրաֆ 53, Դելիյորգիյն ընդդեմ Ալբանիայի (Delijorgji v. Albania), 28/04/2015, բողոք N° 6858/11, պարագրաֆ 75, Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Buzadji v. The Republic of Moldova), 05/07/2016, բողոք N° 23755/07)՝ **համարվում է, որ տնային կալանքը, հաշվի առնելով սահմանափակման աստիճանն ու դրսևորման ձևը, իրենից ներկայացնում է ազատությունից զրկում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով (այս հոդվածը չի կարգավորում կալանքի տակ գտնվելու պայմանները, այլ վերաբերում է բացառապես տեղաշարժման ազատության սահմանափակման աստիճանին, այլ ոչ թե հարմարավետության տարբերություններին կամ կալանքի տակ գտնվելու տարբեր տեղերում ներքին կանոնակարգումներին: Այսպիսով, Եվրոպական դատարանը օգտագործում է նույն չափանիշը կալանքի և տնային կալանքի համար):**

թյանը կամ այլ մարմնին, ենթարկվել դատական մարմնի կողմից նշանակված գործակալության կողմից վերահսկողության պահանջներին, ընդունել էլեկտրոնային մոնիտորինգի պահանջները, պահպանել սահմանված հասցեում բնակվելու պահանջները՝ պայմանով կամ առանց այնպեղ անցկացնելու ժամերի պայմանի, առանց թույլտվության չլքել կամ մուտք չգործել որոշակի վայրեր կամ թաղամասեր: Առանց թույլտվության չհանդիպել որոշակիորեն նշված անձանց: Հանձնել անձնագրերը կամ նույնականացման այլ փաստաթղթերը, ներկայացնել ֆինանսական կամ այլ տեսակի երաշխիքներ՝ սպասվող դատավարությանը ներկայանալու համար! >>

ԵՄ «Կալանքի այլընտրանքային միջոցները» վերտառությամբ Հելփ համակարգում (CoE Help, Alternative Measures to Detention) առկա դասընթացում այլընտրանքային միջոցներ չկիրառելու պատճառները հետևյալներն են.



Շարժվելու օրենսդրությունը ներառում է սահմանափակ ցանկ այն միջոցների, որոնք կարող են կիրառվել կալանքի փոխարեն: Արդյունքում դատարաններն իրենց տրամադրության տակ ունեն հանցագործության ծանրությանն ու բնույթին համապատասխան սակավաթիվ տարբերակներ:

Այլընտրանքները, որոնք պետք է կիրառվեն հաշվի առնելով հանցագործի սոցիալ-տնտեսական կարգավիճակը և նրա վերականգնողական պահանջները՝ առավել հաճախ բացակայում են:

Այնուամենայնիվ, ավելի հաճախ հանդիպող մարտա-

1 Տե՛ս Recommendation of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and the provision of safeguards against abuse (Adopted by the Committee of Ministers on 27 September 2006 at the 974th meeting of the Ministers' Deputies), available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805d743f](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d743f), 30.06.2020թ. ժամը 22:46:

հրավերը ոչ թե օրենսդրության բացակայությունն է, այլ գործող օրենսդրությամբ նախատեսված կալանավորման այլընտրանքներ կիրառելու ցանկության բացակայությունը:

Այլընտրանքները սովորաբար չեն օգտագործվում հետևյալի պատճառով.

- դրանց արդյունավետության նկատմամբ անվստահություն,

- քրեական արդարադատության մարմինների միջև համագործակցության անհրաժեշտ ենթակառուցվածքների և կազմակերպական մեխանիզմների բացակայություն՝ դրանց օգտագործումը հնարավոր դարձնելու համար,

- ենթադրյալ հանցանք կատարած անձի վերահսկելու հատուկ վարչական մարմնի՝ պրոբացիոն ծառայության համար ֆինանսավորման, անձնակազմի և վերապատրաստման բացակայություն,

- այնպիսի ընկալման առկայություն, համաձայն որի՝ այն միջոցներն ու սանկցիաները, որոնք կապված չեն ազատագրված հետ, չունեն հասարակական աջակցություն, և կարծիք է առաջանում, թե պատժամիջոցներ կիրառող մարմինները և քաղաքական գործիչներն ունեն հանցագործության նկատմամբ մեղմ վերաբերմունք, ուստի, վերջիններիս կողմից փորձ է արվում այդպիսին չերևալ,

- ազատագրված արժեքի (ինչպես սոցիալական, այնպես էլ ֆինանսական առումով) վերաբերյալ տեղեկացվածության պակասը՝

Այս ամենով հանդերձ՝ անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ ՔԴՕ կարգավորումները ևս չեն բավարարում վարույթն իրականացնող մարմինների առջև ծառայած խնդիրների լուծման համար անհրաժեշտ այլընտրանքային միջոցների բավարար արդյունավետ ցանկ ունենալու պահանջին, որն իր հերթին, ի թիվս այլնի, հանդիսանում է հիմնական պատճառ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու՝

1 Հասանելի է համացանցային [http://help.elearning.ext.coe.int/mod/scorm/player.php?scoid=3405&cm=50323&currentorg=Alternative\\_Measures\\_to\\_Detention\\_ORG&display=popup](http://help.elearning.ext.coe.int/mod/scorm/player.php?scoid=3405&cm=50323&currentorg=Alternative_Measures_to_Detention_ORG&display=popup) հասցեում, վերջին մուտք՝ 30.06.2020թ., ժամը 22:48:

*տրարածված և վարույթն իրականացնող մարմինների համար նախընտրելի միջոց դիտարկելու արատավոր պրակտիկայի համար:* >>

Այլընտրանքային միջոցները պետք է քննարկել ազատությունից զրկելու հետ փոխկապվածության շրջանակներում: Այսինքն, հասկանալու համար, թե այլընտրանքային միջոցները ենթակա են կիրառման, պետք է հասկանալ, թե երբ կալանքը չպետք է կիրառվի:

Անձնական ազատության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելով՝ Սահմանադրական դատարանը մասնավորապես, նշել է, «...սահմանադիրը ... անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ դատավարական ընթացակարգային միջոցառումներ կարող են կիրառվել»: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «... կալանավորումը, լինելով խափանման միջոցներից մեկը, ունի այլընտրանք և խափանման բոլոր միջոցների շարքից ընտրվում է այն ժամանակ, երբ խափանման միջոցների կիրառմամբ հետապնդվող նպատակներին հասնելուն առավելապես կարող է նպաստել խափանման միջոցի հենց այս տեսակը՝ հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր հանգամանքները»<sup>1</sup>:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածի ամբողջ նպատակը կամայական կալանքների կանխումն է<sup>2</sup>, ինչը նշանակում է, որ ցանկացած ազատագրվում պետք է օրինական լինի ինչպես ներպետական օրենսդրության<sup>3</sup>,

1 Տե՛ս ՍԴԻ-827ը, ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ, սեպտեմբերի 12-ի «Քաղաքացի Խ. Սուքիասյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության՝ ՀՀ սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» որոշում: Հասանելի է նաև համացանցային<http://www.concourt.am/armenian/decisions/common/2009/pdf/sdv-827.pdf> հասցեում, վերջին մուտք՝ 30.06.2020թ., ժամը 22:49:

2 Տե՛ս Case of McKay v. the United Kingdom [GC] (ՄակԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության), 03/10/2006, 543/03, պարագրաֆ 30:

3 Տե՛ս Case of Del Río Prada v. Spain [GC] (Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի), 21/10/2013, 42750/09, պարագրաֆ 125:

այնպես էլ միջազգային իրավունքի<sup>1</sup> առումով: ՄԻԵԴ-ը բարձրագույն ատյան է, որը հետևում է կալանքի համապատասխանությանը 5-րդ հոդվածի պահանջներին՝ անկախ ներպետական իշխանությունների կամ ազգային դատարանների եզրակացություններից:

Երբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը կասկածի տակ է դրվում, ՄԻԵԴ-ը որոշակի լիազորություն է իրականացնում՝ ստուգելով այն հանգամանքը, թե արդյո՞ք պահպանվել է ազգային օրենսդրությունը<sup>2</sup>: Դա արվում է նախ՝ գնահատելով օրենսդրության համատեղելիությունն ըստ 3 չափանիշների՝ **մադչելիության, հսրակության և կանխարեսելիության**<sup>3</sup>: Բացի դրանից, ներպետական իրավական դրույթների բովանդակությանը հակասող դատական մեկնաբանությունը նույնպես չի բավարարում Կոնվենցիայով պահանջվող **«օրենքի որակը»** չափանիշին<sup>4</sup>: Որոշ դատավարական թերություններ կամ իրավաբանական սխալներ, որոնք չեն խախտում կալանքի օրինականությունը, որպես ամբողջություն, 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կարող են համարվել իրավական: Կարևոր է հասկանալ, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով՝ **«օրենքով սահմանված ընթացակարգին»**, համապատասխանությունը չպետք է ընկալվի որպես բացարձակ համապատասխանություն: Որոշ թերություններ և խախտումներ ընդունելի են, սակայն միայն նրանք, որոնք չեն թերազնահատում ազատության և անվտանգության իրավունքներն իրենց էության մեջ (կալանքի տակ գտնվելու մասին չհայտնելն այն դեպքում, երբ իշխանություններն

- 1 Stén Case of Medvedyev and others v. France [MC] (Մեդվեդևը և ուրիշներ ընդդեմ Ֆրանսիայի), 29/03/2010, 3394/03, պարագրաֆ 79: Stén Case of Hassan v. the United Kingdom [GC] (Հասսանն ընդդեմ Միացյալ Թագավորության), 16/09/2014, 29750/09, պարագրաֆ 105:
- 2 Stén Case of Creangă v. Romania [MC] (Քրեանգան ընդդեմ Ռումինիայի), 23/02/2012, 29226/03, պարագրաֆ 101, Stén Case of Baranowski v. Poland (Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի), 28/03/2000, 28358/95, պարագրաֆ 50: Stén Case of Benham v. the United Kingdom (Բենհամն ընդդեմ Միացյալ Թագավորության), 10/06/1996, 19380/92, պարագրաֆ 41:
- 3 Stén Case of Del Río Prada v. Spain [GC] (Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի), 21/10/2013, 42750/09, պարագրաֆ 125:
- 4 Stén Case of Nasrulloev v. Russia, 11/10/2007, 656/06 (Նասրուլոևն ընդդեմ Ռուսաստանի, (Nasrulloev v. Russia, պարագրաֆ 77): Stén Case of Ječius v. Lithuania, 31/07/2000, 34578/97 (Ջեչլուս ընդդեմ Լիտվայի (Ječius v. Lithuania, պարագրաֆներ 53-59):

անկեղծորեն հավատում էին, որ իրենք տեղեկացրել էին)<sup>1</sup>, (ձերբակալման կամ կալանքի որոշման մեջ զուտ տեխնիկական սխալ, որը հետագայում ուղղվել է դատական մարմնի կողմից)<sup>2</sup>, (դիմումատուի կալանքի համար պաշտոնական հիմքերի փոխարինում դատական որոշումների նկարագրական մասում դատարանների կողմից նշված փաստերով)<sup>3</sup>:

ՄԻԵԿ 5-րդ հոդվածով նախատեսված է բացառիկ իրավիճակների ցանկը, որոնց դեպքում հնարավոր է օրինական կալանավորումը: Անձը կարող է կալանավորվել 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով, միայն քրեական մեղադրանքների հիման վրա, իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով (Ջեշլս ընդդեմ Լիտվայի (Ječius v. Lithuania)): Սույն դրույթի համաձայն՝ կալանավորումը պետք է լինի համաչափ միջոց նշված նպատակին հասնելու համար<sup>4</sup>: Համաչափությունը կարող է ենթադրել, որ իշխանությունները չպետք է կալանավորեն անձանց փոքր իրավախախտումների համար, օրինակ, այնպիսի իրավախախտումների համար, որոնց համար նախատեսված չէ ազատագրկման հետ կապված պատիժ: Օտարերկրացիների կալանավորումը, 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով, հիմնականում ունի երկու նպատակ. «անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակ», ինչը թույլ է տալիս պետություններին վերահսկել օտարերկրացիների ազատությունը ներգաղթի ենթատեքստում<sup>5</sup>, և

1 Sten Case of Marturana v. Italy (Մարտուրանան ընդդեմ Իտալիայի), 04/03/2008, 63154/00, պարագրաֆ 79:

2 Sten Case of Nikolov c. Bulgariet (Նիկոլովս ընդդեմ Բուլղարիայի), 30/01/2003, 38884/97, պարագրաֆ 63:

3 Sten Case of Gaidjurgis v. Lithuania (dec.) (Գաիդյուրգիսն ընդդեմ Լիտվայի (որոշում), 16/01/2001, 49098/99:

4 Sten Case of Ladent v. Poland (Լադենտն ընդդեմ Լեհաստանի), 18/03/2008, 11036/03: Լադենտն ընդդեմ Լեհաստանի գործով Դատարանը նշել է, որ դիմողի նկատմամբ կալանքի կիրառումը նման հանգամանքներում չի կարող համաչափ համարվել դատավարության պատշաճ ընթացքն ապահովելու նշված նպատակին հասնելու համար՝ հաշվի առնելով ենթադրաբար կատարված հանցագործության մեղմ բնույթը (պարագրաֆ 56):

5 Sten Case of Khlaifia and Others v. Italy [GC] (Խլայֆիան և այլք ընդդեմ Իտալիայի), 15/12/2016, 16483/12, պարագրաֆ 89:



## «արտաքսելու կամ հանձնելու նպատակ»<sup>1</sup>:

Հիմնական սկզբունքն այն է, որ ազատությունից զրկելը պետք է լինի որպես վերջին միջոց: Ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, և նրա զրկումը լուրջ և ծանր հետևանքներ է ունենում անհատների վրա: Եվ այս իրավունքը կարելի է ոչ միայն անհատի համար, այլև իր հավաքական իմաստով, այսինքն՝ ընդհանուր հասարակական կարգի և անվտանգության համար: Իրոք, եթե հասարակությունը կարծում է, որ դատախազական/դատական իշխանությունները հակված են ավելի շատ կիրառել կալանքը, ապա այն առաջացնում է մտահոգություններ և անապահովության զգացում:

Երբեմն նախնական կալանքի լայնածավալ կիրառումը քրեական դատավարությունում բերում է համակարգային խնդիրների, այդ թվում՝ այլընտրանքային միջոցների գրեթե չօգտագործմանը: Թեպետ ազգային քրեադատավարական համակարգի կառուցվածքն ամբողջությամբ ներպետական իշխանությունների հայեցողության շրջանակներում է, սակայն պրակտիկայում այլընտրանքային միջոցների կիրառման բացակայությունը կալանքը դարձնում է պարտադիր: Այսպես, Վարգան և այլք ընդդեմ Հունգարիայի (Varga and Others v. Hungary) գործով նշվել է, որ՝



105. Դատարանն իրավասու չէ պետություններին ցույց տալ, թե ինչպես պետք է կազմակերպվեն իրենց քրեական քաղաքականությունը և բանտային համակարգը: Այս հարցերը բարձրացնում են մի շարք բարդ իրավական և գործնական խնդիրներ, որոնք սկզբունքորեն դուրս են գալիս Դատարանի դատական գործառույթից...: Այնուամենայնիվ, այս համատեքստում Դատարանը հիշեցնում է Նախարարների կոմիտեի առաջարկությունները, որոնք պետություններին առաջարկում են խրախուսել դատա-

1 Տե՛ս Case of Chahal v. the United Kingdom (Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության), 15/11/1996, 22414/93, պարագրաֆ 112: Տե՛ս Case of Conka v. Belgium (Յոնկան ընդդեմ Բելգիայի), 05/02/2002, 51564/99, պարագրաֆ 38: Տե՛ս Case of Soldatenko v. Ukraine (Սոլդատենկոն ընդդեմ Ուկրաինայի), 23/10/2008, 2440/07, պարագրաֆ 109; Nasrulloev v. Russia (Նասրուլլոևն ընդդեմ Ռուսաստանի), պարագրաֆ 69:

*խազներին և դատավորներին հնարավորինս լայնորեն կիրառել կալանավորման այլընտրանքները և վերափոխել իրենց քրեական քաղաքականությունը բանտարկության կրճատման ուղղությամբ, որպեսզի, ի թիվս այլ հարցերի, լուծվի բանտերի գերբնակեցման խնդիրը (տես մասնավորապես Նախարարների կոմիտեի 1999թ. սեպտեմբերի 30-ի թիվ R(99) 22<sup>1</sup> և 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ R(2006)13<sup>2</sup> հանձնարարականները)<sup>3</sup>։* >>

Անդրադառնալով այլընտրանքային միջոցառումների հիմքերին՝ անհրաժեշտ է նշել, որ ներպետական օրենսդրության տեսանկյունից այս հիմքերն, ըստ էության, նկարագրված են քրեական դատավարական օրենսդրության մեջ: Դրանք որպես այդպիսին առանձնացված չեն ըստ խափանման միջոցի տեսակի ու փաստորեն վերաբերում են և՛ ազատության զրկման հետ կապված, և՛ ազատության զրկման հետ չկապված խափանման միջոցներին՝ տարբերակումը, ըստ էության, թողնելով միայն այդ հիմքերի դրսևորումների ռիսկերի տարբեր աստիճաններին: Դրանց մասին առավել մանրամասն խոսվել է 1-ին գլխի նախորդ պարագրաֆների շրջանակներում:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2077 (2015) բանաձևի 1-ին կետում ամրագրված է, որ կալանավորումը պետք է օգտագործվի բացառության կարգով, որպես վերջին միջոց, երբ այլընտրանքային խափանման միջոցները բավարար չեն քրեական

1 Stn Recommendation No. R (99) 22 of the Committee of Ministers to Member States Concerning Prison Overcrowding and Prison Population Inflation (Adopted by the Committee of Ministers on 30 September 1999 at the 681st meeting of the Ministers' Deputies), available at [https://www.hchr.org/co/documentoseinformes/documentos/carceles/3\\_Europeos/Basicos/2\\_Especificos/R%20%20\(99\)%2022.%20ingles.pdf](https://www.hchr.org/co/documentoseinformes/documentos/carceles/3_Europeos/Basicos/2_Especificos/R%20%20(99)%2022.%20ingles.pdf), 30.06.2020թ. ժամը 22:50:

2 Stn Recommendation of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and the provision of safeguards against abuse (Adopted by the Committee of Ministers on 27 September 2006 at the 974th meeting of the Ministers' Deputies), available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805d743f](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d743f), 30.06.2020թ. ժամը 22:51:

3 Stn Case of Varga and Others v. Hungary (Վարգան և այլոք ընդդեմ Հունգարիայի), 10/03/2015, 14097/12 45135/12 73712/12 34001/13 44055/13 64586/13:

վարույթի անվտանգությունն ապահովելու համար<sup>1</sup>:

Հասկանալով հանդերձ, որ կալանքը պետք է օգտագործվի որպես վերջին միջոց, պետք է նաև նշել, որ այլընտրանքային խափանման միջոցները ևս չեն կարող կիրառվել առանց դրանց համար անհրաժեշտ ու բավարար պայմանների և հիմքերի:

Ընդհանրական ձևով պետք է նշել, որ հիմնավոր կասկածի հետ միաժամանակ առնվազն պետք է առկա լինեն մի շարք այլ պայմաններ խափանման միջոցի կիրառման համար: Մասնավորապես, այդպիսի պայմաններ են.

- հարուցված քրեական գործի առկայությունը,
- համապատասխան քրեաիրավական որակմամբ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը (կասկածյալի պարագայում այն անհրաժեշտ չէ),
- ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը,
- «հատուկ սուբյեկտի» հատկանիշներով արարք մեղսագրելիս դրա հատկանիշների առերևույթ առկայությունը,
- որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը (օրինակ՝ ԱԺ, ԲԴԽ կամ ՍԴ թույլտվությունը),
- ենթակայության հարցի օրենքին ակնհայտ անհամապատասխան չլինելը:

Եթե կալանքի կիրառման ժամանակ ազատությունից զրկվում է դատարանի դատավճռով դեռևս մեղավոր չճանաչված անձը, ապա այլ խափանման միջոց կիրառելու ժամանակ սահմանափակվում են դեռևս մեղավոր չճանաչված անձի՝ Կոնվենցիայով և Սահմանադրությամբ նախատեսված իրավունքները:

Ուստի, անձի նկատմամբ կարող են կիրառվել խափանման միջոցներ հետևյալ պայմանների և հիմքերի միաժամանակյա առկայու-

1 Stn Resolution 2077(2015), Abuse of pretrial detention in States Parties to the European Convention on Human Rights, adopted by the Parliamentary Assembly on 1 October 2015 (34th Sitting): Հասանելի է համացանցային [https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=22206&lang=en&fbclid=IwAR1jDTaEqDe-L3YvceIQ2RnOwPCDeCFIjwMlnL7KADhFgaWbPoR6GA\\_4MU](https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=22206&lang=en&fbclid=IwAR1jDTaEqDe-L3YvceIQ2RnOwPCDeCFIjwMlnL7KADhFgaWbPoR6GA_4MU) հասցեում, վերջին մուտք՝ 30.06.2020թ. ժամը 22:52:

թյան դեպքում.

- առկա է ողջամիտ կասկած, որ անձը կատարել է իրավախախտում, և
- առկա են հիմնավոր պատճառներ՝ կարծելու, որ խափանման միջոցներ չկիրառելու դեպքում անձը կարող է.
  - ա) դիմել փախուստի կամ
  - բ) կատարել նոր հանցագործություն կամ
  - գ) խոչընդոտել արդարադատության իրականացմանը կամ
  - դ) լուրջ վտանգ ներկայացնել հանրային կարգին:

Որոշելու համար՝ անձը պետք է ազատ արձակվի, թե կալանավորվի, դատարանները պարտավոր են քննության առնել այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը՝ մեղադրյալների դատարան ներկայանալու մասով<sup>1</sup>:

Նմանատիպ սկզբունքը (2006) 13 Հանձնարարականում ձևակերպված է հետևյալ կերպ.

«*Հաշվի առնելով ինչպես անմեղության կանխավարկածը, այնպես էլ ազատության օգտին կանխավարկածը, իրավախախտման մեջ կասկածվող անձանց կալանքի տակ պահելը պետք է լինի բացառություն, քան կանոն ...*»<sup>2</sup>:

Խափանման միջոցների պայմանների և հիմքերի վերլուծությունից կարելի է բխեցնել մի քանի սկզբունքներ, որոնք կազմում են դրանց էությունն ու հիմնական բովանդակությունը: Մասնավորապես, պետք է նշել, որ Կոնվենցիան նպատակ ուներ կրճատելու որոշակի հիմնարար իրավունքների և ազատությունների կամայական սահ-

1 Stn Case of *Idalov v. Russia* [MC] (Իդալովն ընդդեմ Ռուսաստանի), 22/05/2012, 5826/03, պարագրաֆ 140:

2 Stn Recommendation of the Committee of Ministers to member states on the use of remand in custody, the conditions in which it takes place and the provision of safeguards against abuse (Adopted by the Committee of Ministers on 27 September 2006 at the 974th meeting of the Ministers' Deputies), available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805d743f](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d743f), 30.06.2020թ. ժամը 22:53:

մանափակումները: Դա մասնավորապես վերաբերում է ազատության իրավունքին, բայց այն պակաս կարևոր չէ այլ իրավունքների և ազատությունների իրականացման մեջ: Համապատասխանաբար, Կոնվենցիայի համաձայն կիրառվող սկզբունքները, որոնք սահմանափակում են իշխանությունների հայեցողական լիազորությունները այդ իրավունքներին միջամտելու համար, կարող են, *mutatis mutandis*, տարածվել այլընտրանքային միջոցների վրա:

Գլխավոր սկզբունքը, որը պետք է դիտարկել այլընտրանքային միջոցների կիրառման մեջ, **ազատության կանխավարկածն է**: Թեև այս սկզբունքը վերաբերելի է կալանավորմանն այն իմաստով, որ այն սահմանափակում է կալանքի կիրառումը և դրա արդյունքում խրախուսում այլընտրանքային միջոցների կիրառումը, ուստի այս սկզբունքը չպետք է անտեսվի այլընտրանքային միջոցների կիրառման մեջ:

Սկզբունքը բավականին տեսական է, քանի որ այն կարելի է ենթադրել միայն ՄԻԵԴ-ի մեկնաբանություններից: Դրանցից կարելի է բխեցնել, որ գոյություն ունի այդպիսի կանխավարկած: ՄԻԵԴ-ը նշել է, որ ցանկացած միջոց, որը ենթադրում է ազատությունից զրկում, մասնավորապես քրեական հետապնդման համատեքստում, պետք է լինի բացառիկ և միայն այն դեպքում, երբ այլ, ավելի մեղմ միջոց կիրառվել չի կարող:

«*Նախևառաջ ազգային դատական մարմինները պետք է ապահովեն, որ մեղադրյալի նախնական կալանքը չգերազանցի ողջամիտ ժամկետը: Այդ նպատակով նրանք պետք է ուսումնասիրեն բոլոր այն հանգամանքները, որոնք կողմ կամ դեմ են իրական հանրային շահի պահանջներին, որն արդարացնում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ պատշաճ հաշվի առնելով անձնական ազատության հարգանքի կանոնից նահանջը, և դրանք փաստարկվեն իրենց որոշումների մեջ (Թոթն ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria), պարագրաֆ 67):*»

1 Տե՛ս Case of Toth v. Austria (Թոթն ընդդեմ Ավստրիայի), 12/12/1991, 11894/85:

Այլ կերպ ասած՝ ազատությունից ցանկացած զրկում պետք է լինի.

- բացառիկ,
- օբյեկտիվորեն հիմնավորված,
- մանրազնիին ուսումնասիրված և
- ոչ ավելի, քան բացարձակապես անհրաժեշտ:

Ազատությունից զրկվելու համաձայնությունն իրականում ենթադրում է այն, որ **մարդը պետք է համարվի ազատ** նույնիսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է այդ իրավունքից: Այս իմաստով ՄԻԵԴ-ը նշել է, որ ազատությունից զրկվելու մասին համաձայնությունը անձին չի զրկում 5-րդ հոդվածի երաշխիքներից.

« 119. ... ազատության իրավունքը չափազանց կարևոր է ժողովրդավարական հասարակությունում անձի համար, որպեսզի չօգտվի կոնվենցիայի պաշտպանությունից որևէ պատճառով, որով ինքնուրույն համաձայնել էր անազատության մեջ պահվելուն (տես Դե Ուիլդը, Օոմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի, (*De Wilde, Ooms and Versyp v. Belgium*), պարագրաֆներ 64-65)<sup>1</sup>, հատկապես երբ չի վիճարկվում, որ այդ անձը [հոգեկան հիվանդության պատճառով] ունակ չէ համաձայնելու կամ չհամաձայնելու առաջարկված գործողությանը (Ստանևն ընդդեմ Բուլղարիայի (*Stanev v. Bulgaria*)<sup>2</sup>: »

Մեկ այլ գործով.

« 108. ... դիմումատուին ինքն է պահանջել իր տեղակալումը տնային կալանքի տակ (տես վերևում 82-րդ կետը), Դատարանը նշում է, որ տվյալ դեպքում առկա է հարկադր-

1 Տե՛ս Case of De Wilde, Ooms and Versyp v. Belgium (Դե Վիլդը, Օոմսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի), 18/06/1971, 2832/66 2835/66 2899/66:

2 Տե՛ս Case of Stanev v. Bulgaria (Ստանևն ընդդեմ Բուլղարիայի), 17/01/2012, 36760/06, պարագրաֆ 119:

րանքի որոշակի տարր: Մասնավորապես, գործի հանգամանքները պարզ ցույց են տալիս, որ դիմումատուի տնային կալանքի տակ գտնվելու ցանկությունը եղել է այն պատճառով, որ նա չցանկացավ լինել դատարաններում այն բանից հետո, երբ դատարանները բազմիցս մերժել էին նրա *habeas corpus* միջնորդությունները: Նաև պարզվում է, որ դիմումատուի առողջական վիճակը զգալիորեն վատթարացել էր այն ընթացքում, երբ գտնվել էր ընտրված կալանքի տակ, և որ նա պատրաստ էր զիջումների գնալ այդ ամենին վերջ տալու համար (...): Սա հասկանալի պահվածք է այն մարդու համար, ով նախկինում ունեցել է սրտի կաթված և գլխուղեղի կաթված, և ով տեսնում էր, որ նրա առողջությունը վատանում է Դատարանի կարծիքով, դիմումատուն գտնվում էր հստակ ճնշման տակ, երբ նրան տնային կալանքի տակ էին պահում: Նման պայմաններում չի կարելի ողջամտորեն ակնկալել, որ դիմումատուն կվիճարկեր դատական կարգադրությունները տնային կալանք կիրառելու մասին:

109. Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը պատրաստ չէ համաձայնել այն բանի հետ, որ դիմումատուի վերաբերմունքն իր տնային կալանքին և այդ միջոցը բողոքարկելու հնարավորության բացթողնմանը հավասարազոր է նրա կողմից ազատության իրավունքից հրաժարմանը (Բուզադջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Buzadji v. the Republic of Moldova [GC]))<sup>1</sup>: >>

Ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է մեկնաբանվի շատ նեղ, և, որպես այդպիսին, դատավորը պետք է ելնի այն ենթադրությունից, որ անձը պետք է ազատ լինի: Դատավորը պետք է համարի ազատ արձակումը որպես կանոն, իսկ ազատությունից զրկումը՝ կալանքը, որպես բացառություն:

1 Stiu Case of Buzadji v. the Republic of Moldova [GC] (Բուզադջին ընդդեմ Մոլդովայի), 05/07/2016, 23755/07:


« Ավելին, իշխանությունները պետք է քննարկեն ավելի քիչ ներազդող միջոցները, քան կալանավորումն է (Ամբրուշկովիչն ընդդեմ Լեհաստանի (Ambruszkiewicz v. Poland), պարագրաֆ 32)<sup>1</sup>: »

Ըստ այդմ՝ ազատության կանխավարկածից բխող հաջորդ կարևոր սկզբունքը դրանք հաշվի առնելու պարտականությունն է: Այս պարտականությունը մանրակրկիտ քննարկվել է կալանքին վերաբերող գրեթե բոլոր գործերում, և դրա հիմնական սկզբունքն այն է, որ այլընտրանքային միջոցների փաստարկը չպետք է արհամարհվի պարզ և ձևականորեն՝ ելնելով կալանքի հիմքերի հիմնավորվածությունից: Այլընտրանքային միջոց փնտրող կալանավորը չպետք է կրի ապացույցների բեռը, որը հաստատում է, որ նա չի թաքնվի: ՄԻԵԴ-ը բազմիցս պնդել է, որ «ապացուցման բեռի փոխանցումը կալանավորին այդպիսի հարցերով հավասարազոր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի կանոնի չեղարկմանը, մի դրույթի, որը կալանքը դարձնում է բացառիկ նահանջ ազատության իրավունքից, և որը նույն կալանքը թույլատրում է միայն սպառիչ թվարկված և խստորեն սահմանված դեպքերում»: Ստորև բերված քաղվածքն այս սկզբունքի առավել պատկերավոր դրսևորումն է, և, հետևաբար.


« Ժերեբինն ընդդեմ Ռուսաստանի (Zherebin v. Russia) գործը վերաբերում է այլընտրանքային միջոցները պարզաձև կերպով քննարկելուց հրաժարվելուն: Դիմումատուին կալանավորվել էր կազմակերպված խմբի կողմից կատարված հասարակական կարգի կոպիտ խախտման կասկածանքով: Նա կալանավորվել է հետաքննության և դրան հաջորդող դատաքննության ընթացքում՝ ավելի քան յոթ ամիս ժամկետով: Ներպետական դատարանները չեն դիտարկել այլընտրանքային «կանխարգելիչ միջոցները»՝ ըստ էության հենվելով մեղադրանքի լրջության վրա և ապացուցման բեռը փոխանցելով դիմումատուին: Այս հիմնավոր-

1 Stn Case of Ambruszkiewicz v. Poland (Ամբրուշկովիչն ընդդեմ Լեհաստանի), 04/05/2006, 38797/03:



*րունը, չնայած հիմքերի վկայությանը, թեև «տեղին» էր, սակայն չէր կարող համարվել «բավարար»՝ իր տրոհությունն արդարացնելու համար՝* 

Ցանկացած այլընտրանքային միջոց պետք է լինի **օրինական**, այսինքն՝ հիմնվի ներպետական օրենսդրության վրա՝ հաշվի առնելով այդ օրենքի որակը: Այլընտրանքային միջոցներ կիրառելու համար չպետք է դրվեն ընդհանրական սահմանափակումներ: Հակառակ դեպքում այն կորցնում է իր նշանակությունը այլընտրանք դառնալու համար: Մասնավորապես, Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի (Rantsev v. Cyprus and Russia) գործի համաձայն՝ դիմումատուի դուստրը, որը ճանաչվել էր որպես անօրինական ներգաղթյալ, իր գործատուի կողմից տեղափոխվել է ոստիկանության կենտրոնական բաժին: Ոստիկանությունը կապ է հաստատել ներգաղթի մարմինների հետ, որոնք ցուցումներ են տվել, որ գործատուն, որը պատասխանատու էր նրա համար, պետք է նրան վերցնի և բերի ներգաղթի գրասենյակ: Մենեջերը նրան տարել էր մի մասնավոր շինություն, որտեղ նա նույնպես մնացել էր: Այնուհետև աղջկա դին գտել էին այդ մասնավոր բնակարանից ներքև գտնվող փողոցում: Այս գործով, ՄԻԵԴ-ը՝

 323. Ամրագրելով, որ ազատությունից զրկելը պետք է լինի «օրենքով նախատեսված կարգի համաձայն», 5-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որպեսզի ձերբակալությունը կամ կալանքը նախևառաջ ներպետական օրենսդրությամբ հիմնավորված լինի: Կիպրոսի կառավարությունը չի մատնանշել ազատությունից զրկելու որևէ իրավական հիմք, սակայն կարելի է ենթադրել, որ ոստիկանությունում օրիորդ Ռանցևայի նախնական կալանքն իրականացվել էր, որպեսզի քննեին, թե արդյո՞ք նա չէր կատարել ներգաղթին վերաբերող պահանջները, սակայն հավաստիանալով, որ նրա անունը համապատասխան ցուցակում չկա, Կիպ-

1 Stn Case of Zherebin v. Russia (Ժերեբինն ընդդեմ Ռուսաստանի), 24/03/2016, 51445/09:

րոսի իշխանությունները որևէ բացառություն չէին ներկայացրել ոստիկանական բաժանմունքից օրհորդ Ռանցևայի հեռանալու թույլտվություն չտալու որոշման պատճառների ու իրավական հիմքերի վերաբերյալ, այլ նրան հանձնել էին Մ.Ա.-ի խնամքին: Ինչպես նշված է վերևում, ոստիկանությունը գտել էր, որ օրհորդ Ռանցևան հարբածության նշաններ չի ունեցել և ինքն իր կամ ուրիշների նկատմամբ որևէ սպառնալիք չի ներկայացրել /տես վերը նշված 20-րդ և 320-րդ կետերը/: Որևէ նշան չկա և չի էլ ասվել, որ օրհորդ Ռանցևան խնդրել էր, որ Մ.Ա.-ն գար ու իրեն այնտեղից տաներ: Ոստիկանական մարմինների որոշումն օրհորդ Ռանցևային մինչև Մ.Ա.-ի գալը պահելու, ապա նրան Մ.Ա.-ին հանձնելու մասին ներպետական օրենսդրությամբ որևէ հիմք չուներ:

324. ... Դատարանը գտնում է, որ այս գործով ազատությունից զրկելը և՛ կամայական էր, և՛ անօրինական:

325. Հեղափոխությունը եզրակացնում է, որ օրհորդ Ռանցևային անօրինական ու կամայականորեն պահելու պատճառով տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: >>

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ կալանքի կիրառումը թեև համապատասխանում է ներպետական օրենսդրության տառին, այդուհանդերձ, կամայական է, քանի որ իրավասու մարմինները գործել են չարամտորեն.

<< 61. [Մ]ինչ Դատարանը նախկինում չի սահմանել, թե իրավասու մարմինների ինչ փոփոխ գործողությունները կարող են հանգեցնել 5 § 1 հոդվածի իմաստով «կամայականության», Դատարանի կողմից յուրաքանչյուր առանձին գործի առնչությամբ զարգացվել են մի քանի առանցքային

1 Sten Case of Rantsev v. Cyprus and Russia (Ռանցևան ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի), 07/01/2010, 25965/04:

*սկզբունքներ: Նախադեպային իրավունքով սահմանված հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ կալանքը համարվում է «կամայական», երբ չնայած հետևելով ազգային օրենսդրության տառին՝ իրավասու մարմինների կողմից առկա է եղել չարամտության կամ խեղաթյուրման տարր:*  
(...)

67. Դատարանը գտնում է, որ մեղադրանքների այսպիսի արհեստական առանձնացումը՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու ակնհայտ նպատակով (այլապես այն կլիներ ապօրինի) պարունակում է չարամտության տարր իրավասու մարմինների կողմից: Որպես այդպիսին, 2012 թվականի դեկտեմբերի 9-ից հետո նոր հարուցված քրեական գործընթացների առնչությամբ կալանքի երկարացումը կամայական էր 5 § 1 հոդվածի իմաստով: >>

Այլընտրանքային միջոցների պայմանները պետք է լինեն այնքան ազատ, որքան հնարավոր է, և ունենան նվազագույն ձևականություններ և չլինեն այլընտրանք փնտրող անձանց համար ավելորդ բեռ:

Ինչպես և կալանավորման դեպքում, ցանկացած այլընտրանքային միջոց պետք է ապահովվի պատշաճ հիմնավորումներով և պատճառաբանություններով: Այս պատճառաբանությունը կարող է կատարվել՝ նշելով կալանքի անհնարինությունը կամ ուղղակիորեն հղում կատարելով այլընտրանքային միջոցների հիմքերին: Սա իշխանությունների պարտականությունն է 5-րդ հոդվածի 3-րդ կետով, որը սահմանում է ոչ միայն «**ողջամիտ ժամկետում դատաքննություն կատարելու կամ մինչև դատավարությունը ազատ արձակելու իրավունքը**», այլ նաև նախատեսում է, որ «**ազատ արձակումը կարող է պայմանավորված լինել դատավարությանը ներկայանալու երաշխիքներով**» (Ջաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի (Jablonski v. Poland), պարագրաֆ 83)<sup>2</sup>: Ըստ այդմ՝ կալանքի

1 Stiu Case of I.E. V. The Republic of Moldova (Ի.Ե.-ն ընդդեմ Մոլդովայի), 26/05/2020, 45422/13:  
2 Stiu Case of Jablonski v. Poland (Ջաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի), 21/12/2000, 33492/96:

այլընտրանքային տարբերակները հաշվի չառնելը միշտ որակվում է որպես այդ դրույթի խախտում: Այլընտրանքային միջոցների վերաբերյալ որևէ պատճառաբանության բացակայությունը նույնպես կարելի է համարել որպես Կոնվենցիան չպահպանելու դրսևորում: Ազատ արձակելու կողմ և դեմ փաստարկները չպետք է լինեն **«ընդհանուր և վերացական»** (տես Քլութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium), պարագրաֆ 44)<sup>1</sup>:


ՄԻԵԴ-ը շարունակել է վեր հանել ազգային դատարանների կողմից իրենց որոշումները չպատճառաբանելու դեպքերը՝ պայմանավորված այլընտրանքային միջոցների անտեսմամբ և արդյունքում կալանքներ կիրառելով կամ դրանց ժամկետները երկարացնելով: Նման իրավիճակը կարող է հանգեցնել կալանքի լիակատար անօրինականության: Օրինակ, առաջարկվում էր, որ այլընտրանքային միջոցներ չկիրառելը (Թուրկան ընդդեմ Մոլդովայի (Turcan v. Moldova), պարագրաֆ 52<sup>2</sup>; Օփրեան ընդդեմ Մոլդովայի (Oprea v. Moldova), պարագրաֆ 45) կարող է դիտարկվել որպես անօրինական՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, այլ ոչ թե նշված դրույթի 3-րդ կետով: Ամեն դեպքում, անկախ Կոնվենցիային համապատասխան դասակարգումից, երբ դատարանները կալանավորման փոխարեն հստակ չեն քննարկում այլընտրանքային միջոցները, դա միշտ նշանակում է լուրջ խախտում:



*Օփրեան ընդդեմ Մոլդովայի (Oprea v. Moldova), պարագրաֆ 46 ... Դատարաններն իրենց որոշումներում սահմանափակվել են օրենքով նախատեսված կալանքի պաշտոնական հիմքերի վերացական և ֆորմալ կրկնությամբ: Այս հիմքերը վկայակոչվել են առանց որևէ փորձի ցույց տալու, թե ինչպես են նրանք վերաբերվել դիմումատուի գործին, կամ կոնկրետ ինչ փաստերի վրա են հենվել դատարանները՝ դիմողի ներկայացրած ռիսկերը գնահատելիս: Ավելին, չի կատարվել այլընտրանքային կանխարգելիչ*

1 Stn Case of Clooth v. Belgium (Քլութն ընդդեմ Բելգիայի), 12/12/1991, 12718/87:

2 Stn Case of Turcan v. Moldova (Թուրկան ընդդեմ Մոլդովայի), 27/11/2007, 10809/06:

**միջոցների վերաբերյալ որևէ քննություն, մասնավորապես, տնային կալանքը կամ հատուկ մասնագիտացված բժշկական հաստատությունում կալանավորումը նույնպես կարող էր սահմանափակել դիմումատուի կողմից վկաների վրա ազդելու ցանկացած փորձ: Կարևոր է նաև նշել, որ երբեք չի նշվել, որ այն ժամանակահատվածում, երբ նրա նկատմամբ կիրառված է եղել ազատագրկման հետ չկապված խափանման միջոց, դիմումատուն փորձել է թաքնվել կամ որևէ կերպ միջամտել քննությանը: Դատարանները դա հաշվի չեն առել, այնպես, ինչպես և նրանք բավարար ուշադրություն չեն դարձրել նրա առողջական վիճակին, ինչը նույնպես կարևոր էր ձեռքակալության խափանման միջոց կիրառելու որոշման համար!:** 

Այսպիսով, միայն այլընտրանքային խափանման միջոցների կիրառման անհնարինության հաստատումից հետո է հնարավոր կալանավորման մասին վարույթն իրականացնող մարմինների միջնորդության բավարարումը՝ կարևորելով յուրաքանչյուրի ազատության իրավունքն ու ազատության կանխավարկածը<sup>2</sup>:

- 1 Sten Case of Oprea v. Moldova (Օփրեան ընդդեմ Մոլդովայի), 21/12/2010, 38055/06:
- 2 Այլընտրանքային խափանման միջոցների կոնկրետ տեսակների, դրանց առանձնահատկությունների մասին տես նաև ԵԽ կողմից ֆինանսավորված «Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման գործնական հմտություններ» ձեռնարկը (հեղինակել է Ա.Ս.Նիկողոսյանը, ձեռնարկի պատրաստմանն աջակցել է Լ.Ապոստոլը): Հաշվի առնելով այն հանագամանքը, որ սույն աշխատությամբ նպատակ է դրվել ունենալ քննիչների, դատախազների, դատավորների նաև փաստաբանների համար համապարփակ և ամբողջական ձեռնարկ՝ այս պարագրաֆի մեջ օգտագործվել են վերը նշված «Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման գործնական հմտություններ» ձեռնարկի Մոդուլ 1-ի մեջ օգտագործված նախադեպային որոշումները և վերլուծությունները:

## ԳԼՈՒԽ 2.

### Կալանավորումը բացառող հանգամանքները

#### 2.1. Կալանավորմանը խոչընդոտող հիվանդությունների առկայությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ի թիվս այլ հանգամանքների, նախատեսում է, որ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում վերջիններիս տարիքը և առողջական վիճակը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ):

Առողջական վիճակն հաշվի առնելիս անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել հետևյալ հանգամանքները.

ՀՀ սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝



*1.Ոչ ոք չի կարող ենթարկվել խոչընդոտման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:*

*(...)*

*3.Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք»:*



«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ հոդվածի համաձայն՝



*Ոչ ոք չպետք է ենթարկվի խոչընդոտման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:*



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

« (...) Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դատան վերաբերմունքի: Արգելվում է կասկածալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»: »

« քրեական դատավարության օրենսգրքի 469-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

« (...) Հանցանքը կատարելուց հետո հոգեկան խանգարում ստացած անձանց նկատմամբ կարող են կիրառվել խափանման միջոցներ, եթե դրան չի խոչընդոտում նրանց առողջական վիճակը: Եթե տվյալ անձինք գտնվում են արգելանքի տակ, նրանք պետք է գտնվեն հատուկ բժշկական հաստատություններում՝ բժշկական վերահսկողության տակ (...): »

Սակայն հիվանդության առկայությունն ինքնին չի վկայում այն մասին, որ անձի նկատմամբ չի կարող կիրառվել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշում:

Մասնավորապես, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռով ՄԻԵԴ-ն այդ հարցի վերաբերյալ նշել է հետևյալը.

« (...) չի կարելի ասել, որ ազատագրկումն ինքնին հարց է առաջացնում՝ կապված Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ: Ոչ էլ տվյալ հոդվածը կարող է մեկնաբանվել, թե

այն պարտավորեցնում է կալանավորին ազատ արձակել առողջական վիճակի պատճառով կամ նրան տեղավորել քաղաքացիական հիվանդանոց՝ համապատասխան բժշկական օգնություն ստանալու հնարավորություն տալու նպատակով (...)<sup>1</sup>: »

Ստորև ներկայացվող «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը կարգավորում է ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական օգնության, անձնական հիգիենայի հարցերը:

### « Հոդված 21. Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական օգնությունը, անձնական հիգիենան

Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն ապահովում են ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարումը:

Կալանավորվածներին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ:

1 Տե՛ս նաև ստորև ներկայացվող Case of Kalashnikov v. Russia (Կալաշնիկովի ընդդեմ Ռուսաստանի), թիվ 47095/99, 95-րդ պարագրաֆն ամբողջությամբ:



Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական, այդ թվում հոգեբուժական օգնություն ցույց տալու, նրանց բուժհաստատություններում պահելու, ինչպես նաև բուժսպասարկման գործում այդ հաստատությունների աշխատողներին ներգրավելու կարգը սահմանում է լիազորված մարմինը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտանիքի անդամները: Բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ձերբակալված կամ կալանավորված անձի մերձավոր ազգականներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում համապատասխան հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ հայտնում է վերադաս մարմնին, որն էլ տեղեկացնում է շահագրգիռ գերատես-

չուրթյուններին, այդ թվում՝ համապատասխան պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործողությունները կատարելուց հետո աճյունը հանձնվում է այն պահանջող անձին՝ նախապատվությունը փախվել մերձավոր ազգականներին: Եթե աճյունը երեք օրվա ընթացքում չի պահանջվել, հուղարկավորությունը կատարվում է պետության հաշվին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ ծանր հիվանդություն հայտնաբերելու դեպքում, որը կարող է հանգեցնել նրա հոգեկան խանգարման կամ մահվան, համապատասխան հիմնարկի պետը բժշկական եզրակացության հիման վրա միջնորդում է քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին՝ հարկադրանքի միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սահմանափակ հիգիենիկ պահանջները: Նրա անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները սահմանվում են ներքին կանոնակարգով:

Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի՝ անկախ վերջինիս համաձայնության:

(21-րդ հոդվածը խմբ. 08.07.05 ՀՕ-162-Ն):



Բացի այդ, հարկ է նշել, որ 08.07.2020թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածը լրացվել է այդ ոլորտը կանոնակարգող հետևյալ նորմերով.

1 Տե՛ս ՀՀՊՏ 2002.04.01/11(186):



3.1. Դատարանը կամ դատախազը կարող է փոփոխել կամ վերացնել որպես խափանման միջոց ընտրված կալանքը, եթե առկա է կալանքը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություն: Ծանր հիվանդությամբ տառապող անձի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի հարցը լուծելիս դատարանը կամ դատախազը հաշվի է առնում վերագրվող հանցագործության ծանրությունը, մեղադրյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դեպքում, երբ առկա է կալանքը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություն, դատարանը կամ դատախազը կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջնորդագրով, որը պետք է հիմնված լինի բժշկական հանձնաժողովի եզրակացության վրա, իրավունք ունի փոփոխելու կամ վերացնելու որպես խափանման միջոց ընտրված կալանքը: Դատարանը կամ դատախազը միջնորդագիրը քննում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը: Միջնորդագրի քննումն ավարտելուց հետո դատարանը կամ դատախազը որոշում է կայացնում միջնորդագիրը բավարարելու կամ մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը:

3.3. Դատախազի՝ միջնորդագիրը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով, իսկ դատարանի՝ միջնորդագիրը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան: Դատարանը բողոքը քննում է անհապաղ, բայց ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը: Բողոքի քննումն ավարտելուց հետո դատարանը որոշում է կայացնում բողոքը բավարարելու կամ մերժելու մասին՝ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը:»<sup>1</sup>:



«Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1636-Ն որոշմամբ ստեղծվել են բժշկական երեք հանձնաժողովներ: Նշված

1 Տե՛ս Միասնական կայք 13.07.20-26.07.20 պաշտոնական հրապարակման օրը 17.07.20:

որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի համաձայն՝ «Հ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն պատիժը պայմանականորեն չկիրառելու, կալանավորված անձի նկատմամբ ծանր հիվանդության պատճառով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության, ինչպես նաև բժշկական՝ ոչ հոգեբուժական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով դատաբժշկական փորձաքննությունը կազմակերպվում է ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ հանձնաժողովային կարգով»:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1092-Ն որոշմամբ<sup>2</sup> կատարվել են փոփոխություններ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին»<sup>3</sup> N 825-Ն որոշման մեջ:

1 «1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու, կալանավորված անձի նկատմամբ ծանր հիվանդության պատճառով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության, ինչպես նաև բժշկական՝ ոչ հոգեբուժական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով դատաբժշկական փորձաքննությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից՝ հանձնաժողովային կարգով: Հանձնաժողովի կազմում, պետական կառավարման լիազոր մարմնի անդամներից բացի, որպես անդամ ընդգրկվում են նաև մեկական ներկայացուցիչ՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումից: Հանձնաժողովի կազմում ներկայացուցիչներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ներկայացմամբ: Տե՛ս ՀՀՊՏ 2003.12.30/64.1:

2 Տե՛ս ՀՀՊՏ 2019.09.04/57(1510):

3 Տե՛ս ՀՀՊՏ 2006.07.06/36(491):

Վերոնշյալ որոշմամբ սահմանվեց, որ պատժի կրումից ծանր հիվանդության հետևանքով ազատելու հետ մեկտեղ սահմանվում է նաև կալանավորված անձի՝ ծանր հիվանդության հետևանքով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն տալու հնարավորություն: Հատկանշանական է, որ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1636-Ն որոշմամբ նախատեսված հանձնաժողովը շարունակում է գործել մինչև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ նախատեսված հանձնաժողովի գործունեության կարգի հաստատումը:

Նշված որոշումներով հաստատվել է ոչ միայն կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը, այլ նաև նախատեսվել է որպես խափանման միջոց ընտրված կալանքը կամ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների (խանձարումներ, վիճակներ) կողմնորոշիչ ցանկը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1092-Ն որոշմամբ սահմանվեց Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կից բժշկական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծելու կարգը՝ միաժամանակ սահմանելով նաև Հանձնաժողովի գործառույթները:



*90. Բժշկական հանձնաժողովի գործառույթներն են.*

*ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն կալանավորված անձի ծանր հիվանդության (խանձարումներ, վիճակներ) հետևանքով խափանման միջոցը փոխելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն տալը:*

*(...):*



**Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ** Հայաստանի Հանրապետության կառավարության 15 օգոստոսի 2019 թվականի N 1092-Ն

որոշման համաձայն՝ նշված որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից՝ բացառությամբ նշված որոշման հավելվածի 10-րդ գլխի, որն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը կից բժշկական հանձնաժողովի, դրան կից աշխատանքային խմբի գործունեության կարգը և վարձատրության չափորոշիչները սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Ներկայումս այդ հանձնաժողովը դեռ չի ստեղծվել, և այս հարցում դեռ գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու, անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ ճանաչելու, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով դեռևս ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 4-ի N 1636-Ն որոշմամբ հաստատված միջգերատեսչական բժշկական հանձնաժողովների կողմից:

Թեկուզև Արթուր Օսիպյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԿԴ/0046/13/16 որոշումը վերաբերում է դատավճիռ կայացնելուց հետո ծանր հիվանդությամբ հիվանդացած անձին պատժից ազատելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կառուցակարգի մեկնաբանմանը, ու այդ ուղղությամբ է օրենքի միատեսակ կիրառություն ապահովվելու, սակայն որոշմամբ արտահայտված դիրքորոշումներն արդիական են և վերաբերելի մասով կիրառելի՝ առողջական վիճակով պայմանավորված անձանց կալանքի տակ պահելու հարցերի հետ:

Այսպես, Արթուր Օսիպյանի վերաբերյալ վերոնշյալ որոշման 13-16-րդ կետերում ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.



13. ՀՀ սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

(...)

3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, կամ անմարդկային, կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվրանգությունն ապահովելուն:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե անձը հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո հիվանդացել է այլ ծանր հիվանդությամբ, որը խոչընդոտում է պատիժը կրելուն, ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի համաձայն. «1. Այն դեպքում, երբ ազատազրկման դատապարտված անձը պատիժը կրելու ժամանակ հիվանդացել է (...) ծանր հիվանդությամբ, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն, դատարանը քրեական պատիժն իրականացնող հիմնարկի վարչակազմի միջնորդագրով, որը պետք է հիմնված լինի բժշկական հանձնաժողովի եզ-

րակացության վրա, իրավունք ունի որոշում կայացնել պատիժը հետագայում կրելուց նրան ազատելու մասին:

3. Ծանր հիվանդությամբ հիվանդացած անձանց պատիժը հետագայում կրելուց ազատելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության ծանրությունը, դատապարտյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ:

Ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու հիմքը ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված մարդասիրության սկզբունքի դրսևորումներից է: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկում պատժի կատարման և կրման կարգի պահպանումը, նշանակված պատժի կրման հետ կապված պարտականությունների կատարումը ծանր հիվանդությամբ հիվանդացած անձի համար կարող է դառնալ անհնարին, իսկ որոշ դեպքերում՝ նաև փյալ դատապարտյալի կյանքի և առողջության համար վտանգավոր: Նման դեպքերում նշանակված պատժի կրումը դատապարտյալին պատճառում է ֆիզիկական և հոգեկան փառապանքներ, նվաստացնում նրա արժանապատվությունը, ինչն անթույլատրելի է ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների փեսանկյունից:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածի մեկնաբանման կապակցությամբ ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ հիշյալ հոդվածով ամրագրվում է ժողովրդավարական հասարակության առավել հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակապես արգելում է խոշտանգումը կամ անմարդկային, կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և փութած անձի վարքագծից (տես *Labita v. Italy* գործով Մեծ պալատի՝ 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգապ թիվ 26772/95, կետ 119):



14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձին պատժի կրումից ազատելու հիմքերն են.

- հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո անձի՝ ծանր հիվանդությամբ հիվանդանալը,

- այդ հիվանդության՝ պատիժը կրելուն խոչընդոտելը (պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության՝ 2006 թվականի մայիսի 26-ի որոշման թիվ 825-Ն որոշման հավելված 2-ում):

Ընդ որում՝ հիշյալ հիմքերի առկայության դեպքում անձին պատժի կրումից ազատելը դատարանի հայեցողական լիազորությունն է: Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ դատական հայեցողությունը որոշում կայացնելիս ընտրություն կատարելու դատարանի իրավազորությունն է: Նշված ընտրության հիմքերն ու սահմաններն ամրագրված են օրենքով, պետք է համապատասխանեն օրենսդրի կամքին և դատավորի իրավագիտակցությանը, բխեն իրավունքի հիմնարար սկզբունքներից, գործի կոնկրետ հանգամանքներից և հանցավորի անձից: Դատարանին վերապահված ընտրության իրավասությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարանը հնարավոր օրինական որոշումներից պետք է ընտրի այն, որն առավելագույնս կհամապատասխանի հիմնավորվածության և արդարացիության չափանիշներին: Այն ենթադրում է նաև ոչ միայն մի քանի որոշումների միջև ընտրություն կատարելու իրավասություն, այլ այնպիսի ընտրություն կատարելու պարտականություն, որի արդյունքում կայացված որոշումն առավելագույնս կհամապատասխանի քննվող կոնկրետ գործի հանգամանքներին և հանցագործի անձին (հայեցողական լիազորության մասին, *mutatis mutandis*, տես Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի մայիսի 8-ի Հմայակ Դավթյանի վերաբերյալ գործով թիվ

ՇԴ/0126/01/12 որոշումը):

14.1. Ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելիս դատարանի հայեցողության սահմանները նախանշվում են օրենսդրի կողմից սահմանված այնպիսի հանգամանքների հաշվառմամբ, ինչպիսիք են կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դատարանի հայեցողությունը սահմանափակված է նաև իրավունքի հիմնարար սկզբունքներով, ինչպիսին է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված՝ վատ վերաբերմունքի արգելքը: Ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու դատարանի հայեցողության հիշյալ սահմանափակումը Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության համարեքստում:

Այսպես՝ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ վատ վերաբերմունքը պետք է ունենա դաժանության որոշակի նվազագույն աստիճան, որպեսզի ընդգրկվի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառության ոլորտում: Այս նվազագույն մակարդակի գնահատումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են նման վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունները և որոշ դեպքերում տուժած անձի սեռը, տարիքը և առողջական վիճակը (տես, ի թիվս այլնի, *Ireland v. the United Kingdom* գործով 1978 թվականի հունվարի 18-ի վճիռը, գանգապ թիվ 5310/71, կետ 162): Թեև այն հարցը, թե արդյո՞ք վերաբերմունքի նպատակը տուժած անձին նվաստացնելը կամ ստորացնելն էր, այնպիսի գործոն է, որը պետք է հաշվի առնվի, նման նպատակի բացակայությունը չի կարող վերջնականապես բացառել 3-րդ հոդվածի խախտման առկայությունը (տես *Peers v. Greece* գործով 2001 թվականի ապրիլի 19-ի

վճիռը, գանգապ թիվ 28524/95, կետ 74):

Ազատությունից զրկելու համարեքսպում Եվրոպական դատարանը շարունակաբար ընդգծել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակում ընդգրկվելու համար անձին պատճառված տառապանքի և զրկանքների աստիճանը բոլոր դեպքերում պետք է գերազանցի ազատությունից զրկելուն ներհատուկ տառապանքների և զրկանքների անխուսափելի աստիճանը (տե՛ս, *mutatis mutandis*, *Tyrer v. the United Kingdom* գործով 1978 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգապ թիվ 5856/72, կետ 30, *Soering v. the United Kingdom* գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգապ թիվ 14038/88, կետ 100): Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քննարկվող հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակի հիմքով կալանավորված անձին ազատ արձակելու կամ նրան քաղաքացիական հիվանդանոց տեղափոխելու ընդհանուր պարտավորություն սահմանող դրույթ, անգամ եթե նա տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հասկանալի դժվար է բուժել (տե՛ս *Gelfmann v. France* գործով 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգապ թիվ 25875/03, կետ 50): Այնուամենայնիվ, այն պետության համար առաջացնում է ազատությունից զրկված անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով պաշտպանելու պարտականություն (տե՛ս *Sarban v. Moldova* գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգապ թիվ 3456/05, կետ 77): Այդ հանգամանքը շեշտել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Դավթյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռում՝ նշելով, որ ազատությունից զրկված բոլոր անձանց համար պետք է ապահովվեն այնպիսի պայմաններ, որոնք համարտեղելի են նրանց արժանապատվությունը հարգելու հետ, նրանք չպետք է ենթարկվեն այնպիսի ծանրության տառապանքների կամ զրկանքների, որոնք գերազանցում են անազատության մեջ գտնվելուն ներհատուկ տառա-

պանքի անխուսափելի աստիճանը, նրանց առողջությունն ու բարեկեցությունը պետք է պատշաճորեն պահպանվեն, ի թիվս այլ միջոցների՝ անհրաժեշտ բժշկական օգնություն փրամադրելու միջոցով՝ հաշվի առնելով ազատությունից զրկելու հետ կապված գործնական պահանջները (տես *Davtyan v. Armenia* գործով 2015 թվականի մայիսի 31-ի վճիռը, գանգապ թիվ 29736/06, կետ 81):

Ծանր հիվանդ անձի ազատագրումը Կոնվենցիայի 3-րդ հոդվածին համապատասխանելու հարցը քննարկելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում փարբեր հանգամանքներ, որոնք են.

- դատապարտյալի առողջական վիճակը,

- ազատագրվման վայրում փրամադրվող բժշկական օգնության համարժեքությունը: Մասնավորապես, դատապարտյալներին ցուցաբերվող բժշկական օգնության պատշաճությունը գնահատելիս Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ երաշխավորվի յուրաքանչյուր դատապարտյալի բժշկական օգնությունը նույն մակարդակով, ինչ լավագույն քաղաքացիական հիվանդանոցներում (տես *Mirilashvili v. Russia* գործով 2007 թվականի հուլիսի 10-ի որոշումը, գանգապ թիվ 6293/04): Ավելին՝ Եվրոպական դատարանն ընդունել է, որ քրեակատարողական համակարգի բժշկական մասերի միջոցները սկզբունքորեն սահմանափակ են քաղաքացիական հիվանդանոցների միջոցների համեմատությամբ (տես *Grishin v. Russia* գործով 2007 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգապ թիվ 30983/02, կետ 76): Միևնույն ժամանակ նշել է, որ բժշկական օգնության պահանջվող չափանիշը պետք է համապատասխան լինի դատապարտյալի արժանապատվությանը (տես *Aleksanyan v. Russia* գործով 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռը, գանգապ թիվ, կետ 140),

- անձի առողջական վիճակի պեսանկյունից նրա կալանքի փակ գտնվելու նպատակահարմարությունը (տես

*Mouisel v. France* գործով 2002 թվականի նոյեմբերի 14-ի վճիռը, գանգապ թիվ 67263/01, կետեր 40-42),

- անձի առողջական վիճակի դինամիկան,

- ծանր հիվանդ անձի առողջական վիճակի վատթարացման դեպքում նրան պատժից պայմանական ազատելու կամ այն պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը (տե՛ս *mutatis mutandis Aleksanyan v. Russia* գործով 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ, գանգապ թիվ, կետ 136),

- անձի վարքագիծը (այն է՝ բժիշկների հետ համագործակցելուց նրա շարունակաբար հրաժարվելը) (տե՛ս *Gelfmann v. France* գործով 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգապ թիվ 25875/03, *Aleksanyan v. Russia* գործով 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռը, գանգապ թիվ, կետ 137):

15. Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ծանր հիվանդության հիմքով անձին պատժի կրումից ազատելը դատարանի հայեցողությունն է, որն իրացնելիս դատարանը պետք է գնահատի օրենքով սահմանված հիմքերի առկայությունը, որպիսիք են ոչ միայն կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, այլև հիվանդության բնույթը, դատապարտյալի առողջական վիճակը, ազատագրվման վայրում տրամադրվող բժշկական օգնության համարժեքությունը, առողջական վիճակի դինամիկան, անձի վարքագիծը (այն է՝ բժիշկների հետ համագործակցելուց նրա շարունակաբար հրաժարվելը) և այլ հանգամանքներ:

16. Նման մոտեցումը բխում է նաև մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերի պահանջներից: Մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունած՝ «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» 22-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնագետի ծառայության կարիք ունեցող հիվանդ բանտարկյալներին պետք է տեղափոխել հատուկ բժշկական հաս-

տարություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ: Բանտի հիվանդանոցները պետք է ունենան սարքեր, կալանքներ և դեղամիջոցներ, որոնք անհրաժեշտ են հիվանդների պարշաճ խնամքի և նրանց բուժման համար, ինչպես նաև բավականաչափ որակյալ անձնակազմ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2006 թվականի հունվարի 11-ի՝ «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» թիվ Rec(2006)2 հանձնարարականի համաձայն՝ բանտային մարմինները պետք է երաշխավորեն բանտարկյալների առողջությունը, մասնագիտական բուժման կարիք ունեցող հիվանդ բանտարկյալները պետք է փոխադրվեն մասնագիտացված հաստատություններ կամ քաղաքացիական հիվանդանոցներ, եթե այդ բուժումը բանտում հասանելի չէ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1993 թվականի հոկտեմբերի 18-ի՝ «Բանտի և բանտում տարափոխիկ հիվանդությունների, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի հսկողության քրեաբանական և առողջապահական խնդիրների մասին» թիվ R(93)6 հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի յուրաքանչյուր փուլում դատապարտյալներին պետք է առաջարկվի այն նույն բժշկական և հոգեբանական բուժումը, որը նախատեսված է հասարակության այլ անդամների համար: Ընդհանուր առմամբ, նրանք պետք է ունենան այն բժշկական ծառայություններից օգուվելու հնարավորություն, որը համարժեք է ընդհանրապես հասարակությանը մատուցվող ծառայություններին:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1998 թվականի ապրիլի 8-ի՝ «Բանտերում առողջապահության էթիկական և կազմակերպչական հարցերի վերաբերյալ» թիվ R(98)7 հանձնարարականի հավելվածն անդրադառնալով տարափոխիկ հիվանդությունների, մասնավորապես՝ ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, հեպատիտի դեպքերում ձեռնարկվող միջոցառումներին՝ նշում է, որ բանտի առողջապահական ծառայությունը պետք է առնվազն կարողանա արամադրել ամբուլատոր խորհր-

դատարանի կողմից և շտաբի օգնություն: Երբ դատարանի կողմից անհրաժեշտ է համարվում է բուժում, որը չի կարող բանտում երաշխավորվել, հնարավոր ամեն ինչ պետք է ձեռնարկվի, որպեսզի բուժումը տրամադրվի անվտանգության պայմաններում, բանտից դուրս գտնվող առողջապահական հիմնարկների կողմից: Այն անձինք, ովքեր հիվանդանում են ՁԻԱՀ-ի հետ կապված ծանր հիվանդություններով պետք է բուժվեն բանտային բժշկական բաժանմունքում առանց պարտադիր մեկուսացման:

16.1. Վերոշարադրյալ հանձնարարականներում նշված չափանիշներին համապատասխան՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ եթե անձի առողջական վիճակով պայմանավորված՝ պարտադիր կրելուն զուգընթաց անհնարին է վերջինիս ապահովել համապատասխան պատշաճ բժշկական օգնությամբ, ապա հաշվի առնելով անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքը՝ անձին պարտադիր կրելուց չազատելը չի կարող արդարացվել նրա կատարած արարքի բարձր հանրային վրանգավորությամբ և/ կամ նրա դրսևորած վարքագծով»<sup>1</sup>:



## 2.2. Կալանքի տակ պահելու պայմանները խոշտանգումների, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի արգելքի համատեքստում

Խոշտանգումներից կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատ լինելու իրավունքը երաշխավորվում է Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածով և նույն կոնվենցիայի 15-րդ մասի 2-րդ մասի համաձայն ենթակա չէ որևէ սահմանափակման: Դա նշանակում է, որ անձի նկատմամբ կալանքի տակ պահելու մասին որոշում կայացնելիս դատարանը պետք է հավաստիանա այդ իրավունքը խախտող ռիսկերի բացակայության մասին:

1 Տե՛ս ՀՀՊՏ 2017.12.01/72(1347).1:

ՀՀ սահմանադրության 26-րդ հոդվածը ուղղակի արգելում է խոշտանգումը, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Համաձայն այս հոդվածի՝



1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք»:



ՀՀ սահմանադրության 25-րդ, 27-րդ և 85-րդ հոդվածները երաշխավորում են ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, ազատության և առողջության պահպանման իրավունքները:

Բացի առողջապահական հարցերից, որոնք արդեն իսկ նախատեսվել են նախորդ պարագրաֆում, վերոնշյալ նորմերի համատեքստում կարևոր են նաև ձերբակալված և կալանավորված անձանց սննդի, սննդամթերքի, անհրաժեշտ առարկաների ձեռքբերման, ինչպես նաև վերջիններիս նյութակենցաղային պայմանների ապահովման հարցերը, որոնց նվիրված են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 19-20-րդ հոդվածները և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերը:



*Հոդված 19. Ձերբակալված և կալանավորված անձանց սնունդը, սննդամթերքը և անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելը:*

*Ձերբակալված կամ կալանավորված անձն ապահովվում է առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սննդով, որի նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

*Սննդի որակը և սննդարարությունը սահմանված նվազագույն չափաբաժիններից պակասեցնելը, այդ թվում՝ որպես պոյժի միջոց, արգելվում է:*



Ձերբակալված կամ կալանավորված հղի կանայք, կերակրող մայրերը, անչափահասները, ինչպես նաև ձերբակալված կամ կալանավորված հիվանդ անձինք ապահովվում են անվճար հատուկ սննդով, որի փեսականին և նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է ապահովված լինի խմելու ջրով:

Ձերբակալված կամ կալանավորված անձն իր միջոցներով կարող է ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ ու չարգելված առարկաներ: Սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձի կողմից սննդի ընդունումից հրաժարվելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետք կամ նրան փոխարինող անձը պարտավոր է պարզել դրա պատճառները և այդ մասին հայտնել քրեական վարույթն իրականացնող, ինչպես նաև հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին:

Սննդի ընդունումից հրաժարվելու փաստը չի կասեցնում ձերբակալված կամ կալանավորված անձին այլ վայրեր տեղափոխելը և դատավարական գործողությունների մասնակցելը: Անհրաժեշտության դեպքում փոխադրումը կարող է իրականացվել բուժաշխատողի ուղեկցությամբ:

Հոդված 20. Ձերբակալված և կալանավորված անձանց նյութակենցաղային պայմանների ապահովումը

Ձերբակալված և կալանավորված անձանց համար ստեղծվում են սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանող նյութակենցաղային պայմաններ:

Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերին: Ձերբա-

*Կալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար:*

*Ձերբակալված և կալանավորված անձանց տրամադրում են անհատական քնելու տեղ և անկողնային պարագաներ:*

*Ձերբակալված և կալանավորված անձինք կրում են իրենց հագուստը: Անհրաժեշտության դեպքում նրանք ապահովվում են կլիմայական պայմաններին, սեռին համապատասխան միասնական նմուշի հագուստով:*



ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 25.12.2018թ. № 47 «Անձանց հարկադիր պահման վայրերի պայմանների խախտման վերաբերյալ դատարանների կողմից քննվող վարչական գործերով առաջացող մի շարք հարցերի վերաբերյալ» որոշման համաձայն ազատագրկման վայրերում գտնվող անձանց պահման պայմանները չպետք է նվաստացնեն ազատագրկվածների իրավունքները, այդ թվում՝ անձնական անվտանգության և առողջության պահպանման իրավունքը:

Վերոնշյալ որոշման 14-րդ կետի բովանդակությունից, որտեղ թվարկված են անազատության մեջ գտնվող անձանց պահելու վայրերում պայմանների հնարավոր խախտումների տեսակները, բխում է, որ այդ խախտումների առկայությունն իրական վտանգ է ստեղծում անձի՝ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման համար: Այդ խախտումներն են.

- խցերի, շինությունների գերբնակեցումը,
- կահույքի միջև ազատ տեղաշարժվելու անհնարինությունը,
- անհատական քնելու տեղի, բնական կամ կարդալու համար բավարար արհեստական լուսավորության բացակայությունը,
- օդափոխության, ջեռուցման բացակայությունը կամ անբավարար լինելը,
- մաքուր օդում գտնվելու հնարավորության բացակայությունը

1 Տե՛ս ՀՀՊՏ2002.04.01/11(186) հետագա փոփոխություններով և լրացումներով՝ arils.am:

կամ չտրամադրումը,

- անվտանգության նկատառումներով չպայմանավորված ընդհանուր օգտագործման վայրերից օգտվելու դժվարությունների առկայությունը, անձնական տարածքի համար նախատեսված բավարար պայմանների բացակայությունը, այդ թվում՝ սանիտարա-հիգիենիկ տարածքներում,
- անձնական հիգիենայի պահպանման համար ոչ բավարար պայմանների առկայությունը,
- տարածքների միկրոմթնոլորտին, օդի, խմելու ջրի, ուտելիքի որակին ներկայացվող պահանջների պահպանումը օդի միկրոմթնոլորտին ներկայացվող պահանջների պահպանումը,
- աղմուկից և թրթռումից (վիբրացիայից) ազատագրկման վայրերում գտնվող անձանց պաշտպանությունը:

Կալանավորման ձևով խափանման միջոցի հարցը քննարկելիս դատարանը պետք է մանրակրկիտ վերլուծի և կշռադատի այդ ռիսկերի առկայությունը: Հատուկ ուշադրության պետք է արժանանան հատուկ կատեգորիայի մեղադրյալները՝ հղի կանայք, կերակրող կանայք, հաշմանդամները, անչափահասները և այլն: Դատարանը պետք հաշվի առնի կոնկրետ համգամանքների առկայությունը, այդ թվում՝ տարիքը, առողջության վիճակը (նույնիսկ ազատագրկումը բացառող հիվանդությունների բացակայության պայմաններում), ինքնասպասարկման հնարավորությունը, ինչպես նաև փորձագետների եզրակացությունները, որոնք անցկացրել են դատաբժշկական փորձաքննություններ՝ պարզելու համար անձի մոտ հատուկ կարիքների կամ պայմանների առկայության անհրաժեշտությունը՝ պայմանավորված վերջինիս մոտ հաստատված հիվանդություններով:

Օրինակ, ազատագրկման վայրերի պայմանների և ընդհանուր առմամբ ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտման մասին կվկայի այն փաստը, որ հատուկ վերաբերմունքի կարիք ունեցող անձինք, պայմանավորված վերջիններիս մոտ կոնկրետ հիվանդությունների առկայությամբ, զրկված կլինեն հատուկ իրենց համար հարմարեցված խցերից կամ տարածքներից օգտվելուց, ինչպես նաև պատշաճ խնամքի, դեղորայքի բացակայությունը և բուժման կուրսերին մաս-

նակցելու հնարավորության բացակայությունը<sup>1</sup>:

Դատարանը քննարկելով այն անձի կալանավորման հարցը, որի մոտ հիվանդությունների առկայությունը չի բացառում վերջիններիս նկատմամբ կալանքի կիրառումը, պետք է հաշվի առնի բժշկական օգնության մատչելիության հնարավորությունը մեղադրյալի համար (դեղորայքի առկայությունը, պատշաճ և ժամանակին օգնությունը, բուժման կատարման հնարավորությունը, բուժման համապատասխանությունը առողջական վիճակին, բուժման ուղղվածությունը, հետևողականությունը, կանոնավոր և անընդհատ լինելը, բուժաշխատողների բարձր մասնագիտացումը, հիվանդների, այդ թվում հաշմանդամների բուժման և ռեաբիլիտացիայի համար նախատեսված տեխնիկական միջոցների և ծրագրերի առկայությունն ու վերջիններիս կողմից այդ միջոցներից օգտվելու հնարավորության առկայությունը):

Այսպես, Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է հետևյալը.



44. Դատարանը նախ և առաջ դիտարկում է, որ 3-րդ հոդվածում ամրագրված է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակապես արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պարփոժը՝ անկախ տուժողի վարքագծից (տե՛ս այլ գործերի շարքում Լաբիտան ընդդեմ Իտալիայի [ՄԴ] (Labita v. Italy) թիվ 26772/95, պարբ. 119, ՄԻԵԴ 2000-IV): Դատարանը կրկնում է, վաղ վերաբերմունքը պետք է հասնի խստության որոշակի նվազագույն աստիճանի, որպեսզի ընդգրկվի 3-րդ հոդվածի կիրառման ոլորտում: Գործնականում այս նվազագույն շեմի գնահատումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են՝ վերաբերմունքի

1 Տե՛ս ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 25.12.2018թ. № 47 «Անձանց հարկադիր պահման վայրերի պայմանների խախտման վերաբերյալ դատարանների կողմից քննվող վարչական գործերով առաջացող մի շարք հարցերի վերաբերյալ» որոշման 15-րդ կետը:

կամ պատժի բնույթն ու իրավիճակը, վերջինիս ի կատար ածման եղանակն ու մեթոդը, փրկությանը, ֆիզիկական և հոգեկան հետևանքները և, որոշ դեպքերում, փուժողի սեռը, փարհքն ու առողջական վիճակը (տես այլ գործերի շարքում Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v. the United Kingdom), 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, Շարք Ա, թիվ 25, էջ 65, պարբ. 162):

49. Դատարանը կրկնում է 3-րդ հոդվածի հիման վրա իր նախադեպային իրավունքով սահմանված վատ վերաբերմունքի արգելքի հետ կապված հիմնարար սկզբունքները (տես վերը, պարբ. 44): Այնուհետև Դատարանը նշում է, որ իր կողմից վերաբերմունքը համարվել է «նվաստացնող», որովհետև այն իր զոհերի մոտ առաջացրել է վախի, տառապանքի և նվաստացման զգացում, ինչը կարող էր վիրավորել և սպորացնել նրանց (տես Կուդլան ընդդեմ Լեհաստանի [ՄՊ] (Kudla v. Poland), թիվ 30210/96, պարբ. 92, ՄԻԵԴ 2000-XI): Ավելին, որոշելիս վերաբերմունքի փոխադրյալ տեսակը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող» է, թե ոչ, Դատարանը հաշվի է առնում, թե արդյո՞ք վերջինիս նպատակը փոխադրյալ անձին վիրավորելն ու նսեմացնելն է, և արդյո՞ք առաջացած հետևանքների առումով այն հետազայում այնպիսի ազդեցություն է ունեցել նրա անձի վրա, որը անընդունելի է 3-րդ հոդվածի տեսանկյունից (տես Ռանինեն ընդդեմ Ֆինլանդիայի (Raninen v. Finland) 1997թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, Վճիռների և որոշումների տեղեկագիր 1997-VIII, էջեր 2821-22, պարբ. 55): Այդուհանդերձ, նման նպատակի բացակայությունը չի կարող վերջնականապես բացառել 3-րդ հոդվածի խախտման ճանաչումը (տես, օրինակ, Փիերսն ընդդեմ Հունաստանի (Peers v. Greece), թիվ 28524/95, պարբ. 74, ՄԻԵԴ 2001-III): Որպեսզի պատիժը կամ վերջինիս հետ կապված վերաբերմունքը լինի «նվաստացնող», կրած տառապանքը կամ վիրավորանքը պետք է ցանկացած պարագայում լինի ավելին, քան տառապանքի կամ վիրավորանքի այն անխուսա-

փելի չափը, որն առկա է իրավաչափ վերաբերմունքի կամ պատժի ժամանակ (տե՛ս Վ-ն ընդդեմ Մեծ Բրիտանիայի [ՄՊ]) (V v. the United Kingdom), թիվ 24888/94, պարբ. 71, ՄԻԵԴ 1999-IX):

50. Անձին ազատությունից զրկելու միջոցները կարող են հաճախ նման փարրեր պարունակել: Այդուհանդերձ, պետության պարտավորությունն է ապահովել, որ անձը պահվի այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են վերջինիս մարդկային արժանապատվության հարգմանը, որ փվյալ միջոցի իրականացման եղանակն ու մեթոդը նրան չեն պատճառում ավելի մեծ փառապանք և դժվարություն, քան կալանքի հետ կապված փառապանքի անխուսափելի սահմանը, և որ, հաշվի առնելով ազատագրվման գործնական անհրաժեշտությունը, նրա առողջությունն ու բարեկեցությունը բավականաչափ ապահովված են (տե՛ս Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v. Russia), թիվ 47095/99, պարբ. 95, ՄԻԵԴ 2002-VI): Կալանքի պայմանները գնահատելիս պետք է հաշվի առնվի ինչպես այդ պայմանների հանրագումարային ազդեցությունը, այնպես էլ դիմումատուի առանձնահատուկ պնդումները (տե՛ս Դուգոզն ընդդեմ Հունաստանի (Dougoz v. Greece), թիվ 40907/98, պարբ. 46, ՄԻԵԴ 2001-II):

51. Սույն գործում դիմումատու կալանավորված է եղել ընդհանուր փասն օր ժամկետով: Այդ ժամանակահատվածում նա պահվել է ինը այլ անձանց հետ միասին 10 քմ մակերեսով խցում. այլ կերպ ասած՝ նրան տրամադրվել է 1 քմ անձնական օգտագործման տարածք: Այս առումով դիմումատուի վիճակը կարող էր համեմատվել Կալաշնիկովի գործում դիմումատուի վիճակի հետ, որտեղ դիմումատուի ազատությունը սահմանափակվել էր 0.9-1.9 քմ տարածքում: Այդ գործում Դատարանը գտավ, որ բնակեցվածության նման խիտ աստիճանն ինքնին խնդիր էր առաջացնում Կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից (տե՛ս վերը նշված Կալաշնիկովը, պարբ. 96-97): Ավելին, սույն գործում

դիմումատուին տրամադրված տարածքն էականորեն փոքր էր, քան այն 4 քմ տարածքը, որը ԽԿԿ-ի չափանիշների համաձայն բազմամարդ խցի մեկ բանտարկյալի համար նախատեսված նվազագույն պահանջն է (տե՛ս վերը, ԽԿԿ-ի համապատասխան զեկույցները, պարբ. 30-32) և նույնիսկ ավելի փոքր էր, քան տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող ներպետական օրենսդրությամբ պահանջվող նվազագույն 2.5 քմ-ը: Ոչինչ չի վկայում այն մասին, որ դիմումատուին թույլատրել են խցից դուրս որևէ գործունեություն իրականացնել, որը կարող էր փոխհատուցել տարածքի խիստ պակասը (տե՛ս Յենթաուերն ընդդեմ Խորվաթիայի (*Cenbauer v. Croatia*), թիվ 73786/01, պարբ. 49, ՄԻԵԴ 2006-III, Մալեչկովն ընդդեմ Բուլղարիայի (*Malechkov v. Bulgaria*), թիվ 57830/00, պարբ. 141, 2007 թ. հունիսի 28, և դրան հակառակ, Նուրմագոմեդովն ընդդեմ Ռուսաստանի (որոշում) (*Nurmagomedov v. Russia*), թիվ 30138/02, 2004 թ. սեպտեմբերի 16):

52. Այնուհետև Դատարանը նշում է, որ խցում չկային մահճակալներ կամ անկողնային պարագաներ, ինչի արդյունքում կալանավորները ստիպված էին քնել հատակին: Միևնույն խցում գտնվող այլ կալանավորներին թույլատրվում էր ծխել, մինչդեռ խցում կար շատ փոքր պատուհան, որը հիմնականում փակ էր, ինչի արդյունքում խոչընդոտվում էր թարմ օդի և ցերեկային լույսի մուտքը խուց:

53. Վերջապես Դատարանը նշում է, որ ժամանակավոր պահման վայրում գտնվելու ընթացքում դիմումատուին երբևէ չի թույլատրվել անարգել օգտվել զուգարանից և խմելու ջրից: Նրան թույլատրվում էր օգտվել զուգարանից և խմելու ջրից միայն օրական երկու անգամ: Նրան սնունդ էր տրամադրվում օրական միայն մեկ անգամ: Դատարանը կրկնում է, որ անընդունելի է անձին կալանքի տակ պահել այնպիսի պայմաններում, որտեղ չեն ապահովվում վերջինիս տարրական կարիքները (տե՛ս, *mutatis mutandis*, Ռիադն ու Իդիաբն ընդդեմ Բելգիայի (*Riad and Idiab v. Belgium*),

թիվ 29787/03 և 29810/03, պարբ. 106, ՄԻԵԴ 2008 (քաղվածքներ), և Շերետյան ընդդեմ Ռուսաստանի (Shchebet v. Russia), թիվ 16074/07, պարբ. 93, 2008 թ. հունիսի 12)<sup>1</sup>: »

Նշված հարցերին Եվրոպական դատարանն անդրադարձել է նաև Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի<sup>2</sup> և Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի գործերով վճիռներում<sup>3</sup>:

Գասպարին ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն անդրադարձել էր այդ հարցերին արդեն կալանավայրում տիրող պայմանների տեսանկյունից, մասնավորապես ներկայացնելով հետևյալ սկզբունքները.

« 50. Անձին ազատությունից զրկելու համար էքսպրում Դատարանը հետետողականորեն ընդգծել է, որ 3-րդ հոդվածի ներքո դասակարգվելու համար պատճառված փառապանքը և նվաստացումը ցանկացած դեպքում պետք է անցնեն կալանքի հետ կապված փառապանքի և նվաստացման անխուսափելի սահմանը: Պետությունը պետք է ապահովի, որ անձը կալանքի փակ պահվի այնպիսի պայմաններում, որոնք համարելի են նրա արժանապատվությունը հարգելու հետ, որ միջոցի կիրառման եղանակի և մեթոդի հետևանքով նա չենթարկվի այնպիսի ծանրության փառապանքների կամ զրկանքների, որը գերազանցում է կալանքի փակ գտնվելուն ներհատուկ փառապանքի անխուսափելի աստիճանը, ինչպես նաև այն, որ նրա առողջությունն ու բարեկեցությունը պատշաճորեն պահպանվի<sup>1</sup> »

1 Տե՛ս Case of Tadevosyan v. Armenia (Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի) 02/12/2008., 41698/04, կետեր 44,49-54 [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_9273979\\_11.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9273979_11.pdf):  
2 Տե՛ս Case of Mkhitaryan v. Armenia (Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի) 02/12/2008., 22390/05, կետեր 47-59 [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_9267231\\_12.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9267231_12.pdf) :  
3 Տե՛ս Case of Kirakosyan v. Armenia (Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի) 02/12/2008., 31237/03, կետեր 47-59 [http://moj.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_9261344\\_13.pdf](http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9261344_13.pdf):



հաշվի առնելով ազատությունից զրկելու հետ կապված գործնական պահանջները (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Մուրշիչն ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ] [Muršić v. Croatia [GC]], թիվ 7334/13, § 99, ՄԻԵԴ 2016):

51. Դատարանը վճռել է, որ երբ բանտերի բազմատեղանոց խցերում կալանավորվածին հատկացվող անձնական տարածքը 3 քմ-ից պակաս է լինում, ապա անձնական տարածքի բացակայությունն այնքան լուրջ է համարվում, որ առաջանում է 3-րդ հոդվածի խախտման հիմնավոր կանխավարկած: Ապացուցման պարտականությունը դրված է պատասխանող Կառավարության վրա, որը, այնուամենայնիվ, կարող է հերքել այդ կանխավարկածը՝ մատնանշելով այն գործոնները, որոնցով հնարավոր կլիներ բավարար չափով փոխհատուցել անձնական տարածքի փոքր լինելը: Որպես կանոն՝ 3-րդ հոդվածի խախտման հիմնավոր կանխավարկածը հնարավոր կլինի հերքել միայն, եթե հետեյալ գործոններն ապահովվեն միասին՝ 1) 3 քմ մակերեսով՝ պահանջվող նվազագույն անձնական տարածքի կրճատումները կարճ, պատահական և աննշան են. 2) այդ կրճատումներին զուգահեռ փրամադրվում է խցից դուրս գալու բավարար ազատություն, և ապահովվում է խցերից դուրս բավարար զբաղմունք, և 3) դիմումատու, ընդհանուր առմամբ դիտարկելիս, փակված է պահման բավարար պայմաններ ունեցող հիմնարկում, և նրան կալանքի տակ պահելու պայմանները վարթարացնող այլ հանգամանքներ առկա չեն (նույն տեղում, §§ 137-38):

52. Այն դեպքերում, երբ քննվում է մի բանտախցի հարց, որտեղ անձնական տարածքի մակերեսը յուրաքանչյուր խցակցի հաշվով տարանվում է 3-ից 4 քմ, ապա տարածքի բաղադրիչը մնում է ծանրակշիռ գործոն կալանքի տակ պահելու պայմանների բավարար լինելու մասով Դատարանի գնահատականում: Նման դեպքերում կհամարվի, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում, եթե տարած-

քի գործոնը զուգորդվի կալանքի տակ պահելու այնպիսի ոչ բավարար ֆիզիկական պայմանների մյուս հայեցակետերի հետ, ինչպիսիք են, մասնավորապես, բացօթյա զբոսանքների, բնական լույսի կամ օդի, օդափոխության, բավարար սենյակային ջերմաստիճանի առկայությունը, առանց այլ անձանց ներկայության զուգարանից օգտվելու հնարավորությունը և հիմնական սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանությունը (նույն տեղում, § 139):

53. Դատարանը նաեւ ընդգծել է, որ այն դեպքերում, երբ բանտերի բազմատեղանոց խցերում կալանավորվածներին հատկացվում է 4 քմ մակերեսից ավելի անձնական տարածք, և, հետեւաբար, երբ անձնական տարածքի խնդրի հետ կապված՝ հարց չի առաջանում, ապա կալանքի տակ պահելու ֆիզիկական պայմանների հետ կապված մյուս հայեցակետերը մնում են կարելի՛ր՝ կալանքի տակ պահելու պայմանները Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով բավարար լինելու մասով Դատարանի գնահատականում (նույն տեղում, § 140)»<sup>1</sup>:



Վերոնշյալ սկզբունքների համատեքստում վերլուծելով գործում առկա փաստական հանգամանքները՝ գտել է, որ՝



(...) որ թիվ 29, 20, 9, 42 և 4 խցերում դիմումատերին կալանքի տակ պահելու պայմանների առնչությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

67. Մյուս կողմից՝ թիվ 10 և 79 խցերում դիմումատերին կալանքի տակ պահելու պայմանների մասով Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել (...)»<sup>2</sup>:



1 Տե՛ս Case of Gaspari v. Armenia (Գասպարին ընդդեմ Հայաստանի) 20/09/2018, 44769/08, կետ 50-53 [http://www.justice.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_4564644507411\\_Case\\_of\\_Gaspari\\_v.\\_Armenia\\_ARM.pdf](http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_4564644507411_Case_of_Gaspari_v._Armenia_ARM.pdf):

2 Տե՛ս Case of Gaspari v. Armenia (Գասպարին ընդդեմ Հայաստանի) 20/09/2018,

## Վերոնշյալ՝ Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալը.



97. Դատարանն սկզբում նշել է, որ մենախուցը, որում գտնվել էր դիմողը, եղել է 17 քառակուսի մետր (ըստ դիմողի) և 20.8 քառակուսի մետր տարածք (ըստ Կառավարության): Այն կահավորված է եղել փայտյա մահճակալներով և նախատեսված է եղել 8 կալանավորի համար: Կարող է հարց ծագել՝ արդյո՞ք այդպիսի տարածքը կարող է համապատասխանել թույլատրելի չափորոշիչներին: Այդ կապակցությամբ Դատարանը հիշեցրել է, որ Տանջանքի և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պարտի կանխարգելման եվրոպական կոմիտեն ("the CPT") սահմանել է մտքավորապես 7 քառակուսի մետր տարածք յուրաքանչյուր կալանավորի համար՝ որպես մտքավոր ցանկալի ցուցանիշ ազատագրկման մենախցի համար (տես՝ 2-րդ Ընդհանուր հաշվետվությունը-CPT/Inf(92)3, կետ 43, հետևաբար՝ 56 քառակուսի մետր՝ 8 կալանավորի համար: Բացի այն փաստից, որ մենախուցը նախատեսված է եղել 8 կալանավորի համար, համաձայն Դատարանին ուղղված դիմողի հայտարարությունների՝ իր ազատագրկման ամբողջ ժամանակահատվածում կալանավորների թիվը եղել է 18-24: Կալանքից ազատ արձակելու վերաբերյալ 1996թ. դեկտեմբերի 27-ի իր միջնորդությունում դիմողը հայտնել է, որ իր 8 մահճակալ ունեցող մենախցում եղել են 21 կալանավոր: 1999թ. հունիսի 8-ի նույնանման միջնորդությունում նա նշել է, որ կալանավորների թիվը եղել է 18 (տես վերը՝ կետեր 43 և 73): Դատարանը նշել է, որ կառավարությունը, իր հերթին, ընդունել է, որ կալանավայրի սովորական մարդաշատության պարճառով մենախցում յուրաքանչյուր մահճակալ օգտագործվել է 2 կամ 3 կալանավորի կողմից: Դրա հետ մեկտեղ, նա համաձայն չէ դիմողի հետ կալանավորների

44769/08, 54-67, հետևությունները 66-67 կետերում, նույն տեղում:

թվի հարցում: Իր փաստարկներում Կառավարությունը նշել է, որ ցանկացած ժամանակ դիմողի մենախցում եղել են 11 կամ ավելի կալանավոր, և որ սովորաբար կալանավորների թիվը եղել է 14: Այդուհանդերձ, կառավարությունը չի ներկայացրել իր փաստարկները հաստատող որևէ ապացույց: Ըստ դիմողի՝ միայն 2000թ. մարտ- ապրիլ ամիսներին է կալանավորների թիվը նվազել մինչև 11-ի: Դատարանն անհրաժեշտ չի համարել լուծել Կառավարության և դիմողի միջև այս կապակցությամբ եղած հակասությունը: Տվյալները հաստատում են, որ ցանկացած ժամանակ դիմողի մենախուցը յուրաքանչյուր կալանավորի համար ունեցել է 0.9-1,9 քառակուսի մետր փարածք: Այդպիսով, Դատարանի կարծիքով, մենախուցը տրական ժամանակ եղել է չափազանց մարդաշատ: Այսպիսի իրավիճակն ինքնին խնդրահարույց է՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներից ելնելով: Ավելին, հաշվի առնելով չափազանց մարդաշատությունը՝ դիմողի մենախցում կալանավորներն ստիպված են եղել քնել հերթով՝ յուրաքանչյուրն ութժամյա հերթափոխով: Դիմողի՝ կալանքից իրեն ազատելու 1999թ. հունիսի 16-ի միջնորդությունից երևում է, որ այդ ժամանակ նա կիսում էր իր մահճակալը երկու այլ կալանավորների հետ (...): Քնելու պայմանները վարթարացնում էին մենախցում մշտական լուսավորությունը, ինչպես նաև կալանավորների մեծ թվի պատճառով առկա սովորական դարձած անցուդարձը և աղմուկը: Քնի խանգարման արդյունքում հնարավոր է, որ դիմողը ֆիզիկական և հոգեբանական առումով ունենար բարդություններ: Այնուհետև Դատարանը ուշադրություն է դարձնում դիմողի մենախցում համապատասխան օդափոխիչի բացակայության վրա, որտեղ մնում էին մեծ թվով կալանավորներ, որոնց ակնհայտորեն թույլատրվում էր ծխել մենախցում: Չնայած որ դիմողին օրը մեկ կամ երկու ժամով թույլատրվում էր դուրս գալ մենախցից, մնացած ժամանակ նա մնում էր իր մենախցում, որն ուներ խիստ սահմանափակ փարածք և հեղձուցիչ մթնոլորտ:

98. Այնուհետև Դատարանը նշել է, որ դիմողի մենախուցը լեցուն է եղել միջատներով, և որ նրա ազատագրկման ընթացքում մենախցում չի անցկացվել որևէ ախտահանիչ միջոցառում: Կառավարությունն ընդունել է, որ կալանավայրերում միջատների դեմ պայքարը եղել է խնդրահարույց, և հղում է կատարել 1989թ. նախարարական ուղեցույցին, որը կալանավայրերի վարչակազմերին պարտավորեցնում էր ձեռնարկել ախտահանիչ միջոցառումներ: Այդուհանդերձ, չի երևում, որ այդպիսին իրականացվել է դիմողի մենախցում: Իր ազատագրկման ընթացքում դիմողը ձեռք է բերել մաշկային փարբեր հիվանդություններ և սնկային վարակներ, մասնավորապես, 1996թ., 1997թ. և 1999թ., որոնցով էլ պայմանավորվել են դատական քննության ընդմիջումները: Չնայած ճիշտ է, որ դիմողն ստացել է այս հիվանդությունների դեմ համապատասխան բուժում, դրանց կրկնվելը ենթադրում է, որ դրանց ախտահարմանը նպաստած՝ մենախցի վատթար պայմանները մնացել են անփոփոխ: Դատարանը խիստ մտահոգությամբ նաև նշել է, որ որոշ դեպքերում դիմողը պահվել է սիֆիլիսով և փութերկույրոզով փառապող անձանց հետ, չնայած որ կառավարությունն ընդգծել է, որ վարակումը կանխվել է:



Վերոնշյալ խնդիրներն արդիական են նաև Հայաստանի Հանրապետությունում, որոնց բազմիցս անդրադարձ է կատարել Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականին հրապարակված՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի, 2017 թվականի գործունեության վերաբերյալ զեկույցում արձանագրել է, որ «ինչպես 2016 թվականին (...), այնպես էլ 2017 թվականի ընթացքում անբավարար պահման պայմաններ են արձանագրվել նաև որոշ քրեակատարողական հիմնարկների պատժախցերում:

1 Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների ժողովածու, գիրք չորրորդ – Եր.: «Անտարես» հրատարակչություն, 2006, էջ. 64-66:

Այսպես, «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է 9 պատժախուց: Խցերի մեծ մասի պատուհաններն այցի պահին կոտրված են եղել կամ բացակայել են: Խցերի սանիտարական պայմաններն անբավարար են եղել, և առկա է եղել վերանորոգման կարիք: Խցերից 7-ում սանհանգույցներ չեն եղել, իսկ պատժախցերում գտնվող ազատությունից զրկված անձինք օգտվել են բաժանմունքի ընդհանուր օգտագործման համար նախատեսված սանհանգույցից:

«Գորիս» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է 3 պատժախուց: Այցի պահին պատժախուց տեղափոխված ազատությունից զրկված անձ չի եղել: Պատժախցերում սանհանգույցներ առկա չեն, և այնտեղ գտնվող ազատությունից զրկված անձինք օգտվում են բաժանմունքում նախատեսված սանհանգույցից: Խցերում առկա է վերանորոգման կարիք, իսկ խոնավության մակարդակը բարձր է: Պատժախցերի անբավարար պայմաններ են արձանագրվել նաև «Աբովյան» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում:

Հարկ է նշել, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի պայմաններին անդրադարձել է նաև ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում՝ նշելով, որ դրանք վատ են լուսավորված, խոնավ են, կիսաքանդ, աղտոտված և հեղեղված միջատներով: ԽԿԿ-ն ընդգծել է, որ անհրաժեշտ է դադարեցնել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի շահագործումը, իսկ մյուս քրեակատարողական հիմնարկների պատժախցերում ապահովել մարդու նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բնական լուսավորության ապահովմանը, ինչպես նաև սանհանգույցների առանձնացմանը (...):

«Գորիս» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում սանհանգույցները նույնպես ամբողջապես առանձնացված չեն բնակելի տարածությունից: Այսպիսով, անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկների պատժախցերում ապահովել պատշաճ պայմաններ, այդ թվում՝ պատշաճ բնական լուսավորություն, ինչպես նաև սանհանգույցների առկայությունն ու առանձնացվածությունը<sup>1</sup>:

1 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝

**Բացի այդ, հարկ է նշել, 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի իրավական չափանիշները, որտեղ ի թիվս այլնի՝ կարևորվել է նաև ազատագրկման վայրերում պահվող անձանց սանիտարա-հիգիենիկ և նյութակենցաղային պայմանները:**

**Այսպես, նշված չափանիշների 2.8.1 կետի համաձայն՝**



*2.8.1. ազատությունից զրկված անձինք պետք է պահվեն նյութակենցաղային բավարար, մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում: Ըստ այդմ՝ հետևյալ պայմանները համարվել են անբավարար.*

- խցի և (կամ) լոգարանի խոնավության բարձր աստիճան, բնակելի և կենցաղային սպասարկման սենյակների պատերը, առաստաղը և հատակը՝ թրջված և ծեփամածիկը թափված,
- խցերի պատուհանները կտրրված կամ դրանց բացակայություն,
- արհեստական օդափոխության համակարգերի բացակայության կամ անսարքության, դրա չշահագործում,
- խցերի ոչ բավարար բնական լուսավորվածություն,
- կոյուղաջրերի ներթափանցումը խուց՝ աղտոտվածության և գարշահոտության տարածումը բնակելի և կենցաղային սպասարկման սենյակներում,
- միջատների (խավարասերների, փայտոջիլների և այլն) առկայություն և ախտահանման ու մակարոյծների ոչնչացման աշխատանքների ոչ բավարար կատարում,
- սանհանգույցն ամբողջական պատրվ խցի բնակելի տարածքից առանձնացված չլինելը կամ դռան բացակայությունը,
- խցերից կամ կացարաններից դուրս գրնվող փայ-

որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց. էջ 56-58:

<https://www.ombuds.am/images/files/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf>:

տրից ինքնաշեն զուգարաններ,

- տեղաշարժման սահմանափակումներ (հաշմանդամություն) ունեցող անձանց համար սանհանգույցների դժվարամատչելիություն, ողջամիտ հարմարեցումների բացակայություն,

- մշտական և կենտրոնացված ջրամատակարարման համակարգի բացակայություն՝



**Նույնիսկ անձին կալանավորելու համար համապատասխան պայմանների և հիմքերի առկայության դեպքում այդ խափանման միջոցը չի կարող կիրառվել, եթե այն կհանգեցնի Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:**

Այսպես, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում ՄԻԵԴ-ը արձանագրել է հետևյալը.



95. Դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածն ամրագրում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակապես արգելում է փանջանքը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և զոհի վարքագծից (տես, օրինակ, Լաբիդան ընդդեմ Իտալիայի {GC}, համար 26772/95, կետ 119, ECHR 2000-IV):

Այնուհետև Դատարանը նշել է, որ իր նախադեպային իրավունքին համապատասխան՝ վատ վերաբերմունքը պետք է ունենա դաժանության նվազագույն աստիճան, որպեսզի տեղավորվի 3-րդ հոդվածի շրջանակներում: Այս նվազագույնի գնահատումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից՝ այնպիսիք, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունները, իսկ որոշ դեպքերում՝

1 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի իրավական չափանիշները. Երևան. 2019թ. էջ. 45-46:



զոհի սեռը, փարիքը և առողջական վիճակը (տես այլոց շարքում՝ Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, մաս A համար 25, էջ 65, կետ 162):

Դատարանը վերաբերմունքը համարել է «անմարդկային», քանի որ, *inter alia*, այն եղել է կանխամտածված, կիրառվել է ժամերով և պատճառել ինչպես մարմնական վնասվածք, այնպես էլ ֆիզիկական և հոգեկան տառապանք: Դատարանը վերաբերմունքը համարել է «նվաստացնող», քանի որ այն նպատակ է ունեցել զոհերի մոտ առաջացնել վախի զգացում, անվստահություն և ընկճվածություն և նվաստացում (տես, օրինակ, Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործը {GC}, համար 30210/96, կետ 92, ECHR 2000-XI): Որոշելիս՝ արդյոք վերաբերմունքի տվյալ տեսակը «նվաստացնող» է 3-րդ հոդվածի իմաստով, Դատարանը հաշվի է առնում՝ արդյո՞ք դրա նպատակն անձին նվաստացնելն ու նսեմացնելն է, թե՞ ոչ, և եթե առկա են հետևանքներ, արդյո՞ք դրանք անբարենպաստ ազդեցություն են ունեցել նրա անձի վրա՝ 3-րդ հոդվածին չհամապատասխանող ձևով (տես՝ օրինակ, Ռանինենն ընդդեմ Ֆինլանդիայի գործով 1997 թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, Վճիռների և որոշումների հավաքածու, 1997-VIII, էջ 2821-22, կետ 55): Այդուհանդերձ, այսպիսի ցանկացած նպատակի բացակայությունը չի կարող վերջնականապես բացառել 3-րդ հոդվածի խախտումը (տես, օրինակ, Փիրսն ընդդեմ Հունաստանի գործը, համար 28524/95, կետ 74, ECHR 2001-III): Տանջանքն ու նվաստացումը ցանկացած դեպքում պետք է գերազանցեն տանջանքի և նվաստացման այն պարզադիր փարրը, որը կապված է օրինական վերաբերմունքի կամ պարժի համապատասխան ձևի հետ:

Անձին ազատությունից զրկող միջոցները հաճախ կարող են ներառել այդպիսի փարր: Այդուհանդերձ, չի կարելի ասել, որ ազատագրվումն ինքնին հարց է առաջացնում՝ կապված Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ: Ոչ էլ տվյալ

հողվածը կարող է մեկնաբանվել, թե այն պարտավորեցնում է կալանավորին ազատ արձակել առողջական վիճակի պարճառով կամ նրան տեղավորել քաղաքացիական հիվանդանոց՝ համապատասխան բժշկական օգնություն ստանալու հնարավորություն տալու նպատակով:

Այնուամենայնիվ, այս դրույթի համաձայն՝ պետությունը պետք է ապահովի, որ անձի ազատագրկումն իրականացվի այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են նրա արժանապատվությանը, որ տվյալ միջոցի իրականացման ձևն ու մեթոդը չենթարկեն նրան այն աստիճան ցավի, որը գերազանցում է ազատագրկման մեջ գտնվելու ժամանակ բնորոշ անխուսափելի տառապանքի մակարդակը, և որ, հաշվի առնելով բանտարկության գործնական պահանջները, պահպանված լինեն անձի առողջությունն ու բարեկեցությունը (տես վերը՝ Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործը, կետ 92-94): Ազատագրկման պայմանները գնահատելիս պետք է հաշվի առնել այդ պայմանների կուտակային ազդեցությունները, ինչպես նաև դիմողի արած կոնկրետ հայտարարությունները (տես՝ Դուգոզն ընդդեմ Հունաստանի, համար 40907/98, կետ 46, ECHR 2001-II)»<sup>1</sup>:



### **2.3 Կորոնավիրուսով (COVID-19-ով) պայմանավորված կալանքի կիրառման մի շարք հարցեր**

**Նոր տիպի կորոնավիրուսի համավարակը իր ուղղումները մտցրեց իրավապահ մարմինների գործունեության մեջ՝ առաջ բերելով նոր մարտահրավերներ: Հատկապես դա արդիական դարձավ Եվրոպայի Խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից արված հայտարարությունների և ընդունված սկզբունքների համատեքստում:**

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների ժողովածու, գիրք չորրորդ – Եր.: «Անտարես» հրատարակչություն, 2006, էջ 62-63:

Այսպես, Եվրոպայի Խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե (ԽԿԿ) CPT/Inf(2020)13՝ ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքի սկզբունքների վերաբերյալ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համատեքստում հայտարարությամբ նշվում է.



Մարտի 20, 2020 թվական, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակն անսովոր մարտահրավերներ է ստեղծել Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար: Դա առանձնահատուկ և մեծ մարտահրավերներ է ստեղծել ազատությունից զրկման փորձեր վայրերի աշխատակիցների համար, այդ թվում՝ ոստիկանության ծերբակալվածների պահման վայրերում, քրեակատարողական հիմնարկներում, իմիգրացիոն կայանքի վայրերում, հոգեբուժական հաստատություններում և սոցիալական խնամք իրականացնող հաստատություններում, ինչպես նաև այն նորաստեղծ հաստատություններում, որտեղ անձինք գտնվում են կարանտինի մեջ: Նկատի ունենալով COVID-19-ի հետագա տարածման դեմ պայքարի համար անհրաժեշտ գործողությունների ակնհայտ հրամայականը՝ ԽԿԿ-ն անհրաժեշտ է համարում հիշեցնել խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքի մասին: Կանխարգելիչ միջոցները չպետք է հանգեցնեն ազատությունից զրկված անձանց նկատմամբ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի: ԽԿԿ-ի տեսակետով՝ հետևյալ սկզբունքները պետք է կիրառվեն բոլոր մարմինների կողմից, որոնք պատասխանատու են Եվրոպայի խորհրդի տարածքում գտնվող ազատությունից զրկված անձանց համար:

1) Հիմնական սկզբունքը պետք է լինի հնարավոր բոլոր գործողությունների իրականացումը, որպեսզի պահպանվի ազատությունից զրկված բոլոր անձանց առողջությունն ու

անվրանգությունը: Նման գործողություններ ձեռնարկելը նպաստում է նաև աշխատակիցների առողջության և անվրանգության պահպանմանը:

2) Ազատությունից զրկման բոլոր վայրերում պետք է հարգել և լիարժեք կիրառել համավարակի դեմ պայքարի վերաբերյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցները, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող ազգային առողջապահական և կլինիկական ուղեցույցները:

3) Անհրաժեշտ է ավելացնել հաստատությունների աշխատակազմը: Աշխատակազմը պետք է ստանա անհրաժեշտ մասնագիտական աջակցություն, առողջության և անվրանգության պաշտպանություն, ինչպես նաև անհրաժեշտ վերապատրաստում՝ ազատությունից զրկման վայրերում իր լիազորությունների հեփազա իրականացման համար:

4) COVID-19-ի տարածումը կանխելու նպատակով ազատությունից զրկված անձանց նկատմամբ կիրառվող ցանկացած սահմանափակող միջոց պետք է ունենա իրավական հիմք, լինի անհրաժեշտ, համաչափ, հիմնված լինի մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի վրա և կիրառվի սահմանափակ ժամկետով: Ազատությունից զրկված անձինք պետք է ստանան համապատասխան տեղեկություն ցանկացած նման միջոցառման վերաբերյալ՝ իրենց հասկանալի լեզվով:

5) Հաշվի առնելով, որ անձնական շփումները խթանում են հիվանդության տարածումը՝ բոլոր համապատասխան մարմինների կողմից պետք է ջանքեր գործադրվեն՝ կիրառելու ազատությունից զրկման այլընտրանքային միջոցներ: Այս մոտեցումը պարտադիր է հատկապես գերբնակեցման պայմաններում: Ավելին, պետական մարմինները պետք է առավել շար կիրառեն ազատությունից զրկման այլընտրանքային միջոցները, այդ թվում՝ պատժի ժամանակահատվածի կրճատում, պատժից վաղաժամկետ ազատում և փորձաշրջանի կիրառում: Պետք է վերանայել հոգեբուժա-

Կան հաստատություններում անձանց հարկադիր բուժումը շարունակելու անհրաժեշտությունը, սոցիալական խնամքի կենտրոններում գտնվող անձանց հնարավորության դեպքում դուրս գրել կամ տեղափոխել համայնքային խնամքի, ինչպես նաև հնարավորության սահմաններում զերծ մնալ ներգաղթած անձանց (միգրանտներին) ազատությունից զրկելուց:

6) Առողջության ապահովման հետ կապված՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ազատությունից զրկված անձանց առանձնահատուկ կարիքներին, հատկապես խոցելի խմբերին և/կամ ռիսկային խմբերին՝ ծերերին և նախկինում հիվանդություններ ձեռք բերած անձանց: Դա ներառում է նաև COVID-19-ի առկայությունը ստուգելու համար սքրինինգային հետազոտությունների իրականացումը և անհրաժեշտության դեպքում ինտենսիվ խնամքի ապահովումը: Բացի այդ, ազատությունից զրկված անձինք այս ընթացքում պետք է ստանան լրացուցիչ հոգեբանական աջակցություն:

7) Թեև ոչ կենսական նշանակություն ունեցող գործունեության կասեցումը իրավաչափ և ողջամիտ է, պանդեմիայի ժամանակ ազատությունից զրկված անձանց հիմնարար իրավունքները պետք է լիարժեք ապահովվեն: Սա հատկապես ներառում է անձնական պարզած հիգիենայի պահպանումը (ներառյալ տաք ջրի և օճառի հասանելիությունը) և բացօթյա ամենօրյա զրոսանքի հասանելիությունը (առնվազն մեկ ժամ օրնոդությամբ): Ավելին, արտաքին աշխարհի հետ կապի բոլոր սահմանափակումները, այդ թվում այցելությունները, պետք է հավասարակշռվեն կապի այլընտրանքային միջոցների (հեռախոսակապի կամ ինտերնետային կապի միջոցով ձայնային կապի) հասանելիության ավելացմամբ:

8) SARS-CoV-2-ով վարակված լինելու կամ դրա կասկածի պարագայում ազատությունից զրկված անձի մեկուսացման կամ կարանտինի դեպքում տվյալ անձը պետք է ունենա ամենօրյա բավարար մարդկային շփում:

9) Ցանկացած դեպքում և բոլոր ժամանակներում պետք է լիարժեք ապահովվեն իրավապահ մարմինների կողմից անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ վարվելու վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքները (փաստաբանի և բժշկի հասանելիություն, ազատությունից զրկված լինելու վերաբերյալ տեղեկացնելու իրավունք): Որոշ հանգամանքներում կանխարգելիչ միջոցները (օրինակ՝ պաշտպանիչ դիմակներ կրելու պահանջ ախտանիշներ ունեցող անձանց) կարող են արդարացված լինել:

10) Անկախ մարմինների՝ ներառյալ կանխարգելման ազգային մեխանիզմների և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից իրականացվող մշտադիտարկումը շարունակում է վարվել վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիք հանդիսանալ: Պետությունները պետք է երաշխավորեն մշտադիտարկում իրականացնող մարմինների մուտքը ազատագրված բոլոր վայրեր, այդ թվում՝ կարանտինում գտնվող անձանց համար նախատեսված վայրեր: Միաժամանակ, մշտադիտարկում իրականացնող բոլոր մարմինները պետք է ձեռնարկեն բոլոր նախագուշակական միջոցները պահպանելու համար «չմտասելու» սկզբունքը՝ հարկապես տարեցների և նախկինում ձեռք բերած հիվանդություններ ունեցող անձանց պարագայում:

Ինչպես նշվեց, այդ սկզբունքները կիրառվել են նաև կոնկրետ քրեական գործերով կոնկրետ մեղադրյալների նկատմամբ, այդ թվում հենց իրավապահ մարմինների նախաձեռնությամբ:

Այսպես, ՀՀ դատախազության ստորաբաժանումների դատախազների նախաձեռնությամբ, նոր տիպի կորոնավիրուսով պայմանավորված, մարտ- ապրիլ ամիսներին ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության փուլերում գտնվող քրեական գործերով կալանքից ազատվել էին տարբեր ծանրությամբ հանցագործությունների մեջ մեղադրվող 20 կալանավոր<sup>1</sup>:



1 Տե՛ս <https://armtimes.com/hy/article/185671>:

Նման միջնորդություններ էին ներկայացվում պաշտպանների կողմից, որոնք նույնպես քննվել և հիմքերի առկայության դեպքում բավարարվել են դատարանների կողմից: Սակայն նման միջնորդությունները ոչ բոլոր դեպքերում են բավարարվել :

Այսպես, ՀՀ վերաքննիչ դատարանը մերժելով պաշտպանի բողոքը՝ կորոնավիրուսի համաճարակով՝ COVID-19-ով պայմանավորված, կալանավորին ազատ արձակելու պահանջի վերաբերյալ, արձանագրել է հետևյալը.

« (...) որ բացակայում են մեղադրյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետը չպայմանավորված խափանման միջոցներ կիրառելու պայմանները, քանի որ նա երիտասարդ է, բողոքի վերաբերյալ նյութերում չկան առողջական խնդիրներ ունենալու վերաբերյալ փաստական տվյալներ, այլ կերպ՝ չի գտնվում խոցելի կամ ռիսկային խմբերում, ու թեև փաստացի գտնվում է անազատության մեջ, սակայն նրան բժշկական, այդ թվում հոգեբանական աջակցություն ցուցաբերվում է նաև քրեակատարողական հիմնարկում կամ քրեակատարողական մարմնի հսկողությամբ կարող է ցուցաբերվել այլ բժշկական, այդ թվում՝ քաղաքացիական հաստատություններում: Ավելին, սույն որոշման կայացման պահին, ըստ պաշտոնական լրահոսի, համավարակի առնչությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հաստատություններում չկա անվերահսկելի վիճակ, իսկ իրավիճակի նման զարգացման դեպքում տվյալ գործը հսկող դատախազը կարող է և պարտավոր է օպերատիվորեն ու համակողմիանորեն արձագանքել և վերացնել մեղադրյալի կալանքը<sup>1</sup>: »

1 Տե՛ս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020 թվականի հունիսի 4-ի թիվ ՍԴ/0026/06/20 որոշումը:

## Կալանավորման պայմանների և հիմքերի առկայության գնահատման ընդհանուր կանոնները

- Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցի վերլուծությանը պետք է նախորդի սկզբունքային այն հարցի քննարկումը, թե արդյո՞ք անհրաժեշտություն կա անձի նկատմամբ կոնկրետ գործով խափանման միջոցի կիրառման համար:
- Կալանավորման համար առկա ձևական հիմքերի առկայությունը հաստատելուց հետո միայն դատարանի վերլուծությունը անձին կալանավորելու վերաբերյալ պետք է կառուցվի «ազատության կանխավարկածի» վրա, և այդ հարցի հետազոտումը սկսվի այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հնարավորության հարցի հավանականությունից, և դրա անհնարինությունը հաստատելուց հետո միայն դատարանը կարող է որոշում կայացնել՝ անձին կալանավորելու մասին:
- Անհրաժեշտ է հետազոտել ինչպես կալանավորման օգտին, այնպես էլ դրա դեմ առկա բոլոր հանգամանքները, և կալանավորման որոշման մեջ ներկայացնել բավարար և վերաբերելի հիմնավորումներ, որոնք կհաստատեն անձի անազատության մեջ գտնվելու կամ այլընտրանքային խափանման միջոցի կիրառման անհնարինությունը:
- Հանցագործության ծանրությունը, հասարակության համար վտանգավորությունը, բացասական տեղեկություններն անձի նկատմամբ ինքնին չեն կարող հիմք հանդիսանալ կալանավորման համար:
- Կալանավորման համար յուրաքանչյուր հիմքի առկայությունը (քննությունից և դատից խուսափելը, գործի քննությանը խոչընդոտելը և նոր հանցանքներ կատարելու ռիսկը) դատարանի կողմից հաստատվում է գործում առկա բոլոր հանգամանքների համակցությամբ հաստատված փաստերի վերլուծության հիման վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մեղադրյալի կոնկրետ վիճակը:
- Կալանավորումը կիրառելու (կամ կալանավորման ժամկետի երկարացման) վերաբերյալ ստանդարտ ձևակերպումներով կոլեկտիվ որոշումներ կայացնելն անթույլատրելի է:



### ԳԼՈՒԽ 3.

## Կալանքի տակ գտնվելու ժամկետների երկարացումը

Կարևոր է, որ մեղադրյալի կալանավորման հիմքերը և պայմանները մնան համապատասխան և բավարար նշված խափանման միջոցի կիրառման ողջ ժամանակահատվածում:

Կալանավորման ժամկետի ինքնաբերաբար երկարացումը հակասում է քրեադատավարական կարգավորումներին: **«Չեն վերացել այն հիմքերը, որոնք ընկած են եղել նախորդ կալանքի կամ նրա ժամկետի երկարացման որոշման հիմքում»** բանաձևն անընդունելի է: Դա նշանակում է, որ դատարանը ելնում է մեղադրյալի կալանքի կանխավարկածից և որևէ հիմք չի գտնում խափանման միջոցը փոխելու համար: Այս մոտեցումը սկզբունքորեն սխալ է և հիմնված է ՔԴՕ 151-րդ հոդվածի 2-րդ մասի<sup>1</sup> սխալ մեկնաբանության վրա: Դատարանը կալանքի ժամկետի յուրաքանչյուր երկարացման ժամանակ պետք է իրականացնի փաստական հանգամանքների գնահատում՝ պատասխանելով այն հարցին, թե այս պահին ինչ հանգամանքներ են հերքում ազատության կանխավարկածը:

Դատարանը պետք է ելնի «ազատության կանխավարկածից» և առաջին հերթին քննի ոչ թե այն հիմքերը, որոնց հիման վրա անձը չի կարող ազատվել, այլ անձի ազատման հնարավոր հիմքերը: Որքան երկար ժամանակ մեղադրյալը մնում է նախնական կալանքի տակ, այնքան ավելի շատ հիմնավոր պատճառներ են պետք դատարանին, որպեսզի վերջինս այս խափանման միջոցի ժամկետը երկարացնի:

Նախագծի 286-րդ հոդվածի համաձայն՝



*Դատարանում խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու*

1 Հոդված 151. Խափանման միջոցը փոփոխելը և վերացնելը (...)

2. Խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:

*վարույթի առարկան են կազմում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառման կամ կիրառված խափանման միջոցի ժամկետի երկարացման **անհրաժեշտությունը և իրավաչափությունը**, ավելի **մեղմ խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը**, իսկ ձերբակալված մեղադրյալի նկատմամբ՝ նաև **ձերբակալման իրավաչափությունը**:*



Պետք է նշել, որ Նախագծով որոշակի կանոնակարգումներ են մտցվել կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու միջնորդությունների քննության հետ կապված: Մասնավորապես, 289-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորված մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչն իրավունք ունեն միջնորդություն ներկայացնել դատարան կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին՝ կալանքի ժամկետը լրանալուց **ոչ ուշ, քան յոթ օր առաջ**: Միջնորդության պատճենն ուղարկվում է մինչդատական վարույթն իրականացնող քննիչին և հսկող դատախազին: Միաժամանակ, սահմանվել է, որ դատարանը մերժում է միջնորդության հիման վրա վարույթի հարուցումը, եթե.

1. միջնորդությունը ներկայացվել է ոչ պատշաճ անձի կողմից կամ
2. ոչ պատշաճ ժամկետում. կամ
3. եթե դրանում չեն ներկայացվել կալանքի իրավաչափությունը վիճարկող կամ այլընտրանքային խափանման միջոցների **կիրառման հնարավորությունը հիմնավորող նոր էական փաստարկներ**:

Այսինքն, սրանով փորձ է արվել ոչ միայն որոշակի ժամկետային սահմաններ մտցնել այլընտրանքային խափանման միջոցները ներկայացնելու համար, այլ նաև հնարավորինս խուսափել կրկնվող և դատավարությունը ձգձգող միջնորդությունները ներկայացնելուց:

Նախագծի 289-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ միջնորդությունը մերժելու հիմքերի բացակայության դեպքերում դա-

տարանը հարուցում է վարույթ և **հինգ օրվա ընթացքում** նշանակում է դատական նիստ, որոնք իրականացվում են խափանման միջոց կիրառելու և կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու վարույթի իրականացման կանոններով: Եթե դատարանը, միջնորդության փաստարկների բնույթից ելնելով, գալիս է հետևության, որ մեղադրյալի մասնակցությունը պարտադիր չէ, ապա վարույթ հարուցելու մասին որոշմամբ հատուկ սահմանում է, որ դատական նիստը կարող է անցկացվել մեղադրյալի բացակայությամբ:

Միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

- 1) միջնորդությունը մերժելու մասին, եթե գալիս է հետևության, որ կալանքի իրավաչափության և անհրաժեշտության մասին հետևությունները շարունակում են հիմնավոր լինել,
- 2) միջնորդությունը մասնակի կամ ամբողջությամբ բավարարելու մասին, եթե հաստատում է Նախագծի 288-րդ հոդվածի 2-րդ<sup>1</sup>

---

1 2. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որոշումը [միջնորդությունը մերժելու մասին], եթե.

1) հայտնաբերում է սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով [քրեական վարույթը բացառող հանգամանքներ] նախատեսված որևէ հանգամանք,

2) չի հաստատվում մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը,

3) հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու համար միջնորդվող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը բացակայում է, իսկ առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառման անհրաժեշտության և հնարավորության հարցը ենթակա է լուծման վարույթի համապատասխան հանրային մասնակիցների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում,

4) առկա է մեղադրյալի կյանքին սպառնացող վտանգ, և չի հիմնավորվել այդ վտանգը չեզոքացնելու հնարավորությունը:

կամ 4-րդ<sup>1</sup> մասով ամրագրված հանգամանքներից որևէ մեկի առկայությունը: Եթե կալանքը վերացնելով՝ դատարանը գալիս է հետևության, որ անհրաժեշտ է կիրառել այլընտրանքային խափանման միջոց կամ դրանց համակցություն, ապա որոշման մեջ հստակորեն սահմանում է կիրառվող խափանման միջոցի տեսակը և պայմանները (289-րդ հոդվածի 4-րդ մաս):

Կալանավորման յուրաքանչյուր որոշման մեջ ստանդարտ ձևակերպումների կրկնությունը, ամենից հաճախ, վկայում է այն մասին, որ դատարանը իրական գործի հանգամանքների վերաբերյալ քննություն չի իրականացրել:

Մասնավորապես, Վալերի Կովալենկոն ընդդեմ Ռուսաստանի (Valeriy Kovalenko) գործում ՄԻԵԴ-ը նշել է, որ՝



*46. Ինչ վերաբերում է կրկնհանցագործության կատարման ռիսկին, ապա ներպետական դատարանները նշել էին, որ դիմումատու շարունակել է իր հանցավոր գործունեությունը նույնիսկ նրա դեմ քրեական գործի հարուցումից հետո: Դատարանները հղում էին կատարել դեպքին, որն ընդգրկում էր փրկին Լ-ին, և որը փեղի էր ունեցել քրեական գործի հարուցումից հետո:*

*47. Դատարանը նշում է, որ այդ պատճառը փեղին է և վերաբերում է գործի կոնկրետ փաստերին: Դա նաև բավարար էր դիմումատուի կալանքի որոշումը արդարացնելու համար: Այնուամենայնիվ, ժամանակի հեղափոխական դատարանները պետք է ուսումնասիրեին՝ արդյո՞ք այդ պատճառը պահպանվում է, և արդյո՞ք դա արդա-*

1 4. Դատարանը կայացնում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը [միջնորդությունը մասնակի բավարարելու մասին], եթե՝

1) հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառմամբ,

2) հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել միջնորդված խափանման միջոցի՝ առավել մեղմ պայմաններով կիրառմամբ (կալանքի կամ տնային կալանքի առավել կարճ ժամկետով, վարչական հսկողության առավել բարենպաստ պայմաններով):

**րացնում է դիմումատուի շարունակական կալանքը:** Այս պահանջը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ անհատը շարունակաբար գտնվում է անազատության մեջ երկար ժամանակահատվածում, ինչպես այս գործում:

48. Թվում է, թե ներպետական դատարանները, մի անգամ օգտագործելով այդ պարճառաբանությունը, շարունակել են դրա մասին վկայակոչել՝ օգտագործելով բանաձևային ձևակերպումներ և առանց հաշվի առնելու գործի հեղափոխ զարգացումը: Ավելին, նրանք մերժել էին պաշտպանական կողմի այն փաստարկները, որ դիմումատուն զոհերի հետ իր պարտքերը կմարի ազատության մեջ, առանց որևէ պարճառաբանության: Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ ներպետական դատարանները չէին կարողացել հղում կատարել հատուկ և բավարար փաստերի՝ դիմողի կողմից նոր հանցանք կատարելու ռիսկը ցույց տալու համար: Ըստ այդմ՝ այս պարճառը չի կարող արդարացնել նախնական կալանքի այդպիսի երկար ժամանակահատվածը՝



ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ ներպետական դատարանները երկարացնում են դիմումատուի կալանքը՝ հիմնականում ելնելով մեղադրանքի ծանրությունից և ստանդարտ ձևակերպումներ օգտագործելով՝ առանց հաշվի առնելու կոնկրետ գործի առանձնահատուկ հանգամանքները կամ հաշվի չառնելով այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու հնարավորությունը<sup>2</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերլուծություն է կատարել Վահագն Պողոսյանի վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշման 13-րդ կետում և իրավական դիրքորոշում ձևավորել այն մասին, որ՝

1 Sեն Case of Valeriy Kovalenko v. Russia (Վալերի Կովալենկոն ընդդեմ Ռուսաստանի), 29/05/2012, 41716/08, պարագրաֆներ 46–48:  
2 Sեն Case of Zhrebina v. Russia (Ժերեբինն ընդդեմ Ռուսաստանի), 24/03/2016, 51445/09, պարագրաֆներ 59–63; Case of Dudchenko v. Russia (Դուչենկոն ընդդեմ Ռուսաստանի), 07/11/2017, 37717/05, պարագրաֆներ 138–140; Case of Fortalnov and Others v. Russia (Ֆորտալնովը և այլք ընդդեմ Ռուսաստանի), 26/07/2018, 7077/06:



(...) մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս, ինչպես նաև գրավի թույլատրելիության հարցը լուծելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար, նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նույնանման իրավական դիրքորոշում բազմիցս իր նախադեպային նշանակության վճիռներում հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ի թիվս այլոց տես *Mamedova v. Russia, 2006* թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգապ թիվ 7064/05, կետ 74, *Panchenko v. Russia 2005* թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգապ թիվ 45100/98, կետ 102, *Ilijkov v. Bulgaria, 2001* թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգապ թիվ 33977/96, կետ 81) (...)<sup>1</sup>:



ՄԻԵԴ-ը նաև նշել է, որ ազատ արձակման համար կողմ և դեմ փաստարկները չպետք է լինեն «**ընդհանուր և վերացական**»<sup>2</sup>:

Ամեն անգամ խափանման միջոցը երկարացնելու դեպքում դատարանը պարտավոր է համոզվել, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու հիմքերը պահպանվում են նոր հանգամանքների լույսի ներ-

1 Տես ՀՀ ՊՏ 2013.06.19/32(972):

2 Տես Case of Sregey Denisov v. Russia (Սերգեյ Դենիսովն ընդդեմ Ռուսաստանի), 08/10/2015, պարագրաֆ 79: Տես նաև Case of Clooth v. Belgium (Քլուտն ընդդեմ Բելգիայի), 12/12/1991, 12718/87, պարագրաֆ 44:

քո՝ մասնավորապես, հաշվի առնելով նախնական կալանքի տակ գտնվող մեղադրյալի արդեն իսկ անազատության մեջ անցկացրած ժամանակը:

Ժամանակի գործոնը պահանջում է այնպիսի խափանման միջոցի, ինչպիսին կալանքն է, կիրառման համաչափության նոր գնահատական: Անկախ նրանից, թե որքան ծանրակշիռ կամ համոզիչ են նախնական/սկզբնական կալանքի հիմքերը, ժամանակի ընթացքում նրանք կորցնում են իրենց նշանակությունը և նույնիսկ կարող են ընդհանրապես վերանայ: Հետևաբար, դատարանը պետք է գնահատի ժամանակի ընթացքում շարունակական ազատությունից զրկելու հիմնավորվածությունը դինամիկայի մեջ, այսինքն՝ հաշվի առնելով նոր հանգամանքներ (նախնական քննության կամ դատական քննության ընթացքը, անձի կալանքի տակ գտնվելու ամբողջ ժամկանակահատվածը, մեղադրյալի առողջության վիճակի հնարավոր վատթարացումը և այլն): Այդ իսկ պատճառով և՛ ազգային օրենսդիրը, և՛ Կոնվենցիան պահանջում են պարբերաբար վերանայել խափանման միջոցների վերաբերյալ որոշումը և նշել դրա տևողության մասին<sup>1</sup>: Նման վերանայումը, այնուամենայնիվ, չպետք է լինի ձևական:

Հիմնավոր կասկածի առկայությունը պետք է առկա լինի մեղադրյալի նախնական կալանքի տակ գտնվելու ամբողջ ընթացքում<sup>2</sup>:

Էդգար Եղիազարյանի վերաբերյալ թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝

1 Տե՛ս, օրինակ, Case of Fedorenko v. Russia (Ֆեդորենկոն ընդդեմ Ռուսաստանի), 20/09/2011, 39602/05, պարագրաֆ 50; Case of Pletmentsev v. Russia (Պլետմենցևն ընդդեմ Ռուսաստանի), 27/06/2013, 4157/04, պարագրաֆներ 45–49, որտեղ դատարանը նշել է, որ կալանքի տակ գտնվելու դատարանի որոշումն առանց տվյալ միջոցի գործողության ժամկետի նշման, դնում է մեղադրյալին անորոշության մեջ, որը խախտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

2 Տե՛ս, Case of McKey v. The United Kingdom (ՄակԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության), 03.10.2006, 543/03, պարագրաֆ 44, Ilgar Mammadov v. Azerbaijan, (Իլգար Սամադովն ընդդեմ Ադրբեյջանի), 22.05.2014, 15172/13, պարագրաֆ 90:



(...) - հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական փյուռների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հեղուկությունները պետք է լինեն հիմնավորված և պարճառաբանված,

- **կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս պետք է ցույց տրվի, որ հանցանք կատարած լինելու կասկածը պահպանվել է և շարունակում է մնալ «հիմնավոր»:**


Ազատությունից զրկելու փոստությունը կարող է լինել կարևոր գործոն կասկածի պահանջվող աստիճանի համար,

- մինչդարձական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից (տես, *mutatis mutandis*, Ներսես Միսակյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշումը), ուստի, հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությամբ:





նր կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չչափով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հեղափոխման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում՝ քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործը ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (օրինակ՝ արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է անձը, դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել (այդ առումով մանրամասն տե՛ս, օրինակ, Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, գանգապ թիվ 23978/06), կամ որպես մեղադրյալ է ներգրավվել քրեական պատասխանավության ենթարկվելու տարիքի չհասած անձը, կամ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն),

- հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումը ակնհայտորեն չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը (կամ անձին վերագրված փաստերը հաստատող՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերին), իսկ արարքի փաստական կողմը առերևույթ վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ

*իր բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին (...) ինչը, սակայն, ակնհայտորեն չի համապատասխանում արարքի փաստական նկարագրությանը, իսկ վերջինը առերևույթ վկայում է անձի արարքում գողության հասարակ հանցակազմի հատկանիշների առկայության մասին (...):»<sup>1</sup>* 

Ալեքսեյ Գրինչուկի գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԱԲԴ/0025/06/17 որոշմամբ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնել բողոքաբերի (դատախազի) հետևյալ փաստարկին.

 *Քրեական գործի քննության տվյալ փուլում, հատկապես, երբ առկա են վիճարկման ենթակա հանգամանքներ, հարցաքննված անձանց ցուցմունքների միջև կարող են առաջանալ հակասություններ, որոնց պատճառները և յուրաքանչյուր ցուցմունքի արժանահավաստությունը, վերաբերելիությունը, հաստատումը կամ հերքումը, ապացուցողական տեսակարար կշիռն արդեն վերլուծության և քննարկման ենթակա են նախաքննության հետագա ընթացքում կամ դատարանում, բայց ոչ կալանավորման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ դատական քննության սահմաններում»<sup>2</sup>:* 

Ակնհայտ է, որ քննության ընթացքում կարող են հաստատվել հանգամանքներ՝ ինչպես կասկածի հիմնավորվածությունը ուժեղացնող, այնպես էլ այն ավելի քիչ հիմնավորված դարձնող: Հետևաբար, այս հարցը ենթակա է քննության՝ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի ժամկետի յուրաքանչյուր երկարացման ժամանակ, ինչպես նաև կիրառված խափանման միջոցը ազատության զրկման հետ չկապված խափանման միջոցի փոխարինե-

1 Տե՛ս ՀՀ ՊՏ 2017.12.01/72(1347):

2 Տե՛ս ՀՀ ՊՏ 2018.07.04/51(1409):

լու միջնորդության քննության ժամանակ: Ընդհանուր սկզբունքն այն է, որ որքան ավելի երկար է մարդ պահվում կալանքի տակ, այնքան ավելի ծանրակշիռ պետք է լինի «ողջամիտ կասկածը»: Քննության ընթացքում պետք է հայտնվեն նոր ապացույցներ, որպեսզի «ողջամիտ կասկածը» շարունակվի պահպանվել: Եթե դա տեղի չի ունենում, ապա առաջանում են հիմքեր կամ վերացնելու, կամ, համենայն դեպս, ավելի մեղմ խափանման միջոցով փոխելու համար:

Փախուստի դիմելու/թաքնվելու դիսկն անխուսափելիորեն նվազում է ժամանակի ընթացքում, որն անցկացվել է նախնական կալանքի մեջ: Քանի որ ազատագրկման հավանական պատժի ժամկետը կրճատվում է կալանքի տակ գտնվելու ժամանակի համամասնությամբ, ապա պատիժը, համապատասխանաբար, ավելի քիչ վախեցնող է թվում մեղադրյալի համար:

Մասնավորապես, Սոկուրենկոն ընդդեմ Ռուսաստանի (Sokurenko v. Russia) գործում ՄԻԵԴ-ը նշել է, որ՝

« 87. Թաքնվելու դիսկը նվազում է կալանքի տակ գտնվելու ժամանակի ավելացմանը համահունչ, քանի որ կալանքի տակ գտնվելու ժամկետը հանվելու (հաշվակցվելու) հավանականությունը ապագայում ակնկալվող ազատագրկման պատժի ժամկետից, դատապարտման հետևանքարն ավելի քիչ վախեցնող է դարձնում և նվազեցնում է թաքնվելու դիսկը՝ »

« քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝

« 3. Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա

1 Տե՛ս Case of Sokurenko v. Russia (Սոկուրենկոն ընդդեմ Ռուսաստանի), 10.01.2012, 33619/04, պարագրաֆ 87:

դիմաց, իսկ հանրային աշխատանքների դեպքում՝ մեկ օրը երեք ժամի դիմաց:

4. Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու կամ այլ պետությունում կադրած հանցանքի համար դատարանի դատավճռով ազատագրված ձևով նշանակված պատիժը կրելու ժամանակ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի հիման վրա անձին հանձնելու դեպքում մեկ օրը հաշվարկվում է մեկ օրվա դիմաց:

5. Մինչև դատական քննությունը կալանքի տակ գտնվող անձի նկատմամբ փուլային, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու ձևով պատիժ նշանակելիս դատարանը, հաշվի առնելով կալանքի տակ պահելու ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ լրիվ ազատում պատիժը կրելուց՝»:



Ժամանակի ընթացքում այն հանգամանքները, որոնք կալանքի տակ պահելու հիմք են հանդիսացել, կորցնում են իրենց արդիականությունը:

Այսպես, օրինակ, նույնիսկ եթե սկզբում մեղադրյալի կալանավորումը հիմնավորված էր փախուստի ռիսկով, քանի որ նա չէր տրամադրել իր հասցեն և չէր ներկայացրել բժշկական տեղեկանք, որը հաստատում է դատարանում նրա չներկայանալու հարգելի լինելը (հետագայում այդպիսի տեղեկանք նրա կողմից ներկայացվել է), երկու տարի և չորս ամիս անց այդ հիմքերը դադարել էին արդիական լինել<sup>2</sup>:

Քննության սկզբնական փուլում այս ռիսկը կարող է արդարացնել կալանավորումը հատկապես բարդ գործերով, որոնք պահանջում են բազմաթիվ քննչական գործողություններ: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում այն նվազում է, քանի որ իրականացվում են քննչական գործողություններ, վերցվում են ցուցմունքներ և հավաքվում են ապացույցներ:

1 Տե՛ս ՀՀ ՊՏ 2003.05.02/25(260):

2 Տե՛ս Case of Kudła v. Poland [GC] (Կուդլան ընդդեմ Լեհաստանի), 26/10/2000, 30210/96, պարագրաֆներ 112–117:

Այսպես, օրինակ՝ ՄԻԵԴ-ն իր Յառժինսկին ընդդեմ Լեհաստանի (Jarzynski v. Poland) նախադեպային որոշմամբ նշել է, որ՝

« 43. Ինչ վերաբերում է վկաների վրա ճնշում գործադրելու ռիսկին, ինչպես նաև այլ ապօրինի միջոցներով վարույթների խոչընդոտմանը, Դատարանը չի կարող ընդունել, որ դրանք համապատասխան և բավարար հիմքեր են կազմում դիմումատուի կալանքի ողջ ժամանակահատվածի համար: Նախ՝ նշվում է, որ դատական մարմինները ենթադրում են վկաների վրա ճնշում գործադրելու ռիսկը կամ վարույթի խոչընդոտումը՝ հիմք ընդունելով դիմումատուին սպասվող խիստ պարիժը և մեղսագրվող հանցագործության բնույթը: Այնուամենայնիվ, նշում է, որ համապատասխան որոշումները չեն նշել որևէ փաստարկ, որը կարող է ցույց տալ, որ այդ վախերը հիմնավորված են: **Դատարանը գտնում է, որ այդպիսի ընդհանուր ձևակերպված ռիսկը, որը բխում է այն հանցագործությունների բնույթից, որոնց համար դիմումատուին մեղադրանք է առաջադրվել, հնարավոր է, որ ընդունվի որպես դատաքննության սկզբնական փուլում նրա կալանավորման հիմք:** Այնուամենայնիվ, որևէ այլ գործոնի բացակայության դեպքում, որը կարող է ցույց տալ, որ ռիսկն իրականում գոյություն ունի, **Դատարանը չի կարող ընդունել այդ հիմքերը՝ որպես դիմումատուի կալանքի տակ պահելու հիմնավորում՝ համապատասխան ամբողջ ժամանակահատվածի համար՝** »

Անհրաժեշտ է համոզիչ կերպով ցույց տալ, որ կալանքի ցանկացած ժամանակահատվածի համար հիմք կա, անկախ դրա տևողությունից<sup>2</sup>:

1 Stn Case of Jarzynski v. Poland (Յառժինսկին ընդդեմ Լեհաստանի), 04/10/2005, 15479/02, պարագրաֆ 43:  
2 Stn Buzadji v. the Republic of Moldova [GC] (Բուզաջին ընդդեմ Մոլդովայի), 05/07/2016, 23755/07, պարագրաֆ 87:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2018թ. ապրիլի 18-ին Հարույթյուն Իգիթի Պետրոսյանի վերաբերյալ թիվ ՇԴ/0231/06/17 որոշման մեջ նշել է, որ՝



12. (...) Ա. Ճուղուրյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է **կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը**: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պարզաձև վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հեղուկությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական փոխալներ» (տես Ա. Ճուղուրյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

12.1. Ավելին՝ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան), զարգացնելով իր նախադեպային իրավունքը, Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ բացի ողջամիտ կասկածի առկայությունից, դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից **կալանավորման համար «հիմնավոր» և «բավարար» պարճառներ ներկայացնելու պահանջն արդեն**

**իսկ պետք է կիրառվի նախնական կալանք կիրառելու վերաբերյալ առաջին որոշումը կայացնելու ժամանակ, այսինքն՝ ձերբակալելուց «անմիջապես» հետո** (տե՛ս, *mutatis mutandis*, *Buzadji v. the Republic of Moldova* [GC], գանգապ թիվ 23755/07, 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ, կետեր 87 և 102): Այլ կերպ՝ **սկսած այդ պահից անձի կալանավորման հիմքերի առկայությունը վկայող հիմնավորումները պետք է լինեն փաստարկված, այն է՝ հիմնված կոնկրետ փաստերի, ինչպես նաև անձը բնութագրող հատկանիշների վրա՝ զերծ ընդհանուր և վերացական բնույթից** (տե՛ս, *mutatis mutandis*, *Aleksanyan v. Russia*, գանգապ թիվ 46468/06, 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ, կետ 179, *Boicenco v. Moldova*, գանգապ թիվ, 41088/05, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ, կետ 142, *Khoudoiorov v. Russia*, գանգապ թիվ 6847/02, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ, կետ 173, *Piruzyan v. Armenia*, գանգապ թիվ 33376/07, 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ, կետ 92): Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ «հիմնավոր» և «բավարար» պատճառներ համարվող հիմնավորումները ներառել են այնպիսի հիմքեր, ինչպիսիք են թաքնվելու վրանգը, վկաների վրա ներգործելու նպատակով ճնշում գործադրելու կամ կեղծված ապացույցների վրանգը, նախնական համաձայնության գալու ռիսկը, կրկին հանցագործություն կատարելու վրանգը, հասարակական կարգը խախտելու վրանգը և կալանավորված անձին պաշտպանելու անհրաժեշտությունը (տե՛ս, *mutatis mutandis*, *Stgmsöller v. Austria*, գանգապ թիվ 1602/62, 1969 թվականի նոյեմբերի 10, կետ 15, *Wemhoff v. Germany*, գանգապ թիվ 2122/64, 1968 թվականի հունիսի 27, կետ 14, *Tomasi v. France*, գանգապ թիվ 12850/87, 1992 թվականի օգոստոսի 27, կետ 95, *Toth v. Austria*, գանգապ թիվ 11894/85, 1991 թվականի դեկտեմբերի 12, կետ 70, *Letellier v. France*, գանգապ թիվ 12369/86, 1991 թվականի հունիսի 26, կետ 51, *I.A. v. France*, գանգապ թիվ 1/1998/904/1116, 1998 թվականի սեպտեմբեր

րի 23, կետ 108 և Բադալյանն ընդդեմ Հայաստանի, գան-  
գապ թիվ 44286/12, 2017 թվականի հուլիսի 20, կետ 39):



Ապացուցման բեռն այս հարցերում չպետք է կրի կալանքի տակ գտնվող անձը, նա չպետք է ապացուցի իր ազատման համար հիմքերի առկայությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն իր 2009թ. մարտի 10-ի Բիկովն ընդդեմ Ռուսաստանի (Bykov v. Russia) գործով կայացված վճռում նշել է, որ՝



64. Հիմնավոր [ողջամիտ] կասկածի շարունակական առկայությունն այն մասին, որ կալանքի տակ գտնվող անձը կատարել է հանցագործություն, հանդիսանում է sine qua non (պարտադիր) պայման կալանքի տակ պահելու օրինականության համար, սակայն ժամանակի ընթացքում նման կասկածն այլևս բավարար չէ, և Եվրոպական դատարանը այդ դեպքում պետք է պարզի, թե անձին ազատությունից զրկումը արդարացվել է, արդյոք, այլ հիմքերով, որոնք շարունակվում են ներկայացվել դատական մարմինների կողմից: Այն դեպքերում, երբ այդ հիմքերը հանդիսանում են «հիմնավոր» և «բավարար», Դատարանը նաև պետք է համոզվի, որ ազգային իշխանությունները դրսևորել են «**հատուկ ջանասիրություն**» գործի քննության ընթացքում (տես նաև Լեթելիեն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France), պարագրաֆ 35, Յաջին և Սարգին ընդդեմ Թուրքիայի (Yağci and Sargin v. Turkey), պարագրաֆ 50): **Այս կապակցությամբ Դատարանը կրկին հաստատում է, որ այդպիսի հարցերի քննության և լուծման ժամանակ ապացուցման բեռը չպիտի դրվի կալանավորված անձի վրա, որպեսզի վերջինս ապացուցի այն հանգամանքների առկայությունը, որ արդարացնում է իրեն կալանքից ազատումը** (տես նաև Իլիկովն ընդդեմ Բուլղարիայի (Ilijkov v. Bulgaria), պարագրաֆ 85, գործը)՝



1 Տես Case of Bykov v. Russia (Բիկովն ընդդեմ Ռուսաստանի), 10/03/2009, 4378/02, պարագրաֆ 64:



### 3.1. Կալանավորման ժամկետի երկարացումը նախնական քննության փուլում

Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս դատարանը չպետք է հղվի քննչական մարմինների հետագա քննչական գործողությունները վերացականորեն կատարելու անհրաժեշտությանը՝ առանց հիմնավորելու պատճառահետևանքային կապը քննչական գործողությունների անհրաժեշտության և անձին ազատելու անհնարինության միջև:

ՀՀ ՔԴՕ 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«*Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը:*»

Պետք է նշել, որ ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագծով սահմանվել են քննիչի կողմից միջնորդության բովանդակության որոշակի պահանջներ: Այսպես, Նախագծի 285-րդ հոդվածի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարացնելու վարույթը հարուցվում է քննիչի միջնորդության հիման վրա, որը պարունակում է՝

1. իրավասու դատարանի անվանումը,
2. քննիչի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը,
3. միջնորդությունը դատարանին ներկայացնելու տարին, ամիսը, օրը, ժամը և թոպեն,
4. վարույթի համարը,
5. մեղադրյալի անունը, հայրանունը, ազգանունը, վերաբերե-

լի անձնական տվյալները, իսկ անազատության մեջ լինելու պարագայում՝ դրա իրավական հիմքերը և ազատությունից զրկելու փաստացի ժամանակը,

6. միջնորդվող խափանման միջոցը,
7. միջնորդության հիմնավորումները,
8. անհրաժեշտության դեպքում՝ միջնորդության քննությունը դռնփակ անցկացնելու մասին խնդրանք և դրա հիմնավորումները,
9. միջնորդությանը կցվող նյութերի ցանկը,
  - 9.1. քրեական վարույթը նախաձեռնելու մասին արձանագրության պատճենը,
  - 9.1. քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման պատճենը,
  - 9.2. միջնորդության հիմնավորվածությունը հաստատող անհրաժեշտ նյութերի պատճենները,
  - 9.3. եթե մեղադրյալը, որի նկատմամբ հարուցվում է միջնորդությունը, անազատության մեջ է, ապա միջնորդությանը կցվում են նաև անձին ազատությունից զրկելու հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները:


Միջնորդությունը և կից նյութերը դատարան են ներկայացվում երկու օրինակով:

Միաժամանակ, վարույթի հարուցումը հիմնավորված մերժվում է, եթե պահպանված չեն համապատասխան պայմանները, այդ թվում՝ բովանդակությանը ներկայացվող: Սակայն վարույթի հարուցման մերժումը խոչընդոտ չէ նոր միջնորդություն ներկայացնելու համար:

ՀՀ ՔԴՕ 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝



*(...) մեղադրյալին կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը, դատախազը, ոչ ուշ, քան կալանքի պահման ժամկետը լրանալուց 10 օր առաջ, պետք է դատարան ներկայացնեն պատճառաբանված միջնորդություն: Դատարանը, համաձայնվելով կալանքի պահման ժամկետը երկարացնելու*

*անհրաժեշտությանը, ոչ ուշ, քան դատարանի կալանքի տակ պահելու որոշված ժամկետը լրանալուց 5 օր առաջ, համապատասխան որոշում է կայացնում: Այն դեպքում, երբ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը կապված է նրա կամ նրա պաշտպանի կողմից գործի նյութերին ծանոթանալու հետ, ապա համապատասխան միջնորդությունը դատախազը կամ դատախազի համաձայնությամբ քննիչը կարող է դատարան ներկայացնել կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 5 օր առաջ<sup>1</sup>:* 

Նախագծի 285-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը պետք է դատարան ներկայացվի համապատասխան խափանման միջոցի կիրառման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան հինգ օր առաջ:

Միջնորդությունը ստանալուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում, իսկ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան հաջորդ օրը դատարանը կայացնում է համապատասխան վարույթ հարուցելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում, որի մեջ նշվում են դատական նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը, օրը, ժամը, ինչպես նաև դրա դռնբաց կամ դռնփակ լինելը: Դատական նիստը նշանակվում է հնարավոր ամենակարճ ժամկետում: Դատական նիստի ժամանակը որոշելիս հաշվի է առնվում միջնորդությանը և կից նյութերին ծանոթանալու և դիրքորոշում մշակելու համար պաշտպանության կողմին ողջամտորեն անհրաժեշտ ժամանակը: Վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելուց հետո միջնորդության և կից նյութերի մեկ օրինակն անհապաղ հանձնվում է մեղադրյալին (Նախագծի 285-րդ հոդվածի 7-8-րդ մասեր):

Պետք է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի (Grigoryan v. Armenia) գործով 2012 թվականի դեկտեմբերի 17-ի, թիվ 3627/06 որոշման համաձայն՝

1 Այս մասին առավել մանրամասն ներկայացվելու է հաջորդ պարագրաֆում:



79. Դատարանը նշում է, որ այն ժամանակ, երբ Համայնքային դատարանը 2005 թվականի դեկտեմբերի 2-ին որոշում է կայացրել դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու մասին, Համայնքային դատարանի նախորդ, այն է՝ 2005 թվականի հոկտեմբերի 11-ի որոշման հիման վրա դիմումատուի ընթացիկ կալանքը դեռևս ուժի մեջ է եղել: Ավելին, նույնիսկ ընդունելով, որ 2005 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը կայացվել է մեկ օրվա ուշացմամբ, այնուամենայնիվ, այն կայացվել է կալանքի տակ պահելու թույլատրված ժամկետը լրանալուց մի քանի օր առաջ: Այն ընդունվել է իրավասու դատարանի կողմից՝ քննիչի միջնորդության հիման վրա՝ համաձայն ներպետական իրավունքի պահանջների: Դատարանը համարում է, որ գործի փաստական հանգամանքներում, ենթադրյալ դատավարական թերությունները, այն է՝ քննիչի միջնորդությունը ներկայացնելու և քննության առնելու կարճապես ձգձգումները, ենթադրելով, որ դրանք տեղի են ունեցել, ձևական և աննշան բնույթ են կրել այնքանով, որ ոչ մի կերպ չէին կարող ազդել այդ որոշմամբ թույլատրված կալանքի ժամկետի օրինականության վրա՝



Այսինքն արձանագրվել է, որ կալանքի տակ պահելու ժամկետի կարճատև ձգձգումը ձևական և աննշան բնույթ է կրում և ոչ մի կերպ չի կարող ազդել կայացվող որոշման օրինականության վրա, որի արդյունքում դատական նիստը, ըստ էության, կարող է նշանակվել նաև նշված 5-օրյա ժամկետի շրջանակներում, որպիսի փորձ առկա է նաև Հայաստանի դատական պրակտիկայում<sup>2</sup>:

Մեղադրյալի կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդություն նախաձեռնելու որոշման մեջ նշված ժամկետը պետք է որոշվի հիմք ընդունելով այս որոշման մեջ պարունակվող քննչա-

1 Տե՛ս Case of Grigoryan v. Armenia (Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի), 3627/06, 10/07/2012:

2 Տե՛ս, օրինակ, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2007թ. հոկտեմբերի 12-ի թիվ ԵԿԿԴ/0033/06/17 որոշումը:

կան և այլ դատավարական գործողությունները: Եթե մեղադրյալի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու դրդապատճառներից մեկը նախորդ միջնորդություններում մեջբերված քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունն է, ապա միջնորդություն հարուցելու որոշման մեջ նշվում են այն հանգամանքները, որոնց պատճառով նշված գործողությունները չեն կատարվել սահմանված ժամկետում: Քրեական գործով նախաքննության հետաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշման (որոշումների) պատճեն/ները կցվում է/են նշված որոշմանը:

Անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր գործ առանձնահատուկ է, չկան միատեսակ գործեր, և պետք է հաշվի առնել այն օբյեկտիվ հանգամանքները, որ առկա են յուրաքանչյուր գործում: Մասնավորապես՝ քրեական գործի ծավալները, արդեն իսկ ծախսված ժամանակը և այլն: Գործի ծավալների մեջ կարևոր է ուշադրության արժանացնել այն, թե որքան մեղադրյալներ, հնարավոր տուժողներ ու վկաներ են անցնում համապատասխան գործով և այլն:

Նշված հանգամանքները բացառապես օբյեկտիվորեն առկա իրողություններ են, սակայն դրանք ոչ մի պարագայում չեն կարող բացասաբար ազդել դատավարության ամենախոցելի սուբյեկտների՝ մեղադրյալների վրա անընդհատ կալանավորման ժամանակը երկարացնելու և անազատության մեջ պահելու տեսանկյունից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կալանքը պետք է հիմնավորված դիտարկել, քննության ընթացքում կարելի է դիտարկել նաև Եվրոպական դատարանի, ինչպես նաև այլ երկրների բարձրագույն դատական ատյանների նախադեպային փորձը: Այսպես. օրինակ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռը, որում մասնավորապես նշվել է, որ դատարանը վերահաստատում է, որ հետագա քննչական գործողություններ կատարելու կամ քննությունն ավարտված չլինելու հիմնավորումները չեն համապատասխանում անձի քննության ընթացքում կալանքի տակ պահելու Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընդունելի որևէ հիմքի՝

Միևնույն ժամանակ նույնական դիրքորոշում է արտահայտել ՌԴ

1 Տե՛ս Case of Piruzyan v. Armenia (Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի), 26/06/2012, 33376/07, պարագրաֆ 98:

Գերագույն դատարանի պլենումը մասնավորապես նշում է, որ դատավարական և քննչական գործողությունների իրականացումը վարույթն իրականացնող մարմինների խնդիրն է, և նրանք չեն կարող օրենքով սահմանված կարգով իրենց պարտականությունները կատարել մեղադրյալների ազատության հաշվին: Ուստի, խափանման միջոցը երկարացնելիս անհրաժեշտ է վստահ լինել այն հարցի մասով, որ մեղադրյալի կալանքի տակ գտնվելու ընթացքում ոչ մի ժամանակահատվածում անգործություն (ձգձգումներ) թույլ չի տրվում: Երբ այդպիսի փաստեր են հաստատվում, ազատությունից զրկելու տեսքով խափանման միջոցը ենթակա է փոփոխության այնպիսի միջոցով, որը կապված չէ ազատությունից զրկելու հետ<sup>1</sup>:

Դատավարական և քննչական գործողությունների իրականացումը քննչական մարմինների խնդիրն է, և նրանք չեն կարող օրենքով սահմանված կարգով իրենց պարտականությունները կատարել մեղադրյալների ազատության հաշվին:

Այսպիսով, պետք է նշել, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի երաշխիքները տարածվում են կալանքի տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածի վրա:

Քննչական մարմինների կողմից դրսևորած անգործության և ձգձգումների փաստերը պարզելու համար դատարանը պետք է պարզի, թե ինչ քննչական (դատավարական) գործողություններ են պլանավորվել և իրականացվել, և ինչու դրանք չէին կարող իրականացվել ավելի վաղ: Նույնիսկ եթե դրանք չեն իրականացվել, դատարանը պետք է հիմնավորի, թե ինչու դիմումատուի ազատության մեջ գտնվելը կխոչընդոտի դրանց իրականացմանը:

Կալանքի տակ գտնվող մեղադրյալներն իրավունք ունեն հուսալու, որ իշխանությունների կողմից կդրսևորվի հատուկ ջանասիրություն իրականացվող վարույթի նկատմամբ, այսինքն, որ նրանց քրեական գործը հատկապես արագ կքննվի դատարանի կողմից<sup>2</sup>: Մասնավորապես, ՄԻԵԴ Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia [GC]) գործով նշվել է, որ՝

- 1 Տե՛ս ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 41 որոշումը (խմբագրված 24.05.2016 թ.), կետ 22:
- 2 Տե՛ս Case of Idalov v. Russia [GC] (Իդալովն ընդդեմ Ռուսաստանի), 22/05/2012, 5826/03, պարագրաֆ 140:



140. Ողջամիտ կասկածի գոյությունը և շարունակական առկայությունն այն մասին, որ ձերբակալված անձն է կատարել հանցանքը, հանդիսանում է կալանքի տակ պահելու շարունակականության օրինականության անփոխարինելի պայմանը: Սակայն որոշակի ժամանակ անց միայն այդ պայմանի առկայությունը բավարար չէ: Նման դեպքերում դատարանը պետք է որոշի, թե արդյո՞ք դատարան մարմիններին ներկայացրած մյուս հիմքերը շարունակում են արդարացնել ազատությունից զրկելը: Եթե այդպիսի հիմքերը «**համապատասխան**» և «**բավարար**» են, Դատարանը պետք է նաև պարզի, թե արդյո՞ք իրավասու ազգային մարմինները վարույթում ցուցաբերել են «**հատուկ ջանասիրություն**» (տես. *Labita*, վերևում նշված պարագրաֆներ 152 և 153) (...):



Միաժամանակ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության երաշխիքները, ինչպես նաև հանցագործության բոլոր հանգամանքների օբյեկտիվ և բազմակողմանի հաստատումը չպետք է տուժեն: Ինչպես նշում է ՄԻԵԴ-ը, կալանքի տակ գտնվող մեղադրյալի իրավունքը իր գործը հատուկ հրատապությամբ քննելու մասին չպետք է անհիմն խոչընդոտներ ստեղծի դատական մարմինների համար՝ պատշաճ ջանասիրությամբ կատարելու իրենց պարտականությունները<sup>1</sup>: Այսպես.



77. Դատարանը լիովին ընդունում է, որ կալանքի տակ գտնվող մեղադրյալի իրավունքը նրա գործը հատուկ արագությամբ քննության առնելը չպետք է անտեղի խոչընդոտի դատարանի իշխանությունների ջանքերը՝ պատշաճ կարգով իրենց խնդիրները կատարելու համար (...):

78. Եզրափակելով՝ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:



1 Տես Case of Toth v. Austria (Թոթն ընդդեմ Ավստրիայի), 12/12/1991, 11894/85, պարագրաֆներ 77-78:

Կալանքի ժամկետը երկարացնելով՝ դատարանը նաև հանդես է գալիս որպես քննության ողջամիտ ժամկետի պահպանման երաշխավոր: Հետևաբար, այդ խնդիրն ունի երկկողմանի բնույթ: Ռիսկերը վերլուծվում են քրեական դատավարության կողմերի վարքագծի ֆոնին: Ողջամիտ ժամկետներ պահպանելու ընդհանուր պահանջն ավելի է ամրապնդվում անմեղության կանխավարկածը պահպանելու անհրաժեշտությամբ, ինչը, մասնավորապես, լռելյայն ենթադրում է, որ այն անձը, որի մեղավորությունը դեռ չի ապացուցվել, չպետք է գտնվի անազատության մեջ: Այստեղից բխում է նախաքննական մարմինների կողմից քննության արդյունավետ կազմակերպման պահանջը: Դրա բացակայությունը չպետք է հանգեցնի չափազանց լուրջ հետևանքների մյուս կողմի համար: Այսինքն՝ քննության ձգձգումները չպետք է հիմք և պատճառ հանդիսանան խափանման միջոցը երկարացնելու համար: Լինելով մարդու իրավունքների պաշտպանության երաշխավոր՝ դատարանը ազատության հիմնարար իրավունքի սահմանափակման համատեքստում հանրային և մասնավոր շահերի միջև արդարացի հավասարակշռությունն ապահովելու նպատակով, ըստ էության՝ որոշակիորեն իրականացնում է այսպես ասած «հատուկ վերահսկողություն» նախաքննության մարմինների գործունեության նկատմամբ (մասնավորապես՝ ձգձգումների բացակայության և արդյունավետ քննության կազմակերպման մասով քննության իրականացման միջոցով, ինչպես նաև քննության համար բացասական եզրակացություն անելու կարողության միջոցով) (օրինակ, չերկարացնելով խափանման միջոցը), եթե վերջինիս գործունեությունը չի համապատասխանում սահմանադրական սկզբունքներին:

Այսպես օրինակ, ՄԻԵԴ Թորթն ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria) գործով որոշմամբ նշվել է, որ՝



*Նախևառաջ ազգային դատական մարմինները պետք է ապահովեն, որ մեղադրյալի նախնական կալանքը չգերազանցի ողջամիտ ժամկետը: Այդ նպատակով նրանք պետք է ուսումնասիրեն բոլոր այն հանգամանքները, որոնք կողմ կամ դեմ են իրական հանրային շահի պահանջներին, որն արդարացնում է անմեղության կանխավարկածի սկզբունք-*



քը՝ պատշաճ հաշվի առնելով անձնական ազատության հարգանքի կանոնից նահանջը, և դրանք փաստարկվեն իրենց որոշումների մեջ (Թոթն ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria), պարագրաֆ 67)<sup>1</sup>: >>

Որոշելու համար, թե արդյո՞ք քննության կազմակերպումը արդյունավետ է եղել, անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, որոնք կներկայացվեն ստորև:

### — Գործի բարդությունը և քննության առանձնահատկությունները




74. Ինչպես հաստատվել է Դատարանի նախադեպային իրավունքով, մինչդարական կալանքի ժամկետը եղել է, արդյոք, «**ողջամիտ**», պետք է գնահատվի յուրաքանչյուր գործով՝ հիմնվելով դրա առանձնահատկությունների վրա (տես նաև Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի (Wemhoff v. Germany) 27.06.1968թ. վճիռը, պարագրաֆ 10):


Շարունակական կալանքը տվյալ դեպքում կարող է հիմնավորված համարվել այն ժամանակ, երբ առկա են հանրային շահի կոնկրետ պահանջներ, որոնք չնայած անմեղության կանխավարկածին՝ գերազանցում են անհատական ազատության նկատմամբ հարգանքի կանոնը: Դա նշանակում է, որ առաջին հերթին ազգային դատական մարմինները պետք է քննեն այդպիսի պահանջների առկայության կողմ կամ դեմ հանգամանքները և դրանք դնեն իրենց որոշումների հիմքում (...):

Ողջամիտ կասկածի այն պնդումը, որ ձերբակալված անձը կատարել է հանցանք՝ շարունակական կալանքի օրինականության համար անհրաժեշտ (sine qua non) պայման է, բայց ժամանակի որոշակի դադարից հետո այն այլևս բավարար չէ: Դատարանը այնուհետև պետք է որոշի՝ արդյո՞ք դատական իշխանությունների կողմից ներկայացված այլ


1 Տես Case of Toth v. Austria (Թոթն ընդդեմ Ավստրիայի), 12/12/1991, 11894/85:

հիմքերը շարունակում են արդարացնել ազատությունից զրկելը: Եթե այդպիսի հիմքերը «**համապատասխան**» և «**բավարար**» են, ապա Դատարանը պետք է նաև պարզի՝ արդյո՞ք իրավասու ազգային մարմինները «**հատուկ ջանասիրություն**» են ցուցաբերել դատավարության վարույթի ընթացքում: Քննության բարդությունն ու առանձնահատկությունները այս առումով գործոններ են, որ պետք է հաշվի առնվեն (տես, ի թիվս բազմաթիվ այլ որոշումների, Լեթելիերն ընդդեմ Ֆրանսիայի (*Letellier v. France*) 1991 թվականի հունիսի 26-ի վճիռը, պարագրաֆ 35, և Վան դեր Տանգն ընդդեմ Իսպանիայի (*Van der Tang v. Spain*) 1995 թվականի հուլիսի 13-ի վճիռը, պարագրաֆ 55)՝ 

— **Մեղադրյալի (նրա պաշտպանների) և քննչական մարմինների վարքագիծը: Այսպես, օրինակ.**

« 68. Ինչ վերաբերում է դիմումատուի գործի նյութերին ծանոթանալու եղանակին, որը կարող է ազդել դատավարության փնտրության վրա, Դատարանը նախ հիշեցնում է իր սեփական կայացրած նախադեպային իրավունքը, որը դատական գործընթացների **կողմերի պահվածքը նույնացնում է որպես այդպիսի դատավարությունների երկարության ողջամտությունը գնահատելու հիմնական գործոններ** (տես ի թիվս շատ այլ գործերի՝ Ֆրիդլենդերն ընդդեմ Ֆրանսիայի *Frydlander v. France* [GC], թիվ 30979/96, § 43, ՄԻԵԴ 2000-VII): Մասնավորապես, եթե դիմումատուն բողոքում է, որ դատավարությունը շարունակվել է անհիմն երկար ժամանակով, Դատարանը սովորաբար նվազեցնում է ցանկացած ժամանակահատված, որի ընթացքում հեղաձգումը վերագրվում է դիմումատուին (տես, օրինակ, Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի (*Smirnova v. Russia*), թիվ 46133/99 և 48183), § 81, և «Մոսկ-


1 Տես Case of Scott v. Spain (Սկոտն ընդդեմ Իսպանիայի), 18/12/1996, 21335/93, պարագրաֆ 74:

վայի Եհովայի վկաներն» ընդդեմ Ռուսաստանի (Jehovah's Witnesses of Moscow v. Russia), թիվ 302/02, § 198, 2010 թ., 10 հունիսի): Մյուս կողմից, ցանկացած նման ձգձգում կարող է ազդել այլ կողմերի շահերի վրա, և իշխանությունները պետք է միջոցներ ունենան պատասխանատու անձի կարգապահությունն ապահովելու համար: **Դատարանը չի համոզվում, սակայն, որ նման իրավիճակում ազատությունից զրկելը համարժեք պատասխան է գործի քննության ձգձգման խնդրին (...):** 

- **Կալանքի ողջամիտ ժամկետի իրավունքը խախտվում է այն դեպքում, երբ առկա են ժամանակահատվածներ, որոնց ընթացքում քրեական գործը քննող վարույթն իրականացնող մարմինների կողմից դրսևորվել է չարդարացված անգործության: Մասնավորապես.**

« (...) ապացույցները բացահայտում են, որ Ավստրիայի դատարաններն այս դեպքի ժամանակ չեն գործել անհրաժեշտ արագությամբ:

(...) դատավարության երկարությունը, (...), ըստ էության, չի վերագրվել ո՛չ գործի բարդությանը, ո՛չ էլ դիմումատուի վարքին: Չնայած այն հանցագործությունները, որոնց համար մեղադրվում էր պր-ն Թոթը, բազմաթիվ էին և վերաբերում էին մի շարք երկրներին, դրանք համեմատաբար սովորական էին և կրկնվող:

(...) Եղել էին բազմաթիվ ընդհատումներ, քանի որ համապատասխան ծառայողները փոխանցել էին գործը, երբեմն բավականին երկար ժամանակով, իրենց կոլեգաներին ...<sup>2</sup>: 

1 Sten Case of Lutsenko v. Ukrain (Լուցենկոն ընդդեմ Ուկրաինայի), 03/07/2012, 6492/11, պարագրաֆ 68:

2 Sten Case of Toth v. Austria (Թոթն ընդդեմ Ավստրիայի), 12/12/1991, 11894/85, պարագրաֆ 77–78:

Վերը նշածով հանդերձ՝ անհրաժեշտ է հստակ շեշտել, որ մեղադրյալը պարտավոր չէ համագործակցել իշխանությունների հետ վարույթի ընթացքում: Հետևաբար, օրինակ, մեղադրյալի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելը կամ մեղքն ընդունելուց հրաժարվելը որպես կալանքի հիմք դիտարկելը, բացարձակապես անընդունելի է:



*Դիմողին կալանավորելու վերաբերյալ դատարանի որոշումը հիմնված է եղել այնպիսի հիմքերի վրա, որոնք ինքնին կասկածելի են: Ազատության սահմանափակումը չի կարող դիտարկվել որպես քրեական գործի նյութերին ծանոթանալուց հրաժարվելու խնդրին համարժեք արձագանք, որն առաջին հիմքն էր, ինչի վրա հիմնվել են իշխանությունները: Ավելին, իշխանությունները չեն բացատրել դիմողի կալանավորման երկրորդ պատճառը, մասնավորապես՝ զանգվածային լրատվության միջոցներին տրված նրա հայտարարությունը: Որպես հայտնի քաղաքական դեմք՝ կարելի էր սպասել, որ դիմողը հրապարակավ իր կարծիքը կարտահայտի իր դեմ առաջադրված քրեական մեղադրանքի վերաբերյալ, և որևէ արդարացում առկա չէ խոսքի ազատության իրականացման նպատակով նրա ազատության սահմանափակման համար: Հետագա փաստարկները, որ դրվել էին դիմողի ազատության սահմանափակման հիմքում, մասնավորապես՝ ցուցմունքներ չտալն ու մեղքը չընդունելը, հակասում են արդար դատաքննության կարևոր փորձերին, ինչպիսիք են իր դեմ վկայելուց ազատ լինելն ու անմեղության կանխավարկածը: Հանգամանքը, որ նման հիմքեր են առաջ քաշվել, հարկապես մտահոգիչ է, քանի որ դրանք վկայում են, որ անձը կարող է պատժվել իր՝ արդար դատական քննության հիմնարար իրավունքից օգտվելու համար: Վերջապես, շարունակական կալանավորման սահմանումն առանց մատնանշելու ժամանակային սահմանափակումը, ինքնին հակասում է 5-րդ հոդվածի պահանջներին՝*



1 Տե՛ս Case of Lutsenko v. Ukrain (Լուցենկոն ընդդեմ Ուկրաինայի), 03/07/2012,



րը երկարացնելու մասին որոշում կայացնելիս դատարանը նախ-  
 և առաջ պետք է պարզի, թե արդյո՞ք անհրաժեշտ պայմաններ  
 են ստեղծվել գործի նյութերին պատշաճ ծանոթանալու համար,  
 արդյո՞ք առկա է այս գործընթացի հետաձգում և դատավարության  
 մասնակիցների կողմից դրա չարաշահում:

Մեղադրյալի և պաշտպանի հետ քրեական գործի նյութերին ծանո-  
 թանալու անարդյունավետ կազմակերպման հայտնաբերումը կա-  
 րող է հիմք հանդիսանալ կալանավորման ժամկետը երկարացնելու  
 միջնորդությունը մերժելու համար:

Ռուսական դատավարագիտության մեջ առաջ է քաշվում այն մո-  
 տեցումը, որ հաճախ գործի վարույթը ձգձգվում է դատավարության  
 ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների մեղքով՝ պաշտպանական կողմի  
 կողմից չարաշահումների արդյունքում: Տվյալ դեպքում, ըստ սույն  
 աշխատանքի համար հիմնադրյուր ծառայած ուսումնամեթոդական  
 նյութերի, դատարանը, որոշելով երկարացնել կալանքի ժամկետը,  
 պետք է հաշվի առնի այդ հանգամանքները և նշի դրանք իր որոշ-  
 ման մեջ:

Քննության ավարտին զգալիորեն նվազում է քրեական դատավա-  
 րությանը խոչընդոտելու ռիսկը: Ապացույցների հավաքման ավար-  
 տը զգալիորեն նվազեցնում է մեղադրյալի կողմից արդարադա-  
 տության բնականոն ընթացքին միջամտելու ռիսկը (օրինակ, երբ  
 բոլոր վկաները հարցաքննված են, կատարվել են առերեսումներ.  
 մեղադրյալի կողմից այդ վկաների վրա ճնշման ռիսկն արդեն շատ  
 ավելի քիչ է): Մասնավորապես, Կոկոշկինյան ընդդեմ Ռուսաստանի  
 (Kokoshkina v. Russia) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ՝



*79. Դատարանը պարտավոր է ընդունել, որ առկա էին  
 անհրաժեշտ և բավարար հիմքեր դիմումատուին կալանքի  
 փակ պահելու համար այն ժամանակահատվածի ընթաց-  
 քում, որ անհրաժեշտ էր քննությունն ավարտելու համար:  
 Չնայած նրան, որ դիմումատուի՝ իր հանցակիցներին բա-  
 ցահայտելուց հրաժարումը չի կարող հիմնավորված լինել  
 նրա կալանքի համար, քանի որ նա պարտավոր չէր հա-  
 մագործակցել իշխանությունների հետ, և նրան չեն կարող*

մեղադրել, որ նա լիարժեք օգտվել է լռության իրավունքից (տե՛ս վերոհիշյալ Մամեդովան (Mamedova, պարագրաֆ 83, and, mutadis mutandis Յագսին և Սարգինը ընդդեմ Թուրքիայի (Yağci and Sargin v. Turkey), 8 Հունիսի 1995, § 66, Ա-ն և Վ-ն ընդդեմ Շվեյցարիայի (A, and W. v. Switzerland), 26 հունվարի 1993 թ., պարագրաֆ 42): Դատարանն ընդունում է, որ իշխանությունները կարող են հիմնավորված համարել, որ նախաքննությանը միջամտելու ռիսկն ի սկզբանե առկա է՝ հաշվի առնելով, որ դիմումատուս կասկածվում է կազմակերպված հանցավոր խմբի ղեկավար լինելու մեջ: Կազմակերպված հանցավորության հետ կապված դեպքերում վրանգը, որ ձերբակալվածը, եթե ազատ է արձակվել, կարող է ճնշում գործադրել վկաների վրա կամ այլ կերպ կարող է խոչընդոտել դատավարությանը, հաճախ հատկապես մեծ է: Այս գործոնները կարող են արդարացնել կալանքի համեմատաբար ավելի երկար ժամանակահատված: Այնուամենայնիվ, նրանք իշխանություններին չեն տալիս անսահմանափակ հնարավորություն՝ շարունակելու այդ խափանման միջոցը (տե՛ս Օսուչն ընդդեմ Լեհաստանի (Osuch v. Poland), թիվ 31246/02, պարագրաֆ 26, 2006 թ. նոյեմբերի 14-ին, և Չելյևսկին ընդդեմ Լեհաստանի (Celejewski v. Poland), 17584/04, պարագրաֆներ 37-38, 2006 թ. մայիսի 4-ին): Դատարանը համոզված է, որ սույն գործի հատուկ հանգամանքներում դիմումատուի ենթադրյալ ղեկավարված կազմակերպված հանցավոր խմբավորումը կարող է համարվել բավարար հիմք՝ նրա կալանավորումը արդարացնելու համար, քանի դեռ քննությունը շարունակվում էր: Հետաքննությունն իրականացվել է պարզաճ արագությամբ և ավարտվել է մեկ տարվա ընթացքում, ինչը չի թվում ավելորդ՝ հաշվի առնելով գործի համեմատական բարդությունը, ամբաստանյալների քանակը և զգալի քանակությամբ ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, ապացույցների հավաքագրումից հետո վկաները հարցաքննվել են, և քննությունն ավարտվել

*է, գործի վարույթին միջամտելու ռիսկն ավելի քիչ է դարձել: Դատարանի կարծիքով, 2007 թվականի սեպտեմբերին, հետաքննության ավարտից հետո այլևս բավարար չէր, որպեսզի դիմումատուի իրավունքը ստորադասվեր<sup>1</sup>:*



Այն պահից, երբ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատախազին (մեղադրական եզրակացություն կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին որոշում<sup>2</sup>), կալանքի ժամկետը երկարացնելու դրդապատճառ կարող է դիտարկվել դատախազի կողմից համապատասխան գործի հանգամանքներն ուսումնասիրելու անհրաժեշտությունը՝ նրա կողմից գործի ճակատագրի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար, իհարկե, եթե կան խափանման միջոց ընտրելու կամ այն երկարացնելու համար անհրաժեշտ պայմանները և հիմքերը:

Այն դեպքում, երբ դատախազը հաստատում է մեղադրական եզրակացությունը (մեղադրական եզրակացությունը կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին որոշում), օրենքը պարտավորեցնում է դատախազին դիմել դատարան՝ մեղադրյալի կալանքի ժամկետը երկարացնելու պահանջով՝ ապահովելու, որպեսզի դատարանը քրեական գործով որոշումներ կայացնի, և այս դեպքում մեղադրյալի կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու դրդապատճառը (եթե առկա են հիմքերը), Առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից քրեական գործի նյութերի ուսումնասիրության անհրաժեշտությունն է՝ դատական նիստ նշանակելու հետ կապված հարցեր լուծելու համար:

Մասնավորապես, ՔԴՕ 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

- 1 Տե՛ս Case of Kokoshkina v. Russia (Կոկոշկինան ընդդեմ Ռուսաստանի), 28/05/2009, 2052/08, պարագրաֆ 79:
- 2 Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար քրեական գործը դատարան ուղարկելու դեպքերում անվտանգության միջոց հոգեթուժական հիվանդանոցում տեղավորելու հարկադրանքի միջոցի մասին կխոսենք 4-րդ գլխում:





(...) այն դեպքում, երբ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը կապված է նրա կամ նրա պաշտպանի կողմից գործի նյութերին ծանոթանալու հետ, ապա համապատասխան միջնորդությունը դատախազը կամ դատախազի համաձայնությամբ քննիչը կարող են դատարան ներկայացնել կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 5 օր առաջ:

Կալանքի տակ գտնվող մեղադրյալին և նրա պաշտպանին քրեական գործի նյութերը ծանոթանալու համար ներկայացվում են կալանքի տակ պահելու սույն օրենսգրքի 138-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված առավելագույն ժամկետները լրանալուց ոչ ուշ, քան 30 օր առաջ, և եթե մեղադրյալն ու նրա պաշտպանը չեն հասցնում նշված ժամկետում ծանոթանալ գործի նյութերին, ապա մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը սույն օրենսգրքով սահմանված կարգով և 138-րդ հոդվածի չորրորդ մասով սահմանված ժամկետների շրջանակներում կարող է երկարաձգվել մինչև գործի նյութերին մեղադրյալի ու նրա պաշտպանի ծանոթանալը և դատախազի կողմից գործը դատարան ուղարկելը: Գործով մի քանի մեղադրյալի առկայության դեպքում կալանքի ժամկետը կարող է երկարացվել նաև մնացած մեղադրյալների մասով, եթե չեն վերացել նրանց կալանքի տակ պահելու հիմքերը: >>

Ինչ վերաբերում է գործը դատարան ուղարկելուց հետո դատարանի համար ՀՀ ՔԴՕ 292-րդ հոդվածով նախատեսված դատավարական որոշումներ կայացնելու համար նախատեսված ժամկետի ընթացքում կալանքի ժամկետներին, ապա այս մասով դեռևս 2009 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է նախադեպային որոշում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2009թ.ապրիլի 10-ի Վարդան Մեսրոպի Մինասյանի թիվ ՀՅՔԲԴՅ/0106/01/08 որոշման մեջ նշել է, որ՝




25. Զեսիրուան ընդդեմ Լիտվայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետից բխում է, որ անձի կալանքի հիմնավորումը սուսկ այն փաստով, որ գործը փոխանցվել է դատարան, չի կարող հանդիսանալ «օրինական» հիմք անձի կալանքը շարունակելու համար (JĖČIUS v. LITHUANIA, 2000թ., գանգապ N34578/97, կետ 63):

Նշված վճռի 68-րդ կետում Եվրոպական դատարանն այն մոտեցումն է արտահայտել, որ Լիտվայի նախկին քրեական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 6-րդ կետը (որի բովանդակությունն ամբողջովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը), չի կարող օրինական հիմք լինել կալանքի կիրառման համար: Կալանքի ժամկետը սկզբունքորեն «օրինական է», եթե այն հիմնված է դատարանի որոշման վրա (JĖČIUS v. LITHUANIA, կետ 68):

26. Հաշվի առնելով Զեսիրուան ընդդեմ Լիտվայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացրած հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **մեղադրողի կողմից գործը դատարան ուղարկված լինելու հիմքով անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումն անձի ազատության իրավունքի անօրինական սահմանափակում է:** Ուստի. ՀՀ քրեադատավարական օրենքի 138-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ և 136-րդ հոդվածի 2-րդ մասերին:

**Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ կալանքի երկամսյա ժամկետի ավարտին մնացել է 15 օրից քիչ ժամանակ, այսինքն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածով նախատես-**

***ված որոշումներից մեկի կայացման ժամկետից պակաս ժամանակ, նախաքննական մարմինը գործը դադարան ուղարկելու հետ միաժամանակ պետք է լուծի նաև անձի կալանքի հարցը, այն է՝ պետք է անձին ազատ արձակի, եթե վերացել են նրան կալանքի փակ պահելու հիմքերը, կամ դադարանին միջնորդություն ներկայացնի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ, եթե առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերը՝:*** 

Այսպիսով, պաշտպանի, մեղադրյալի կողմից գործի նյութերին ծանոթանալու կամ դատավորի կողմից օրենքով սահմանված որոշումները կայացնելու համար անհրաժեշտ ժամկետ ունենալու համար մեղադրյալի կալանավորման ժամկետը պետք է երկարացնել՝ բացի այդ հիմք ընդունելով հատկապես կալանավորման պայմանների և հիմքերի շարունակական առկայությունը:

### **3.3. Կալանավորման ժամկետի երկարացումը դատաքննության փուլում (կալանավորման պահպանումը)**

Կալանքը պետք է հիմնավորված դիտարկել քննության ամբողջության մեջ (և՛ նախնական քննության, և՛ դատական քննության միասնության առումով):

Պետք է նշել, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ կոնկրետ ժամկետներ սահմանված չեն անձին (ամբաստանյալին) կալանքի տակ պահելու համար: Սակայն հիմք ընդունելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան՝ դատարանները պետք է ժամանակ առ ժամանակ անդրադառնան անձի խափանման միջոցի հիմնավորվածությանը:

Այնքանով, որքանով վերաբերելի է, կարելի է դիտարկել նաև Եվրոպական դատարանի, ինչպես նաև այլ երկրների բարձրագույն դատական ատյանների նախադեպային փորձը: Այսպես. օրինակ,

1 Հասանելի է համացանցային <https://www.arlis.am/> հասցեով, 25.06.2020թ. ժամը 23:39:

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) գործով Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռը, որում մասնավորապես նշվել է, որ՝

« 98. Դատարանը նախ և առաջ դիտարկում է, որ այնպիսի հիմքերը, ինչպիսիք են հետագա քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը կամ գործով քննությունը դեռևս ավարտված չլինելու փաստը, չեն համապատասխանում մինչև դատաքննությունն անձին կալանքի տակ պահելու՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընդունելի պատճառներից որևէ մեկին: »

Այսպիսով, դատարանը վերահաստատել է, որ հետագա քննչական գործողություններ կատարելու կամ քննությունն ավարտված չլինելու հիմնավորումները չեն համապատասխանում անձի քննության ընթացքում կալանքի տակ պահելու Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընդունելի որևէ հիմքի:

Մինևոյն ժամանակ նույնական դիրքորոշում է արտահայտել ՌԴ Գերագույն դատարանի պլենումը՝ մասնավորապես նշելով, որ՝

« (...) դատավարական և քննչական գործողությունների իրականացումը վարույթն իրականացնող մարմինների խնդիրն է, և նրանք չեն կարող օրենքով սահմանված կարգով իրենց պարտականությունները կատարել մեղադրյալների [ամբաստանյալների] ազատության հաշվին: Ուստի, խափանման միջոցը երկարացնելիս [պահպանելիս] անհրաժեշտ է վստահ լինել այն հարցի մասով, որ մեղադրյալի [ամբաստանյալի] կալանքի տակ գտնվելու ընթացքում ոչ մի ժամանակահատված անգործություն (ձգձգումներ) թույլ չեն տրվում: Երբ այդպիսի փաստեր են հաստատվում, ազատությունից զրկելու տեսքով խափանման միջոցը են-

1 Stn, mutatis mutandis, Case of Piruzyan v. Armenia (Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի), 26/06/2012, 33376/07, պարագրաֆ 98:

*Թակա է փոփոխության այնպիսի միջոցով, որը կապված չէ ազատությունից զրկելու հետ: »*


Ըստ էության՝ դատական քննության փուլում սովորաբար փոփոխվում են այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել անձին կալանավորելու համար: Մասնավորապես՝ քննությանը խոչընդոտելու ռիսկն առավել հաճախ այլևս տեղին չէ դատարանում գործը քննարկելիս: Միևնույն ժամանակ, վկաների վրա ազդելու որոշակի ռիսկ կարող է գոյություն ունենալ որոշ ժամանակ դատաքննությունը սկսվելուց հետո, երբ վկաները դեռ դատարանում չեն հարցաքննվել<sup>2</sup>: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի (Khodorkovskiy v. Russia) գործով նշել է, որ՝

« Դիմումատուի ձերբակալումը ներպետական օրենսդրությամբ սահմանված հիմքեր է ունեցել, որի համաձայն՝ առանց հարգելի պատճառի հարցաքննությանը չներկայացող վկային թույլատրվում էր ձերբակալել: Սակայն ցանկացած ազատությունից զրկում պետք է անհատներին պաշտպաններ կամայականություններից և թույլատրելի լինել միայն այն դեպքում, եթե օրենքով սահմանված պարտականությունը չէր կարող կատարվել այլընտրանքային միջոցներով: Թեև պաշտոնական վարկածի համաձայն՝ դիմումատուն չէր ներկայացել հարցաքննությանը և, հետևաբար, պետության հանդեպ չկատարված պարտականություն ուներ, Դատարանը չի կարող ընդունել, որ այն բավարար պատճառ էր դիմումատուին հաջորդ առավոտյան նման բռնի կերպով Մոսկվա բերելու համար: Առաջին հերթին, պարզ չէր, թե ինչու քննիչը պատրաստ չէր երեք օր սպասել, մինչև դիմումատուն կվերադառնար Մոսկվա, մանավանդ որ քննությունն արդեն մի քանի ամիս շարունակվում էր, և որ դիմումատուի նախկին վար-

1 Տե՛ս, mutatis mutandis ՌԴ Գերագույն դատարանի պլենումի՝ 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 41 որոշումը (խմբագրված 24.05.2016 թ.), կետ 22:  
2 Տե՛ս, Case of Khodorkovskiy v. Russia (Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի), 31/05/2011, 5829/04, պարագրաֆ 192:

քաղիժը որևէ իրավաչափ մտավարկության տեղիք չէր տվել, որ նա վերադառնալուց հետո կիսուսափեր հարցաքննությունից: Առավել ևս, որ դիմումատուին ձերբակալվել էր որպես վրանգավոր հանցագործ, այլ ոչ թե որպես հասարակ վկա, և նրան հարցաքննելուց անմիջապես հետո քննիչը ներկայացրել էր ինը էջանոց դիմում՝ պահանջելով նրա կալանավորումը:

Իրադարձությունների նման զարգացումը ենթադրում էր, որ քննիչը, փաստորեն, պատրաստված էր նման զարգացումներին և ուզում էր մեղադրել դիմումատուին, այլ ոչ թե պարզապես որպես վկա հարցաքննել նրան:


Հաշվի առնելով, որ ձերբակալումը կարող է լինել ոչ իրավաչափ, եթե նրա արտաքին նպատակը փարբերվեր իրականից, Նովոսիբիրսկում դիմումատուի ձերբակալումը հակասում էր 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետին: 

Այնուամենայնիվ, վկաների վրա ազդելու ռիսկը միանշանակ անհետանում է դատաքննության առաջին փուլից հետո: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի (Panchenko v. Russia) գործով նշել է, որ՝

« 102. Ինչ վերաբերում է դիմումատուի ենթադրյալ հավանականությանը՝ խոչընդոտելու ճշմարտության բացահայտմանը, Դատարանը նշում է, որ **ժամանակի անցնելուն զուգահեռ՝ այս հիմքն անխուսափելիորեն դառնում է ավելի պակաս իրական:** Դիմումատուն մնացել էր կալանավորված ողջ հետաքննության ընթացքում և մինչև առաջին դատաքննությունը, մինչև ապացույցների հավաքումը և վկաներից ցուցմունքներ վերցնելը: Այնուամենայնիվ, նա մնացել էր անազատության մեջ նույնիսկ այն բանից հետո, երբ նրա դատավճիռը բողոքարկման արդյունքում վերաց-

1 Տե՛ս Case of Khodorkovskiy v. Russia (խողորկովսկին ընդդեմ Ռուսաստանի), 31/05/2011, 5829/04, (խողորկովսկին ընդդեմ Ռուսաստանի) - [Armenian Translation] legal summary by Irina Arzumanyan and the COE Human Rights Trust Fund:

*Վել էր: 1999 թ.-ի հունիսի 3-ին Սանկտ Պետերբուրգի քաղաքային դատարանը ընդունել էր, որ դատավարությունը չափազանց երկար էր, այնուամենայնիվ, երկարաձգել էր դիմումատուի կալանքը անորոշ ժամկետով՝ մինչև նոր դատաքննությունը<sup>1</sup>:*



Անհրաժեշտ է նշել, որ վկաների վրա նրանց կողմից նախկինում տրված ցուցմունքները փոխելու նպատակով անօրինական ազդեցության ռիսկը հատկապես թվում է աննշան շարունակական կալանքի տակ պահելու հիմնավորվածության համար հայաստանյան իրականությունում, այն դեպքում, երբ դատարանները հակված են իրենց դատավճիռների համար հիմք ընդունել ավելի շատ նախնական քննության, քան դատական քննության ընթացքում տրված վկաների ցուցմունքները: Իհարկե, խոսքն այստեղ վերաբերում է այն դեպքերին, երբ նախնական քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինների (հիմնականում՝ քննիչների) կողմից դրսևորվել են բարձր պրոֆեսիոնալ մոտեցումներ, և համապատասխան ցուցմունքները ձեռք են բերվել՝ չօգտագործելով ուղղորդող կամ տարատեսակ մեկնաբանություններ պարունակող հարցեր, ու ստացվել են հնարավորինս ստուգված ու փաստարկված պատասխաններ (զրկելով վկաներին, տուժողներին, ոչ օրինական պատճառներով ու մոտիվացիայով դրդված, իրենց նախնական քննության ընթացքում տրված պատասխանները այլ կերպ ներկայացնելու կամ դրանք փոփոխելու հնարավորությունից, եթե, իհարկե, դրանք կատարվել են իրավունքի ոգին և օրենքի տառը պահպանելով):

Ինչ վերաբերում է փախուստի/թաքնվելու ռիսկին, ապա ինչպես նշել ենք վերևում («Կալանքի տակ գտնվելու ժամկետների երկարացումը» գլխում), այս ռիսկը նվազում է նախնական կալանքի ընթացքում անցկացրած ժամանակի ընթացքում, և քանի որ ազատագրկման հավանական պատժի ժամկետը կրճատվում է կալանքի տակ գտնվելու ժամանակի համեմատ, պատիժն ավելի քիչ վախեցնող է թվում մեղադրյալին: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը Սոկուրենկոն ընդդեմ Ռուսաստանի (Sokurenko v. Russia) գործով նշել է, որ՝

1 Sten Panchenko v. Russia (Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի), 08/02/2005, 45100/98, պարագրաֆ 102:

« 87. Թաքնվելու դիսկը նվազում է կալանքի տակ գտնվելու ժամանակի ավելացմանը համահունչ, քանի որ կալանքի տակ գտնվելու ժամկետը հանվելու (հաշվակցվելու) հավանականությունը ապագայում ակնկալվող ազատագրված պատժի ժամկետից, դատարարական հետախույզում ավելի քիչ վստիցեցնող է դարձնում և նվազեցնում է թաքնվելու դիսկը: »


Հաճախ դատավարությունը երկարացվում է դատավարության ոչ պրոֆեսիոնալ մասնակիցների մեղքի պատճառով՝ պաշտպանության կողմի չարաշահման հետևանքով, վկաների և տուժողների չներկայանալու և այլն:

Նման իրավիճակներում անհրաժեշտ է միաժամանակ միջոցներ ձեռնարկել գործընթացի մասնակիցներին կարգապահության մղելու և նրանց ներկայությունը դատարանում ապահովելու համար: Չնայած կալանքի տակ գտնվող մեղադրյալն իրավունք ունի, որպեսզի իր գործը քննվի առաջնահերթ հիմունքներով և ողջամիտ ժամկետում, բայց դա չպետք է խանգարի գործի համակողմանի քննությանը, ապահովելու համար, որ պաշտպանական կողմն ունենա բոլոր հնարավորությունները ապացույցներ ներկայացնելու և գործի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու, և դատավճիռ կայացվի միայն այն ժամանակ, երբ մանրակրկիտ քննության կենթարկվի այն հարցը, թե իրականում կատարվել են, արդյոք, համապատասխան հանցագործությունները, և ինչպիսի՞ պատիժը կլինի արդարացի: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը Ամիրովի ընդդեմ Ռուսաստանի (Amirov v. Russia) գործով նշել է, որ՝

« 112. Դատարանն, ի վերջո, նկատում է, որ դատավարությունը զգալի բարդություն է ունեցել՝ հաշվի առնելով ապացույցների լայնածավալ գործընթացը ու կազմակերպված հանցավորությանն առնչվող գործերով պահանջվող հատուկ միջոցների իրականացումը: Հանցագործությունների

1 Տե՛ս Case of Sokurenko v. Russia (Սոկուրենկոն ընդդեմ Ռուսաստանի), 10/01/2012, 33619/04, պարագրաֆ 87:



Կատարման և քրեական գործ հարուցելու միջև ընկած ժամանակահատվածը դարձել է քննիչների գործը բարդացնող ևս մեկ գործոն: Դատարանը գիտակցում է այն փաստը, որ իշխանությունները ստիպված էին հավասարակշռել քննությունը շարունակելու անհրաժեշտությունը՝ պարտավորվելով ապահովել, որ դիմումատուները լիովին պատրաստ լինեն դրան մասնակցելու: Ազգային իշխանությունները դրսևորել են ջանասիրություն վարույթի նկատմամբ: Նրանք ավարտեցին քննությունը, անցկացրեցին դատական լուսման և որոշում կայացրեցին փաստերը ամսվա ընթացքում: Դիմումատուները չի պնդել, որ իշխանությունները որևէ կերպ հետաձգել են այս դատավարական գործողությունները: Նման հանգամանքներում Դատարանը հիշեցնում է, որ թեև կալանավորված մեղադրյալն իրավունք ունի, որ իր գործը քննվի որպես գերակա խնդիր և իրականացվի առանձնահատուկ արագությամբ, դա չպետք է խոչընդոտի իշխանությունների ջանքերին՝ փաստերը լիարժեքորեն պարզելու, պաշտպանությունն ապահովելու համար բոլոր անհրաժեշտ միջոցներով ներկայացնելու իր ապացույցները և հայտնել իր փաստարկները, և որոշում կայացնել միայն այն բանից հետո, երբ մանրազնիս կմտածի, թե իրականում կատարվել են, արդյոք, հանցագործությունները, և ի՞նչ պատժամիջոցներ պիտի նշանակվեն (...): 

Անհրաժեշտ է նշել, որ այստեղ հնարավոր չէ հաշվի չառնել այն օբյեկտիվ հանգամանքները, որ առկա են յուրաքանչյուր գործում: Մասնավորապես՝ քրեական գործի ծավալները, արդեն իսկ ծախսված ժամանակը և այլն: Գործի ծավալների մեջ կարևոր է ուշադրության արժանացնել այն, որ նշված գործով որքան ամբաստանյալներ, տուժողներ ու վկաներ են անցնում, որքան հատորից է բաղկացած դատարան ուղարկված գործը և այլ հանգամանքներ, որոնք անմիջականորեն կապ ունեն գործի դատական քննության համար

1 Stn Case of Amirov v. Russia (Ամիրովի ընդդեմ Ռուսաստանի), 27/11/2014, 51857/13, պարագրաֆ 112:

անհրաժեշտ հնարավոր ծախսվող ժամանակի հետ:

Նշված հանգամանքները բացառապես օբյեկտիվորեն առկա իրողություններ կարող են լինել, սակայն դրանք ոչ մի պարագայում չեն կարող բացասաբար ազդել դատավարության ամենախոցելի սուբյեկտների՝ ամբաստանյալների վրա՝ անսահմանափակ ժամանակով անազատության մեջ պահելու տեսանկյունից:

Կալանավորման հիմնավորվածության մանրակրկիտ գնահատման անհրաժեշտությունը շարունակում է գոյություն ունենալ ՄԻԵԴ վճիռների կատարման փուլում: Դա պայմանավորված է նրանով, որ ԵԽ Նախարարների կոմիտեն Կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն պատասխանատու լինելով ՄԻԵԴ-ի վճիռների կատարման համար՝ յուրաքանչյուր դեպքում վերահսկում է ինչպես ընդհանուր, այնպես էլ անհատական բնույթի միջոցառումների ընդունումը<sup>1</sup>:

ՄԻԵԴ-ն արդեն իսկ ընդունել է տասնյակ վճիռներ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտման վերաբերյալ, որի դեպքում կալանքը, ըստ վճռի պահին Դատարանին հասած տեղեկատվության, եղել է «շարունակական»: Նման դեպքում Նախարարների կոմիտեի տեսանկյունից հիմնական անհատական միջոցը ազգային դատարանների կողմից դիմումատուի համապատասխան հատուկ միջնորդության պահանջով կամ քննչական մարմինների կամ դատախազի հերթական ժամկետի երկարացման վերաբերյալ միջնորդության քննության ժամանակ կալանքի հիմքերի վերանայումն է:

Կարևոր է նաև նշել, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի երաշխիքները տարածվում են կալանքի տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածի վրա:

Այսպիսով, դատավարության այս փուլում դատարանը պետք է շաղկապի անձի կալանքի տակ գտնվելու ժամանակը դատավարության ողջամիտ տևողության հետ:

***Կալանքի ժամկետը երկարացնելու հնարավորությունը գնահատելու կանոնները***

1 Համապատասխան անհատական բնույթի միջոցառումների ընդունումը ենթադրում է, որ խախտումը պետք է դադարեցվի, իսկ դիմումատուի կարգավիճակը պետք է հնարավորինս վերականգնվի այն աստիճանին մոտ, որ գոյություն է ունեցել Կոնվենցիայի խախտումից առաջ:

- Կալանավորման ժամկետի երկարացումը կամ կալանավորման պահպանումն առանց գոյություն ունեցող ռիսկի նոր գնահատման անթույլատրելի է:
- Կալանավորման ժամկետը երկարացնելիս կամ այն պահպանելիս դատարանը ամեն անգամ պետք է գնահատի, թե կան հիմքեր, որոնք արդարացնում են շարունակական ազատության էական սահմանափակումը և ելնում են ազատության կանխավարկածից:
- Դատարանը չի կարող օգտագործել իր որոշումների պատճառաբանության համար ստանդարտ ձևակերպումներ: Դրդապատճառները պետք է արտացոլեն իրավիճակի զարգացումը ժամանակի ընթացքում և պարունակեն գնահատական, թե որքանով է իրավաչափ կալանքը դատավարության վերջին փուլերում, և արդյո՞ք կալանքի այս ժամանակահատվածը խելամիտ է: Եթե դատարանը վկայակոչում է քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությունը, անհրաժեշտ է նշել, թե կոնկրետ ինչպիսի գործողություններ պետք է կատարվեն, և ինչու դրանք ավելի վաղ չեն իրականացվել:
- Դատարանը կարող է չերկարացնել մեղադրյալի կալանքի ժամկետը կամ պահպանել այն, եթե նրա մոտ ի հայտ է եկել այնպիսի հիվանդություն, որը խանգարում է նրան կալանքի տակ պահել և անհամատեղելի է պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի հետ՝ պետության պոզիտիվ պարտականությունների շրջանակներում<sup>1</sup>:
- Քննությունն ավարտելու, լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև քրեական գործի նյութերին ծանոթանալու անհրաժեշտությունը իրենք իրենցով (ինքնուրույն) չեն կարող կալանքի ժամկետը երկարացնելու հիմք հանդիսանալ:

Ձգձգումների հայտնաբերումը և կալանավորված անձանց նկատմամբ արդյունավետ քննության կազմակերպման բացակայությունը ենթադրում են այդ խափանման միջոցը երկարացնելու մերժումը:

1 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության 2-րդ գլխում:

## Գլուխ 4.

### Անվտանգության միջոց հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը որպես հարկադրանքի միջոց

Անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել խափանման միջոցներ: Իսկ եթե այդպիսին կիրառված է համապատասխան կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, ապա այն ենթակա է անհապաղ վերացման դատարանի կողմից անմեղսունակության փաստը հաստատվելուց հետո (ՔԴՕ 457-րդ հոդված):

Ազատության իրավունքի սահմանափակման համատեքստում հարկ է նաև քննարկել քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու անվտանգության միջոցի իրավակարգավորումները, որոնք ներկայացվելու են այս պարագրաֆում:

«Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝



1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (...):»



«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝



Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...),

ե) անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև **հոգեկան հիվանդներին**, գինեմոլներին կամ թմրամոլներին, կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը (...):



«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝



Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պարճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:



«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝



1. Մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով.

ա. օգտվեն անձի ազատության և անվտանգության իրավունքից,

բ. չազատագրվեն անօրինական կամ կամայական կերպով, և որ ցանկացած ազատագրվում լինի օրենքի համաձայն, ինչպես նաև՝ որ ազատագրվումը ոչ մի դեպքում չհիմնավորվի հաշմանդամությամբ:

2. Մասնակից պետություններն ապահովում են, որ եթե հաշմանդամություն ունեցող անձինք ազատագրվեն դատական որևէ գործընթացի արդյունքում, ապա նրանք այլ անձանց հետ հավասար հիմունքներով ունենան մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան փորձող երաշխիքների իրավունք, և նրանց վերաբերվեն սույն Կոնվենցիայի նպատակներին ու սկզբունքներին համաձայն՝ տրամադրելով նաև անհրաժեշտ հնարավորություններ»<sup>1</sup>:



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝



Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով»:



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի համաձայն՝



(...) 3. Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի պահման ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավել-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀԱԳԼՊՏ 2011.01.14/12(20):

լի, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ընդ որում՝ գումարվում են կալանքի տակ և բժշկական հաստատությունում անձի գտնվելու, մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվող բոլոր ժամկետները:

(...)

5. Քրեական գործով մինչդատարանական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել՝

1) 1 տարին.

2) մեղադրյալին վերագրվող հանցագործության համար քրեական օրենքով ազատազրկման նախատեսված առավելագույն ժամկետը՝ այն դեպքում, երբ նշված ժամկետը պակաս է 1 տարուց (...): >>

«Քրեական դատավարության օրենսգրքի 457-րդ հոդվածի համաձայն՝



1. Անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել խափանման միջոցներ: Դատարանի կողմից անմեղսունակության փաստը հաստատվելուց հետո կիրառվող խափանման միջոցը ենթակա է անհապաղ վերացման:

2. Այդ անձանց նկատմամբ անհրաժեշտության դեպքում կիրառվում են անվտանգության հետևյալ միջոցները.

1) հսկողության համար հիվանդին հանձնելը ազգականներին, հոգաբարձուներին, խնամակալներին՝ իրազեկելով առողջապահության մարմիններին.

2) հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը: >>

«Քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածի համաձայն՝



1. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած եւ հասարակության համար վրանգ ներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է տեղավորվել և բուժվել հոգեբուժական հաստատությունում:

2. Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը և բուժելը թույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը»:



«Հոգեբուժական օգնության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ հարկադիր հսկողություն կամ բուժումը բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանի որոշման հիման վրա առանց անձի համաձայնության նրան հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման կամ հիվանդանոցային (ընդհանուր հսկողության հոգեբուժական կամ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում) բուժման ենթարկելն է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝




3. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողության և բուժման նպատակով հոգեբուժական կազմակերպություն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի այցերի հաճախականությունը սահմանում է բժիշկ-հոգեբույժը՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակին համապատասխան, ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

4. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողություն կամ բուժում կամ հիվանդանոցային բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժը առնվազն վեց ամիսը մեկ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական հաստատության հոգեբուժական հանձնաժողով՝ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկա-



դրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու, կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով: Հոգեբուժական հանձնաժողովը մասնագիտական կարծիքն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, քննում և փախի է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու, կամ դադարեցնելու մասին եզրակացություն:

5. Հոգեբուժական հանձնաժողովի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխվելու կամ դադարեցվելու մասին եզրակացություն փոխվելու դեպքում փոխադրված հոգեբուժական հաստատության գործադիր մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում, կցելով հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունը, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխելու կամ դադարեցնելու մասին միջնորդություն է ներկայացնում դատարան:(...)

7. Սույն օրենքով սահմանված դրույթները այնքանով, որքանով կիրառելի են, տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածով սահմանված՝ որպես անվտանգության միջոց անձին հոգեբուժական հաստատությունում տեղավորելու դեպքերի վրա՝ 


## Նախագծի 138-րդ հոդվածի համաձայն՝



1. Անվտանգության միջոցներն են.

1) ընտանեկան հսկողությունը,

**2) բժշկական հսկողությունը:**

2. Անվտանգության միջոցը կարող է կիրառվել մեղադրյալի, ինչպես նաև այն անձի նկատմամբ, նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ: 

1 Տես ՀՀ ՊՏ 2004.06.30/34(333):

## Նախագծի 140-րդ հոդվածի համաձայն՝



1. Բժշկական հսկողությունը հանրության համար վրանգ ներկայացնող անձին **հոգեբուժական հաստատությունում պահելն է՝** հիվանդանոցային հսկողություն կամ բուժում ապահովելու նպատակով:

2. Բժշկական հսկողությունը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պարճառաբանված հաստատվել է անվտանգության այդ միջոցի կիրառման անհրաժեշտությունը: Դատական վարույթում բավարար է դատարանի կողմից բժշկական հսկողության կիրառման անհրաժեշտության պարճառաբանված հաստատումը:

3. **Բժշկական հսկողության նկատմամբ վերաբերելի մասով (mutatis mutandis) կիրառվում են կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման համար սույն օրենսգրքով սահմանված կանոնները:**



ՄԻԵԴ-ը Վինտերվերպերն ընդդեմ Նիդերլանդների (Winterwerp v. The Netherlands) գործով նշել է, որ.



38. Կոնվենցիան չի տալիս «հոգեկան հիվանդ» անձանց որևէ մեկնաբանություն, և Նիդերլանդների օրենսդրության մեջ չկա «հոգեկան խանգարումներով անձանց» հասկացության սահմանում. (...) անհրաժեշտ է բժշկական եզրակացություն առ այն, որ տվյալ անձը «գտնվում է հոգեկան խանգարման վիճակում, և որ անհրաժեշտ է կամ ցանկալի բուժել նրան հոգեբուժարանում» (...) եթե դատավորը հիվանդության փաստը համարում է հաստատված, ապա որոշում է կայացնում տվյալ անձին հիվանդանոցում նախնական կարգով տեղավորելու մասին (...): Նույն կարգով համապատասխան դիմումի հիման վրա հիվանդանո-

ցում անձի հեքազա գտնվելու մասին որոշումն ընդունում է շրջանային դատարանը՝ պատասխանատու այն բժշկի եզրակացության հիման վրա, որ հիվանդը հեքազա բուժման կարիք ունի (...):

40. (...) «Հոգեկան հիվանդին» մեկուսացման մեջ պահելու հարցի լուծման ժամանակ անհրաժեշտ է, որ ճանաչվեն ներպետական մարմինների որոշակի իրավասություններ, քանի որ նախ և առաջ նրանք պետք է գնահատեն ապացույցները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Դատարանի խնդիրն է այդ մարմինների որոշումների հեքազությունը Կոնվենցիայի լույսի ներքո (...):

41. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի գործին, ապա դատարաններում ներկայացված բժշկական եզրակացությունները մատնանշում էին դիմողի մոտ մտաբարության և խելացնորության հակազդեցությունների առկայությունը: Նա չէր գիտակցում իր աննորմալ վիճակը և շատ դեպքերում կատարում էր բավականին լուրջ գործողություններ՝ չգնահատելով դրանց հեքանանքները (...):

45. (...) [Ց]անկացած միջոց, որը զրկում է անձին ազատությունից, պետք է բխի համապատասխան մարմնից, իրականացվի նրա կողմից և չլինի կամայական:

55. (...) «Այն դեպքերում, երբ որևէ անձի ազատությունից զրկելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից, 5-րդ հոդվածի 4-րդ կետը Պայմանավորվող կողմերին պարտավորեցնում է անձին տրամադրել դատարանի հիմնելու իրավունք:

Սակայն դա չի նշանակում, որ միևնույն սկզբունքը գործում է, երբ գործն արդեն իսկ լուծված է դատարանի կողմից: Վերջին դեպքում 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հսկողությունը ներառված է այդ որոշման մեջ»:

Հիմնվելով իր իսկ պրակտիկայի վրա՝ Հանձնաժողովն այն կարծիքն է հայտնում, որ նման տեսքով Դատարանի այդ հեքանությունը չի կարող գործել «հոգեկան խանգարումների» հեք կապված անձանց ազատությունից զրկելու

մասին գործերում, համենայն դեպս, եթե դա իրականացվում է անորոշ ժամկետով:

Պատճառները, որոնք սկզբում արդարացնում էին հարկադրաբար պահելը, կարող են վերանալ (...): Հերևաբար, 5-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությունն այնպես, ըստ որի՝ այդ դրույթը բացառում է այդպիսի պահման օրինականությունն ստուգելու հնարավորությունը միայն այն հիմքով, որ սկզբնական որոշմամբ ընդունվել է դատարանի կողմից, կհակասեր 5-րդ հոդվածի նպատակներին: Ազատությունից զրկելու տեսակի բնույթը պահանջում է վերահսկողություն խելամիտ պարբերականությամբ:

60. (...) Կարևոր է, որպեսզի շահագրգիռ անձն ունենա դատարանի մատչելիության իրավունք և անձամբ կամ անհրաժեշտության դեպքում ներկայացուցչության որևէ ձևով իրեն լսելի դարձնելու հնարավորություն՝ առանց որի նա զրկված չլինի «հիմնական դատավարական երաշխիքներից, որոնք գործում են ազատությունից զրկելու հետ կապված գործերում» (...):



ՄԻԵԴ-ը իլնստերն ընդդեմ Գերմանիայի (Inseher v. Germany) գործով նշել է, որ՝



127. (...) Մարդը չի կարող զրկվել ազատությունից որպես հոգեկան հիվանդ, եթե պահպանված չեն հետևյալ երեք նվազագույն պայմանները. Նախ՝ պետք է ապացուցված լինի, որ անձը հոգեկան հիվանդ է, այսինքն՝ իրավասու մարմնի կողմից օբյեկտիվ բժշկական եզրակացության հիման վրա պետք է հաստատված լինի անձի հոգեկան խանգարման հանգամանքը, երկրորդ՝ հոգեկան խանգարումը պետք է լինի այնպիսի բնույթի կամ ծանրության աստիճանի, որի համար կպահանջվի անձին հարկադիր

1 Sten Case of Winterwerp v. The Netherlands (Վինտերվերպն ընդդեմ Նիդերլանդների), 24/10/1979, 6301/73:

*արգելանքի փակ պահել, երրորդ՝ արգելանքի փակ պահելու շարունակականության իրավաչափությունը կախված է հոգեկան խանգարման կայունությունից (փես Եվրոպական դատարանի Վինտերվերպեն ընդդեմ Նիդերլանդների գործով վճիռը, 39 §, Եվրոպական դատարանի մեծ պալատի Սրանեն ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռը, 145 §, ինչպես նաև Եվրոպական դատարանի Բերգմանն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, § 96):*

*234. (...) Պրևենտիվ կալանքը նույնպես չուներ նվազագույն փոփոխություն: Դիմումատուին արգելանքից ազատումը մինչ որոշակի ժամկետի լրանալը չէր բացառվում, բայց կախված էր նրանից, երբ դատարանները կեզրակացնեն, որ դիմումատուի կողմից այլևս մեծ ռիսկ չկա (...) նրա հոգեկան խանգարման հետևանքով:*

*235. (...) Նրա ազատությունից զրկումը ենթակա էր շարունակման դատական վերանայման համեմատաբար կարճ ժամկետներում (...) (փես վերևում 64-րդ կետը): Այն մեծացնում էր հավանականությունը, որ փվյալ միջոցը շարունակվի չէր փակի: >>*

Անձի ազատության սահմանափակման կամ զրկման վերաբերյալ փաստարկների շրջանակներում առանցքային նշանակություն ունի նաև որպես անվտանգության միջոց հոգեբուժական հաստատությունում տեղավորելու և որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու հարցերի հարաբերակցությունը, քանի որ երկու դեպքն էլ անմիջականորեն առնչվում են անձի ազատության սահմանափակմանը կամ դրանից զրկմանը, սակայն մի դեպքում այն ենթարկված է ժամկետային սահմանափակման, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ, ինչն ինքնին խնդրահարույց է անձի կողմից իր ազատության սահմանափակման կամ դրանից զրկման հնարավոր ժամկետները կանխատեսելու տեսանկյունից:

Մասնավորապես՝ կալանավորումը, որպես խափանման միջոց, կա-

1 Stin Case of Ilmseher v. Germany (Իլնսեհերն ընդդեմ Գերմանիայի), 04/12/2018, 10211/12 27505/14:

րող է կիրառվել բացառապես մեղադրյալի, իսկ որպես անվտանգության միջոց, հոգեբուժական հաստատությունում տեղավորելը՝ անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ, իսկ վերջիններս քրեական դատավարության շրջանակներում օգտվում են նաև մեղադրյալին բնորոշ իրավունքների և պարտականությունների ողջ շրջանակից: Այսպես, ՀՀ ՔԴՕ 456-րդ հոդվածի համաձայն՝

«Անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից: Նա իրավունք ունի, կախված հիվանդության աստիճանից և բնույթից, իմանալ հանրորեն վրանգավոր որ արարքի կատարումն է նրան մեղսագրվում, ունենալ պաշտպան, փալ բացադրություններ, ներկայացնել ապացույցներ, քննիչի թույլտվությամբ մասնակցել քննչական գործողություններին, ծանոթանալ քննչական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է, և դիտողություններ անել արձանագրություններում գրառումների լրիվության և հավաստիության վերաբերյալ, հարուցել միջնորդություններ և բացարկներ, գործով վարույթն ավարտվելուց հետո ծանոթանալ գործի բոլոր նյութերին և ցանկացած գրառումներ անել՝ առանց դրանց ծավալի սահմանափակման, սրանալ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործը դադարան ուղարկելու մասին որոշման պարզենը, մասնակցել դատական քննությանը, ապացույցների հետազոտմանը, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և դիտողություններ անել»:

Այսինքն՝ այս հարցի կապակցությամբ պետք է փաստել, որ թեև քրեական պատասխանատվության ենթակա լինելու տեսանկյունից վերոնշյալ սուբյեկտներն էականորեն տարբերվում են (անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք

կատարած անձը հանցագործության սուբյեկտ չէ և ենթակա չէ քրեական պատասխանատվության), սակայն քրեադատավարական առումով անվտանգության և խափանման միջոց կիրառելու հարցում որոշակիորեն նույնանում են, որոնց մասին առավել մանրամասն կներկայացվի հաջորդիվ:

Անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ որպես անվտանգության միջոց հոգեբուժական հաստատությունում տեղավորելը կիրառելու համար անհրաժեշտ է, որ նա քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած լինի և հասարակության համար վտանգ ներկայացնի<sup>1</sup>: Տվյալ դեպքում, իհարկե, խոսքը բոլորովին չի վերաբերում դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած լինելը հաստատված համարվելուն, այլ՝ երբ առկա է նրա առնչությունը ենթադրյալ հանցանքին (ըստ էության՝ նույն ձևաչափում, ինչ հիմնավոր կասկածի առկայությունը կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս):

Այսինքն՝ ընդհանուր առմամբ, ինչպես կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ որպես անվտանգության միջոց հոգեբուժական հաստատությունում տեղավորելը կիրառելու գործընթացները նեղ առումով ծագում են առաջին հերթին հանցագործություն (քրեական օրենսգրքով չթույլատրված արարք) ենթադրաբար կատարելուն առնչություն ունենալու հանգամանքի հաստատմամբ, այսինքն՝ երկու միջոցներն էլ կիրառելի են միայն այն դեպքում, երբ առկա է հիմնավոր ենթադրություն առ այն, որ անձը կատարել է հանցանք կամ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք<sup>2</sup>:

Միաժամանակ, կարևոր է նաև ընդգծել, որ դատական վերահսկողության շրջանակներում պետք է նաև ստուգման ենթարկել հոգեկան հիվանդությամբ տառապելու վերաբերյալ հիմնավոր կասկածը՝ հաշվի առնելով հենց այն հանգամանքը, որ անձը չի կարող

1 Տե՛ս Ա.Վարդանյան, Անվտանգության միջոցների կիրառման իրավական երաշխիքները, Արդարադատություն 1(50), Երևան, 2020, էջ 6-12:

2 Տե՛ս Ա.Վարդանյան, Անվտանգության միջոցների կիրառման իրավական երաշխիքները, Արդարադատություն 1(50), Երևան, 2020, էջ 6-12:

տեղավորվել հոգեբուժական հիվանդանոցում՝ առանց գոնե «հիմնավոր կասկածի» աստիճանի շրջանակներում հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքի հաստատման:

Պետք է նշել, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձի հոգեկան հիվանդությամբ տառապելու հանգամանքն հաստատող փաստական տվյալ պրակտիկայում հիմնականում հանդիսանում է համապատասխան ոլորտի մասնագետների կողմից ի պատասխան վարույթն իրականացնող մարմնի կողմից տրված փորձագիտական եզրակացությունը:

Անվիճելի է, որ անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ իրականացվող վարույթը, ի տարբերություն սովորական վարույթի, օժտված է մի շարք հիմնարար առանձնահատկություններով, սակայն ինքնին այդ առանձնահատկությունները որևէ կերպ չեն նվազեցնում անձի ազատության իրավունքի սահմանափակման կամ զրկման և դրա կանխատեսելիության երաշխիքների ծավալը՝ հաշվի առնելով, որ երկու դեպքում էլ անձի ազատությունը սահմանափակվում է՝ կապված նրա կողմից հանցագործություն (քրեական օրենսգրքով չթույլատրված արարք) կատարելու հետ՝ անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու:

Որպես խափանման միջոց կալանավորման և որպես անվտանգության միջոց հոգեբուժական հաստատությունում տեղավորելու առանցքային տարբերությունն ըստ էության՝ դրանց կողմից հետապնդվող նպատակներն են, քանի որ խափանման միջոցները կիրառվում են հոգեպես առողջ, իսկ անվտանգության միջոցները՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ, և անվտանգության միջոցների կիրառումը պարունակում է պարտադիր բժշկական բաղադրիչ<sup>1</sup>:

Մասնավորապես՝ եթե խափանման միջոցի կիրառման նպատակը մեղադրյալի՝ քրեական գործի քննության ընթացքում դրսևորվող պատշաճ վարքագիծն ապահովելն է, ապա անվտանգության միջոց կիրառելու առաջնային նպատակն անմեղսունակության վի-

1 Տե՛ս այս մասին նաև Ա.Վարդանյան, Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման Տեսական և գործնական հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում, իրավ. գիտ. թեկ. ատենախոսություն, Երևան, 2020, էջ 98:



ճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձին անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելը (բուժում, ռեաբիլիտացիա), նրա կողմից հասարակությանը սպառնացող վտանգը չեզոքացնելն է:

Միևնույն ժամանակ պետք է ընդգծել է, որ ինչպես խափանման, այնպես էլ անվտանգության միջոցի հիմքերն ու պայմանները ոչ թե ստատիկ, այլ դինամիկ կատեգորիաներ են և ենթակա են ժամանակի ընթացքում փոփոխման, ուստի անվտանգության միջոցի պայմանների շարունակական առկայությունը ևս անհրաժեշտ է ենթարկել հսկողության որոշակի ժամանակահատվածներում՝ հաշվի առնելով դրա շարունակական նպատակահարմարությունը, մինչդեռ առկա պրակտիկայում անձի նկատմամբ անվտանգության միջոցը կարող է կիրառվել անժամկետ, ինչն ընդունելի համարվել չի կարող:

Զնայած որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված չեն ժամկետներ անվտանգության միջոցի համար, պետք է այն սահմանափակվի որոշակի ժամանակահատվածով, որպեսզի չստացվի այնպես, որ անվտանգության միջոցը մինչև վերջնական դատական ակտի կայացումն ընդհանրապես ենթակա չէ վերացման կամ փոփոխման, անկախ այն հանգամանքից, թե անձն ինչ առողջական վիճակ ունի տվյալ ժամանակահատվածում և արդյո՞ք նա շարունակում է հասարակական վտանգավորություն ներկայացնել, թե՞ ոչ:

Այսպիսով, պետք է նշել, որ անվիճելի է որպես անվտանգության միջոց հոգեբուժական հաստատությունում տեղավորելու և որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու հարցերի սերտ կապը, սակայն օրենքում առերևույթ առկա է տարբերակված մոտեցում. ընդ որում՝ արտահայտված քրեական և քրեադատավարական օրենսդրության տեսանկյունից համեմատաբար բարենպաստ վիճակում գտնվող անձի նկատմամբ առավել բացարձակ ու խիստ մեխանիզմի սահմանմամբ:

Միաժամանակ, անձի նկատմամբ կիրառված անվտանգության միջոցի շարունակական անհրաժեշտության հարցի լուծումը պետք է իրականացվի հենց կալանավորման կիրառման կանոնները հոգեբուժական հաստատությունում տեղավորելու անվտանգության

միջոցի նկատմամբ կիրառելու կարգավորման միջոցով, երբ ապահովված կլինի անվտանգության միջոցի պարբերական վերանայումն առավելագույնը յուրաքանչյուր 2 ամիսը մեկ անգամ, որպեսզի ազատությունից զրկված անձն իրավունք ունենա ոչ միայն կանխատեսելու իր ազատության սահմանափակման տևողությունը, այլև պարբերաբար վիճարկելու իրեն ազատությունից զրկելու օրինականությունը<sup>1</sup>:

Ասվածի շրջանակներում անհրաժեշտ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անձի «լտանգավորության» հիմքով անժամկետ, առանց ազատազրկման օրինականության պարբերական դատական ստուգման անձին անազատության մեջ պահելն անհամատեղելի է համարում Եվրոպական կոնվենցիայի պահանջների հետ<sup>2</sup>:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը թերություններ է արձանագրել անձի շարունակական անազատության մեջ գտնվելու անհրաժեշտությունը գնահատելու գործընթացում և նշել, որ անձը թեև գտնվել է հոգեբույժի հսկողության ներքո, սակայն դրա նպատակը անձի՝ հոգեբուժական հիմնարկում գտնվելու առկայությունը կանոնավոր գնահատելը չի եղել: Արդյունքում արձանագրվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում<sup>3</sup>: Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ ելնելով անձի ազատությունից զրկվելու պայմաններից, դիմումատուի առողջական վիճակի վրա բացասաբար ազդող ազատազրկման վայրի գերբեռնվածությունից՝ զուգորդված ազատությունից զրկելու ժամկետի և նվաստացնող բուժումներ ստանալու հետ<sup>4</sup>: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկ այլ

1 Տե՛ս այս մասին նաև Ա.Վարդանյան, Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման Տեսական և գործնական հիմնահարցերը << քրեական դատավարությունում, իրավ. գիտ. թեկ. ատենախոսություն, Երևան, 2020, էջ 112-113:

2 Տե՛ս, Case of M. v. Germany (Մ-ն ընդդեմ Գերմանիայի), 17/12/2009, 19359/04; Storck v. Germany (Ստորկն ընդդեմ Գերմանիայի), 16/06/2005, 61603/00, O.H. v. Germany (Օ.Հ-ն ընդդեմ Գերմանիայի), 24/11/2011, 4646/08, Kronfeldner v. Germany (Կրոնֆելդներն ընդդեմ Գերմանիայի), 19/01/2012, 21906/09:

3 Տե՛ս, Case of Mihailovs v. Latvia (Միհաիլովսն ընդդեմ Լատվիայի), 22/01/2013, 35939/10:

4 Տե՛ս, Case of Romanov v. Russia (Ռոմանովսն ընդդեմ Ռուսաստանի), 20/10/2005,

գործով նշել է, որ անձի տեղափոխելու հետ կապված նախնական ազատագրկումը նախատեսված չի եղել որևէ օրենսդրական կամ այլ կարգավորումներով, այնուամենայնիվ, այն պետք է որոշակիացնի, թե արդյոք նախնական ազատագրկման այդքան երկարաժամկետ շարունակականությունը դրա նպատակի համատեքստում կարող է դիտարկվել որպես օրինական<sup>1</sup>: Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ՝

«*Պատճառները, որոնք սկզբում արդարացնում էին հարկադրաբար պահելը, կարող են վերանայլ (...): Հետվաթար, 5-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությունն այնպես, ըստ որի՝ այդ դրույթը բացառում է այդպիսի պահման օրինականությունն ստուգելու հնարավորությունը միայն այն հիմքով, որ սկզբնական որոշմամբ ընդունվել է դատարանի կողմից, կհակասեր 5-րդ հոդվածի նպատակներին: Ազատությունից զրկելու տեսակի բնույթը պահանջում է վերահսկողություն խելամիտ պարբերականությամբ<sup>2</sup>:*»

Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկվող հարցով խախտում չէր արձանագրել ըստ էության՝ նաև այն պատճառով, որ՝

«*(...) դիմումատուի ազատությունից զրկումը ենթակա էր շարունակման դատական վերանայման համեմատաբար կարճ ժամկետներում<sup>3</sup>:*»

63993/00:

- 1 Stn Case of Aerts v. Belgium (Աերտսն ընդդեմ Բելգիայի), 30/07/1998, 61/1997/845/1051:
- 2 Stn Case of Winterwerp v. The Netherlands (Վինտերվերպն ընդդեմ Նիդերլանդների), 24/10/1978, 6301/73:
- 3 Stn Case of Ilseher v. Germany (Իլնսեհերն ընդդեմ Գերմանիայի), 04/12/2018, 10211/12 և 27505/14:

Պետք է նշել է, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը ևս իր 2019 թվականի «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի իրավական չափանիշներ» հրապարակման մեջ նշել է, որ՝

« 5.2.2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու ձևով անվտանգության միջոցի պարբերական դատական վերանայման մեխանիզմ»<sup>1</sup>: »

Միննույն ժամանակ, առանց ժամկետային սահմանափակման անձին բժշկական հաստատությունում տեղավորելու խնդրին անդրադարձել է նաև ՌԴ սահմանադրական դատարանը՝ 2018 թվականի մայիսի 24-ի թիվ 20-Ո որոշմամբ և փաստել, որ՝

« (...) անձի՝ բժշկական հաստատությունում գտնվելու ժամանակահատվածը չի կարող լինել անորոշ, դատարանները պետք է նշեն այն ժամանակահատվածը, որի ընթացքում անձը պետք է ստացիոնար ձևով գտնվի բժշկական հաստատությունում՝ ըստ անհրաժեշտության երկարացնելով այն կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու քրեադատավարական կանոնների կիրառմամբ»<sup>2</sup>: »

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է հանգել հետևության, որ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի ազատության սահմանափակման կապակցությամբ որևէ ժամկետ չսահմանելով՝ փաստացի այդ ազատությունը կարող է ենթարկել անժամկետ սահմանափակման:

1 Տե՛ս «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի իրավական չափանիշներ», 2019թ. էջ. 72:

2 Տե՛ս ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 435-րդ հոդվածի վերաբերյալ ՌԴ սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի մայիսի 24-ի թիվ 20-Ո որոշման եզրափակիչ մասի 1-ին կետը:

Արդյունքում առավել հիմնավորված կլինի քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ որպես անվտանգության միջոց հոգեբուժական հաստատությունում տեղավորելու վերաբերյալ քննիչի որոշումը հաստատելիս (միջնորդությունը բավարարելիս) սահմանել առավելագույնը 2 ամիս ժամկետ՝ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ որպես անվտանգության միջոց՝ հոգեբուժական հաստատությունում տեղավորելու ժամկետի սկիզբը հաշվելով նրան այդ նպատակով փաստացի արգելանքի տակ վերցնելու օրվանից:

## Գլուխ 5

### Դատական նիստի անցկացման առանձնահատկությունները կալանավորման հարցի քննության ժամանակ

Դատական նիստի անցկացման կազմակերպատարական առանձնահատկություններն ամենից առաջ պայմանավորված են քննության առարկայով: Ի տարբերություն քրեական գործի քննության՝ կալանավորման և դրա ժամկետների երկարացման միջնորդությունների քննության ժամանակ դատարանը հանդես չի գալիս որպես վարույթն իրականացնող մարմին, այլ քննության է ենթարկում խափանման միջոցի կիրառման հարցը դատական վերահսկողության գործառույթի շրջանակներում: Կալանավորման հարցին դատարանն անդրադառնում է նաև քրեական գործը վարույթ ընդունելուց հետո՝ դատական քննության նախապատրաստման և դատաքննության փուլերում ևս՝ կալանքն անփոփոխ թողնելու կամ այն վերացնելու, փոփոխելու հետ կապված քննության ժամանակ:

Այսպիսով, դատական նիստեր անցկացվում են.

1. կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդության քննության համար,
2. կալանավորման ժամկետի երկարացման մասին միջնորդության քննության համար,
2. դատական քննության նախապատրաստման փուլում արդեն իսկ ընտրված կալանավորման խափանման միջոցի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննության համար,
3. դատական քննության փուլում կալանքն ընտրելու, փոփոխելու, վերացնելու միջնորդությունների քննության համար,
4. որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման քննության համար:

Նշված բոլոր նիստերն էլ ունեն ընդհանրություններ, բայց և ունեն իրենց բնորոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված քննության առարկայի, մասնակիցների իրավունքների և պարտականությունների ծավալով:

Ըստ էության՝ դատական նիստի կարգին վերաբերող իրավական կարգավորումները վերաբերում են նաև այս միջնորդությունների քննության կարգին: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 314-րդ հոդվածի համաձայն՝



1. Դատավորների՝ դատական նիստի դահլիճ մտնելու պահին դատական նիստի քարտուղարը հայտարարում է. «Դատարանը գալիս է»: Դատական նիստի դահլիճում բոլոր ներկա գտնվողները ոտքի են կանգնում:

2. Դատական քննության բոլոր մասնակիցները դատարանին դիմում են «Հարգելի դատարան» արտահայտությամբ, որից հետո ոտքի կանգնած՝ անում են անհրաժեշտ հայտարարություններ, հարուցում են միջնորդություններ, բացարկներ: Դատարանին դիմելու կանոններից շեղում թույլատրվում է նախագահողի թույլտվությամբ:

3. Նախագահողի կարգադրությունները պարտադիր են դատական քննությանը մասնակցող կամ դատական նիստին ներկա գտնվող յուրաքանչյուր անձի համար:

4. Տասնվեց տարեկանից փոքր անձանց դատական նիստի դահլիճ մտնել չի թույլատրվում, եթե նրանք կողմ կամ վկա չեն:



**Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և դրա ժամկետի երկարացման մասին միջնորդությունների քննության ժամանակ** դատական նիստը նախագահողը միջնորդությունը քննելու համար նշանակված ժամին բացում է դատական նիստը և հայտարարում, թե որ միջնորդությունն է ենթակա դռնփակ՝ դատական նիստում

1 Նախագծի 287-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննության դատական նիստը դռնբաց է, եթե վարույթ հարուցելու մասին

քննության, որից հետո դատական նիստի քարտուղարից ճշտելով դատավարության մասնակիցների ներկայության հարցը՝ հայտարարում է նիստը նախագահողի վերաբերյալ, ներկայացնում ինքնաբացարկի հիմքերը և ճշտում դատավարության մասնակիցներից նման միջնորդության առկայության կամ բացակայության մասին: Այնուհետև պարզաբանում է նիստի քարտուղարին բացարկ հայտնելու հիմքերի մասին և ճշտում բացարկի միջնորդության առկայության կամ բացակայության մասին, այդ թվում՝ նաև նիստի քարտուղարի կողմից հնարավոր ինքնաբացարկի մասին: Այստեղ կարևոր է շեշտել, որ պաշտպանի կամ մեղադրյալի կողմից քննիչին կամ միջնորդության քննությանը մասնակցող դատախազին բացարկ չի կարող հայտնվել, քանի որ կալանավորման և դրա ժամկետի երկարացման միջնորդությունները քննվում են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթի շրջանակներում և դատարանը (նիստը նախագահողը) չի հանդիսանում վարույթն իրականացնող մարմին և իրավասու չէ ոչ քննիչի (և/կամ դատախազի) բացարկի, և ոչ էլ պաշտպանի վարույթից հեռացնելու կամ նույնիսկ ներգրավելու հարցերը լուծել:

Պետք է նշել, որ այն դեպքերում, երբ որպես պաշտպան է ցանկանում հանդես գալ համապատասխան որակավորում ունեցող փաստաբանը, նիստը նախագահողը կարող է ընդմիջել դատական նիստը՝ հնարավորություն տալով վարույթն իրականացնող մարմնին պաշտպան ներգրավելու դատավարական գործողությունները կատարելու համար: Այնուամենայնիվ, առանձին բացառիկ դեպքե-

---

դատարանի որոշման մեջ դատարանը չի որոշել անցկացնել դռնփակ նիստ: Ամեն դեպքում, դատարանը կարող է սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ դատական նիստից առաջ կամ դրա ընթացքում հիմնավորված փոխել դատական նիստի հրապարակայնության մասին որոշումը»: Այսինքն, կանոնը դռնբաց դատական նիստ անցկացնելն է, որից բացառություններ արդեն կարող են արվել դատարանի կողմից համապատասխան միջնորդությունների հիման վրա: Նման իրավակարգավորումը կարող է ունենալ ոչ միայն դրական՝ հրապարակայնության միջոցով հասարակական հսկողության սահմանման առումով, այլ նաև բացասական ազդեցություն կալանքների միջնորդությունների քննության և որոշումների կայացման համար: Այն կարող է դրսևորվել քննության առաջնային փուլում ավելորդ հուզականության, մասնագիտական հարցերը երկրորդելու վտանգավոր երևույթների շատացմամբ՝ հաշվի առնելով հենց այն հանգամանքը, որ տվյալ փուլում գնահատվում է անձի հնարավոր առնչությունը ենթադրյալ հանցավոր արարքին, և այն շատ ավելի ցածր աստիճանի ապացուցվածության աստիճան ունի, քան անձի անմեղության կանխավարկածի հաղթահարումը:



րում՝ հաշվի առնելով պաշտպանական իրավունքի առանձնահատկությունը և կարևորությունը, ինչպես նաև սեղմ ժամկետում ազատության իրավունքի սահմանափակման ստուգման անհրաժեշտությունը՝ նիստը նախագահողը կարող է տվյալ միջնորդության քննության ժամանակ և տվյալ միջնորդության քննության համար ներգրավել պաշտպանին (օրինակ՝ պայմանավորված դատավարական փուլով, դատական ակտը կայացնող, դատական ակտը վերանայող ատյանով և դատական նիստին ներկա գտնվող դատավարության մասնակիցների կազմով):

Այստեղ պետք է նաև նշել, որ մեղադրյալի՝ դատավարության լեզվին՝ հայերենին, չտիրապետելու դեպքում թարգմանչին ապահովում է վարույթն իրականացնող մարմինը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթադրաբար արդեն իսկ ներգրավված պետք է լինի թարգմանիչ՝ դատավարական և քննչական համապատասխան գործողություններ կատարելու համար:

Խափանման միջոցների կիրառման և ազատության կանխավարկածի իրագործման վերաբերյալ անհատականացված որոշումների ընդունումը հնարավոր չէ առանց մրցակցային դատական ընթացակարգի, որը նախատեսում է հավասար դիրքերում գտնվող կողմերի փաստարկների անաչառ և արդար քննության երաշխիքներ<sup>1</sup>: Համապատասխան պահանջները բխում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերից և արտացոլված են ՔԴՕ դրույթներում: Մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ

1 Sten Gurin D. B. Совершенствование уголовно-процессуального законодательства и правоприменительной практики в свете постановлений Европейского Суда, касающихся соблюдения ст. 5 Конвенции: достижения и перспективы // Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Ռուսաստանի տարեգիրք, 2019. № 1. էջ 274:

արձակուրդ կարող է պայմանավորվել դատաքննության ներկայա-  
նալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման  
պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու  
իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դա-  
տարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան  
ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

ՀՀ ՔԴՕ 285 -րդ հոդվածի համաձայն՝



1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ  
կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրա-  
ժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնոր-  
դություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ  
տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը  
երկարացնելու մասին: (...):

(...):

5. Քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է  
կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խա-  
փանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկե-  
տը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին:  
Որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրու-  
թյամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման  
միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը  
երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին,  
մեղադրյալին, պաշտպանին և տուժողին, իսկ դատական  
նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պատշաճ  
ձևով ուղարկում է նրանց: Որոշումը ենթակա է անհապաղ  
կատարման: >>

Նախագիծը ևս սահմանում է հավասարության և մրցակցային դա-  
տավարության պահանջներ: Մասնավորապես, 287-րդ հոդվածի  
համաձայն՝



1. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ անցկացվում են դատախոսներ՝ կողմերի **հավասարության և մրցակցության հիման վրա**, քննիչի և մեղադրյալի պարտադիր մասնակցությամբ: Մեղադրյալի ներկայության ապահովման պարտականությունը կրում է միջնորդությունը հարուցած պաշտոնավար անձը:



Մեղադրյալի և կասկածյալի իրավունքների դատավարական երաշխիքների հիմքում, խափանման միջոցն ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու հարցի լուծման հետ կապված, ընկած է ազատությունից զրկելու հարցի դատական վերանայման նախաձեռնման հիմնարար հնարավորությունը: Մեղադրյալի կամ կասկածյալի կողմից խափանման միջոցը վերացնելու կամ փոփոխելու մասին միջնորդությունները ենթակա են պարտադիր քննության: Մասնավորապես, Բեդնովն ընդդեմ Ռուսաստանի (Bednov v. Russia) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ՝



29. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավունք է տալիս ունենալու «**օրինականության**» **համար անհրաժեշտ** նրանց ազատությունից զրկելու դատավարական և էական պայմանների **վերանայման իրավունք** կոնվենցիայի իմաստով, (տես Բրոգանը և ուրիշներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Brogan and Others v. the United Kingdom), 1988 թվականի նոյեմբերի 29-ի վճիռ, § 65): Ձերբակալված կամ կալանավորված անձանց պահելու իրավունքը երաշխավորելով նրանց կալանքի օրինականությունը վիճարկելու համար՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետը նաև ամրագրում է նրանց արագ դատական վերանայման իրավունքը՝ կապված կալանքի օրինականության հետ և կարգավորում է դրա վերացումը, եթե ապացուցված է դրա ապօրինի լինելը (տես Ռոխլինա v. Ռուսաստան (Rokhlina v. Russia), թիվ 54071/00, 74 §, 7 ապրիլի, 2005 թ.):

30. Անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Դատարանը նշում է, որ իր նախնական կալանքի ընթացքում, 2001 թ. հուլիսի 25-ից հոկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում, դիմումատու Վեց բողոք է ներկայացրել իր կալանքի անօրինականության և ազատ արձակելու մասին: Նրանցից ոչ մեկը չի քննվել փեդական դատարանում:

(...)

32. Դատարանն այնուհետև նշում է կառավարության այն պնդումը, որ դիմումատու իր բողոքներն ուղարկել է Ժելեսնոդորոժնիի շրջանի դատարան և Լիսկինսկի շրջանի դատարան, և երկուսն էլ չունեն դրանք քննելու իրավասություն: Դատարանը, սակայն, նկատում է, որ դիմումատու իր առաջին բողոքը ուղարկել է Լիսկինսկի շրջանի դատարան, իսկ ազատելու համար մնացած բողոքներն ու դիմումները՝ Վորոնեժի շրջանային դատարան: Դրանից հետո նրա բողոքներն ու դիմումները մի քանի անգամ փեդափոխվել են մեկ դատարանից մյուսը: Հերևաբար, հենց փեդական դատարաններն էին, որ չկարողացան հաստատել, թե որ դատարանն էր իրավասու վերանայել դիմումատուի նախնական կալանքի օրինականությունը:

33. Վերջապես, կառավարությունը պնդում էր, որ Լիսկինսկի շրջանի դատարանը չի քննել այդ բողոքներն ու դիմումները, քանի որ 2001 թվականի հոկտեմբերի 30-ին դիմումատու դատապարտվել էր: Դատարանը նախևառաջ նկատում է, որ այդ փաստարկը հակասում է նախորդին, քանի որ կառավարության կողմից առաջարկված բացարրությունը դիմումատուի բողոքները չներկայացնելու վերաբերյալ ենթադրում է, որ Լիսկինսկի շրջանի դատարանը իրավասություն ուներ քննել դրանք: Ավելին, Դատարանը գտնում է, որ այն փաստը, որ դիմումատու ի վերջո մեղավոր է ճանաչվել հանցագործության համար, և նրա նախնական կալանքի ժամկետը հաշվարկվել է նրա պարօժի ժամկետի նկատմամբ, սկզբունքորեն չի կարող հիմնավորել բողոքները չքննելը ...: Հեղուում է, որ դիմումատուին

մերժվել է դատական վերանայման իրավունքը՝ կապված իր նախնական կալանքի օրինականության հետ:

34. Հեյրաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը՝



Քրեական դատավարության մասին օրենքը սահմանում է կրճատված ժամկետներ՝ խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումներ կայացնելու վերաբերյալ բողոքները քննարկելու համար: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 285-րդ հոդվածի համաձայն՝



2. Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը **ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում**, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին:

**Հեղախուզման մեջ գտնվող մեղադրյալի** նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում է **միջնորդությունը ներկայացրած անձի և հեղախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին:**

3. Անազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու

1 Տե՛ս Case of Bednov v. Russia (Բեդնովս ընդդեմ Ռուսաստանի), 01/06/2006, 21153:

*մասին միջնորդությունների քննության դատական նիստին նրա մասնակցության հարցը պետք է ապահովի վարույթն իրականացնող մարմինը: >>*

Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը Քրիստինե Փաշինյանի վերաբերյալ թիվ ԵՇԴ/0031/01/13 գործով 2016 թվականի մարտի 30-ի որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ՝

*«Պաշտպանի իրավավիճակը հաստատվելու համար պաշտպանյալի հաստատումը բովանդակային առումով պետք է պարունակի մեղադրյալի (դատապարտյալի) համաձայնությունը կոնկրետ փաստաբանի կողմից իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու մասին, իսկ ձևական առումով պետք է ունենա փաստաթղթային ձևակերպում և հաստատված լինի մեղադրյալի (դատապարտյալի) ստորագրությամբ: Նշված պահանջներին համապատասխանող փաստաթուղթը վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է գնահատվի որպես պաշտպանյալի կողմից տրված պատշաճ հաստատում, հակառակ դեպքում կիսախտվեն ինչպես օրինականության սկզբունքը, այնպես էլ մեղադրյալի (դատապարտյալի) իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը»<sup>1</sup>: >>*

Նախագծի 287-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

*«Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ դատախոսներին մասնակցության իրավունք ունեն հսկող դատախազը, ինչպես նաև **մեղադրյալի պաշտպանը** և օրինական ներկայացուցիչը: >>*

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 2016.11.02/78(1258):

Շարադրված իրավադրույթներից բխում է, որ անձի պաշտպանության իրավունքի ապահովումը քրեական դատավարության անկյունաքարային, հիմնարար սկզբունքներից մեկն է, որը երաշխավորված է ոչ միայն ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով, այլև կոնվենցիոն դրույթներով և այլ միջազգային փաստաթղթերով, ուստի, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պարտավոր է անձի համար երաշխավորել նրա պաշտպանության իրավունքի իրացումը՝ զերծ մնալով դրա կապակցությամբ առկա որոշակի դատավարական արգելքները սահմանող նորմերը լայն մեկնաբանելուց:

Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքը նրա կողմից այդպիսի կամահայտնության մասին հայտարարելուց անմիջապես հետո ենթակա է կենսագործման, և վարույթն իրականացնող մարմինը պետք է երաշխավորի այդ իրավունքի իրացումը: Ընդ որում՝ պաշտպանի մասնակցությունն այդ պահից պարտադիր է:



*Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում ստուգման ենթարկելով Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը՝ նշել էր, որ Վկայակոչված իրավական վերլուծությունների լույսի ներքո հարկ է փաստել, որ պաշտպանի (...) կողմից վարույթն իրականացնող մարմնին են ներկայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը, մասնավորապես՝ անձը հաստատող փաստաթուղթ, և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը (նաև հայերենով թարգմանված օրինակը), ուստի այդ իրավիճակում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր էր անձի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ստանալուն պես վարույթն իրականացնել նրա պաշտպանության իրավունքի ապահովմամբ,*

այսինքն՝ մասնակից դարձնելը նաև պաշտպանին, սակայն վարույթն իրականացնող մարմինը, պարճառաբանելով, որ [մեղադրյալը] դատավարական կարգավիճակ այդ պահին չի ունեցել, կարգավիճակ ունենալու պահից սկսած՝ անհիմն կերպով սահմանափակել է մեղադրյալի (...) պաշտպանության իրավունքը՝ նրան զրկելով իր ընտրած պաշտպանի միջոցով իր պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից, որի արդյունքում Առաջին ատյանի դատարանը փաստացի չի իրազեկվել մեղադրյալի՝ պաշտպան ունենալու հանգամանքի մասին, ինչի արդյունքում Առաջին ատյանի դատարանի կողմից ինքնըստինքյան չի կենսագործվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ դատական նիստին հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի՝ գործին մասնակցող պաշտպանի ներկայությունն ապահովելու իրավական պահանջը<sup>1</sup>:



Նախագծով կոնկրետացվել է մեղադրյալի հետախուզման մեջ գտնվելու և արդյունքում հայտնաբերվելու կամ ներկայանալու դեպքերում կալանավորման վերստին քննարկման և լուծման հարցը: Մասնավորապես, 290-րդ հոդվածի համաձայն՝




1. Եթե կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կայացվել է առանց մեղադրյալի մասնակցության, ապա մեղադրյալին Հայաստանի Հանրապետության իրավազորության ներքո կալանավորելուց հետո վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է **48 ժամվա ընթացքում այդ անձին ներկայացնել իրավասու դատարան՝ նրա նկատմամբ կիրառված կալանքի հարցը վերստին քննարկելու համար:**

2. Սույն հոդվածով սահմանված կարգով դատա-

1 Տե՛ս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020թ. փետրվարի 13-ի թիվ ԵԴ/0783/06/19 որոշումը:



*րան ներկայացված մեղադրյալի կալանավորման հարցը քննարկվում և լուծվում է սույն օրենսգրքի 287-288-րդ հոդվածներով սահմանված կանոնների պահպանմամբ:* 

Ի տարբերություն գործող քրեական դատավարության օրենսգրքի՝ Նախագծով սահմանվել են դրույթներ կողմերի բացատրություններ տալուց հետո միմյանց հարցեր տալու մասին (287-րդ հոդվածի 5-րդ մաս), որը, ըստ էության, որևէ կերպ հիմնավորված համարել չի կարելի՝ պայմանավորված մինչդատական վարույթի նպատակով և առանձնահատկություններով: Մասնավորապես, մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողության օբյեկտը հանդիսանում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումներն ու գործողությունները, իսկ նշված սուբյեկտների որոշումների և գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական վերահսկողության առարկա են<sup>1</sup>: Այսինքն, դատարանը խափանման միջոցի վերաբերյալ միջնորդության ժամանակ քննության է առնում քննիչի որոշման օրինական ու հիմնավորված լինելու հանգամանքը, որոշման (միջնորդություն ներկայացնելու մասին), որն արդեն իսկ կայացվել է, և ոչ թե քննիչը պատրաստվում է կայացնել, և համարել է հիմնավորված, և ոչ թե նոր՝ դատական նիստի ընթացքում պետք է դատավարական գործողությունների, այդ թվում նաև կողմին (պաշտպանին և/կամ մեղադրյալին) հարցեր տալու միջոցով պարզի իր որոշման կայացման համար անհրաժեշտ հանգամանքները: Ուստի, հիմնավորված չէ, օրինակ, քննիչի կողմից պաշտպանին կամ մեղադրյալին հարցեր տալու հնարավորությունը: Պետք է նաև հաշվի առնել այն, որ նախ և առաջ՝ միջնորդության քննության ընթացքում հարցաքննությունը որևէ նպատակ չի կարող ունենալ, մեղադրյալն իրավունք ունի որևէ բացատրություն, ցուցմունք չտալու, որպիսի հանգամանքը չի էլ կարող ի վսաս վերջինիս մեկնաբանվել, և հետո վարույթն իրականացնող մարմինն արդեն իսկ հավատացած է իր միջնորդության հիմնավորվածության մեջ, որի ուժով էլ ներկայացրել է խափանման միջոց կիրառելու միջնորդությունը, և դատական նիստում

1 Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի Ռեբերտ Սուքիսայանի վերաբերյալ թիվ ՎԲ-22/08 որոշումը, 11-րդ կետ (ՀՀՊՏ 2008.07.23/47(637)):

ձեռք բերված տեղեկատվությամբ չէ, որ պետք է հիմնավորի այն:

Ինչ վերաբերում է, օրինակ, պաշտպանի կամ մեղադրյալի կողմից վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցչին հարցեր տալու մոտեցմանը, ապա դա ևս այնքան էլ հիմնավոր չէ, քանի որ պաշտպանական կողմից խնդիրը քննարկվող միջնորդության քննության ժամանակ ոչ այնքան որոշակի նոր հանգամանքների պարզումն է, այլ միջնորդության պայմանների և հիմքերի ոչ իրական լինելը (դրանց բացակայությունը հաստատելը) կամ առնվազն դրանց վերաբերյալ դատարանի մոտ կասկածներ առաջացնելն է, որպիսի պարագայում քննիչին կամ դատախազին հարցեր տալը եթե ոչ ամբողջությամբ, ապա դրա զգալի մասով լուրջ արժեք ներկայացնել չի կարող:

Հարցերը կարող են տրվել միայն դատական նիստում դատավորի (նիստը նախագահողի) կողմից, և, օրինակ, վարույթն իրականացնող մարմինը պետք է այդ հարցերին ներկայացնի պարզաբանումներ իր կողմից ներկայացրած միջնորդության և կից ներկայացրած նյութերի վերաբերյալ:

Միաժամանակ, հարցեր տալու իրավական, ըստ էության՝ որևէ արժեք չներկայացնող դատավարական իրավունքի սահմանմամբ կարող են անհարկի ծանրաբեռնվել դատական լսումները՝ վերածելով այն կողմերի միջև տեղի ունեցող անվերջանալի «փոխհրաձգության»՝ չունենալով իրական արժեք դատարանի որոշման կայացման համար:

ՀՀ ՔԴՕ 285-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ՝

«*Միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացառություններ:*»

Նախագծի 287-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

«*Կողմերը կարող են դատարանին ներկայացնել վա-*

*րույթի առարկային վերաբերող լրացուցիչ նյութեր: Վերաբերելի չլինելու դեպքում դատարանը քննության չի առնում լրացուցիչ նյութերը, սակայն պարտավոր է կցել դրանք վարույթին: Վերաբերելի լինելու դեպքում հակառակ կողմին տրվում է լրացուցիչ նյութերին ծանոթանալու ողջամիտ հնարավորություն: »*

Այստեղ անհրաժեշտ է նշել պրակտիկայում առաջացող այնպիսի խնդիրների մասին, ինչպիսին են ջանասիրությունը և դրա գնահատման առանձնահատկությունները: Այս հարցի հետ կապված խնդիրներ առաջանում են հատկապես այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմինը վկայակոչելով նախաքննության գաղտնիությունը՝ դատարանին չի ներկայացնում իր կողմից կատարված քննչական կամ դատավարական գործողությունները հավաստող փաստաթղթերը: Այսպես, օրինակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել էր, որ՝

« [Վ]արույթն իրականացնող մարմնի կողմից չեն ներկայացվել բավարար փաստական տվյալներ առ այն, որ մեղադրյալի արգելանքի տակ գտնվելու անցած ժամանակահատվածում՝ 2019 թվականի հոկտեմբերի 11-ից մինչև դեկտեմբերը 11-ը, դրսևորվել է բավարար ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ողջամիտ ընթացքը: Մասնավորապես՝ թեև Առաջին արյանի դատարանում քննիչը բանավոր կարգով պարզաբանել է, որ կատարվել են մի շարք քննչական և դատավարական գործողություններ, սակայն դրանք Առաջին արյանի դատարանին, ինչպես պաշտպանության կողմին ծանոթացման համար չեն տրամադրվել (նախաքննական գաղտնիք հանդիսանալու հիմնավորմամբ), իսկ նյութերում առկա են միայն առաջադրված մեղադրանքը փոփոխելու և որպես մեղադրյալ ներգրավելու, ըստ էության, մեկ միասնություն կազմող որոշումները, այն էլ թվագրված 2019 թվականի դեկտեմբերի 5-ով, այսինքն՝ արգելանքի տակ պահելու ժամկետի լրանալուն

*առավել մոտ ժամանակամիջոցում, մինչդեռ այդ փաստերը չեն երկայացնելու ռիսկը կրում է բացառապես վարույթն իրականացնող մարմինը, և Առաջին ատյանի դատարանը չի կարող ստանձնել այդ փաստաթղթերի միջոցով ենթադրաբար հաստատվելիք հանգամանքները ենթադրությունների հիման վրա հաստատելու անտրամաբանական և ոչ իրավաչափ պարտականություն, ուստի, նման պարագայում չի ապահովվում հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը<sup>1</sup>:*



Անհրաժեշտ է նշել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորման ժամկետի երկարացման վերաբերյալ իր միջնորդության մեջ վկայակոչված գործողությունների իրականացման արդյունքները չեն երկայացնել ոչ միայն հավասարազոր է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության տիրույթում դրանց բացակայությանը, այլև խարխուլում և ի չիք է դարձնում «զենքերի հավասարության» համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքը, իսկ Առաջին ատյանի դատարանին զրկում է դրանք բովանդակային տեսանկյունից գնահատելու օբյեկտիվ հնարավորությունից նույնիսկ այն դեպքում, երբ դրանք դատարանին ներկայացված չլինելով՝ այնուամենայնիվ, իրականում կատարված լինեն:

Իսնդիրը հատկապես բարդանում է, երբ համապատասխան կալանքի երկարացման միջնորդությունը քննող առաջին ատյանի դատարանի դատավորը չի օգտվում ՀՀ ՔԴՕ 285-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իր իրավունքից և չի պահանջում լրացուցիչ նյութեր: Այսինքն՝ ստացվում է, որ քննիչն իր որոշման մեջ կարող է նշել որոշակի քննչական և/կամ դատավարական գործողությունների մասին, որ կարծես թե կատարել է նախորդ ժամանակահատվածում, սակայն չեն երկայացնել դատարանին որևէ հիմնավորող փաստաթուղթ դրանց կատարված լինելու վերաբերյալ: Այսպես, օրինակ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր որոշման մեջ նշել էր, որ՝

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2020թ. փետրվարի 1-ի թիվ ԵԴ/0393/06/19 որոշումը:



(...) Անդրադառնալով դատախազի վերաքննիչ բողոքում վկայակոչված հիմքերին և հիմնավորումներին այն մասին, որ սխալ են Առաջին արյանի դատարանի հետևությունները՝ կալանավորման հիմքերի մասով, վերաքննիչ դատարանն արձանագրում է. Առաջին արյանի դատարանը, հիմնվելով վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերի ամբողջական ուսումնասիրության վրա, ի թիվս այլնի, նշել է, որ թեև սույն գործի նյութերից բխող ողջամիտ (հիմնավոր) կասկածները հիմնավորվում են գործով ձեռք բերված փաստական տվյալներով, այդուամենայնիվ, ինչպես դրանք, այնպես էլ միջնորդություն հարուցած անձի կողմից մատնանվշած կալանավորման հիմքերը բավարար չեն մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու համար, քանի որ **նախաքննական մարմինը նախորդ երկամսյա ժամկետում չի դրսևորել այնպիսի ջանասիրություն, որը կարող է արդարացնել անձին հետագա կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը:**

Առաջին արյանի դատարանը նշել է նաև, որ մեղադրյալը գործով կալանավորվել է 05.04.2019թ., որից հետո նրան կալանքի տակ պահելու ժամկետը մեկ անգամ արդեն երկարացվել է: Նախորդ անգամ կալանքի ժամկետը երկարացնելուց հետո, այսինքն՝ վերջին երկամսյա ժամանակահատվածում քննիչի կողմից իրականացվել են գործողություններ, որոնցից վերջինը շուրջ մեկ ամիս առաջ՝ 01.07.2019թ.: Ակնհայտ է, որ քննիչի կողմից կատարված քննչական և դատավարական գործողությունները չեն վկայում այն մասին, որ դրանք իրականացվել են բավարար ջանասիրությամբ և ըստ հնարավորության: Մասնավորապես՝ ներկայացված փաստաթղթերով և քննիչի կողմից տրված բացատրությամբ Առաջին արյանի դատարանը հաստատված է համարել այն փաստը, որ դեռևս 2019թ. հունիսի 11-ին ստանալով դատարանի որոշումը հեռախոսազանգերի վերծանումների թույլտվության մասին, իսկ հետագայում

զննելով դրանք՝ քննիչը, իր խոսքով, հայտնաբերել է այնպիսի անձանց հեռախոսահամարներ և տվյալներ, որոնք հետաքրքրություն են ներկայացրել նախաքննության համար և պետք է հարցաքննվեին քրեական գործի շրջանակներում, մինչդեռ այդ անձինք շուրջ մեկ ամիս քսան օր՝ մինչև միջնորդությունը քննելու պահը, չեն հարցաքննվել, այդ ուղղությամբ քննիչի կողմից որևէ գործողություն չի ձեռնարկվել: Առաջին ատյանի դատարանը նշել է, որ ներկայացված պարզաբանումներով, սակայն, քննիչը, հակասելով իրեն, հայտարարել է նաև, որ այս պահին չկան հարցաքննման ենթակա անձինք, ընդամենը վարույթն իրականացնող մարմինը սպասում է նշանակված փորձաքննությունների եզրակացություններին: Եթե մի պահ ընդունվի, որ կան այնպիսի գործողություններ (նշանակված փորձաքննությունների եզրակացությունները ստանալը), որոնք օբյեկտիվ պատճառներով անմիջականորեն կախված չեն քննիչից, ապա անտրամաբանական է և անընդունելի այն փաստը, որ ստացված վերծանումների արդյունքում ակնհայտ անհրաժեշտ համարելով որոշակի անձանց հարցաքննությունը, քննիչը ձեռնամուխ չի եղել այդ գործողությունները կատարելուն, ինչն աներկբա վկայում է նրա դրսևորած անգործության մասին:

Վերը նշվածից զատ, հավաստիանալու համար, թե արդյո՞ք կան իրականացված այլ գործողությունների մասին ապացույցներ, Առաջին ատյանի դատարանը դատական նիստի ժամանակ, որպես այդպիսի գործողությունների վերաբերյալ ապացույց, քննիչից պահանջել է **ներկայացնել դրանց մասին փաստաթղթեր, թեկուզև դրանց առաջին էջի տեսքով՝ նախաքննական գաղտնիքը հրապարակելուց զերծ մնալու նպատակով**, սակայն քննիչը բանավոր հայտարարել է, որ իրականում կան այդպիսի փաստաթղթեր, սակայն հրաժարվել է նույնիսկ դրանց առաջին էջերը տրամադրելուց: Նման պայմաններում Առաջին ատյանի դատարանը վերահաստատել է իր այն դիրքորո-

շումը, որ մեղադրյալին կալանքի փակ պահելու ժամկետը վերջին անգամ երկարացնելուց՝ 2019 թվականի հուլիսի 1-ից հետո, որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի իրականացվել:

Ամփոփելով վերոգրյալը և արձանագրելով, որ հավանական է, որ դեռևս պահպանվում են նաև կալանավորման փակ պահելու քննիչի կողմից մատնանշած հիմքերը՝ Առաջին արյանի դատարանն արձանագրել է, որ գործի քննության ընթացքում **քննչական խմբի կողմից դրսևորած ջանասիրության, ավելի սրույզ՝ դրա բացակայության պայմաններում անթույլատրելի է անձին կալանքի փակ պահելը, քանի որ պետությունը՝ ի դեմս վարույթն իրականացնող մարմնի, կրում է պոզիտիվ պարտականություն՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու, ինչպես նաև այդ ընթացքում անձի հիմնարար իրավունքների, այս դեպքում ազատության իրավունքի խախտում թույլ չտալու առումով:**

Առաջին արյանի դատարանը գրել է, որ այս պայմաններում խախտվել է մեղադրյալի ազատության իրավունքը, որը դրսևորվել է նախաքննական մարմնի կողմից գործի քննության նկատմամբ դրսևորած ոչ պատշաճ ջանասիրությամբ:

(...) Դատախազի վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակներում գնահատման ենթարկելով Առաջին արյանի դատարանի վերոգրյալ դիրքորոշումները՝ **Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դրանք լիարժեք հիմնավորված են և ամբողջովին բխում են ներկայացված նյութերի համակցությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Առաջին արյանի դատարանի կողմից վարույթն իրականացնող մարմնից պահանջվել են անհրաժեշտ փաստաթղթեր, որը չի կատարվել, այսինքն՝ դրանք չներկայացնելու ռիսկը կրում է վարույթն իրականացնող մարմինը, և Առաջին արյանի դատարանը չի կարող ստանձնել այդ փաստաթղթերի միջոցով ենթադ-**

**րաբար հաստատվելիք հանգամանքների՝ ենթադրությունների հիման վրա հաստատման անտարբերական և ոչ իրավաչափ պարտականություն, ուստի, նման պարագայում չի ապահովվում հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը, հետևաբար՝ նման պարագայում Դատախազի վերաքննիչ բողոքի հիմնավորումներն ի գործու չեն չեզոքացնելու Առաջին արյանի դատարանի իրավաչափ հետևությունները:**

Վերոշարադրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ մեղադրյալի (...) որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամկետը երկարացնելը մերժելով՝ Առաջին արյանի դատարանը թույլ չի տվել դատական սխալ, այդ թվում, նաև քրեադատավարական օրենքի այնպիսի խախտում, որը կարող էր ազդեցություն ունենալ գործի ելքի վրա, և գործով կայացրել է, ըստ էության, ճիշտ լուծող դատական ակտ, որը բխում է ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքից<sup>1</sup>:



Նման դեպքերում խիստ վիճելի է դառնում այդ գործողությունների կատարված լինելու և արդյունքում վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի քննության նկատմամբ ջանասիրություն դրսևորած լինելու հանգամանքը և գրեթե անհնարին դարձնում վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում համապատասխան դատական ակտի օրինականության և հիմնավորվածության օբյեկտիվ ստուգումը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերադաս դատարաններում, ըստ էության, պետք է քննության ենթարկվեն ստորադաս դատարանների դատական ակտերն այն նյութերի շրջանակներում, որ ներկայացված եղել են բացառություններով, որոնք վերաբերելի չեն վարույթն իրականացնող մարմնին:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019թ. օգոստոսի 22-ի թիվ ԵԴ/0226/06/19 որոշումը:



Ազատության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է, որ կալանքի համար հիմքերի բացակայության ապացույցների բեռը (թաքնվելու ռիսկի բացակայություն, հանցավոր գործողությունների շարունակություն և այլն) չի կարող դրվել մեղադրյալի վրա: Ընդհակառակը, մեղադրանքի կողմը (քննիչը, դատախազը) պետք է համոզիչ կերպով ցույց տա մեղադրյալի կալանքի տակ գտնվելու կամ նրա կալանքի ժամկետը երկարացնելու, շարունակելու բացարձակ անհրաժեշտությունը: Դատարանները պետք է ուշադրությամբ հաշվի առնեն պաշտպանական փաստարկների հիմնավորումները այդ ռիսկերի բացակայության վերաբերյալ, և դրանք անտեսելն անընդունելի է: Մասնավորապես, Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Buzadji v. the Republic of Moldova [GC]) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ.

« 117. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ ինչպես դիմումատու է նշել է, դատախազը չի անդրադարձել այնպիսի փաստարկի, ինչպիսին է դիմումատուի գաղտնի համաձայնության վրանգն իր որդիների հետ: Ավելին, գործի հանգամանքներից հետևում է, որ հետաքննությունը իր և որդիների նկատմամբ սկսվել էր 2006 թվականի հուլիսին, այսինքն՝ դիմումատուի կալանքից 10 ամիս առաջ, և որ նա իսկապես բավականաչափ ժամանակ ուներ որդիների հետ գաղտնի համաձայնության գալու համար, եթե նա ուներ այդ մտադրությունը (...): Գործի պայմաններում Դատարանը բացարձակ անհիմն է համարում նման փաստարկը (...): »

Մեղադրյալը և նրա պաշտպանը պետք է հնարավորություն ունենան ձեռք բերելու գործի այն նյութերը, որոնք անհրաժեշտ են արդյունավետ վիճարկելու կալանքի տակ պահելու օրինականությունը և հիմնավորվածությունը: Այսպես, Մուրենն ընդդեմ Գերմանիայի (Mooren v. German [GC]) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ՝

1 Stin Buzadji v. the Republic of Moldova [GC] (Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության), 05/07/2016, 23755/07, պարագրաֆ 117:



124. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով անցկացվող վարույթները նախքան դատարանը, որը քննում է կալանքի դեմ դիմումը, **պետք է լինեն մրցակցային և միշտ պետք է ապահովեն «զենքերի հավասարությունը»** կողմերի՝ դատախազի և կալանավորված անձի միջև (համեմատելով, մասնավորապես, Սկոպն ընդդեմ Գերմանիայի (Schöps v. Germany), 25116/94, § 44 ...): **Զենքերի հավասարությունը չի ապահովվում, եթե փաստաբանին արգելվում է այն փաստաթղթերի մուտք ունենալ/ծանոթանալ հետաքննության նյութերին, որոնք անհրաժեշտ են իր պաշտպանյալի կալանքի օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու համար (չե՛ս, ի թիվս այլի, Լամին ընդդեմ Բելգիայի (Lamy v. Belgium), 30 մարտի 1989 թ., § 29, ...):**

125. Մեծ պալատը, հաշվի առնելով Դատարանի նախադեպային իրավունքը, լիովին հաստատում է պալատի հիմնավորումը և գտնում է, որ այն ընթացակարգը, որով դիմումատու փորձել է վիճարկել իր նախնական կալանքի օրինականությունը, խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները<sup>1</sup>:



Այսպիսով, մեղադրյալը և նրա պաշտպանը պետք է պատշաճ կերպով ծանուցված լինեն կալանքի և դրա երկարացման հարցի քննության համար կայացվող դատական նիստի վերաբերյալ: Նրանք պետք է իրական հնարավորություն ունենան ներկայանալու և ակտիվորեն մասնակցելու ազատագրկման հետ կապված խափանման միջոցի ընտրության և դրա երկարացման վերաբերյալ դատական նիստին (ՔԴՕ 285-րդ հոդված)<sup>1</sup>՝ ի տարբերություն վերաքննիչ դատարանի, որտեղ ՔԴՕ 288-րդ հոդվածի համաձայն կողմերի ներկայությունը, ըստ էության, պարտադիր չէ:

**Դատական քննության նախապատրաստման փուլում արդեն իսկ ընտրված կալանավորման խափանման միջոցի հիմնավոր**

1 Stin Case of Mooren v. German [GC] (Մուրենն ընդդեմ Գերմանիայի), 11364/03, 9/7/2009, պարագրաֆներ 124-125:

**լինելու կամ չլինելու հարցի քննության համար** անցկացվող նիստի կարգը ևս ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն դատավարական օրենսգրքով, սակայն բխում են ՄԴՈ-1421 որոշումից, որով և այս փուլում կալանքի վերաբերյալ դատական նիստ անցկացնելու դատական պրակտիկա ձևավորելու հիմք դրվեց: Մասնավորապես՝



*Սահմանադրական դատարանը փաստում է, որ ի տարբերություն վերը նշվածի՝ գործը դատական քննության նախապատրաստելու շրջանակներում դատարանի կողմից առանց մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննելու ժամանակ, մասնավորապես, **անձնական ազատության, արդար դատաքննության իրավունքների, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման օրենսդրական երաշխիքներ նախատեսված չեն:** Օրենսդիրն այս առումով միայն սահմանել է գործը դատական քննության նախապատրաստելու փուլում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցներ ընտրելու կամ չընտրելու և խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննելու դատարանի պարտականությունը (Օրենսգրքի 300-րդ հոդված), որը դատարանն իրականացնում է առանց դատական նիստի հրավիրելու:*

(...)

*Ընդ որում՝ հարկ է նշել, որ դատական քննության փուլում կալանքի առավելագույն ժամկետ նախատեսված չէ: Հետևաբար, գործը դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքը որպես խափանման միջոց*

հիմնավոր համարելու դեպքում առավել ևս պետք է պահպանվեն անձնական ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական չափորոշիչները:

(...)

Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակում նախատեսող քրեադատավարական ցանկացած ընթացակարգի սահմանադրականությունը կախված է ոչ միայն այդ իրավունքի սահմանափակման իրավաչափության հիշյալ չափորոշիչների պահպանման նկատմամբ դատական վերահսկողության պատշաճ և արդյունավետ իրականացումից, այլ նաև անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի երաշխավորումից: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1295 որոշմամբ ամրագրել է հետևյալը. «...**ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ չի կարող բացառել անձի՝ անձամբ պաշտպանվելու իրավունքը, եթե առկա է վերջինիս կողմից հստակ արտահայտված համապատասխան ցանկություն (դատավարական միջնորդություն): ... Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրարար հանդիսացող՝ անձի՝ լսվելու (անձամբ պաշտպանվելու) իրավունքի իրացումն ինչպես առաջին արյանի դատարանում, այնպես էլ դատական բողոքարկման (ստուգման) հետագա ընթացակարգերում»:**

Մեկ այլ՝ 2009 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշմամբ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատավորի մոտ տարվելու և լսվելու իրավունքի իրացումն անմիջականորեն և անխզելիորեն կապված է անձին փաստացիորեն անազատության մեջ պահելու, այն է՝ անձին հասարակությունից

Ֆիզիկապես մեկուսացնելու փաստի հետ, այդ իրավունքի իրացման երաշխավորման պարտականությունը պետության համար ծագում է անձին ազատությունից փաստացիորեն զրկելու, այն է՝ անձին հասարակությունից ֆիզիկապես մեկուսացնելու պահից: Այսինքն՝ ինչպես 2005 թվականի փոփոխություններով ՀՀ սահմանադրության 16-րդ հոդվածով, այնպես էլ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված բոլոր երաշխիքները, այդ թվում՝ նաև դատարանի առջև լսվելու իրավունքը, սկսում են գործել միայն այն պահից սկսած, երբ անձը պետության կողմից փաստացիորեն զրկվում է ազատությունից:

Սույն գործի շրջանակներում ևս, վերահաստատելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթներից, ըստ էության, բխում է, որ **ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանի կողմից լսվելու իրավունք, որի իրացումը պետք է ապահովվի օրենքով սահմանված կարգով:**

Վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադառնալ անձի՝ լսվելու իրավունքի երաշխավորմանը մեկ այլ համատեքստում ևս:

Դատարանի կողմից լսվելու սահմանադրական իրավունքից օգտվում են ոչ միայն ազատությունից զրկված անձինք, այլ նաև յուրաքանչյուր ոք, ով իրացնում է իր արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ևս Սահմանադրական դատարանը, կարևորելով անձի արդար դատաքննության իրավունքի երաշխավորումը, միաժամանակ գտնում է, որ գործը **դատական քննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից կալանքի որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննության ընթացքում պետք է ապահովել ինչպես պաշտպանության, այնպես էլ՝ մեղադրանքի կողմի մասնակցու-**

**թյունը՝** ելնելով քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունից: Դատական քննությունը, այդ թվում՝ դրա նախապարտաստումը, արդյունավետ է համարվում իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովման առումով, եթե այն համապատասխանում է արդարության պահանջներին և հիմնված է մրցակցության սկզբունքի վրա: Հիշյալ հանգամանքը կալանքի՝ որպես խափանման միջոցի վերաբերյալ հարցի քննման դեպքում ենթադրում է դատարանի կողմից անհրաժեշտ պայմանների ապահովում կողմերի՝ իրենց դատավարական իրավունքների իրացման և դատավարական պարտականությունների կատարման համար: Բացի դրանից, **անհրաժեշտ է դատարանի կողմից իրականացնել իրավական և փաստական հիմքերի ուսումնասիրություն, այդ թվում՝ էական հանգամանքների ինքնուրույն գնահատման միջոցով որոշում կայացնելու համար՝ ապահովելով պաշտպանության և մեղադրանքի կողմերին իրենց դիրքորոշումները ներկայացնելու հնարավորությունը, բացառելով կամայական, սուբյեկտիվ հայեցողական և չհիմնավորված մտրեցումները:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործը դատական քննության նախապարտաստելու փուլում դատարանն իր նախաձեռնությամբ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը որոշելիս չի կարող ազատվել կողմերի կարծիքը լսելու պարտականությունից, և կողմերը չեն կարող զրկված լինել իրենց դիրքորոշումները ներկայացնելու հնարավորությունից: Հակառակ պարագայում՝ այն կարող է պարունակել վտանգ, որ դատարանն իր վրա է վերցնում մեղադրանքի կամ պաշտպանության գործառույթներ: Բացի դրանից, **դատարանը զրկվում է հարցը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու փաստացի հնարավորությունից, որի**

**Երաշխավորման կարևոր նախապայման է նաև կողմերի կարծիքները, փաստարկները, դիրքորոշումները լսելը:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձնական ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակումն իրավաչափ է միայն դատարանի որոշմամբ, որն ընդունվել է դատական նիստում՝ դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև ընտրված կալանքի հիմքերի և հիմնավորումների համակողմանի և անաչառ քննության, այդ թվում՝ մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի՝ իր դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորության առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որ չի նախատեսում գործը դատական քննության նախապարաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, չի ապահովում անձի՝ դատարանի կողմից լսվելու սահմանադրական իրավունքի իրացումը օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, այն չի համապատասխանում նաև արդար դատաքննության չափանիշներին:

(...)

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի շրջանակներում առկա է նաև գործը դատական քննության նախապարաստելու փուլում դատարանի կողմից կալանքի՝ որպես խափանման միջոցի, հարցի քննության ժամանակ մեղադրյալի իրավունքների երաշխավորման խնդրին անմիջականորեն վերաբերող իրավական դիրքորոշում: Մասնավորապես, Խողորկովսկին ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2011թ. մայիսի 31-ի վճռով (գանգապ թիվ 5829/04) ՄԻԵԴ-ը գործը դատական քննության նախապարաստելու փուլում

առանց դատական նիստի նշանակելու կալանքն անփոփոխ թողնելը և կալանքի հարցի քննությունը դիմումատուի կամ իր փաստաբանի բացակայության պայմաններում գնահատել է որպես անձի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավունքների խախտում:

(...)

Հարկ է նաև նշել, որ քննարկվող հարցին վերաբերելի իրավունքներին անդրադարձ կատարվել է նաև մարդու իրավունքների միջազգային մի շարք այլ փաստաթղթերում, մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով) 9-րդ հոդվածի 4-րդ մասով և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Rec (2006) 13 հանձնարարականի 28-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումն այն մասով, որը չի նախատեսում գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորություն, համահունչ չէ ՀՀ վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի շրջանակներում ձևավորված անձնական ազատության իրավունքի սահմանափակման չափորոշիչներին:

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը **դատական պրակտիկան պետք**



**է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ քրեական գործը դատական քննության նախապատրաստելիս դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելու դեպքում դրա հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննությանը պետք է ապահովվի, մասնավորապես, մեղադրյալի և/կամ նրա պաշտպանի մասնակցության հնարավորությունը (ինչպես նախատեսված է Օրենսգրքի, մասնավորապես, 285 և 312-րդ հոդվածներով)՝ առաջնորդվելով անձնական ազատության իրավունքի, արդար դատաքննության բաղադրարարը հանդիսացող լսվելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման, քրեական դատավարության ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման անհրաժեշտությամբ՝** >>

Այսինքն, այս որոշումը սկիզբ դրեց այնպիսի դատական պրակտիկայի, որի արդյունքում դատական քննության նախապատրաստության ընթացքում խափանման միջոցի (ներկայումս դեռևս միայն կալանքի դեպքում) ընտրելու կամ չընտրելու և դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը քննության առնելու համար Առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները պարտադիր նիստեր են նշանակում՝ փորձելով ապահովել մրցակցային դատավարությունը նաև այս հարցում: Միաժամանակ, այս նիստերի արդյունքում կայացված որոշումները փաստացի դարձան նաև Վերաքննիչ դատարանի կողմից ստուգման ենթակա որոշումներ:

**Դատական քննության փուլում կալանքն ընտրելու, փոփոխելու, վերացնելու միջնորդությունների քննության համար գործում են քրեական գործի քննության ընթացքում միջնորդությունների**

1 Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 26-ի «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1421 որոշումը: Հասանելի է նաև համացանցային <http://www.concourt.am/armenian/decisions/common/2018/pdf/sdv-1421.pdf> հասցեով, վերջին մուտք՝ 30.06.2020թ., ժամը 22:54:

քննության և լուծման վերաբերյալ իրավակարգավորումները՝ այն առանձնահատկություններով, որ սահմանված են ՀՀ ՔԴՕ 41-րդ գլխով սահմանված նորմերով:

Այսպես, ՀՀ ՔԴՕ 102-րդ հոդվածի համաձայն՝



(...)

2. Միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն Օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Միջնորդության լուծումը կարող է հետաձգվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից մինչև միջնորդության վերաբերյալ որոշում ընդունելու համար էական հանգամանքների պարզումը: Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում ոչ ժամանակին հարուցված միջնորդությունը թողնվում է առանց քննության:

3. Միջնորդության և պահանջի վերաբերյալ ընդունված որոշումները պետք է լինեն պարզառաքանված: Միջնորդության կամ պահանջի վերաբերյալ ընդունված որոշման մասին քրեական վարույթն իրականացնող մարմինն անմիջապես տեղյակ է պահում դիմողին:


4. Միջնորդության կամ պահանջի մերժումը չի խոչընդոտում դրա կրկին ներկայացնելուն քրեական դատավարության հետագա փուլերում կամ քրեական վարույթն իրականացնող այլ մարմնին: Քրեական դատավարության նույն փուլում կամ քրեական վարույթն իրականացնող նույն մարմնին միջնորդության և պահանջի կրկին ներկայացում հնարավոր է, եթե դրանք հիմնավորելու համար բերվում են նոր փաստարկներ կամ քրեական դատավարության ընթացքում հաստատվել է դրանց բավարարման անհրաժեշտությունը: >>

## Նույն Օրենսգրքի 312-րդ հոդվածի համաձայն՝

«*Դատարանը դատական քննության ժամանակ լսելով ամբաստանյալի բացատրությունները, կողմերի կարծիքները՝ իրավունք ունի ամբաստանյալի նկատմամբ ընտրել, փոխել կամ վերացնել խափանման միջոցը:*»


Կալանքը պետք է հիմնավորված լինի ոչ միայն նախնական քննության ընթացքում, այլ ամբողջ քննության ընթացքում, որն իր մեջ ընդգրկում է նաև դատական քննությունը (այդ թվում՝ նաև դատաքննությունը): Ուստի, խափանման միջոցի վերաբերյալ միջնորդություն ստանալիս կամ սեփական նախաձեռնությամբ այն ընտրելու, փոփոխելու, վերացնելու անհրաժեշտությունը տեսնելիս դատարանը պետք է լսի կողմերին, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրի վերաբերելի փաստաթղթերը (օրինակ՝ բժշկական բնույթի և այլն): Դատարանը կարող է նաև հետազոտել այն վկաների ցուցմունքները, որոնք կարող են էապես ազդել կալանքի հիմքերի և պայմանների առկայության հարցի լուծման վրա (ներառյալ ողջամիտ կասկածի առկայությունը): Այսպես, Ա-ն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (A. and Others v. United Kingdom) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ՝

«*204. (...) դատավարությունը պետք է լինի մրցակցային և ապահովի «միջոցների հավասարություն» կողմերի միջև (Ռեյնփրեյխտ, կետ 31): Հնարավոր է բանավոր դատաքննության անհրաժեշտություն լինի, օրինակ, ժամանակավոր կալանքի փակ պահելու դեպքում (Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ], թիվ 31195/96, կետ 58, ՄԻԵԴ 1999-II): Ավելին, կալանավորին պետք է հնարավորություն տրվի արդյունավետորեն վիճարկել իր դեմ ներկայացված մեղադրանքների հիմքը (Բեսիեֆն ընդդեմ Մոլդովայի գործը, թիվ 9190/03, կետ 68-72, 4-ը հոկտեմբերի, 2005թ): Դա կարող է պահանջել դատարանին լսելու վկաներին, որոնց ցուցմունքները առաջին հա-*

**յացքից ունեն կալանքի շարունակական օրինականությանը վերաբերող նյութ** (Բեսիեվի գործը՝ վկայակոչված վերևում, կետ 72-76, Թուրչանը և Թուրչանը ընդդեմ Մոլդովայի գործը, թիվ 39835/05, կետ 67-70, 23-ը հոկտեմբերի, 2007թ): **Կարող է նաև պահանջվել, որ կալանավորի կամ նրա ներկայացուցչի համար ապահովվի մատչելիություն գործի փաստաթղթերին**, որոնք կազմում են իր դեմ ներկայացված գործի (Վլոխի գործը՝ վկայակոչված վերևում, կետ 127, Նիկոլովայի գործը՝ վկայակոչված վերևում, կետ 58; Լեյսին ընդդեմ Բելգիայի գործը, 30-ը մարտի, 1989թ, կետ 29, Սերիա Ա թիվ 151, Ֆոդեյլն ընդդեմ Իտալիայի, թիվ 70148/01, 1-ը հունիսի, 2006թ)<sup>1</sup>: 

Ինչպես նաև կարևոր է հետազոտել այն վկաների ցուցմունքները, ովքեր պնդում են մեղադրյալի կողմից սպառնալիքների առկայության մասին<sup>2</sup>: Միաժամանակ, դատարանը իրավունք չունի մտնելու անձի մեղքի հարցի քննարկման մեջ:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը Նաբեկ Հարությունյանի վերաբերյալ 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԱՆԴ/0081/01/14 որոշմամբ նշել է, որ՝

 ... Այլ խոսքով՝ գործի ըստ էության քննության ընթացքում դատարանի կողմից ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու հարցերի լուծումը գտնվում են նրա՝ արդարադատության իրականացման պատշաճ կազմակերպման լիազորության ոլորտում: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ կալանքի՝ որպես խափանման միջոցի հետ կապված

1 Տե՛ս Case of A. and Others v. United Kingdom (Ա-ն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության), 19/02/2009, 3455/05, պարագրաֆ 204:  
2 Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia) գործում ՄԻԵԴ-ը գնահատեց նաև այդպիսի մեղադրանքների նկատմամբ արձագանքի բացակայությունը և այդպիսի վկաներին հարցաքննելու անհնարինությունը՝ որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտման լրացուցիչ հանգամանք:

հարցերը սերտորեն առնչվում են անձի ազատության իրավունքի էական սահմանափակման հետ, իսկ մյուս կողմից՝ ենթադրում առավել արժեքավոր հանրային շահի հնարավոր առկայություն՝ օրենսդիրը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ առաջին աստիճանի դատարանի որոշումներ ընդգրկել է վերաքննիչ բողոքարկման առարկայի շրջանակում:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումների կայացումը և վերջիններիս՝ վերաքննության կարգով վերանայումը իրականացվում են փարբեր դատավարական գործառույթների շրջանակներում: Անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի որոշումը կայացվում է գործի, ըստ էության, քննության շրջանակներում, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից նշված ակտերի վերանայումը՝ ստորադաս դատարանի որոշումների ստուգման և վերանայման վերադաս դատական աստիճանի գործառույթի շրջանակներում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մրցակցող արժեքների՝ մի կողմից՝ արդարադատության իրականացման դատարանի լիազորության, իսկ մյուս կողմից՝ անձի ազատության իրավունքի և դրան հակակշռող հանրային շահի համարժեք ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ քննարկվող որոշումների վերաքննիչ վերանայման սահմանները ողջամտորեն պետք է նեղ լինեն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքի կապակցությամբ կայացվող որոշումների վերանայման սահմաններից: Մասնավորապես՝ **քննարկվող որոշումների վերանայման շրջանակներում չեն կարող քննարկվել այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են գործի**

**ըստ էության լուծմանը:** Այդպիսիք են, օրինակ, հիմնավոր կասկածի առկայության, արարքի որակման, որոշման հիմքում դրված ապացույցների թույլատրելիության հետ կապված հարցերը և այլն:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ քննարկվող որոշումների վերաքննիչ վերանայման սահմանների լայն մեկնաբանումը կհանգեցնի կոնկրետ գործով արդարադատություն իրականացնող առաջին աստիճանի դատարանի գործունեությանն անհարկի միջամտության և կվտանգի դատավորի ներքին անկախությունը<sup>1</sup>:



Այնուամենայնիվ, դատական քննության փուլում կալանքի վիճարկման ժամանակ հիմնավոր կասկածի առկայությունը չքննարկելու իրավակիրառ պրակտիկա դեռևս չի ձևավորվել՝ այն պայմաններում, երբ օրինակ, բողոք ներկայացվել է պաշտպանի կամ ամբաստանյալի կողմից, որոնք իրենց անհամաձայնությունն են հայտնել նաև հիմնավոր կասկածի վերաբերյալ, թեպետև որոշ դատավորներ թե՛ առաջին աստիճանում, և թե՛ վերաքննիչ դատարանում ունեցել են նման փորձեր<sup>2</sup>:

Այսպիսով՝ խափանման միջոցների կիրառման հիմնավորվածությունը քննության է առնվում և՛ նախնական քննության, և՛ դատական քննության նախապատրաստման ու դատական քննության փուլերում: Այս առումով կարևոր զարգացում ապահովել են ՀՀ սահմանադրական դատարանի երկու որոշումներ՝ ՍԴՈ-1421 և ՍԴՈ-1487<sup>3</sup>, որոնց ընդունման արդյունքում տեղի ունեցան հա-

- 1 Հասանելի է համացանցային <https://www.arlis.am/> հասցեում, վերջին մուտք՝ 27.01.2020թ., ժամը 18:16:
- 2 Տեն, օրինակ, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2016 թվականի նոյեմբերի 8-ի թիվ ԵԱՔԴ/0113/01/16 որոշումը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2017 թվականի հուլիսի 28-ի թիվ ԵԱՔԴ/0189/01/14 որոշումը:
- 3 Տեն ՀՀ սահմանադրական դատարանի 2019թ. նոյեմբերի 6-ի «Արտակ Գալստյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումների հիման վրա քրեական դատավարության օրենսգրքի 376.1-ին հոդվածի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1487 որոշումը: Հասանելի է նաև համացանցային <http://www.>

մակարգային փոփոխություններ՝ հատկապես ղատական քննության նախապատրաստական փուլում խափանման միջոց կալանքի հիմնավորվածությունը կրկին անգամ ղատական ստուգման ենթարկելու մասով, ինչպես նաև ղատարանի կողմից այն դատաքննության փուլում փոփոխելիս ղատախագի և պաշտպանի կողմից բողոք ներկայացնելու միջոցով Վերաքննիչ ղատարանի կողմից ընդունված ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու մասով:

**Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության ղատական ստուգման շրջանակներում** խափանման միջոցի ընտրության, դրա երկարացնելու, ղատական քննության նախապատրաստման փուլում արդեն իսկ ընտրված կալանավորման խափանման միջոցի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցի քննության, ղատական քննության փուլում կալանքն ընտրելու, փոփոխելու, վերացնելու միջնորդությունների քննության արդյունքում կայացված որոշումները ենթակա են նաև վերաքննիչ բողոքարկման: Համապատասխան որոշումները օրենքի անմիջական ցուցումով (ՔԴՕ 376.1-րդ հոդված, ՄԴՈ-1487) բողոքարկվում են ղատարանի վերջնական որոշումից զատ<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության ղատական ստուգմանը, ապա պետք է նշել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության ղատարանի կողմից կայացված որոշման հետ անհամաձայնություն ունենալու դեպքում անհամաձայնություն ունեցող կողմը բողոք է ներկայացնում ՀՀ վերաքննիչ քրեական ղատարան:

---

[concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1487.pdf](http://concourt.am/armenian/decisions/common/2019/pdf/sdv-1487.pdf) հասցեով, վերջին մուտք՝ 30.06.2020թ., ժամը 22:55:


1 Կալանավորման մասին որոշումների բողոքարկման իրավունքը ներառում է ղատապարտյալներին, որոնց գործերով ղատավճիռը կայացվել է (Տես ՌԴ Գերագույն ղատարանի Պլենումի 27.11.2012թ. «ՌԴ քրեական ղատավարության օրենսգրքի՝ վերաքննիչ ատյանում վարույթը կարգավորող նորմերի կիրառման մասին» թիվ 26 որոշում) (Российская газета. 2012. № 283.): Գործի ղատավճի հետ կապված կալանքի ընտրելու (երկարացնելու) վերաբերյալ որոշումների դեմ բողոքարկման վարույթի ղադարեցումն անընդունելի է (Տես Case of Bednov v. Russia (Բեդնովս ընդդեմ Ռուսաստանի), 01/06/2006, 21153/02):

## ՀՀ ՔԴՕ 287-րդ հոդվածի համաձայն՝



1. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով:

2. Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, դատարան հասցեագրված բողոքներ ստանալով, պարտավոր է գրանցել դրանք և ուղարկել ըստ ընդդատության՝ այդ մասին տեղյակ պահելով հսկող դատախազին:

3. Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը: 

Պետք է նշել, որ Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումը սահմանում է, որ դատարանները բողոք ստանալուց և (կամ) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացնելուց հետո (կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին) անհապաղ պետք է համապատասխան նյութեր ուղարկեն բողոքարկման քննության: Մասնավորապես.



14. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները, ինչպես մեկնաբանվում է Եվրոպական դատարանի կողմից, նախատեսում են անձի անհապաղ դատական քննության առնել նրա կալանքի օրինականությունը և անհապաղ ազատ արձակել, եթե կալանքը դատարանի կողմից համարվում է անօրինական և անհիմն: Այս կապակցությամբ, դատարանները բողոք ստանալուց և (կամ) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում կա-



*յացնելուց հետո (կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին) անհապաղ պետք է համապատասխան նյութեր ուղարկեն բողոքարկման քննության: Վերաքննիչ դատարանները պետք է քննարկեն բողոքը և (կամ) ներկայացումը ոչ ուշ, քան քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված ժամկետը<sup>1</sup>:*



Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է Վերաքննիչ դատարանի կողմից՝ դռնփակ դատական նիստում, իսկ կալանքը չփոփոխելու, չվերացնելու վերաբերյալ կայացված դատական ակտերինը՝ դռնբաց դատական նիստում՝ համապատասխան նյութերը ստանալու օրվանից **երեք օրվա** ընթացքում:



**Հոդված 288. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը**

1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

2. Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող **նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:**

1 Стѣн Постановление от 27.06.2013 г. № 21 «О применении судами общей юрисдикции Конвенции о защите прав человека и основных свобод от 4 ноября 1950 года и Протоколов к ней» // Российская газета. 2013. № 6121 (145):

3. Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն: Դատարանը բացառություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հեղաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև փոփոխել:



Եվրոպական դատարանի պրակտիկայում սահմանված չեն հստակ ժամկետներ խափանման միջոցների ընտրության կամ դրանց երկարացման վերաբերյալ որոշումների դեմ ներկայացված բողոքները լուծելու համար: Այնուամենայնիվ, բողոքարկման քննարկման չափազանց մեծ, չարդարացված ձգձգումները, զգալիորեն խախտելով քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված ժամկետները, անխուսափելիորեն ենթադրում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում: Մասնավորապես, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia [GC]) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ՝



161. Դատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է (...): Չնայած միշտ չէ, որ անհրաժեշտ է, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ընթացակարգի վրա տարածվեն նույն երաշխիքները, ինչպիսիք առկա են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական կամ քաղաքացիական դատավարության ժամանակ, սակայն **այն պետք է ունենա դատական բնույթ և ապահովի երաշխիքներ, որոնք համապատասխան են Կոնվենցիայի ազատությունից զրկելու տեսակին** (տես Ռեյնփրեյսերն ընդդեմ Ավստրիայի

(*Reinprecht v. Austria*), թիվ 67175/01, պարագրաֆ 31): Այն դեպքում, երբ այն անձը, որի կալանքը գտնվում է 5-րդ հոդվածի 1-ին մասի (գ) ենթակետի տակ, անհրաժեշտ է իրականացնել լուծման (տես Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի (*Nikolova v. Bulgaria*) [GC], թիվ 31195/96, § 58): Կալանավորված անձի իրավունքը լաված լինելու անձամբ կամ ներկայացուցչության որևէ ձևով՝ ազատությունից զրկելու հարցերում կիրառվող ընթացակարգի հիմնական երաշխիքների շարքում է (տես Կամպանիս ընդդեմ Հունաստանի (*Kampanis v. Greece*), 13 հուլիսի, 1995 թ., § 47):

162. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նկատում է, որ դիմումատուին բացակայել է բողոքարկման լուծմանից՝ տեղի ունեցած հունվարի 22-ին, հունիսի 16-ին, օգոստոսի 6-ին և 2003 թ. հոկտեմբերի 2-ին և 2004 թ. փետրվարի 12-ին: 2003 թ. հունիսի 16-ին դատական նիստը տեղի էր ունեցել դիմողի ներկայացուցչի բացակայությամբ: Ավելին, Դատարանի առջև առկա նյութում ոչինչ չկա այն մասին, որ Վերաքննիչ դատարանը նույնիսկ քննարկել էր այն հարցը, թե արդյոք դիմումատուին հրավիրվել է դատական նիստին, և արդյո՞ք անհրաժեշտ է նրա անձնական մասնակցությունը շարունակական կալանքի օրինականության արդյունավետ քննության համար:

163. Դատարանն այնուհետև նշում է, որ կառավարությունը խոստովանել է, որ իշխանությունները թերացել են դիմումատուի մասնակցությունը չսպաստելու հարցում ...

164. Հաշվի առնելով հարցի վերաբերյալ իր կայացրած նախադեպային իրավունքը և սույն գործի հանգամանքները՝ Դատարանը որևէ հիմք չի տեսնում այլ կերպ կողմնորոշվելու համար: Այն փաստը, որ դիմումատուին չէր կարողացել մասնակցել բողոքարկման գործընթացներին 2003 թվականի հունվարի 22-ին, հունիսի 16-ին, օգոստոսի 6-ին և հոկտեմբերի 2-ին և 2004 թ. փետրվարի 12-ին, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում է՝



1 Տես *Idalov v. Russia* [GC] (Իդալովս ընդդեմ Ռուսաստանի) 22/05/2012, 5826/03:

Անդրադառնալով ՍԴՈ-1487 որոշմանը՝ պետք է ասել, որ այն վերաբերում է որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու (որպես խափանման միջոց ընտրված կալանքը չփոփոխելու կամ չվերացնելու) մասին որոշումների վերաքննության կարգով անմիջական բողոքարկմանը:

ՀՀ ՔԴՕ 376.1-ին հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են առաջին ատյանի դատարանների՝ **կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին որոշումները**: Փաստացի, ստացվում է, որ **որպես խափանման միջոց ընտրված կալանքը փոփոխելու կամ վերացնելու միջնորդությունները մերժելու մասին որոշումները** ենթակա չեն վերաքննիչ բողոքարկման:

Վճռաբեկ դատարանը ևս անդրադարձել է քննության առարկա հարցին, մասնավորապես, իր՝ 2018 թվականի մարտի 20-ի ԵԿԴ/0274/01/15 քրեական գործով կայացրած որոշմամբ: Դրանով Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ՝

«... քրեադատավարական օրենքը չի նախատեսում ընտրված խափանման միջոց կալանավորումը չփոփոխելու (ներառյալ՝ կալանքը գրավով փոխարինելու մասին միջնորդությունը մերժելու) մասին առաջին ատյանի դատարանի՝ դատական քննության նախապատրաստելու փուլի ավարտից հետո (այլ կերպ՝ դատական քննություն նշանակելու մասին որոշման կայացումից հետո դատական նիստում դատավարության համապատասխան մասնակիցների մասնակցությամբ քննարկումների արդյունքների հիման վրա) կայացրած որոշման՝ վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն»<sup>1</sup>:

Սակայն Սահմանադրական դատարանը նշել է, որ՝

1 Տե՛ս ՀՀ ՊՏ 2018.11.07/83(1441):



... անձնական ազատությունից զրկելու հետ կապված հարկադրանքի միջոցների կիրառումից պաշտպանվելու իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշները սահմանված են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում, մասնավորապես՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պարճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է,

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով ազատագրված յուրաքանչյուր անձ օժտված է դատարանում իր գործի քննության իրավունքով, որպեսզի այդ դատարանը կարողանա անհապաղ որոշում կայացնել նրա ձերբակալման օրինականության վերաբերյալ և նրան ազատելու որոշում կայացնի, եթե ձերբակալումն անօրինական է,

- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի սեպտեմբերի 27-ի «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec (2006)13 հանձնարարականի 19-րդ կետի համաձայն՝ «(1) Կալանքի տակ գտնվող անձը պետք է հատուկ իրավունք ունենա արագացված ընթացակարգով բողոքարկելու իր կալանավորման օրինականությունը դատարանում: (2) Այդ իրավունքը կարող է իրականացվել կալանքի կիրառման վերաբերյալ որոշման պարբերաբար վերանայման միջոցով, որի ընթացքում կարող են քննարկվել կալանավորված անձի կողմից բարձրացված բոլոր հարցերը»:

(...)

**... անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ են իրավական այնպիսի երաշխիքներ, որոնք, մասնավորապես, կապահովեն կալանքի իրավաչափության ստուգման ողջամիտ պարբերականությունը, կողմերի՝ իրենց դիրքորոշումները պաշտպանելու հավասար հնարավորությունները և կլինեն արդյունավետ՝ չխախտելով անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի էությունը:**

(...)

Ինչ վերաբերում է կալանքի իրավաչափության ստուգման ողջամիտ պարբերականությանը, ապա գործող իրավակարգավորումներով այն Առաջին արյանի դատարանի կողմից իրականացվում է միայն մինչդատական վարույթում: Դատական քննության փուլի ողջ ընթացքում արդեն ընտրված խափանման միջոց կալանքի իրավաչափության ստուգման միակ նախադրյալ կարող է հանդիսանալ այն փոփոխելու կամ վերացնելու վերաբերյալ կողմի միջնորդությունը: Նման միջնորդության բացակայության դեպքում դատարանի վրա օրենսդրորեն դրված չէ կալանքի իրավաչափությունը ստուգելու որևէ պարտականություն: Դատական քննության փուլում կալանքի իրավաչափության ստուգումը ձևավորված իրավակիրառական պրակտիկայում վերադաս դատական արյանների քննարկման առարկա է դառնում միայն Առաջին արյանի դատարանում գործի վարույթի ավարտից հետո, այլ ոչ թե դրա ընթացքում:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ նման վիճակը համահունչ չէ **անձնական ազատությունից զրկելու՝ կալանքի իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրացումն ապահովելու սահմանադրական և միջազգային չափանիշներին:**

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպ-

*պանության կողմի համար վերը նշված հնարավորության բացակայության դեպքում մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումը չի ապահովվում, հետևաբար՝ կալանքի իրավաչափության վիճարկման հարցում վերադաս դատական արյաններում պաշտպանության կողմը պետք է ունենա նույն իրավունքները, հնարավորությունները, ինչ առաջին արյանի դատարանում:*

(...)

Հարկ է ընդգծել նաև, որ ... ՄԻԵԴ-ն (Moiseyev v. Russia գործով 2008թ. հոկտեմբերի 9-ի վճիռ, գանգապ թիվ 62936/00, § 160-163) արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում այն պատճառով, որ վերադաս դատական արյանն անհապաղ չի քննել անձի՝ իրեն կալանքից ազատելու միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշման դեմ բերված բողոքը:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ պաշտպանության կողմի՝ որպես խափանման միջոց ընտրված կալանքի փոփոխման կամ վերացման միջնորդությունների մերժման մասին որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությունը բխում է նաև Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված «սեղմ ժամկետի» պահանջից, որով ապահովվում է նաև հիշյալ մասով սահմանված հիմնական իրավունքի արդյունավետ իրացումը:

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, երբ գործն ըստ էության՝ չլուծող դատական ակտով սահմանափակվում է անձնական ազատության հիմնական իրավունքը, ապա այդ իրավունքի պաշտպանությունն արդյունավետ չի իրացվում հետաձգված բողոքարկման միջոցով, քանի որ անձը դատական քննության ողջ ընթացքում շարունակում է մնալ կալանքի տակ անորոշ ժամկետով՝ չունենալով այդ ընթացքում կալանքի իրավաչափությունը բողոքարկելու հնարավորություն:



Քրեական դատավարությունում մեղադրյալների կալանքի ժամկետը, ըստ արմատացած մեկնաբանության, դիտարկվում է իր ամբողջության մեջ՝ անկախ վարույթի փուլերից: Մասնավորապես, Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի (*Wemhoff v. Germany*) գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ՝

« Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ կալանքի տևողությունը սկսվում է մեղադրյալին կալանքի տակ վերցնելու օրվանից – ավարտվում, երբ որոշվում է մեղադրանքը, եթե նույնիսկ այն որոշվում է միայն Առաջին արդյանի դատարանի կողմից (Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի (*Wemhoff v. Germany*), պարագրաֆ 9; Լաբիտան ընդդեմ Իտալիայի (*Labita v. Italy [GC]*) պարագրաֆ 147; Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (*Kalashnikov v. Russia*), պարագրաֆ 110; և այլ)»


Մեկ այլ գործով՝ Սոլմազն ընդդեմ Թուրքիայի (*Solmaz v. Turkey*), ՄԻԵԴ-ը նշել է, որ՝

« Սոլմազն ընդդեմ Թուրքիայի (*Solmaz v. Turkey*) գործով դիմումատուին ձերբակալվել էր անօրինական զինված կազմակերպության գործունեությանը մասնակցելու կասկածանքով և ապա կալանավորվել: Մինչև դատաքննությունը ազատ արձակելու նրա հայցերը մերժվել էին: Նա դատապարտվել էր ցմահ ազատազրկման Պետական անվտանգության դատարանի կողմից: Այդ որոշումը բեկանվել էր Վճռաբեկ դատարանի կողմից 2001 թվականի մայիսին՝ դատավարական հիմքերով, և գործն ուղարկվել էր ստորադաս դատարան՝ հետագա քննության: Դիմումատուին մնացել էր կալանքի տակ: Նա գրավի դիմաց ազատ էր երկրորդ

1 Տե՛ս *Case of Wemhoff v. Germany* (Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի), 27/06/1968, 2122/64; *Case of Labita v. Italy [GC]*, 06/04/2000, 26772/95; *Case of Kalashnikov v. Russia* (Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի), 15/07/2002, 47095/99 և այլ:



դատական քննության ընթացքում՝ բժշկական/առողջական հիմնավորումներով՝ հաշվի առնելով այն ժամանակահատվածը, որ արդեն անցկացրել էր կալանքի տակ:

Դիմումատուի՝ կալանքի տակ գտնվող ժամանակահատվածը, 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, սկսվել էր նրա ձերբակալությունից մինչև երկու տարի անց Պետական անվտանգության դատարանի կողմից նրա նախնական դատապարտումը: Այդ օրվանից սկսած, երբ Վճռաբեկ դատարանը բեկանեց դատավճիռը, դիմումատուն՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի իմաստով պահվում էր կալանքի տակ «իրավասու դատարանի կողմից դատավճռի հրապարակումից հետո»: Հետևաբար, այդ կալանքի ժամկետը դուրս է եկել 5-րդ հոդվածի 3-րդ կետի սահմաններից: Գործի վերաքաջման օրվանից և Վճռաբեկ դատարանի կողմից այն վերանայման ուղարկելու պահից մինչև նրա գրավի դիմաց ազատ արձակման պահը դիմումատուն նորից գտնվում էր նախնական կալանքի տակ՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակներով/իմաստով: Կալանավորման իրար հաջորդող անընդմեջ ժամանակահատվածները պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն: Այսպիսով, Դատարանը դիմումատուի նախնական կալանքի ժամկետի ողջամտությունը գնահատելու համար 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրականացրեց համախմբված գնահատում: Ձերբակալման, 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի համաձայն դատապարտվելուց հետո, անազատության մեջ պահվելու ժամանակահատվածները հաշվանցելուց հետո կալանավորման ժամանակահատվածը կազմել էր մոտ վեց տարի և ութ ամիս՝ 

Համապատասխանաբար, հաշվի առնելով ՄԻԵԴ-ի կողմից որդեգրված համապարփակ մոտեցումը իր կողմից տարատեսակ արգելանքների/կալանքների/detentions/ վերաբերյալ քննված գործերով, քրեական դատավարության փուլերը նշանակություն չունեն

1 Տե՛ս Case of Solmaz v. Turkey (Սոլմազն ընդդեմ Թուրքիայի), 16/01/2007, 27561/02:

խափանման միջոցների կիրառման համար:

Ավելին, արդեն իսկ հաստատված սկզբունքի համաձայն՝ շարունակական կալանքի տակ գտնվելը ամբողջ դատավարության ընթացքում մինչև դատարանի կողմից գործի լուծման վերաբերյալ որոշում կայացնելը, առանց վերանայման կամ ազատ արձակելու հնարավորության, անպայման կհամարվի օրինականության պահանջի հետ անհամատեղելի (Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի (Baranowski v. Poland), պարագրաֆներ 56, 57<sup>1</sup>):



56. ... Դատարանը գտնում է, որ այն գործելակերպը, որը ձևավորվել է ի պատասխան օրենքի բացի, համաձայն որի անձը կարող է մնալ կալանքի տակ անսահմանափակ և անկանխարեսելի ժամանակով, և առանց կոնկրետ իրավական դրույթի հիմնավորման կամ առանց դատական որոշման, ինքնին հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Այն մի սկզբունք է, որը ենթադրվում է Կոնվենցիայում, և որը հանդիսանում է օրենքի գերակայության հիմնական տարրերից մեկը:

57. Այդ համատեքստում Դատարանը շեշտում է նաև, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների տեսանկյունից անձին կալանքի տակ պահելը, որը տևել է մի քանի ամիս և չի նշանակվել դատարանի, դատավորի կամ այլ անձի կողմից, որը «օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն», չի կարող համարվել «օրինական» այս դրույթի իմաստով: Թեև այս պահանջը հստակորեն նախատեսված չէ 5-րդ հոդվածի 1-ին կետով, այն կարող է բխել 5-րդ հոդվածից, մասնավորապես, 1-ին կետի «գ» ենթակետի («նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով») և 3-րդ կետի («անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն») ձևակերպումներից: Բացի

1 Stn Case of Baranowski v. Poland (Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի), 28/03/2000, 28358/95:

*դրանից, 5-րդ հոդվածի 4-րդ կետում պարունակվող habeas corpus- ի երաշխիքը հաստատում է այն տեսակետը, որ կալանքը, որը երկարաձգվում է 3-րդ կետով նախատեսված նախնական ժամանակահատվածից հետո, պահանջում է «դատական» միջամտություն՝ որպես կամայականություններից պաշտպանություն: Դատարանի կարծիքով, ազատությունից կամայական զրկվելուց 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պաշտպանվածությունը լրջագույնս կխաթարվի, եթե անձին հնարավոր կլինի կալանավորել միայն գործադիր կարգադրությամբ՝ առանց դատական մարմնի առջև կանգնելու 5-րդ հոդվածի 3-րդ կետում նշված հնարավորության: >>*

Ինչ վերաբերում է նշված վերանայման վարույթի ընթացքում դատական նիստերի կազմակերպատավարական առանձնահատկություններին, ապա պետք է նշել, որ որպես կանոն՝ դրանք իրականացվում են դռնբաց դատական նիստում, եթե վերաբերում են դատական քննության նախապատրաստման և դատաքննության փուլերին՝ ի տարբերություն նախաքննության ընթացքում ընտրված կամ երկարացված կալանքի վերաբերյալ կայացված որոշումների՝ Վերաքննիչ դատարանում դատական ստուգման: Խնդիրներ առաջանում են այս վարույթներում (դատական քննության նախապատրաստման, դատաքննության փուլերում) մեղադրյալից/ամբաստանյալից, նրա պաշտպանից ու մեղադրողից բացի դատավարության այլ մասնակիցների՝ օրինակ, տուժողի մասնակցությունն ապահովելու հետ կապված: Այսինքն, պարտավոր է, արդյո՞ք, Վերաքննիչ դատարանն ապահովել տուժողի մասնակցությունը կալանքը չվերացնելու, չփոփոխելու մասին Առաջին ատյանի դատարանի դատական ակտի ստուգման վարույթին: Ըստ էության՝ այս հարցին mutatis mutandis վերաբերելի է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արտակ Հովհաննիսյանի վերաբերյալ կայացրած որոշումը, որում նշվել է, որ դատախազն ապահովում է մեղադրանքի կողմից հանդես եկող տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ հաշվի առնելով նաև վերջինիս ունեցած դիրքորոշումները վարույթի ընթացքում կատարվող գործողությունների և կայացվող որո-

## շումների վերաբերյալ:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը 2019 թվականի ապրիլի 11-ի Արտակ Հովհաննիսյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0068/06/18 որոշմամբ նշել է, որ.



11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդեռ վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի փակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու (այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու) մասին դատարանի որոշումը պոստոֆի (պոստոֆի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի կողմից բողոքարկելու իրավունքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է, արդյոք, Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի՝ մեղադրյալ Արտակ Հովհաննիսյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու մասին որոշման դեմ պոստոֆի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը քննության առնելը:

13. ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և

ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետք նաև՝ Եվրոպական կոնվենցիայի) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք, (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

14. Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է (Տես *Golder v. The United Kingdom* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգապ թիվ 4451/70, կետեր 28, 36:), ինչը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել: Ընդ որում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ կիրառված սահմանափակումները դատարան դիմելու անձի իրավունքն այն աստիճան չպետք է սահմանափակեն կամ նվազեցնեն, որ դրանց արդյունքում խաթարվի այդ իրավունքի բուն էությունը: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ սահմանափակումը յուրաքանչյուր դեպքում պետք է հետապնդի օրինական նպատակ, և պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն գործադրված միջոցի ու հետապնդված նպատակի միջև (Տես *Hirschhorn v. Romania* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգապ թիվ 29294/02, կետ 50):

15. Վճռաբեկ դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը վկայակոչված դիրքորոշումների հաշվառմամբ, իր մի շարք որոշումներում կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ դատարան

րանի մատչելիության իրավունքի ապահովումն արդար դատաքննության հիմնարար իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից մեկն է (Առավել մանրամասն տես Լևոն Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԿԴ/0337/06/15 որոշումը):

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները չպետք է այն աստիճան լինեն, որ զրկեն իրավունքը կրողին այն իր ողջ էությանը իրացնելու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման դեպքում քրեադատավարական հակակշռող գործոնների կիրառմամբ պետք է ապահովվի այդ իրավունքի՝ իր նպատակին հասնելուն ուղղված համապատասխան գործիքակազմի առկայությունը:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և տուժողին, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում պատշաճ ձևով ուղարկում է նրանց (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի կողմից բերվում են

Վերաքննիչ դատարան՝ անմիջականորեն կամ որոշում կայացրած դատարանի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով (...):»:

«Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի փակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է Վերաքննիչ դատարանի կողմից:

(...)

3. Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ: (...) Դատարանը բացատրություններ տալու համար դատական նիստին կարող է կանչել հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին, ինչպես նաև տուժողին (...):»:

17. «Սահմանադրական դատարանը, 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՈ-1373 որոշմամբ, ի թիվս այլոց, քննարկման առարկա դարձնելով նախնական կալանքի դեմ վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտների հարցը, արձանագրել է. (...) «Քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են վերաքննիչ բողոք բերել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի փակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ: Դրանք են՝ դատախազը, մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը: Ընդ որում՝ Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է դռնփակ նիստում՝ դատախազի և պաշտպանի ներկայու-

թյամբ:

(...)

Վերոշարադրյալ իրավակարգավորումների համադրված վերլուծությունից հետևում է, որ (...)

- օրենսդիրը համապատասխան դատական ակտի հասցեատեր դիտարկելով նաև քննիչին և տուժողին՝ միևնույն ժամանակ, նրանց չի ճանաչում որպես այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտ: Օրենսդիրը, ի թիվս մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի՝ այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք վերապահում է դատախազին: Այսինքն՝ դատախազն օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով իրավասու է մասնակցելու նաև այն դատական նիստին, որում քննության առարկա է քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը: Ավելին՝ իրավունք ունի հետ վերցնել ներկայացված միջնորդությունը կամ այն անձամբ պաշտպանել: Ասվածի համարեքստում, նման օրենսդրական կարգավորման պայմաններում տուժողի շահերի միակ պաշտպանը, վերոնշյալ սահմանադրական լիազորությունների շրջանակներում, դատախազն է,

- օրենսգրքի 285 և 287-րդ հոդվածները վերաբերում են բացառապես կալանքի հետ կապված իրավահարաբերությունների կանոնակարգմանը և դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի բացառիկ իրավասությանը՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկման առնչությամբ» (Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի հունիսի 13-ի թիվ ՍԴՈ-1373 որոշման 6-րդ կետը):

18. Վերը վկայակոչված քրեադատավարական նորմերի և մեքերված իրավական դիրքորոշումների համադրված վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը մինչդա-



տական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու (այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին) դատարանի որոշումը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների սպառիչ շարքին է դասում մեղադրանքի կողմից՝ դատախազին, պաշտպանության կողմից՝ մեղադրյալին, նրա պաշտպանին և օրինական ներկայացուցչին: Նշվածից բխում է, որ օրենսդիրը մեղադրանքի կողմում հանդես եկող տուժողին (տուժողի իրավահաջորդին) կամ նրա ներկայացուցչին իրավունք չի վերապահում բողոքարկելու մինչդատական վարույթի շրջանակներում խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշումը: Այլ կերպ՝ նախնական կալանքի կամ այն այլընտրանքային խափանման միջոցով փոխարինելու մասին դատարանի որոշման դեմ վերադաս դատական աստիճանի դիմելու մատչելիության իրավունքը տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի համար սահմանափակված է:

18.1 Սույն որոշման 15-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ անդրադառնալով տուժողի (տուժողի իրավահաջորդի) կամ նրա ներկայացուցչի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակմանը հակակշռող քրեադատավարական գործոններին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատախազը, հանդիսանալով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու բացառիկ իրավասությամբ օժտված դատավարական սուբյեկտ, կոչված է երաշխավորելու գործով շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության ապահովումը: Այդ համատեքստում դատախազն ապահովում է մեղադրանքի կողմից հանդես եկող տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը՝ հաշվի առնելով նաև վերջինիս ունեցած դիրքորոշումները:

րը վարույթի ընթացքում կատարվող գործողությունների և կայացվող որոշումների վերաբերյալ: Ասվածն ուղղակիորեն հետևում է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ (2000)19 հանձնարարականից, համաձայն որի՝ վարույթի ընթացքում դատախազը պարտավոր է ներկայացնել և պատշաճ ուշադրության արժանացնել պոստոլի տեսակետներն ու մտահոգությունները (Տեն Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության ոլորտում դատախազության դերի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ (2000)19 հանձնարարականը, կետ 32):


Ոստի, մինչդեռ վարույթի ընթացքում դատախազը խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելիս նկատի է ունենում նաև պոստոլի (պոստոլի իրավահաջորդի) դիրքորոշումները (ինչպես օրինակ՝ մեղադրյալի՝ ազատության մեջ գտնվելու դեպքում իր վրա անօրինական ազդեցություն գործադրելու, անվրանգությանը սպառնալու կամ այլ ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու վրանգի վերաբերյալ): Հետևաբար, մինչդեռ վարական վարույթի շրջանակներում դատախազի կողմից խափանման միջոցի կիրառման վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու միջոցով է ներկայացվում պոստոլի հնարավոր դատավարական շահը, որպիսի մոտեցումն արձանագրվել է նաև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից վերը վկայակոչված որոշման շրջանակներում (Տեն սույն որոշման 17-րդ կետը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա խափանման միջոցի վերաբերյալ որոշումը ուղարկվում է պոստոլին: Այսինքն՝ օրենսդիրն իմպերատիվ պահանջ է նախատեսել խափանման միջոցի վերաբերյալ որոշման բովանդակության մա-

սին տուժողին տեղեկացնելու և այդ կերպ գործի ընթացքի մասին տուժողի պատշաճ իրազեկումն ապահովելու, ինչը նաև ըստ էության՝ բխում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1985 թվականին ընդունված «Տուժողի դերը քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում» թիվ R(85)11 և 2006 թվականի հունիսի 14-ին ընդունված «Հանցագործությունից տուժած անձանց օժանդակության վերաբերյալ» թիվ Rec(2006)8 հանձնարարականներում ամրագրված դրույթներից: Նշվածի համապետքաբար ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկման շրջանակներում տուժողի հնարավոր դատավարական շահի ներկայացվածությունը կարող է ապահովվել ոչ միայն միջնորդավորված՝ դատախազի միջոցով, այլ կարիքն առաջանալու դեպքում կարող է ներկայացվել նաև անձամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ խափանման միջոցի վերաբերյալ դատարանի որոշման իրավաչափության դատական ստուգման ընթացքում բացատրություններ տալու համար դատական նիստին կանչվելու միջոցով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, որպես հակակշռող գործոն, հարկ է նաև առանձնացնել տուժողի (տուժողի իրավահաջորդի) դիրքորոշումների հաշվառմամբ անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման հնարավորությունը: Մասնավորապես, այն որպես գործուն միջոց, կարող է կիրառվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տուժողի անվտանգությունն ապահովելու նպատակով:

Վերոնշյալ հակակշռող գործոնների պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու

*Կամ չընտրելու, կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու, ինչպես նաև այն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին դատարանի որոշումը տուժողի կամ նրա ներկայացուցչի կողմից վերադաս դատական ատյան բողոքարկելու մատչելիության իրավունքի սահմանափակումն իրավաչափ է:* 

Այսինքն, ստուգում իրականացնող դատարանի կողմից վարույթի մասին տեղեկացնելուց հետո՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանում կողմերի (նույնիսկ դատախազի և պաշտպանի չներկայանալու դեպքում դատարանը կաշկանդված չէ Առաջին ատյանի դատական ակտի ստուգումն իրականացնելով՝ համապատասխան բողոքը քննելու միջոցով), այլև տուժողի (ինչպես նաև տուժողի իրավահաջորդի կամ նրանց ներկայացուցչի) պարտադիր մասնակցությունն ապահովելու պարտականություն ղնելը կլինե՞ր անհամաչափ ծանրաբեռնվածություն և չէ՞ր արտահայտի իրավունքի էությունը (մասնավորապես, համապատասխան բողոքներն արագացված կարգով քննելու տեսանկյունից): Ըստ էության՝ այլ կերպ պետք է դիտարկել այն դեպքերը, երբ բողոքն անմիջականորեն բխել է տուժողի, նրա իրավահաջորդի կամ վերջիններիս ներկայացուցիչների կողմից: Նման դեպքերում ոչ միայն ուղղակի տեղեկացվածության, այլ հատկապես վերջիններիս կամահայտնության մասին տեղեկություն ունենալուց կամ դրա մասին դատարանի համար ակնհայտ լինելուց հետո (օրինակ, նիստի մասին ծանուցումն ուղարկվել է, և առկա է ստացման մասին հավաստագիր) համապատասխան բողոքը պետք է քննության առնի միայն Վերաքննիչ դատարանը:

1 Տե՛ս ՀՀՊՏ 2020.03.27/27(1582):

## Հավելված 1

### Կալանավորման հիմնավորվածության գնահատման չափանիշները

Ստորև ներկայացվում են այն չափանիշները, որոնց գնահատումը համակցության մեջ կարող է օգնել անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքի ընտրության կամ կալանքի ժամկետի երկարացման հարցում ճիշտ եզրահանգման գալույն: Կալանավորման կիրառման տրամաբանության հիմքում ընկած է ազատության կանխավարկածը: Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը ներկայացնելիս վարույթն իրականացնող մարմնի (քննիչի կամ դատախազի) խնդիրն է այդ կանխավարկածի հաղթահարումը: Այսինքն՝ դատավորին այնպիսի նյութերի տրամադրումը, որոնք միանշանակ կվկայեն.

ա/ խափանման միջոց ընտրելու մասին օրինական հիմքերի և անհրաժեշտության առկայության մասին և

բ/ առավել մեղմ խափանման միջոց ընտրելու անհնարինության կամ դրա ոչ արդյունավետ լինելու մասին:

Չափորոշիչների քանակը չպետք է փոխարինի դատարանի կողմից տրվող օբյեկտիվ գնահատականին, որը հիմնված է յուրաքանչյուր կոնկրետ գործով առկա հանգամանքների համակցության վերլուծության վրա:

Ստորև ներկայացված չափորոշիչների նշանակությունն ու կշիռը միանման չեն: Այսպես, օրինակ, խնամքի տակ անձանց բացակայությունը (տե՛ս կետ 8) չի կարող ինքնին բավարար հիմք հանդիսանալ խափանման միջոց ընտրելու համար: Միևնույն ժամանակ, այն փաստը, որ անձը նախկինում փորձել է թաքնվել քննությունից (տե՛ս կետ 13) հանդիսանում է ծանրակշիռ փաստարկ անձին կալանավորելու հարցում:

Կալանավորման հիմնավորվածության գնահատման չափանիշները	Կալան. օգտին	Կալան. դեմ
<b>Հիմնավոր կասկածը</b>		
1. Կասկածը՝ հիմնավոր կասկած (մեղադրանք) հանցագործության կատարման մեջ:		
2. Որակում՝ հանցագործությունը չպետք է վերաբերի այն տեսակներին, որոնց դեպքում նախընտրելի չէ կալանավորման կիրառումը (օրինակ, անչափահասների դեպքում ոչ մեծ ծանրության հանցագործությունները և այլն):		
3. Մեղադրանքի իրավաչափությունը՝ չպետք է անցած լինեն վաղեմության ժամկետները, տեղի չի ունեցել արարքի ապաքրեականացում, չի ընդունվել համաներման ակտ:		
<b>Հանցագործության ծանրությունը</b>		
4. Հանցագործության ծանրությունն ինքնին՝ առանց գործում առկա այլ գործոնների չի կարող կալանավորման հիմք հանդիսանալ:		
<b>Փախուստի դիմելու ռիսկը</b>		
5. Բնակության վայրը, որը պարտադիր չէ, որ համընկնի գրանցման վայրի հետ:		
6. Աշխատանքը՝ արդյոք մեղադրյալն ունի մշտական աշխատանք կամ եկամտի այլ աղբյուր, որը կարող է կորցնել՝ դիմելով փախուստի:		
7. Կուտակած գումարները՝ արդյոք մեղադրյալն ունի բավարար միջոցներ օտար երկրում թաքնվելու համար:		
8. Ընտանիքը՝ արդյոք մեղադրյալն ունի ընտանիք, վերջինիս խնամքին գտնվող անձինք, այլ էական անձնական պարտավորություններ բնակության վայրում:		

Կալանավորման հիմնավորվածության գնահատման չափանիշները	Կալան. օգտին	Կալան. դեմ
<p>9. Քաղաքացիություն՝ արդյոք մեղադրյալն ունի օտարերկրյա քաղաքացիություն (հպատակություն) կամ կացության իրավունք, ունի, արդյոք, օտար երկրում անշարժ գույք կամ եկամտի աղբյուր, օտար երկրներ մեկնելու համար նախատեսված անձնագիր: Այս դեպքում դատարանը պետք է գնահատման արժանացնի նման անձնագրի առգրավման հարցը, որի արդյունքում նվազագույնի կհասցվի վերջինիս փախուստի վտանգը:</p>		
<p>10. Օտար երկրում առկա կապերը՝ արդյոք մեղադրյալն ունի հարազատներ կամ մերձավորներ օտար երկրներում, այլ կապեր:</p>		
<p>11. Վարքագիծը՝ փորձել է, արդյոք, վերջինս դիմել փախուստի կալանավայրից կամ ազատագրկման վայրից, թաքնվել է. արդյոք, քննությունից կամ դատից, չի խախտել, արդյոք. մեղադրյալը նախկինում ընտրված խափանման միջոցների պայմանները, արդյոք թաքնվելու նպատակով դիմադրություն է ցույց տվել ձերբակալման ժամանակ և այլն:</p>		
<p>12. Փախուստի փորձերը՝ արդյոք առկա են փաստեր, որոնք կվկայեն մեղադրյալի կողմից փախուստի նախապատրաստումը (հայտնաբերվել են անձը հաստատող կեղծ փաստաթղթեր, կանխիկ խոշոր գումարներ կամ թանկարժեք իրեր, մեղադրյալին պատկանող գույքի վաճառքի փաստեր, արտաքինը փոփոխելու, սահմանը հատելու կամ պետությունից անկանխիկ եղանակով խոշոր գումարներ կամ արժեթղթեր դուրս բերելու փորձեր և այլն:</p>		
<p>13. Առկա են, արդյոք, փաստեր, որոնք բարձրացնում կամ նվազեցնում են փախուստի հավանականությունը (հանցագործության կազմակերպված լինելու բնույթը, անձի կամ նրա մերձավորին սպառնացող վտանգը, ծանր</p>		

Կալանավորման հիմնավորվածության գնահատման չափանիշները	Կալան. օգտին	Կալան. դեմ
<p>հիվանդությունը, տարիքը, առողջության ընդհանուր վիճակը, մեղքի ընդունումն ամբողջությամբ կամ մասնակի, համագործակցությունը քննության հետ, հանցագործությամբ պատճառաված վնասի հատուցումը):</p>		
<p><b>Հանցավոր գործունեությունը շարունակելու ռիսկը</b></p>		
<p>14 Արդյո՞ք առկա են անձին նախկինում քրեական հետապնդման ենթարկվելու փաստեր (նախկինում քրեական հետապնդման առկայության փաստը մեխանիկորեն չի կարող հանդիսանալ փաստարկ անձի նկատմամբ կալանավորման կիրառման (ժամկետի երկարացման) օգտին): Նախկին դատվածությունը պետք է լինի նույնասեռ կամ նույնաբնույթ նոր կատարած հանցանքին:</p>		
<p>15. Անձի նախորդող վարքագիծը (ընդունում է, արդյոք, մեղքը լիովին կամ մասնակի, համագործակցում է, արդյոք, քննության հետ և այլն): Այն փաստը, որ մեղադրյալը չի համագործակցում քննության հետ (իրեն մեղավոր չի ճանաչում), չի կարող օգտագործվել նրա դեմ, սակայն վերոնշյալ հանգամանքների՝ մեղքի ընդունումն ու քննության հետ համագործակցության առկայությունը միանշանակ վկայում են մեղադրյալի օգտին:</p>		
<p>16. Հանցագործության բնույթը (արարքը ավարտված է, թե՞ ոչ, և ինչպիսի՞ն կլինեն հետևանքները մեղադրյալի համար, եթե արարքը լինել ավարտված, արդյո՞ք մեղադրյալը հանցանքը կատարել է ընտանիքի անդամի նկատմամբ):</p>		



Կալանավորման հիմնավորվածության գնահատման չափանիշները	Կալան. օգտին	Կալան. դեմ
<b>Քննությանը խոչընդոտելու և վկաներին սպառնալու ռիսկը</b>		
17. Չի փորձել, արդյոք, անձն ազդել տուժողների, վկաների, մասնագետների, փորձագետների և դատավարության այլ մասնակիցների և նրանց մերձավորների վրա՝ տարբեր միջոցներով ապացույցներ կեղծելու նպատակով (սպառնալիքներ, կաշառք, նյութական կամ ոչ նյութական բնույթի խոստումներ և այլն):		
18. Ինչպիսին է եղել մեղադրյալի նախորդող վարքագիծը (չի փորձել, արդյոք, մեղադրյալը ոչնչացնել կամ կեղծել ապացույցները, խոչընդոտներ ստեղծել խուզարկության, զննության և առգրավվման կատարման ժամանակ, ճանաչում է, արդյոք, մեղադրյալն իրեն մեղավոր լիովին կամ մասնակի, համագործակցում է, արդյոք, մեղադրյալը քննության հետ):		
19. Չի փորձել, արդյոք, մեղադրյալը սպառնալ դատավարության մասնակիցներին կամ վրեժխնդիր լինել նրանց կողմից դատավարական պարտականությունները կատարելու համար:		
<b>Կասկածյալի (մեղադրյալի) անձը</b>		
20. Անձնական առանձնահատկությունները (բռնությունների, փախուստի դիմելու, օրինական պահանջներին չենթարկվելու հակումների առկայությունը և այլն):		
21. Բարոյական կերպարը (բնութագրերը աշխատանքի, բնակության, սովորելու վայրերից):		
22. Առողջության վիճակը (արդյոք առկա են կալանավորմանը խոչընդոտող հիվանդություններ կամ մշտական բժշկական վերահսկողության անհրաժեշտություն):		

Կալանավորման հիմնավորվածության գնահատման չափանիշները	Կալան. օգտին	Կալան. դեմ
<b>Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հավանականությունը</b>		
23. Կարո՞ղ է, արդյո՞ք, անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը բերել ցանկալի արդյունքների:		
24. Արդյո՞ք ակնհայտ է այլընտրանքային խափանման միջոցների կիրառման անհրաժեշտության մերժումը (օրինակ, երբ անձը ենթադրաբար հանդիսանում է այն հանցավոր խմբավորման ակտիվ մասնակիցը, որը առնչություն է ունեցել բռնի հանցագործությունների կամ ահաբեկչական բնույթի հանցագործությունների կատարմանը):		

## Հավելված 2.

### Կալանավորման ժամկետի երկարացման հիմնավորման գնահատման չափանիշները

Կալանքի ժամկետը երկարացնելու հարցը լուծելիս դատարանը ելնում է ազատության կանխավարկածից: Կալանավորման ժամկետը երկարացնելու մասին որոշումը կայացվում է այս հարցի քննարկման պահին առկա հիմքերի ընդհանրության վերլուծության հիման վրա: Որոշումը կայացնելիս դատարանը որոշման մեջ պետք է նշի, թե ինչն է խանգարում անձին կալանքից ազատելուն: Քննությունն ավարտելու անհրաժեշտությունն ինքնին չի հանդիսանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմք:

Կալանավորման ժամկետի երկարացման հիմնավորման գնահատման չափանիշները	Կալանքի ժամկետի երկարացման օգտին	Կալանքի ժամկետի երկարացման դեմ
<b>Քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը</b>		
1. Օրենքով նախատեսված քրեական գործով վարույթը բացառող որևէ հանգամանքի առերևույթ առկայությունը:		
<b>Մեղադրյալի անձը</b>		
2. Արդյո՞ք կալանքի տակ գտնվելու ընթացքում մեղադրյալի անձնական հատկությունները փոխվել են (ներառյալ ընտանեկան դրությունը, հարազատների առողջական վիճակը, ֆինանսական իրավիճակը, պահանջվում է, արդյո՞ք, նրա հարազատների կամ այլ մերձավոր անձանց նկատմամբ խնամք կամ այլ օգնություն և այլն):	Չի կարող օգտագործվել որպես փաստարկ կալանքի ժամկետի երկարացման օգտին:	

Կալանավորման ժամկետի երկարացման հիմնավորման գնահատման չափանիշները	Կալանքի ժամկետի երկարացման օգտին	Կալանքի ժամկետի երկարացման դեմ
<p>3. Արդյո՞ք փոխվել է մեղադրյալի առողջական վիճակը (կամ, արդյոք, հիվանդություն, որը խանգարում է կալանավորմանը, արդյո՞ք անձն ունի մշտական խնամքի կարիք և այլն):</p>	<p>Չի կարող օգտագործվել որպես փաստարկ կալանքի ժամկետի երկարացման օգտին:</p>	
<p><b>Հանցագործության կատարման կասկածի հիմնավորվածությունը և ճիշտ որակումը</b></p>		
<p>4. Հիմնավորված է, արդյոք, կասկածը ողջ դատավարության ընթացքում (առկա է, արդյոք, հիմնավոր կասկած, որ նա կատարել է մեղսագրվող հանցանքը):</p>		
<p>5. Համապատասխանում է, արդյոք, արարքին տրված իրավական որակումը համապատասխան արարքի փաստական նկարագրությանը (ակնհայտության աստիճանի):</p>		
<p>6. Արդյո՞ք կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է:</p>		
<p><b>Կալանավորման համար անհրաժեշտ հիմնավոր կասկածից բացի, այլ պայմանները</b></p>		
<p>7. Հարուցված քրեական գործի առկայությունը:</p>		
<p>8. Համապատասխան քրեաիրավական որակմամբ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը:</p>		
<p>9. ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը:</p>		

Կալանավորման ժամկետի երկարացման հիմնավորման գնահատման չափանիշները	Կալանքի ժամկետի երկարացման օգտին	Կալանքի ժամկետի երկարացման դեմ
10. «Հատուկ սուբյեկտի» հատկանիշների առերևույթ առկայությունը:		
11. Որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը (օրինակ՝ ԱԺ, ԲԴԽ կամ ՍԴ թույլտվությունը):		
12. Ենթակայության հարցի ակնհայտության աստիճանի անհամապատասխանությունը օրենքին:		
<b>Մեղադրանքի ծանրությունը</b>		
13. Միայն մեղադրանքի ծանրությունը, առանց այլ գործոնների գնահատման, չի կարող արդարացնել կալանքի ժամկետի երկարացումը:		
<b>Անձի թաքնվելու ռիսկը</b>		
14. Առկա՞ է ռիսկ, որ անձը կթաքնվի քննությունից և դատարանից (ժամանակի ընթացքում, ռիսկը, որ անձը կթաքնվի քննությունից և դատարանից, նվազում է կալանքի տակ անցկացրած ժամանակի համամասնությամբ):		
15. Արդյո՞ք փոխվել են այն գործոնները, որոնք մեծացնում կամ նվազեցնում են փախուստի հավանականությունը (առողջության վիճակի փոփոխություն, ընտանեկան իրավիճակի փոփոխություն, քննության մարմինների հետ համագործակցություն և այլն):		

Կալանավորման ժամկետի երկարացման հիմնավորման գնահատման չափանիշները	Կալանքի ժամկետի երկարացման օգտին	Կալանքի ժամկետի երկարացման դեմ
<b>Հանցավոր գործունեության շարունակելու ռիսկը</b>		
<p>16. Դեռևս առկա է հանցավոր գործունեության շարունակականության ռիսկ (օրինակ՝ փորձեր եղել են մեղադրյալների կողմից հանցավոր գործողությունները համակարգել հանցակիցների հետ, մտավոր օժանդակություն, կա՞ն կասկածներ նոր հանցագործությունների այն դրվագների վերաբերյալ, որոնցում կարող է ներգրավված լինել մեղադրյալը, մասնավորապես, շարունակել իրականացնել հանցավոր պլանների և հանցակիցների միջև պայմանավորվածությունների կատարումը, որոնք առաջացել են մեղադրյալի կալանավորումից առաջ):</p>		
<b>Քննությանը խոչընդոտելու ռիսկը և սպառնալիքները վկաներին</b>		
<p>17. Դեռևս կա՞ քննության խոչընդոտման և վկաների նկատմամբ սպառնալիքների ռիսկի առկայություն (արդյո՞ք հավաքվել են անհրաժեշտ բոլոր ապացույցները, դատական նիստին հարցաքննվել են հիմնական վկաները և այլն. քրեական դատավարության մեկ փուլից/մասից մյուսին տեղափոխվելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել այս հարցերին):</p>		
<b>Լրացուցիչ պայմաններ, որոնք անհրաժեշտություն են առաջացնում անձին կալանքի տակ պահելու համար</b>		
<p>18. Թույլ տրվել են, արդյոք, քննության ընթացքում էական ձգձգումներ, կատարվել են, արդյոք, անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ անձի անազատության մեջ գտնվելու նախորդ ժամանակահատվածում:</p>	<p>Չի կարող օգտագործվել որպես փաստարկ կալանքի ժամկետի երկարացման օգտին:</p>	

Կալանավորման ժամկետի երկարացման հիմնավորման գնահատման չափանիշները	Կալանքի ժամկետի երկարացման օգտին	Կալանքի ժամկետի երկարացման դեմ
<b>Այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը</b>		
19. Կարո՞ղ են անձի նկատմամբ այլընտրանքային միջոցները հասնել ցանկալի արդյունքների:		

Սույն աշխատությունը նախատեսված է դատավորների, դատախազների, քննիչների, քրեական դատավարության ոլորտում աշխատող փաստաբանների, դատարաններում և իրավապահ մարմինների աշխատակազմերում ներգրավված այլ աշխատակիցների, ինչպես նաև սույն թեմայով հետաքրքրվող իրավաբանների համար՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հետ կապված հարցերի շուրջ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի հիմնական և նոր ընդունված որոշումներում առկա իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու և Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտումները նվազեցնելու նպատակով:

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

Եվրոպական միության անդամ երկրները որոշում են կայացրել միավորել իրենց ռեսուրսները, փորձը և ճակատագրերը: Միասին նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և ազատությունները: Եվրոպական միությունը հավատարիմ է իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ իր ձեռքբերումներով և արժեքներով կիսվելուն:

[www.coe.int](http://www.coe.int)

[www.europa.eu](http://www.europa.eu)

Translation co-funded by the European Union

